4790

Հայոց հեթանոս

Հին տարի.

2302

891.81
Հ-13

1905

Վասպուր Իսահակ

891.81
Լ-13
26

ԼԾԻ ՏԱԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Երկրորդ մաս.

2003

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

ՅԱՎԵԼԱԿ.

Дозволено цензурою С.-Петербургъ 12 Мая 1905 г.

21102.60

„Пушкинская Скоропечатня“ С.-Петербургъ, Лештуковъ 4.

I.

ՍՊԻՏԱԿ ԵԿԵՂԵՑԻՆ.

Ս. Անդրէյի տօնին պատահած անցքը Սպիտակ-Եկեղեցու խաղաղ կացութիւնը միանգամայն խախտեց։

Ամբողջ քաղաքը տարսափի մէջ ընկաւ, երբ յայտնուեց, ոմքեր են երկու Թուրքերի սպանողները և գտնուեցին երկու դիակները ու բացուեց բոլգարի ոմ լինելը։

Այդ դէպքը իսկ չարագուշակ էր։

Ոչ միայն Թուրք իշխանաւորները, այլև շրջակայի ամբողջ Թուրք աղգաբնակութիւնը սկսեց խօսել վրէժի մասին։

Տաճիկ ժողովուրդը անհամբերութեամբ սպասում էր ընդհանուր կոտորածի. իսկ առժամանակ լիանում էր առանձնակի սպանութիւններով։

Դաշտերում, ճանապարհների վրա, այստեղ-այնտեղ աւելի ու աւելի յաճախ սկսեցին երևալ բոլգարների դիակներ. իսկ գիւղերի ու քաղաքի փոխադարձ հաղորդակցութիւնը չափազանց վտանգաւոր դարձաւ։

Ընդհանուր յայտ լինելիք կոտորածի մասին պատուող լուրերը օր ըստ օրէ աւելի յամառ բնաւորութիւն էին ստանում. իրարանցումը, մանաւանդ կանանց մէջ, աճում էր։

Հայրենասիրական յուզմունքը հանդարտուեց, ոգևորութիւնը դոլորշիացաւ։

Սոկոլովը բանտարկուել էր դեռ Ս. Անդրէյի տօնի օրը, իբրև Բոյկոթի ամենամօտ ընկերը՝: Որպէս Թուրքերի սպանութեան մասնակից՝ ձերբակալուեց նաև ջրաղացպան Ստեփան պապը: Ոստիկանութիւնն ուզում էր բռնել նոյնպէս Վիկենտիյ սարկաւագին, սակայն նա անյայտացաւ:

Կանանց հանրակեցութիւնը շտապեց ինքն էլ Ռադին հեռացնել դպրոցից — հակառակ հոգաբարձուների կամքին. իսկ Մեխալակի Ալաֆրանկին առաջարկեց փակել նաև տղաների ուսումնարանը, որպէսզի դպրոցը «քամու տրի, մաքրի»: Թողեցին միայն Մերդվիջևին փոքրիկ երեխաներին սովորեցնելու համար:

Ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները շարունակւում էին մի ամբողջ ամիս:

Բոյկոթի հետ շատ թէ քիչ ծանօթութիւն ունեցողները ահից դողում էին. իսկ նրան դաղափարակից ընկերները երկիւղ էին կրում, որ չլինի՞ թէ մի ճակատագրական դիպուած կամ դաւաճանութիւն իրանց տաճիկ կառավարութեան ձեռքը մատնէ:

Կոմիտէն ինքն իրան կաղմալուծուեց: Բոլորը թաղնւում էին իրենց տներում:

Պարոն Ֆրատիւնը աւելի լաւ վարուեց. նա անցաւ Ռումինիա և ինքն իրեն ադնիւ խօսք տուեց, այլևս քիթը չխոթել քաղաքականութեան մէջ: Նա անվտանգ Բուխարեստ հասաւ և տեսնելով, որ ինքը այստեղ ապահով է, նորից վառ հայրենասէր ու թունդ հասարակապետական դարձաւ և Ռումինիա ապաստանած բոլդար փախստականներին ներկայացաւ իբրև կախաղանից ազատուած հայրենիքի զոհ:

Յետոյ նա մի յօդուած գրեց, որով պաշտպանում էր Բոլգարեայի հասարակապետական կաղմը: Բայց Կարավելովը, որ իշխան Միլանի դրոշի տակ Բալկանեան դաշնակցութեան ծրագրներով էր զբաղուած, ջարդ ու փշուր արեց այդ նշանաւոր գրուածքը:

Ֆրատիւն գրանից յետոյ իր յօդուածն Բուռևին տարաւ՝ «Ձնամեայի» մէջ տպելու, բայց յօդուածն այդտեղ ևս նոյն վիճակին արժանացաւ (Բուռևին այդ ժամանակ համաշխարհային սոցիալիզմի մասին էր երազում): Վերջապէս Ֆրատիւն գնաց լուսանկարչի մօտ և նկարուեց յեղափոխականի հագուստով՝ ոտքից մինչև գլուխ զինուած: Բայց յետոյ մտածեց, որ անմտութիւն է այդպիսի վտանգաւոր կերպով երևալը և նկարն հասարակապետական յօդուածի հետ միասին թաղցրեց:

Միայն Եարոսլաւ Բրզոբեգունեկը իր տարազի ոսկեզոր գլխարկով մնաց անձեռնմխելի: Ոչ ոք չէր անհանգստացնում աւստրիացուն: Նա շարունակում էր բարեխղճաբար լուսանկարել Սպիտակ-Եկեղեցու բնակիչներին և որովհետև նեգատիւներ լանալու համար մի քանի անհրաժեշտ թթուներ նա չունէր, ուստի նեգատիւները մութ ու խաւար էին մնում և յսճախորդները զարմանքով նայում էին սենեակում քաշ արած ինչ որ նեգրերի նրկարներին... Միևնոյն ժամանակ՝ Բրզոբեգունեկը շարունակում էր նամակագրութիւն պահել երկրից փախածների հետ:

Սակայն փոքր առ փոքր Սպիտակ-Եկեղեցու բնակիչների սարսափը հանդարտւում էր: Երիտասարդութեան համարձակութիւնը նորից կենդանանում էր: Առաջին գիւտերին նորերը չը հետևեցին:

Եւ ամենքը ողբում էին գժբախտ Օգենեանովի վիճակը, շատ ականատեսներ հաստատում էին նրա մահուան լուրը: Շուկայ եկող տաճիկները պատմում էին, որ նրան երեք գնդակ է դիպել և որ նա մեռել է Ախեան անտառում:

Օնբաշին գիտէր, որ այդ ստացուցած չէ, սակայն ինքն էլ էր նոյնը պնդում: Մի քանի բոլգարներ էլ հաւատացնում էին, որ կոմսին հովտում դտել է դերծակ Նիկոլը և տեղն ու տեղը թաղել:

Հաջի Ռոմանան ողբերգական ձևով նկարագրում էր Բոյչոի մահը, թէ ի՞նչպէս վիրաւորուած՝ նա քաշ է եկել մինչև հովիտը և ի՞նչպէս դայլերը կենդանի-կենդանի լափել են նրան:

Այդ պատմութիւններն ամբողջ քաղաքը վշտի մէջ էին դցում: Հերոս Օգենեանովը այժմ նահատակ և սուրբ դարձաւ: Նրա մասին սաեղծուեցին առասպելներ: Կանայք մոմ էին վառում «Մեծն նահատակ» Բոյչոի համար, իսկ Տէր Սաւրին հաջի Բոյչոին հոգեհանդիստ կատարելիս, հոգեհանդիստ նոյնպէս կատարեց և Բոյչոին: Այնտեղ ներկայ էր ամբողջ երիտասարդութիւնը՝ի զարմանս ազնիւ հանդուցեալի բարեկամների, որոնք ապշած էին նաև այն

պատճառաւ, որ քահանան աղօթելու ժամանակ հաջի Բոյչօին «Տիրոջ ծառայ» անուանելու փոխարէն անուանեց «Նահատակ»։

Բայց կային և այնպիսիներ, որոնք գոհ մնացին։ Դրանց մէջ էր Նէչօ Պերոնկովը և Ալաֆրանկան։ Նրանք, որպէս իրանց արդարացի համարող մարդիկ, գոռոզացել էին։ Իւրդանն իր եռանդն այնտեղ հասցրեց, որ նոյնիսկ բէյլին ահի մէջ ձգեց սպառնալով, որ գանգատ կանէ նրա անհոգութեան դէմ, եթէ երկրորդ անգամ ևս նա թոյլ կտայ, որ աւազակները Սուլթանին հաւատարիմ քաղաքի խաղաղութիւնը խանգարեն։

Ինչ վերաբերում է Ստեֆչովին, նա Միլկու մօտ պատահած դիշերային անցքից յետոյ մի առանձին յաղթական տեսք չունէր։ Մինչև վերջին ժամանակները իր տանը թաղնուած լինելով, նորից լոյս աշխարհ երևաց։ Ընդհանուրի ուշադրութիւնը կլանող եանովի դէպքը նրա խայտառակութիւնը թուլացրեց։ Ամենից առաջ նա քիթը դարվաղից դուրս հանեց, ապա մօտեցաւ ջրհորին, երբ այնտեղ ոչ ոք չկար, ջուր խմելու։ Միւս օրը համարձակուեց հրապարակը դուրս գալ, նոյնիսկ մի քանի բարեկամների այցելեց և վերջապէս մտաւ սրճարանը։ Խայտառակութիւնը նորան աւելի ժպիրհ դարձրեց։ Սակայն Լալկայի հետ նշանուելը չյաջողուեց։ Իւրդանն անգութ կերպով վռնդեց Միխալակիին, հաջի Սմիոնին, որոնք սուրբ Անդրէյի տօնի առաւօտ վաղ ուղում էին մտնել նորա մօտ. նոցա յայտնի չէր Միլկայի ու Ստեֆչովի հետ պատահածը։

Բայց փետրուարի սկզբին Իւրդանի բարկութիւնն իջաւ. Ստեֆչովի դաւաճանութիւնը ոչ ոք չիմացաւ. ամբողջ մեղքն ու դայրոյթը թափում էին չարաբաստիկ ապուշի գլխին, որին վանահայրն ստիպել էր խոստովանել, որ տաճիկների միակ վկան ինքն է եղել։ Դրանից հասկանալի դարձան և այն նշաններն ու բացականչութիւնները, որոնցով, հաւանական է, Մուհչօն մատնել էր Բոյչօին։ Բայց թէ ինչպէս և ում, այդ անյայտ մնաց։ Նրան ազատութիւնից զրկեցին և որպէս կատաղի խելագարի՝ բանտարկեցին վանքի դռների մօտ գտնուող աշտարակում։

Բաղան իրան բոլորովին կորցրել էր։ Այն բարի մարդիկը, որոնց մօտ նա ապաստանել էր, չգիտէին ինչպէս նորան մխիթարեն։

— Խեղճ աղջիկը կկորչի, ասում էին նրանք կսկիծով։

Անցաւ ժամանակ, հոգեկան լաւ տենչերը նորից վերածնուեցին։ Բազմաթիւ միջնորդութիւններից յետոյ Մարկօն և Միչօ Բաջայդէտօն երաշխաւոր կանգնելով, կարողացան ազատել Սոկոլովին, որն՝ սակայն ինչպէս բանից երևաց դիակների պատմութեանը մասնակից չէր եղել։ Երկու երաշխաւորներից և ոչ մէկը չգիտէր, որ ունեցել են իրանց հոգսերը թեթևացնող մի դաշնակից։

Այդ դաղտնի դաշնակիցը, որ օգնել էր Բայ Մարկօի բժշկին առաջին անգամ ազատելիս, այժմ ժամանակ է յիշելու, ծերունի Բէյի կինն էր, ինչպէս որ դուշակել էր Ռոմօամը երեկոյեան՝ իր ապաղօթքի ժամանակ։

Մի անգամ Բէյի երիտասարդ կինը եղել էր բժշկի մօտ և վերջինս Յովսէփի հաստատակամութիւնը չու�եալով, չէր կարողացել դայթակղութեանը դէմ կենալ... Այդ կարճատև, վաղուց արդէն դադարած, ծանօթութեան շնորհիւ՝ Սոկոլովին այս անգամ ևս անտանելի դրութիւնից դուրս եկաւ։

Ազատուելուց մի քանի օր յետոյ, Կաբլեշկովը, որպէս առաքեալ, եկաւ քաղաք և տեղաւորուեց Բրզոբեգունեկի բնակարանում։ Այնտեղ նա հաւաքեց կազմալուծուած կոմիտէի անդամներին. մի ճառով վերականգնեց նրանց յոյսերը և ուղղակի վանք առաջնորդեց, ուր վանահայր Նաթանայէլը աւետարանի վրայ նրանց երդուեցրեց և օրհնեց վերակազմած կոմիտեն յետագայ, աւելի բեղմնաւոր գործունէութեան համար։

Դրանից յետոյ աւելի մեծ ոյժով եռալ սկսեց նախապատրաստական աշխատանքը։

Ապրիլի սկզբին Կաբլեշկովը նորից եկաւ Սպիտակ Եկեղեցի։

II.

ԲԺԻՇԿ ՍՈԿՈԼՈՎԻ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ.

Սոկոլովը յուզուած անց ու դարձ էր անում իր սենեակում: Նա պատուհանից յաճախակի դուրս էր նայում դէպի բակը, որը ամբողջովին սուզած էր կանաչների մէջ: Կեռասենիները և բալենիները ծաղկի մէջ կորած կարծես ձիւնով պատած լինէին: Խնձորենիները տարածում էին իրենց սպիտակ և կարմրաւուն ծաղիկներով փարթամ ճիւղերը: Ծիրանի ծառերը և դեղձենիները ասես հրաշագեղ զոհարներով ցանուած, լուսամուտներն էին մտնում: Կանաչով բուսած ճանապարհիկը անցնելով բակի միջով, ընկղմուել էր սուերների մէջ, որպէս ծառուղի, որի վերևից պտղատու ծառերը խոնարհւում էին դէպի ցած, խճճելով միմիանց իրանց ճիւղերը:

Բժիշկը անկասկած մարդու էր սպասում:

Նա զգալի կերպով փոխուած էր. նրա դէմքը, որ դեռ պահել էր իր գեղեցկութիւնն ու բարեհոգութիւնը, դունատուել և նիհարել էր, ինչպէս հիւանդութիւնից կազդուրող մարդու դէմքը: Երկարատև բանտարկութիւնն ու բարոյական տանջանքները վշտի կնիք էին դրել նրա վրա: Սոկոլովն անհամբեր ու մախծոտ էր դարձել:

Բանտարկութեան ժամանակ նրա կրած բազմաթիւ տանջանքներին մէկն ևս աւելացաւ. նա իմացաւ, որ Ստեֆչովն ու Լալէան պսակուել են. այդ նրան սպանում էր: Նա երդուեց, առաջին իսկ հնարաւոր դէպքում սպանել Ստեֆչովին, որն եղել էր նորա բոլոր դժբախտութիւնների պատճառը:

Նա խորը համոզուած էր, որ մատնութիւնը Ստեֆչովի գործն էր: Վերջինիս ոչնչացնելու միջոցները մինչև անդամ նա գտել էր. և նրա վրէժխնդիր բնաւորութիւնը յանգեց մի ամենադաժան ծրագրի. նա վճռեց Ստեֆչովին Կլէոպատրայի ճանկը գցել: Թէ ինչպէս, այդ դեռ ևս չէր մտածել:

Երբ նա քաղաք դարձաւ, նորա առաջին գործը եղաւ մտնել Մարկո Իվանովի, Մեչա Բէյզադէտոյի մօտ շնորհակալութիւն յայտնելու համար: Ապա այցելեց՝ Կլէոպատրայլին, որին իր ծեռբակալութիւնից յետոյ Նեչօ Պավլովը գաղտնի կերպով իր մօտ էր

տարել: Խեղճ գաղանը արդէն բաւականի մեծացած, խիստ նիհարած էր և միայն մի քանի բոպէ դիտելուց յետոյ հազիւ ճանաչեց իր հին տիրոջը: Կլէոպատրան արդէն օտարացել և տիրոջից սառել էր. նրա կոպիտ բնազդները զարգացել էին: Նա շուտ շուտ ամեն դատարկ բանից բարկանում էր և ցոյց էր տալիս իր ատամները, բոլորովին ոչ բարի նպատակներով: Բժիշկը մտքով տեսնում էր իր տեսի Ստեֆչովին գաղանի բրդոտ դրկում սեղմուած և նախօրօք հրճւում էր: Բայց երբ իմացաւ, որ ամենի պատճառը Մանչօն է և երբ յեղափոխական կոմիտէն վերսկսեց իր գործունէութիւնը, նա ամբողջովին ապստամբութիւնը նախապատրաստելու մեծ գործին նուիրուեց: Վրէժխնդրութեան զգացմունքը, որ դուտ անձնական բնաւորութիւն էր ստացել, նորա մտքում յետին տեղը բռնեց: Նա որոշեց բոլորովին արձակել և Կլէոպատրային, որը այժմ նորան խանդարում էր:

Քաղաք վերադառնալուց յետոյ Սոկոլովը բոլորովին թողեց բժշկութիւնը: Ինքը ոչոքի չէր այցելում և հիւանդները կասկածի տակ ընկնելու երկիւղից նրա մօտ չէին գնում: Գործիքները, լցուած սրրակները, փոշով պատած բժշկական գրքերով լի արկղները — այդ բոլորը մառանում կիտուել էր միաեղ իրար վերա և մկներն արդէն կարդացել էին նրա ֆրամակոպէների կէսը:

Միայն մի հիւանդ դեռ ևս վստահանում էր նրան այցելելու. դա Եարոսլաւ Բրզոբեգունեկն էր: Նուտով բժշկի վերադառնալուց յետոյ՝ նա անզգուշութեամբ իր ծեռքն ասրճանակով վիրաւորել էր: Այդ դժբախտութիւնը նրա կողմը դրաւեց բոլոր համաքաղաքացիների համակրութիւնը և սարսեց հրաժարուել լուսանկարչութիւնից, որը ինքը վաղուց արդէն հրաժարուել էր դորանից:

Դուռը բացուեց և ներս մտաւ ինքը Բրզոբեգունեկը: Նա հագած էր նոյն խունացած ու գզգզուած շորերը, որ Օգնեանովից էր ստացել, ոսկեղը գլխարկն ու ահագին, շէկ բակենբարտները առաջուայ պէս գարձեալ պէտք է նրան աւստրիացու նմանեցնէին: Սպիտակ շորի կտորով փաթաթած աջ ծեռքը կախուած էր կրծքին: Նա առաջ էր շարժւում դանդաղ ու զգոյշ քայլով, երևի

ցաւերից խուսափելու համար։ Դէմքը, որ ամէն մի քայլ փոխելիս կնճռոտում էր, արտայայտում էր տանջանք։

Սենեակ մտնելով, նա ուշադրութեամբ շուրջը նայեց և ձեռքի կապը մահճակալի վերա դցեց։

— Բարի լոյս, ընկեր. ու ձեռք տուեց Սոկոլովին։

Բժիշկը պինդ սեղմեց մեկնած ձեռքը, իսկ հիւրը տանջանքի ամենափոքր նշան անգամ ցոյց չտուեց, որովհետև նրա վէրքը հնարովի էր. պէտք էր մի կերպ արդարեցնել յաճախ բժշկի մօտ գալը։

Ի՞նչ նորութիւն կայ, հարցրեց նրան բժիշկը։

— Կաբլեշկովը եկել է։

— Եկե՞լ է, ե՞րբ։

— Ուշ գիշերին, այժմ ինձ մօտ է։

— Պէտք է տեսնել նրան, վրա բերեց բժիշկը։

— Այժմ նա ջերմ ունի, իսկ ամբողջ գիշերը տաքութեան մէջ էր։

— Օ՜հ, խեղճ մարդ։

— Այո՛, բայց նա այնուամենայնիւ հանդիստ չէ մնում. ինձ երեք մեծ նամակներ թելադրեց, որ այսօր ևեթ պէտք է ուղարկել։ Իսկական սնդիկ է... թէև հաղիւ է շունչ քաշում։ Հաղը խեղճին շատ է տանջում...

— Պէտք է գնամ տեսնեմ, ասաց բժիշկը դլխարկը վերցրնելով։

— Ոչ, նա այժմ քնած է... ինձ յանձնարարեց երեկոյեան կոմիտէն ժողովի հրաւիրել, նա ինքը կլինի նիստին։

— Թող խեղճը մի քիչ քնի, նրան ժողով դալ չէ կարելի։

— Գնա՛ համոզի՛ր նրան. ինքդ լաւ դիտես՝ թէ նա ինչ դատ է... երեկոյեան անդամներին հրաւիրիր։

— Լաւ, նախագահին կիմացնեմ։

Բրզոբեգանեկը դլխով արեց և ասաց.

— Լա՛ւ, իսկ հարիւր ռուբլին դտա՞ր։

— Ձէ՞նքի համար. դտայ։

Լուսանկարիչը զարմանքով բժշկին նայեց։

— Իսկապէ՞ս.

— Ինչո՞ւ պէտք է սուտ ասեմ։

— Ո՛վ տուեց։

— Այդ չեմ կարող ասել... գաղտնիք է։

— Ոսկիներն այժմ քեզ մօտ են, դարձեալ թերահաւատութեամբ հարցրեց Բրզոբեգունեկը։

— Ո՛չ, ինձ մօտ չեն, բայց շուտով կբերեն... Ես այժմ սպասում եմ այն մարդուն, որ նուիրել է։

— Կեցցե՛ս, Սոկոլով, ապրե՛ս, կոչեց լուսանկարիչը։

— Լռի՛ր։

— Օ՜հօ, ո՞վ է տուել քեզ այս դաշոյնը, բացականչեց Բրզոբեգունեկը բժշկի ժիլետի տակից դուրս քաշելով փայլուն դէնքը։

— Իվան Մաջուրն է շինել ինձ համար... Այժմ նրան պատէրներով խեղդում են... լաւն է. չէ՞։

Բրզոբեգունեկն ուշադրութեամբ դիտում էր դաշոյնի վրա փորագրած տառերը։

«Ս. կամ Ս.» ի՞նչ միաք ունեն այս տառերը։

— Ապա դտի՛ր։

— «Սոկոլով կամ Ստեֆչով», հեղնանքով հարցրեց Բրզոբեգունեկը։

— «Աղատութիւն կամ մահ *)» զօրեղ կերպով ասաց բժիշկը։ Ստեֆչովի անունը նրա մէջ մի անդուրեկան զգայմունք զարթեցրեց։ Յետոյ նա աւելացրեց։

— Այժմ Ստեֆչով, Մրստեֆչով և նման այլանդակութիւնները մեզ չեն հետաքրքրում, սիրելի բարեկամս... Պէտք է գիտնաս, որ ես ամեն ինչ մոռացել եմ... Ով յեղափոխութիւն է պատրաստում, նա պէտք է ամեն ինչ մոռանայ...

Բրզոբեուգնեկը խորամանկ հայեացքով նրան նայեց։

— Լալկային էլ ես մոռանում, հարցրեց նա նենգ ժպտով։ Բժիշկը մռայլուեց. նա զայրոյթով պատասխանեց.

— Այո՛. Լալկային էլ։ Ես քեզ ասացի, որ ամեն ինչ մոռացել եմ և կմոռանամ... Սակայն դու բաւական շատախօս ես...

---

*) Բոլդարերէն «Աղատութիւն» կամ «Մահ» բառերն սկսւում են միևնոյն՝ «Ս» տառով։

Նրա յուզված ձայնից պարզ երևում էր, որ ոչինչ չէ մոռացել և դժուար թէ այդպէս հեշտութեամբ կարողանայ մոռանալ: Նրա սրտին կամ ինքնասիրութեանը հասցրած հարուածը խիստ զօրեղ էր: Ապստամբութիւնը պատրաստելու տենդային աշխատանքը առժամանակ թեթևացրեց նրա դեռ ևս չառողջացած վէրքի ցաւը: Զանազան տեսակի գործեր կլանում էին նրա ամբողջ էութիւնը, ամբողջ ուշքն ու միտքը: Այդ բոլոր հոգսերը նրան այն աստիճան էին հարբեցնում, որ բարոյական ցաւի զգացումը առժամանակ խեղդւում էր. այդպէս միայն դինին է ազդում հարբեցողի վրա:

Բակում երևաց Կանդովը, որ և վերջ դրեց անդուրեկան խօսակցութեանը և գրաւեց բժշկի ուշադրութիւնը:

— Այդ ինչ տեսակի թռչուն է նորին ողորմածութիւնը, հարցրեց Բրզոբեգունեկը:

— Կանդովն է. Ռուսաստանում սովորող ուսանող է:

— Գիտեմ. բայց ինչ մարդ է:

— Փիլիսոփայ, քաղաքագէտ, սոցիալիստ, նիհիլիստ... և սատանան գիտէ թէ՝ էլ ինչ... Մի խօսքով նրա այնտեղն է հիւանդ:

Եւ Սոկոլովը ձեռքը ճակատին տարաւ:

— Իսկ չի՞ ուզում ինքն էլ ժողովրդի գործին մասնակից լինել:

— Ո՛չ, այդ նրա ինչի՞ն է պէտք: Գիտե՞ս ինչ. նա գնում է Ռուսաստան դիպլոմ ստանալու, բարկութեամբ ասաց բժիշկը:

— Մ՞խ այդ ուսումնական ագռաւները, այդ ուսումնական ագռաւները. դոցա տանել չեմ կարող, բացականչեց Բրզոբեգունեկը: Ով որ դիպլոմաւոր է, նորան դուրս գցի մարդկանց շարքից... Ժողովուրդ, ազատութիւն — այդ ամենևին նրանց չէ վերաբերում... Տուր նոցա կոմֆորտ, կին, սեփական օջախ և խոհեմութիւն...

— Բրզոբեգունեկ, այդ ճիշտ չէ: Կա՛ց. դու դիպլոմ ունե՞ս:

— Ե՞ս, Աստուած մի արասցէ:

— Այո՛, ճիշտ է. Բոլոր էլ ոչ մի այդպիսի բան չունէր... ասաց բժիշկը:

Եթէ դիպլոմ ունենայի, ես էլ նոցա պէս էշ կլինէի... դու էլ, օրինակ՝ եթէ բժշկական դիպլոմդ ոչ թէ Ալբանական սարերում, այլ որևէ բժշկական ֆակուլտետից ստացած լինէիր, դու էլ փող աշխատելու մասին կմտածէիր՝ և ոչ թէ խռովութիւն կսարքէիր...

Այդ վայրկենին ուսանողը մտաւ սրահը:

— Բրզոբեգունեկն շտապով կապոցը ձեռքն անցկացրեց, որովհետև Կանդովն արդէն սենեակի դուռն էր բաղխում:

— Մտէ՛ք, կոչեց բժիշկը:

Կանդովը ներս մտաւ:

— Եարոսլաւ Բրզոբեգունեկը յարգանքով նրան գլուխ տուեց և դուրս գնաց:

Կանդովն այնքան էր մտքերի մէջ խորասուզված, որ նրան ամենևին չնկատեց:

Կանդովը լաւ կարած, բայց արդէն մաշած հագուստով էր: Նրա դժգոյն, նիհար դէմքը տանջանք ու հոգս էր արտայայտում, երազող հայեացքը խաղաղ, թախծալի լուսով էր փայլում: Երևում էր, որ նրա հոգում մի անյայտ վիշտ է թաղնուած: Վերջին ժամանակները նա մի կատարեալ ճգնաւոր էր դարձել:

Բժշկի հրաւէրով նա նստեց սենեակում գտնուող միակ աթոռի վրա՝ Սոկոլովը, այդ անսպասելի այցելութիւնից խիստ զայրացած՝ նստեց մահճակալի վրա:

— Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, պարոն Կանդով, հարցրեց Սոկոլովը, ենթադրելով, որ ուսանողը որևէ հիւանդութիւն ունի և ուշադրութեամբ նայեց նրա սև, չոր դէմքին:

— Փառք Աստծու, առողջ եմ, կարուկ պատասխանեց Կանդովը համարեա մեքենաբար:

— Ուրախ եմ, որ բոլորովին առողջացել էք:

— Այո՛, լաւացել եմ, առողջ եմ:

— Ուրեմն նորից Ռուսաստան էք գնում:

— Ո՛չ, չեմ գնում:

— Բոլորովին:

— Այո՛, ես ընդմիշտ այստեղ եմ մնում, խուլ ձայնով պատասխանեց Կանդովը:

Բժիշկը զարմացմամբ ու հեգնանքով նրան նայեց: Այդ հայեացքը կարծես ուզում էր ասել. «բարեկամս, սիրելիս, ինչու դրպրոց չես փախչում, գնում է փիլիսոփաների մոտ: Մեր երկրում ամեն տեղ հրդեհ է. այստեղ դու ոչ մի գործ չունես անելու»:

Լռություն տիրեց:

— Կարելի է ուզում էք այստեղ ուսուցչություն անել, արհամարհոտ հոդածությամբ հարցրեց բժիշկը:

Կանդովը քիչ կարմրեց և պատասխանի փոխարեն խստությամբ հարցրեց.

— Պարոն Սոկոլով, ե՞րբ է ձեր կոմիտեի նիստը:

— Ի՞նչ կոմիտե, հարցրեց Սոկոլովը այնպիսի ձևով, որ կարծես ոչինչ չհասկացաւ:

Կանդովն աւելի ևս կարմրեց և ըստ երևույթին իր վրա որոշ ոյժ գործ դնելով՝ խոսեց.

— Ձեր կոմիտեի. մի՛ ծածկէք, ես բոլորը գիտեմ... գիտեմ՝ թէ ո՞վ է մասնակցում և այն, թէ նիստերը ո՞րտեղ են լինում... բոլորը... ինձնից մի՛ թաքցնէք...

— Տարօրինակ է, որ ձեզ չհետաքրքրող այդքան բաներ գիտէք... Բայց ենթադրենք, որ այդ այդպես է... դրանով ի՞նչ էք ուզում ասել, հարցրեց բժիշկը յամառ ու վրդովուած հայեացքը նրան ուղղելով:

— Ես ձեզ հարցնում եմ, շո՞ւտ կլինի կոմիտեի նիստը վճռականությամբ խոսեց Կանդովը:

— Այո՛, շո՛ւտ, այս երեկոյ, նոյն տոնով պատասխանեց բժիշկը:

— Դուք փոխ-նախագահն էք, այնպէս չէ՞:

— Փոխ-նախագահն եմ, եթէ ուզում էք:

— Ես մի խնդիր ունեմ:

— Ի՞նչ խնդիր:

— Խնդրում եմ ինձ անդամ առաջարկէք:

Ուսանողի ձայնը յուզմունքից դողում էր:

Բժիշկը ապուշ կարեց. նրա համար բոլորովին անսպասելի լսել այդ Կանդովի կողմից:

— Այդ ի՞նչպէս, Կանդով:

Վերջին մի քանի րոպէում Կանդովը Սոկոլովի աչքում վայրկեան առ վայրկեան անընդհատ մեծանում էր: Բայց նրան ամենից շատ յուզեց այն, երբ ուսանողը առաջարկ արեց Ստեֆչովին սպանելու, սպանելու սուրբ գործի այդ հակառակորդին, երբ Կանդովը յանձն առաւ այդպիսի մի արիւնալից հերոսութիւն կատարելու, որպէսզի հաստատէ իր անձնուիրութիւնն այն գործին, որին նուիրուում էր այդ օրուանից:

Այդ ասողը ուրիշ մարդ լինէր, կասկածի տեղիք կը տար, բայց Կանդովի ոգևորութիւնն անկեղծ էր, այդ երևում էր նրա հայեացքի փայլփլող կրակից, յուզուած դէմքի ցնցումներից ու ջղածգութիւնից:

Սոկոլովը մի քանի րոպէ նայում էր Կանդովի աչքերին: Ցանկարծ նա վեր թռաւ:

— Սպասիր, կոչեց նա, այդ սրիկային դևերի ծոցը կճամբենք... Ես ու դու վիճակ գցենք, ում որ ընկնի...

— Ի՞նչ... Ո՛չ, ես աւելի շուտ եմ առաջարկել...

— Ես էլ նրա հետ հաշիւներ ունեմ. և ես իրաւունք ունեմ, քան դու... բայց արդէն ասացի, վիճակը կորոշի...

Կանդովն շեշտակի, խորը յուսահատութեամբ լցուած հայեացքով նայեց նորան ու դուռաց.

— Ստեֆչովն իմ զոհն է, ես նրան ոչ ոքի չեմ տայ:

Սոկոլովը մռայլ կերպով շրջում էր սենեակում: Նա պատասխանեց չոր և ցրտու.

— Պարոն Կանդով, այս երեկոյ կոմիտէն կվճռէ...

Այդ խոսքերից յետոյ Կանդովի յուզմունքը հանդարտուեց:

— Լաւ, խուլ ձայնով պատասխանեց նա:

— Ուրեմն՝ վիճելու բան չունենք, ասաց Սոկոլովը և նրա դէմքին ժպիտ երևաց: Ապա աւելացրեց.

— Իսկ ես ուզում եմ առաջարկել, որ միջոցներ ձեռք առնեն նաև մի այլ սրիկայի վերաբերբամբ. նա այժմ նոյնպէս վտանգաւոր է և յատկապէս կեղտոտութիւն անելու համար է եկել այստեղ:

— Այդ ո՞վ է:

— Դու նրան չես ճանաչում, դա լրտես Սամսոնովն է: Նա կանցեալ օր նրան պատահեցի... Ֆիլիպոպոլից է եկել... նա ուղ-

21102-60 (1002/6086)
Հ.Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
ИМЕНИ А. МЯСНИКЯНА

ղակի ինձ մօտեցաւ և շուտով երեսիս նայելով, հարցրեց. — Ի՞նչպէս է ձեր գործը» — և աչքով արեց հասկացնելու համար, թէ դիտես էլի, ի՞նչ գործի» մասին է խօսքս և ուղղուկի պէս ինձ կպաւ: Քրտինքս կոխեց, մինչև գլխիս ոտ արի... Համոզուած եմ, որ այդ անիծածն արդէն հոտն առել է...

— Ի՞նչ էք ուզում անել:

— Նրա մասին ժողովում մի քանի խօսք կասեմ. տեսնենք: ի՞նչ միջոցների պէտք կլինի դիմել... Հա՛, գալի՞ս է... բացականչեց բժիշկը, տեսնելով, որ բակն է մտնում մի դեղեցկադէմ, քընքոյշ պատանի, եւրոպական ձևով, կոկիկ ու լաւ հագնուած: Ըստ երևոյթին բժիշկը նրան էր սպասում: Որովհետև շփոթուեց, երբ նորան տեսաւ:

— Այդ երևի հիւանդ է գալիս ձեզ մօտ, հարցրեց ուսանողը

— Այո՛, ներեցէ՛ք, առաց բժիշկը դէպի դուռը վազելով:

Երբ վերադարձաւ, նրա դէմքն ուրախութիւնից փայլում էր:

— Այդ ո՞վ է, հեռացող այցելուին նայելով, հարցրեց Կանդովը:

— Պենչո Դիամանդիևն է, մօտ օրերս եկաւ Գաբրիան գիմնազից:

— Ի՞նչպէս, սրիկայ Ստեֆչովի աներորդի՞ն, լիրբ Իւրդանի որդի՞ն, հարցրեց Կանդովը զարմացած. բարեկամնե՞ր էք:

— Բարեկամներ չենք, բայց աւելի քան բարեկամներ ու եղբայրներ ենք... մենք ընկերներ ենք. նա կոմիտէի անդամ է...

ԵՐԿՈՒ ԲԵՒԵՌՆԵՐ

Զորբաչի Իւրդանն օրըստօրէ ծերանում և արագ թուլանում էր:

Սատմոքսի հիւանդութիւնը, որ երկար ժամանակ նորան անկողնումն էր պահել, խիստ կերպով ազդեց նրա բնաւորութեան վրա և աւելի դիւրաբորբոք ու անհամբեր դարձրեց:

Այդ առաւօտ եղանակը հիանալի էր և նա գնաց ոտքով քաղաքի ծայրը զբօսնելու—իւր այդումն: Քարէ մեծ պարսպով պատած այդ ընդարձակ այգին լի բազմերանգ ծաղիկներով և կանաչով

ծածկուած պաղատաւ ծառերով՝ լաւ ազդեց հիւանդ ծերունու վրա: Մաքուր և զով օդն ու զարնանային արևը նրան կենդանացրին:

Տուն դառնալիս նա աւելի աշխոյժ էր քայլում:

Սակայն հասնելով իր փեսայ Գինկո Գինկինի տան մօտ, նա իրան յոգնած զգաց. ոտքերը թուլացան: Ներս մտաւ փեսի մօտ:

Բակում, Գինկո Գինկինը աւելի ևս կռացած ու գլուխը կորցրած՝ գրկել էր բարուրած երեխային, որը ճչում ու լալիս էր: Հայրը ՅԾմօր պէս նորան կրծքին սեղմած օրօրում և նանիկ էր ասում:

Իւրդանը մօտեցաւ գորգով ծածկած բազկաթոռին և ծանր նստեց:

— Ծծմա՞յր ես դարձել. իսկ ո՞ւր է ինքը:

«Ինքն» ասելով, Իւրդանն իր աղջկանն էր հասկանում:

Գինկոն շփոթուեց, շփոթութիւնը նրա բնական դրութիւնն էր և կրմկրմալով փնթփրնթաց.

— Նա գործ ունի, ես եմ Իւրդանիկին պահում... ինձ ասաց, որ քիչ բռնեմ, ման ածեմ երեխին... Ինքը... ինքը... աշխատում է...

— Իսկ թէշիկ էլ չի՞ տուել մանելու, արհամարհական ձայնով հարցրեց Իւրդանը: Գինո, ինձ համար սուրճ պատրաստիր, ձայն տուեց նա աղջկանն՝ առանց նորան տեսնելու:

— Նա հունցում է... հունցում... գործ ունի... դրա համար էլ երեխային ես եմ պահում... սուրճ... սուրճ... Ես կպատրաստեմ քեզ համար, իսկոյն երթամ: Սուրճի ու շաքարի տեղը գիտեմ, փնթփնթաց Գինկոն և մանկիկին պապի գիրկը դնելով, ներս վազեց:

Երեխան աւելի դիլ ճչաց:

Իւրդանը բարկացաւ, երեխին բազկաթոռի անկիւնը դրեց, վերկացաւ ու գոռաց.

— Ո՞ւր կորաք, գրողի տարածներ. մա՞րդ է այստեղ նստած, թէ էշ: Գինո՛, Գինո՛:

— Հայրի՛կ, բարով ես եկել, ի՞նչ կայ, առո՞ղջ ես: Ցես, ինչ հրաշալի եղանակ է, լաւ ես արել, որ մանգալու ես գնացել, պա-

տասխանեց շէմքից Գինկօն ուրախ ու ժպտերես։ Նա սպիտակ գոգնոց էր կապել. թևերը մինչև արմունկները վեր էին քաշած, կանաչ թաշկինակը վիզը փաթաթած, թեքուել էր դէպի ծործորակը։ Երեսը ալիւրով էր ծածկուած։ Այդ տեսքով նա հրապուրիչ էր և յիշեցնում էր Ֆլամանդեան շկոլայի կենցաղի պատկերները։

— Ի՞նչ ես անում։ Ի՞նչ է գլխից դուրս տալիս քու կնածարդը։ Ի՞նչ ես ալիւրոտուել ջրաղացպանի կնոջ պէս։ Մի բաժակ սուրճ պատրաստող էլ չկայ, բարկացած և հրամայաբար մրթմրթաց ծերունին։

— Ների՛ր, հայրիկ, ես բանի էի... այս րոպէիս սուրճ կպատրաստեմ քեզ համար... Գինկո՛, ո՞ւր ես կորել. Իւրդանին տար քնացրու։

— Ի՞նչ ես անում. ի՞նչ ես հունցում։

— Հունցում եմ... հունցում... տխր պէտք է հունցել... խօմ մենք անշունչ քար չենք... մենք էլ աղնիւ բոլշարներ ենք, ասաց Գինկօն և ծիծաղեց։

—Ի՞նչ բոլգարներ։ Ի՞նչ ես հունցում, խոժոռած հարցրեց հայրը։

— Զորուկներ (սուխարի), հայրի՛կ։

— Զորուկնե՞ր

— Բա ի՞նչ. հարկաւոր չէ՞։

— Ի՞նչի համար է չորուկը, բաղնի՞ս պիտի գնաք, ի՞նչ է։ Ի՞նչ քէֆերի յետևից էք ընկած։

Պատասխանի փոխարէն Գինկան հրրհրատաց։

Իւրդանը նրան նայեց արդէն բոլորովին մռայլ։

Նա չէր կարողանում տանել աղջկայ այդ մշտական և անհիմն ծիծաղը. դրանք երկու իրար կատարելապէս հակադիր բնաւորութիւններ էին։

Աղջիկը մօտեցաւ նրան և կամացուկ շշնջաց.

—Այժմ ի՞նչ բաղնիսի մասին մտածելու ժամանակ է։ Ուրիշների համար ենք չորուկ պատրաստում. — երիտասարդների համար։

—Ի՞նչ երիտասարդների։

— Բալկանները գնացող բոլգար երիտասարդների, հայրի՛կ։

— Գինո՛, ի՞նչ ես գլխիդ դուրս տալիս, ի՞նչ երիտասարդների մասին ես խօսում, հարցրեց Իւրդանն աւելի ու աւելի տգշած։

Գինկան աւելի մօտեցաւ և ասաց.

— Ապստամբութեան համար... կոմիտէն ախր մեզ յանձնարարել է։

Եւ նա նորից հրհրաց։

Իւրդանը տեղից վեր թռաւ. նա իր ականջներին չէր հաւատում։

— Ի՞նչ ապստամբութեան... ի՞նչ կոմիտէ... խռովութի՞ւն պիտի լինի, ի՞նչ է...

— Խռովութիւն, այո՛, խռովութիւն... այլևս չենք ուզում սուլթանին հպատակուել, յանդգնաբար պատասխանեց Գինկան։ Հայրը չիբուխը ծեռքին վրա պրծաւ նրան խփելու, բայց նա կողքի թռաւ և հարուածից խոյս տուեց։

Սփրթնած, բարկութիւնից դողալով ծերունին աղաղակեց.

— Գինո՛, շան աղջիկ, յիմար կնիկ, դու էլ ես խռովութեան մասին մտածում։ Թեշիկդ ու ասեղդ թողած՝ հայդուկներին ու սրիկաներին չորուկ ես պատրաստում։ Ամօթ չունե՞ս, ցնդու
ած... Տեսնում ես, սա էլ չի ուզում սուլթանին։ Գարշելի՜ արարած, սուլթանը քեզ ի՞նչ է արել, տղի՞դ է մորթել, թէ՞ ծամդ է կոխոտել... Տուն ու երեխաներին թողած՝ գնում է սուլթանին տապալելու... իսկ դու ի՞նչ ես նայում, հնդուհա, դու էլ ես սրա հետ, գո՞ւ էլ կմտնես դրօշակի տակ... կատաղութեամբ դարձաւ Իւրդանը մարդուն, որը վախեցած՝ սենեակից դուրս էր նայում։

Գինկօ Գինկիին ինչ-որ մրթմրթաց ու նորից սենեակը քաշուեց։ Այնտեղ Գինկան շտապով շորերը փոխում էր, որովհետև նկատել էր, որ հօր աղմուկից դարբաղի մօտ հետաքրքրուողներ են հաւաքուում։ Նա ամուսնուն տեսաւ թէ չէ, վերցրեց կօշիկն ու սկսեց հարուածներ տեղալ նրա մէջքին։

— Անպիտա՛ն, ինչո՞ւ ասացիր, թէ ես չորուկ եմ պատրաստում։

Բայց Գինկօն՝ տղամարդու արժանապատուութեան հպարտ գիտակցութեամբ կնոջը պատասխանի չարժանացրեց և հարեւան

սենեակն ընկնելով դուռը կողպեց։ Իր և կնոջ կօշիկի միջև այդ պատնէշը կանգնեցնելուց յետոյ, նա թռունալից շշնջաց.

— Հիմա խփի՛ր, թէ կարող ես- Ես քո մարդն եմ, իսկ դու կինս... Ապա՞ թէ հիմա էլ խփես...

Բայց Գինկան նրան չէր լսում. դուրս եկաւ բակը, որտեղից հայրն արդէն հեռանում էր՝ բարկացած ու զայրոյթից դողալով։

Իւրդանը տուն հասաւ բոլորովին ջարդուած։

Նա հեալով բակն անցաւ և ուժասպառ նստեց երկրորդ հարկը տանող սանդուխի առաջին աստիճանի վրա։

Զորբաչի Իւրդանը կատաղել էր. թէև բաւական երկար ժամանակ էր՝ անկողնուց պոկ չէր գալիս, բայց շատից քչից նրա ականջին էլ բան էր հասել։ Սպաղայ ապստամբութեան դաղանիքը հասարակական դաղանիք էր դարձել, այդ բանը իմացել էին և խուլերը։

Սակայն այդ, որքան կարողացել էր հասկանալ Իւրդանը, Պանագիւրիշչում, հեռաւոր դաշտերի ու լեռների այդ կողմը պիտի լինէր, և հրդէհը, հետևապէս, հեռու էր նրա օջախից։ Այժմ իր թեթևամիտ աղջկայ միջոցաւ հասկացաւ, որ Սպիտակ-Եկեղեցին ևս սկսել է ծխալ։ Ի՞նչ են անում տաճիկները. կո՞յր են, թէ խուլ, որ գլխի չեն ընկնում, թէ ինչպէս են փորում պեռութեան հիմքերը, մտածում էր նա։

Նորա աջ կողմից մանկական ձայներ լսեցին։ Նրա գլխի վերևը մի պատուհան կար, որ լուսաւորում էր փոքրիկ սենեակ։ Իւրդանը տեղից վերկացաւ և սկսեց սանդուխով բարձրանալ վերև։ Երրորդ աստիճանի վրա նա մեքենայաբար կանգ առաւ և պատուհանից ներս նայեց։ Նրա երկու փոքր որդիքը, որոնցից մեծը հազիւ տասներկու տարեկան լինէր, օջախի առաջ կանգնած՝ ինչ որ գործով էր զբաղուած։ Երեխաներն այնքան էին տարուել իրենց գործով, որ պատուհանից ներս նայող հօր գլուխը չնկատեցին։

Մէկը մի պղինձ կրակին բռնած՝ մեծ ուշադրութեամբ պիտում էր նրա մէջ խաշուող կամ տապակուող բանը։ Միւսը՝ դանակով իր առաջ կիսաւած ինչ որ սև գնդակներ էր կտրտում ու հաւասարեցնում։

Դրանք ձուլած գնդակներ էին. ամանինը կլայէկ էր, որ հալում ու կաղապարներն էին լցնում։

— Զարագործնե՞ր, էշե՞ր, կատաղած գոչեց Իւրդանը, երբ հասկացաւ բանի էութիւնը և չիբուխը բարձրացրած՝ ներս վազեց սենեակը։

Երեխաները արհեստանոցը թողած՝ քամու պէս սրացան փոդոցն ու անհետացան։

— Հայդուկնե՞ր, արիւն խմողնե՞ր, սրիկանե՞ր, անիծուածնե՞ր... Եւ սրանք խռովութիւն են պատրաստում... աղաղակում էր Իւրդանը, որ արագութեամբ սանդուխքով բարձրանում էր վերև. բարկութիւնը նրա ոտներին ոյժ էր տուել։

Վերևում նա կնոջը հանդիպեց։

— Կնի՛կ, դու էլ խօ դաւադրութեանը մասնակից չե՞ս, խրատութեամբ հարցրեց նա։ Ամբողջ ընտանիքս խելքը թռցրել է։ Դուք իմ տունը կքանդէք... ծերութեան օրերիս՝ հոգիս կրակի բաժին կդառնայ...

Եւ նա շնչասպառ հեւում էր։

Կինը շուարած՝ ամուսնուն էր նայում։

— Պենչո՞ն, Պենչո՞ն, ո՞ւր է գնացել, կոչեց ծերունին, թէ որ փոքրերը գնդակներ են ձուլում, ուրեմն նա թնդանօթներ կը լինի ձուլելիս... անպիտաննե՞ր...

Պենչոն այստեղ չէ, Կարլովօ է գնացել, պատասխանեց կինը։

— Գլուխն ի՞նչ բարովը պէտք է տայ այնտեղ, ի՞նչ գործ ունի։

— Կարելի է կաշուեգործի մօտ է գնացել, հարիւր լիրա՞ն է տարել։

— Թոսուն բէյի մօտ... այնտեղ վաղը պէտք է գնար... Առանց հարցնելու ի՞նչպէս համարձակուեց...

Եւ Զորբաչի Իւրդանն իր գրասեղանին մօտեցաւ։

Նա սկսեց քրքրել գրասեղանի արկղները, գրքերն ու հաշուեթղթերը, բայց պահած փողը ոչ մի տեղ չգտաւ։ Դրա փոխարէն՝ թղթերի տակից մի հիանալի տարճանակ դուրս քաշեց։

— Այս ի՞նչ տարճանակ է, ո՞ւմն է։ Այստեղ ես փող եմ դրել, տարճանակ եմ գտնում. սեղանս ո՞վ է քրքրում։

— Քեղնից ու Պինչոյից զատ՝ ուրիշ ոմ է սեղանիդ ծեռք տալիս, բացատրեց կինը։

— Հա՜, այդ էլի քուռակը, այդ Թափառաշրջիկն է։... Նա չի՞ ուզում մարդ դառնալ... Նա էլ է Թագաւորի Թշնամին... Նա խռովարար է... Ուրիշ ոմ պէտք է այս խրլրնքոտներին գնդակ ծուլել ստիպէր... Արդէն ամե՜նքը գործի են. ամենքն իրանց համար կախուելու օղակ են կապում... Մէյ Թէ ի՞նչ օձն է եղել... Թէ ո՞ր բանն այսպէս գնայ, շուտով տանս կատուի ճուտերն էլ խռովարարներ կլսառնան... Կիրիակն եկաւ։

— Նա այստե՛ղ է, բեռներն է կապում։

Իւրդանն շուտով մտաւ սենեակը, որտեղ Ստեփչովն էր գրանում։

IV.

ԱՆԵՐՆ ՈՒ ՓԵՍԱՆ.

Ստեփչովն երկու մշակների օգնութեամբ ապրանքի հակեր էր կապում, որոնք պէտք է ուղարկուէին Ջամանի՝ ապրիլի 23-ին սկսուող տօնավաճառը։ Հեշտութեան համար վերնագդեստն ու գլխարկը նա հանել էր։ Թէև նրա դէմքն աշխատանքից կարմրել էր, բայց այնուամենայնիւ՝ պահել էր նորա անդունութեան և խիստ ու չար հոգու արտայայտութիւնը։

Պատուհանի մօտ կանգնած էր նրա կինը, Լալկան կապոյտ զգեստով։ Կապած հակերի վրա նա նշաններ էր կարում։ Նորա լցած և կանացի հասունութեամբ փարթամացած դէմքին նայելով, կողմնակի մարդն անկարող կլինէր հասկանալ, որ նա դժբախտ կին է և իր կամքին հակառակ է ամուսնացել։ Անփորձ ու հեզահամբոյր, ռոմանտիք մակարդից զուրկ հոգով, մակարդից, որ չէր կարող պատուաստուել նորան այն բռնապետական մթնոլորտում, որտեղ նա մեծացել էր։ — Լալկան շուտով ընտելացաւ իր նոր դրութեանը և հաշտուեց նորա հետ։ Նա Ստեփչովին չէր սիրում և սիրել չէր էլ կարելի, բայց հպատակւում էր և վախենում։ Եւ ամուսինը նրանից ուրիշ ոչինչ չէր էլ պահանջում. սրտի

փոխարէն, որին սիրելու իսկի ցանկութիւն էլ չունէր, նա ստացաւ հարուստ ժառանգութիւն. նա Իւրդանի անմիջական ժառանգը դարձաւ։ Եւ նա զոհ էր։

Երբ Իւրդանը խիստ սփրթնած, յուզմունքից դողդողացող դէմքով ներս վազեց, Ստեփչովը ծեռքից թոկը բաց թողեց, իսկ Լալկան — ասեղը։

— Հը՛, Կիրիակ, աղաղակեց Իւրդանը շէմքից, ինչպէս երեւում է, միայն ես ու դու ենք Թագաւորին հաւատարիմ ծառաներ մնացել։ Տանն արդէն կատուի ծագերն էլ խռովարարներ են դարձել, ատրճանակներ են գնում, գնդակներ են ծուլում... բոց ու կրակ է պատրաստւում, իսկ մենք, այստեղ նստած, տօնավաճառի համար ապրանք ենք դարսում։ Ասենք ես հիւանդ եմ, իսկ դո՛ւ, դու ի՞նչ ես նայում, ինչո՞ւ ես ապրանքի այդքան փող ծախսում, քանի որ այժմ աւազակութեան ժամանակ է վրա հասել։

Երկու մշակն էլ կամացուկ սենեակից դուրս քաշուեցին։

Ստեփչովը շփոթուած, Իւրդանին էր նայում։

— Ի՞նչ ես նայում, ողորմելի, զոռաց Իւրդանը. ես քեզ ասում եմ. ամբողջ ընտանիքս վարակուել է խռովարարութեամբ... չորբաջի Իւրդանի, Թագաւորի ամենահաւատարիմ մարդու ընտանիքը, այն մարդու, որի տանն են իջնում բոլոր փաշաներն ու գեներալները... բա միւսները, հասարակ ժողովուրդն ի՞նչ է անում։ Միքանի սրիկաներ այստեղ մեր քթի տակ կոմիտէ են կազմում, իսկ մենք, բերաններս բաց, ոչխարի պէս մտիկ ենք տալիս... Ի՞նչպէս է որ քաղաքում այսպիսի ժանտախտ է ընկել, իսկ դու մինչև հիմա ինձ ոչինչ չես ասել։

— Հիւանդ էիր, չէի ուզում քեզ անհանգստացնել։

— Իսկ բէկին իմացրե՞լ ես։

Նկատենք, որ թէև պատրաստուող ապստամբութիւնը ոչ ոքի համար գաղտնիք չէր, բայց Ստեփչովը այդ մասին աւելի քիչ բան գիտէր, քան որևէ մէկը։ Նախ այն պատճառով, որ բոլորը նրանից թաքնւում էին, վախենալով նորա հետ ապստամբութեան մասին խօսել. երկրորդը, որովհետև ինքը արհամարհանքով էր վերաբերւում դէպի բոլոր հայրենասէրները և նոցա քարոզը, որ նա համարում էր աննշան ու չնչին բան։

Ստեֆչովի դէմքը կատաղութիւնից կրակ էր կարել։

— Այդ թափառաշրջիկներին այսօր և եթ ես բէյի ծեռքը կտամ, զայրացած ասաց նա։

— Էլ ինչի՞ ես սպասում։

— Նրանք Բէյզադէտոի այգումն են հաւաքւում, թող բոլորին բռնեն ու տանեն քննելու։ Շատ չէ, մի երեքհարիւրական ճիպոտ քաշեն թէ չէ, ծնած մօր կաթի մասին էլ ինչ որ գետեն, կպատմեն... առաջուց պէտք է վերջ տալ այդ զզուելի հակապետական քարոզներին... Ով այստեղի կառավարութիւնից դժգոհ է, թող Մոսկովիա *) կորչի և ոչ թէ մեր խաղաղ տներն կրակ դցէ։

Ստեֆչովը դուռը բացեց և մէկին ինչ-որ փսփսաց։

— Գիտե՞ս այդ թափառաշրջիկներն ո՞վքեր են։

— Գլխաւորը Սոկոլովն է, ասաց Ստեֆչովը գողտուկ, հայեացք ուղղելով Լալկային։ Եւ այդ ժամանակ նրա դէմքը ծռմրուեց։ Դէպի բժիշկը տածած մաղձին միանում էր նաև թագնուած, ինչպէս բորբոքուն կրակ, խանդը։ Եւ այդ քարացած սրտին մատչելի էր սէրը՝ միայն իր այդ տգեղ արտայայտութեամբ։

— Դա այն անիծուածն է։

Ստեֆչովը յետ քաշուեց և սկսեց քրքրել սիւրտուկի գրպանը։

Իւրդանն սպասողական դրութեան մէջ՝ նրան էր սպասում։

— Այս նամակը ես երեկ ծեր տան մէջ գտայ։

— Ի՞նչ նամակ է։

— Սոկոլովի ստորագրութեամբ... Ուղարկւում է Պանդիւրիշչէ, ինչպէս երևում է, իր նման թափառաշրջիկների։

— Իսկ ի՞նչ պիղծ բաների մասին է գրած. դերելո՞ւ... հրդեհի՞։

— Բոլորովին այլ բաների մասին. բան երևոյթին, ես գլուխս կկտրեմ, թէ այդ գրածի տակ ուրիշ բան չպէտք է հասկանալ։ Ասաց Ստեֆչովը, բայց անելով նամակը։ Բայց մի՛ևնոյն է, ի՞նչ ուզում է լինի, Սամանովը բոլորը կհասկանայ ու կբացատրէ։ Նա այնպիսի մի հոտառու շուն է, որ հարիւր վերստի վրա խռովարարների տեղը կիմանայ։

Լալկան լսում էր ամուսնուն և նրա դէմքն աւելի ու աւելի սփրթնում։ Նա կամացուկ սենեակից դուրս եկաւ և իջաւ ներքին յարկը, մօր մօտ։

— Լալո՛, ի՞նչ է պատահել։

— Ոչի՛նչ, պատասխանեց Լալկան և նստեց, գլուխը ծեռքին յենած։

Մայրը, ճաշի պատրաստութեամբ զբաղուած լինելով, աղջկան վրա ուշադրութիւն չէր դարձնում։ Նա ինքը շատ զրգռուած էր և գդալով կերակուրը խառնելով, ժամանակ առ ժամանակ որդոց գլխին անէծք էր կարդում։

— Ծանտախտը նրանց տանի, բոլորն էլ սատկեն։ Հօր գլուխը ուտելու են... Հապիւ էր խեղճ հալևորը անկողնից վեր կացել։ Այժմ է՛լ աւելի կվատանայ... Իրանք էլ գետինն մտնեն, իրանց ապստամբութիւնն էլ։ Գիժ խո՞տ են կերել, ի՞նչ է... ամենքը խելագարուել են։ Գինկոն էլ է խելագար, դատարկագլուխ Գինկոն ևս. դրանք էլ չորուկով (սուխարի) են ուզում կերակրել նոցա... Սև ցաւը դրանց տանի։

Հէնց այդ ժամանակ ներս մտաւ Գինկոն։ Իւրդանեցան իր ամբողջ բարկութիւնը նրա վրա թափեց։

— Ինչո՞ւ ես այդքան բարկանում, մայրի՛կ։ Դեռ պէտք է ուրախանաս... Զորբաչու տնեցիք պէտք է օրինակ տան...

— Գինո՛, լռի՛ր, բղաւեց նրա վրա մայրը. չեմ ուզում քեզ ականջ դնել, դու խելագար ես։

— Ես խելագար չեմ, ես ազգային կին եմ, տաքացած պատասխանեց Գինկան։

— Ազգային կի՞ն. այդ դրանի՞ց է, որ ամեն օր մարդուդ թակում ես։

— Թակում եմ, որովհետև նա իմ գլխի տէրն է, այդ բոլորովին ուրիշ քաղաքականութիւն է, ներքին...

— Օ՜հ, յիմա՜ր, դու պէտք է հօրիցդ լա՛ւ բոլդարացի լինես։ Եթէ հայրդ իմանայ, որ դու Սոկոլովից ստացած լրագրներ ես

*) «Մոսկովիա» Ռուսաստանն է, որ այն ժամանակ ճանաչւում էր որպէս բոլգարներին պաշտպան մի ազգակից պետութիւն։

կարդում, կաշիդ կքերթէ, թէև արդէն քառասուն տարեկան պառաւ ես...

— Սուտ ես խօսում, բոշի պէս խաբում ես... Ծննդին նոր լրացաւ 35 տարիս... իմ տարիքս ես աւելի լաւ գիտեմ...

Աղախինը ներս գալով, ընդհատեց այդ խօսակցութիւնը:

— Խանում, Իւրդան պապը վատ է, ասաց նա վախեցած:

— Դէ, տե՞ս... Ո՞վ Տէր Աստուած, կանչեց Իւրդանիցան և շտապ վազեց ամուսնու մօտ:

Դեռ սանդուխքի վրա նա լսեց Իւրդանի սրտակոուր աղաղակները: Ծերունու կողքի ժակոցը բռնել էր: Նորա դէմքն այլանդակուել, ու կապտել էր, կրծքից յուսահատ ճիչեր էին դուրս թռչում, որ սակայն չէին թեթևացնում նրա տանջանքները: Այդ աղաղակները բոլոր տանեցոց սարսափի մէջ էին գցում և հասնում էին մինչև փողոցը:

Իսկոյն մշակներից մէկին Եանելիի յետևից ուղարկեցին, բայց նա վերադարձաւ և յայտնեց, որ Եանելին տանը չէ, գնացել է Կարլովո: Բայց ոչ թաց քաթան քցելը, ոչ մարմինը տրորելը, ոչ խոտերը, ոչինչ չօգնեց հիւանդին: Նա գլորուում էր յատակի վրա ու մի տեղից միւսն ընկնում:

Իւրդանեցան շարել մնացել էր:

— Բժիշկ Սոկոլովին չկանչե՞նք, դիմեց նա հիւանդին:

— Սաեֆչովը տհաճութեամբ քթի տակ մրթմրթաց:

— Նախանցեալ տարին մի անգամ ես նրան դիմեցի, օգնեց, բացատրեց կինը և նորից դիմեց ամուսնուն. Իւրդան, կանչենք բժշկին:

Իւրդանը մատով բացասական նշան արեց և նորից սկսեց հառաչել:

— Լսո՞ւմ ես, ես ուղարկում եմ բժիշկ Սոկոլովին կանչելու, աւելի ազդու ձևով հարցրեց Իւրդանիցան:

— Նրան չեմ ուզում... մրթմրթաց հիւանդը:

— Քեզ հարցնողն ո՞վ է, ես կանչում եմ, վճռականութեամբ ասաց Իւրդանիցան, մշակին դառնալով.

— Այ տղա, գնա շուտով բժիշկ Սոկոլովին կանչիր:

Մշակը շարժուեց դէպի դուռը և նոր էր ոտքը շէմքից դուրս

դնում, որ իսկոյն տեղումը կանգ առաւ, երբ լսեց Իւրդանի սարսափելի աղաղակը: Նա այնպէս էր գոռում, կարծես իրան մորթում են:

— Նրան չկանչէք, այդ աւազակին չեմ ուզում, չե՛մ ուզում այդ հայդուկին...

Իւրդանիցան յուսահատութեամբ նրան էր նայում:

— Ի՞նչ է, ուզում ես մեռնե՞լ, բացականչեց նա:

— Կմեռնեմ... կորէ՛ք բոլորդ էլ, անիծուածնե՛ր... մռնչաց ծերունին:

Մի երկու ժամից յետոյ ցաւը անցաւ: Երբ Սաեֆչովն այդ տեսաւ, որ աները հանգստացաւ, շտապով հագնուեց ու դիմեց դէպի կոնակը:

Սանդուխքի վրա նա մի փոքրիկ մարդու պատահեց:

— Չը՞, հարցրեց նա, լաւ դիտեցի՞ր:

— Այնտեղ են, Բէյզադէտոյի տանը:

— Դարձեալ այգո՞ւմ:

— Ո՛չ, անձրև է գալիս, նրանք մառանումն են: Ես նոցա հետամուտ եղայ... Ես էլ եմ բան հասկանում... խելքս մի քիչ կտրում է...

Այդ մարդը Կարնարի պանդոկապետ Ռաչկօն էր... Այժմ նա Իւրդանին ծառայութեան էր մտել և միևնոյն ժամանակ նրա փեսայի համար լրտեսութիւն էր անում:

— Հովանոցս բե՛ր:

Մի բոպէ չանցած, Սաեֆչովն արագութեամբ բակից դուրս էր գնում:

Լալկան դռնից լսեց տեղի ունեցող խօսակցութիւնը:

Նա տարօրինակ, զարմացած ու վախկոտ հայեացքով իր ամուսնուն նայեց, ապա շտապով վերև բարձրացաւ ու ներս մտաւ:

V.

ՄԻ ԼՐՏԵՍ 1876 ԹՈՒԱԿԱՆԻՆ.

Բէյի մօտ Ստեֆչովը մի մարդ գտաւ միայն — Սամանովին։ Նրանք նարդի էին խաղում։

Սամանովն տաճիկ կառավարութեան պաշտօնական լրտեսն էր և ռոճիկ էր ստանում Ֆիլիպպոպոլի բէյից։ Դա քառասուն և հինգ տարեկան մի մարդ էր, թէև արտաքինից աւելի մեծ էր երևում։ Նրա երկար, չոր, սև դէմքը, որի վրա սպիտակին էին տալիս երկու պղտոր, սև, շարժուն աչքեր, վաղաժամ կնճիռներով էր ծածկուած և վանող ու չարագուշակ տպաւորութիւն էր թողնում։ Կարճ խուզած պեխերը արդէն խիստ սպիտակել էին, ինչպէս և մազերը, որ կեղտոտ ու գզգզուած կախ էին ընկել նորա կեղտոտ գլխարկի տակից։ Առաջի կողմից գլուխը ճաղատացել էր։ Նա հագել էր սիսեռի գոյնի մի բոլորովին մաշուած սիւրտուկ, որի ճարպոտ օձիքը զզուելի կերպով փայլում էր։ Բարձրահասակ ու վայելչակազմ՝ նա սովորաբար ման էր գալիս գլուխը քարշ գցած, կարծես ճնշուելիս լինէր բոլորի արհամարհանքի ծանրութիւնից։ Նրա ամբողջ կերպարանքի վրա երևում էր չքաւորութեան ու ցինիզմի կնիքը։ Սովորաբար նա Ֆիլիպպոպոլումն էր ապրում, բայց յաճախ շրջագայում էր նաև այլ փոքրիկ քաղաքները։ Ծագումով նա Սպիտակ-Եկեղեցուց էր և բոլորին ճանաչում էր ինչպէս և ամենքը նրան էին ճանաչում։

Նրա Սպիտակ-Եկեղեցի գալն ամեն մէկին շփոթեցրեց — ով շփոթուելու պատճառ ունէր։ Պարզ էր, որ նա մութ նպատակով էր եկել այստեղ։ Նրա ներկայութիւնը ահ ու զզուանք էր առաջացնում և նա ինքը այդ բանը լաւ էր զգում. բայց ամենևին չէր քաշւում։ Նա անամօթութեամբ ու ինքնավստահ կերպով էր դիմաւորում արհամարհական հայեացքները, կարծես ասելիս լինէր. «Ի՞նչ էք զարմանում, ես էլ, ինչպէս իւրաքանչիւրը ձեզանից, իմ գործովն եմ զբաղուած. չէ՞ որ ես էլ պէտք է ապրեմ»։ Նա արդէն տեսել էր քաղաքի մի քանի մեծատուններին և պարտք վերցրել։ Ի հարկէ, այդպիսի ազնիւ պարտապանին ու սիրալիր համաքաղաքացուն ոչ ոք էլ չէր մերժում։

Հատանական է, որ նա արդէն գիտէր Սպիտակ-Եկեղեցու ապստամբութեան պատրաստութիւնները և պատահող երիտասարդներին ժպտալով հարցնում էր.

— Ի՞նչպէս է գործը գնում։

Եւ որպէսզի դիմացինի շփոթմունքն աւելի ևս սաստկացնէ, նա կամացուկ աւելացնում էր.

— Դուք ոչինչ էլ չէք կարող անել։

Եւ այդպէս խօսակցին ապշած դրութեան մէջ թողնում, հեռանում էր։

Մօտաւորապէս նոյնն նա ասաց և Սոկոլովին երկու օր առաջ։ Եւ երբ նա դուրս էր գալիս, փողոցները դատարկւում էին շնորհիւ նորա այդ չարագուշակ անկեղծութեան ու անհերեսութեան։

Ստեֆչովի դէմքը բաւականութիւնից փայլեց, երբ Սամանովին բէյի մօտ գտաւ։ Նա ժպտալով գլուխ տուեց նրան, որպէս իր մարդուն, ձեռքը սեղմեց և աթոռը մօտ քաշելով, սկսեց խաղին հետևել։

Ծերունի բէյը, կարճ կիսաքուրքը հագին, մեծ ուշադրութեամբ շարունակում էր իր խաղը։

Երբ առաջին խաղը վերջացաւ, Ստեֆչովն իսկոյն դիմեց իր այդտեղ գալու նպատակին։ Նա մանրամասնօրէն պատմեց բէյին Սպիտակ-Եկեղեցու յեղափոխական շարժման մասին իրան հասած բոլոր լուրերը։

Բէյն էլ դէսից-դէնից մի քանի բան լսել էր ռայաների *) մէջ սկսուած շարժման մասին, բայց համարում էր այդ երեխայական խաղ և շարունակում էր անվրդով մնալ, ինչպէս այն ժամանակի տաճիկ կառավարութեան բոլոր պաշտօնեաները։ Ուստի նա ապշեց, երբ Ստեֆչովը բացեց նրա աչքերը և ցոյց տուեց չարիքի մեծութիւնը։

Նա խստօրէն ու հարցական ձևով Սամանովին դիմեց։

---

*) Հպատակ, ստրուկ, մի արհամարհական անուն է, որ թուրքերը տալիս են քրիստոնեաներին։

— Պետրաքի էֆէնդի, ես ու դու այստեղ նստած նարդի ենք խաղում, իսկ մեր շուրջը ժխում է։

— Մի քանի օր է իմ այստեղ գալս, բայց արդէն ամէն ինչ գիտեմ, նոյն իսկ Կիրիակից էլ շատ բան, պատասխանեց Սամանովը։

— Գիտես և ինձ չե՞ս ասում... Լա՜ւ ես ծառայում Թագաւորին, խիստ անբաւականութեամբ բացականչեց բէյը։ Պարոն Ստեֆչովն Գահին աւելի հաւատարիմ հպատակ դուրս եկաւ...

— Այդ իմ պարաքն է, պարոն բէյ, պատասխանեց Ստեֆչովը։

Սամանովի հակատին քրանքի խոշոր կաթիլներ երևացին։ Նա ջղայնօրէն ասաց.

— Այստեղ մէկն է, իսկ ուրիշ տեղերում հարիւր անդամ շատ է։ Այստեղ միայն մի ծղոտ է ժխում, իսկ Պանագիւրիշչէի մօտ — ամբողջ դէղեր և Թագաւորական բարձր իշխանութիւնը ոչ խուլ է, ոչ էլ կոյր... Նա ծուխը լաւ է տեսնում, բայց սպասում է. այդ նա յատուկ նպատակով է անում։ Սխալ կլինէր, եթէ մենք առաջինը աղմուկ բարձրացնէինք և անօգուտ տեղը մեղ վարկաբեկուրկ անէինք։ Այն, ինչ որ մենք Սպիտակ-Եկեղեցումն ենք տեսնում, այդ միայն ծխի ստուէրն է, որն ուրիշ տեղերում բարձրանում է երկինք... Իմ կարծիքն է. չշտապել և ուշի ուշով ապագային սպասել։

Այդ խօսքերը բէյին դուր եկան, որովհետև համապատասխան էին նրա խաղաղասէր հակումներին և պատասխանատու լինելու երկիւղին։

Ստեֆչովն այդ նկատեց և բարկացաւ։ Նա հասկացաւ, որ Սամանովն այդ խորամանկ բացատրութեամբ ուզում է իր անհոգութիւնն արդարացնել։

— Պետրաքի էֆէնդին այստեղ ոչ ընտանիք ունի և ոչ տուն ու տեղ։ Նրան ինչ. որքան ուզէ, կարող է փիլիսոփայութիւն անել, — ասաց նա մտածով. — վաղը որ հրդեհը տարածուի, նա ի՞նչ է կորցնելու։

— Բողոքում եմ, պարոն, կատաղութիւնից սփրթնելով, կոչեց Սամանովը։

— Դու արդարացի ես, Կիրիակ, ես այդ աւազակներին կը կապկպեմ, դռռաց բէյը։

Ստեֆչովը յաղթական կերպարանք ընդունեց։

— Ես էլ այժմ մտածելուց յետոյ Կիրիակի կարծիքին եմ գալիս... Բռնոտենք բոլոր այդ աւազակներին, ասաց Սամանովը կարճ ժամանակից յետոյ՝ անսպասելի կատաղութեամբ։

— Ուրեմն մենք բոլորս էլ համամի՞տ ենք, ասաց բէյը ու թեթևացած շունչ քաշեց։

— Հէնց այս երեկոյ բռնոտենք այդ անասուններին, ասաց Սամանովը։

— Ո՞րտեղ են դրանք հաւաքւում, հարցրեց բէյը։

— Միչա Բէյզադէտայի մօտ։

— Բէյզադէտայի՞... այժմ գլխի եմ ընկնում։ Ով իսկական ռուսից էլ աւելի ռուս է, նա սուլթանին բարեկամ չէ կարող լինել... Նա՞ է դրանց գլխաւորը։

— Ո՛չ, բժիշկ Սոկոլովն է, պատասխանեց Ստեֆչովը։

— Դարձեա՞լ Սոկոլովը։ Կոնսուլի տեղը նա՞ է բռնել։

— Նա՛ է, բէյ. սակայն կոնսուլի արարքները Սոկոլովի արածի հետ համեմատած, խաղ են։

— Իսկ միւսներն ո՞վքեր են։

— Վռնդուած վարժապետներ ու մի քանի թափառաշրջիկներ։

— Ես նրանց անուններն էլ գիտեմ, ասաց Սամանովը. բացի այդ՝ գիտեմ, թէ ո՞րտեղ է նրանց զէնքի պահեստը և թէ Պանագիւրիշչէից ո՞ւմ հետ նամակագրութիւն ունեն։ Դրանք իրանց սեփական պոստն ունեն... Այդ դեռ ոչինչ. նրանք առանձին կառավարութիւն են կազմում, որին ամենը հպատակւում են, որը դատ է անում և մահուան դատավճիռներ կարդում... Ես կարծիքս փոխեցի. աւելի լաւ է՝ մենք առաջինն սկսենք և միւս իշխանաւորներին օրինակ ցոյց տանք... Միայն պէտք է լաւ սկսենք... այս երեկոյ ես անձամբ կ'քրքրեմ նրանց գրպանները և առաջին քննութիւնը ինքս կանեմ, իսկ յետոյ վարուեցէք, ինչպէս որ հարկաւոր կհամարէք...

Սամանովի դէմքն աւելի չարագուշակ արտայայտութիւն

ստացաւ։ Նրա խօսքերը բէյին մեծ շփոթմունքի մէջ գցեցին։ Նա միանգամից իր կարծիքը փոխեց լրտեսի վերաբերմամբ. այժմ նա տեսնում էր, որ Սամանովը գահի խելացի, խորագէտ ու բանիմաց ծառաներից է։

— Դու մեծ պարգև կստանաս, Պետրաքի էֆէնդի, հովանաւորաբար վրա բերեց բէյը։

Ինքը, Ստեֆչովը, կոմիտէի կազմակերպութեան վերաբերմամբ լրտեսի արած յայտնագործութիւններից ապշել, շուարել էր։ Նա հասկացաւ, որ Սամանովն այժմ անհամբերութիւնից այրւում է և ամեն ջանք գործ է դնում, որ իշխանաւորի աչքը մտնի։ Եւ այդ իսկ պատճառով՝ առանց վախենալու առաջարկում է, որ այդ վտանգաւոր գործն իրան յանձնուի։ Դա ձեռնտու էր նաև Ստեֆչովին, որն այս անգամ էլ ուզում էր հեռու մնալ, որպէսզի յեղափոխականների վրէժխնդրութեանը չենթարկուի։

Բէյը ժամացոյցին նայեց։

— Նրանք այժմ այնտե՞ղ են, հարցրեց նա։

— Այնտեղ են, գետնայարկում։ Լաւ եղանակին սովորաբար այդումն են հաւաքւում... այնտեղ են նրանք արաղ լափում ու կոմիտէութիւն անում։

— Հիմա ի՞նչ ես ասում։

— Նրանք միշտ մթանն են Միչայի տնից դուրս գալիս։ Այսօր էլ դուրս գան թէ չէ, պէտք է ոստիկաններով շրջապատել և բոլորին կոնակը բերել։

— Ո՛չ, այդպէս լաւ չէ, ասաց Սամանովը, այդպէս առանց հաստատուն հիմունքի կբռնէք և նրանք կարող են ամեն բան բացասել։ Դրա համար էլ՝ պէտք է Միչայի մօտ, սենեակում, վրա հասնել, այսպէս ասած յանցագործութեան տեղում։ Վրա հասնենք ու բռնենք նոցա իրենց գրքերով, արձանագրութիւններով ու զանազան փաստաթղթերով... Այդ կլինի մաքուր աշխատանք, սևը մաքուր դուրս բերած... այն ժամանակ արդէն չեն կարող ասել «չգիտեմ», «չեմ լսել», «չեմ տեսել»։

Այս խորհուրդը բէյը հաւանեց։ Ստեֆչովն էլ այդ ծրագրից հիացած էր։ Նրա առաջ այժմ լրտեսն իր կոչման կատարեալ բարձրութեան վրա էր կանգնած։ Սամանովի հնարագիտութիւնն հաւասարուեց նորա եռանդին։

— Միայն թէ՝ այդ պէտք է մթանն անել, մութն այդպիսի արշաւանքների ժամանակ անհրաժեշտ է։

— Վճռուած է, հանդիսաւոր կերպով ասաց բէյը և ծափ տուեց։

Ներս մտաւ մի ոստիկան։

— Օնբաշին այստե՞ղ է։

— Շերիֆ աղան շուտով կվերադառնայ, զեկուցեց ոստիկանը։

— Վերադառնայ թէ չէ, թող գայ ինձ մօտ, հրամայեց բէյը։

Ոստիկանը դուրս գնաց։

— Ա՛հ, քիչ մնաց մոռանայի, ասաց Ստեֆչովը դիմելով Սամանովին, որ կանգնել էր մոայլ մտածութիւնների մէջ ընկղմուած, խորը և անհանգիստ կնճիռները ճակատին։

Եւ Ստեֆչովը գրպանից հանեց նամակը ու բաց արեց։

— Այդ ի՞նչ է, յանկարծ սթափուելով հարցրեց Սամանովը։

Սոկոլովի Պանագիւրիշչէ գրած նամակը։

— Վա՜հ...

Ինչպէս երևում է՝ նրանց նամակատարը կորցրել է... Այսօր աներոջս տան մօտ գտայ։

— Ի՞նչ է գրած, շտապով հարցրեց Սամանովը նամակն առնելով։

— Այդ նամակը պայմանական է և ինչ որ Լուկա Նէյչօի անունով է գրուած։ Դա մի հասարակ կօշկակար է Պանագիւրիշչէում և ամեն շաբաթ, Կարլովոյի տօնավաճառը գնալիս՝ այստեղից է անցնում։ Բայց ես հաւատացած եմ, որ նամակը բոլորովին ուրիշ մարդու է գրած, հաւանական է՝ Պանագիւրիշչէի կոմիտէին։

— Այդ ի՞նչ թուղթ է, հետաքրքրութեամբ հարցրեց բէյը, որովհետև մինչև այժմ խօսակցութիւնը բոլգարերէն էր։

Ստեֆչովը բացատրեց։

— Կարդա՛, կարդա, տեսնենք, ասաց բէյը և պատրաստուեց լսելու։

Ստեֆչովը կարդաց հետևեալը.

«Բայ Լուկա՛,

«Ցոյս ունեմ, որ ողջ ու առողջ էք և որ ձեր կինն այլևս հիւանդ չէ, սակայն շարունակեցէք նրան տալ դեղահատիկները, որ ես տուել եմ ձեզ։ Ի՞նչպէս է ձեր առևտուրը։ Արդէն երկու շաբաթ է այս կողմերը չեմ երևում, կարծում եմ, որ զորա պատճառը առողջութիւնդ չէ։ Մեզ մօտ գալիս Եանակովի դեղատնից ինձ համար քիչ Բելլադոնա գնիր, մօտինս վերջացել է։

Բարև տանեցոց։ Սոկոլով»։

— Ճիշտ որ այս նամակը պայմանական է, նկատեց Սամանովը։

— Թարգմանիր տեսնե՛նք, հրամայեց բէյը։

— Եթէ կուզես, այս նամակում և շատ բան կայ, և ոչի՛նչ չկայ նայելով թէ ինչպէս կը հասկանաս, ասաց Ստեֆչովը բէյին և սկսեց թարգմանել։

— Կա՛ց, հէնց սկզբում ընդհատեց նրան բէյը — դեղահատիկները պէտք է գնդակ հասկանալ։

— Գուցէ գնդակ է, նկատեց Սամանովը։

Բէյը բերնից ծխի մի ահագին ամպ բաց թողեց և դէմքի հպարտ ու ինքնաբաւական արտայայտութեամբ նորից լարեց լսողութիւնը։

Ստեֆչովը շարունակեց։

— Կանգնի՛ր, նորից ընդհատեց բէյը, առևտրի մասի՞ն է հարցնում։ Հասկացայ. խօսքը պատրաստութիւններին է վերաբերում, ուզում է իմանալ, թէ ի՞նչպէս են առաջ գնում. այնքան էլ միամիտ չե՞նք։

Եւ բէյը բաղմախորհուրդ կերպով աչքով արեց, կարծես ուզում էր ասել. «Հիւսնի-բէյի ծերութեանը մի նայէք. նա խորամանկ աղուէս է, չի խաբուիլ»։

Ստեֆչովը շարունակեց թարգմանել. երբ նա հասաւ այն խօսքերին, ուր ասուած էր «կարծում եմ առողջութիւնը չէ պատճառը», բէյը Ստեֆչովին նորից կանգնեցրեց և դիմեց Սամանովին.

— Պետրաքի էֆէնդի, այստեղ հիւանդութեան ու առողջութեան մասին է խօսւում, դու ի՞նչպէս ես հասկանում այդ խօսքերը։

— Ես կարծում եմ, որ հիւանդութեան տակ պէտք է «առողջութիւն» հասկանալ, իսկ առողջութեան տակ — հիւանդութիւն, ծանրակշիռ կերպով պատասխանեց լրտեսը։

Բէյը մտածմունքի մէջ ընկաւ. նա այնպիսի դիրք ընդունեց, որ իբր թէ կատարելապէս հասկացել է այդ խորիմաստ պատասխանի նշանակութիւնը։

— Այժմ գործը պարզ է, հանդիսաւոր կերպով ասաց նա։

Երբ Կիրիակը նորից սկսեց կարդալ և հասաւ «բելլադոնա» խօսքին, բէյը նրան ընդհատեց և ուրախացած բացականչեց.

— Օհո՛, այստեղ արդէն դրանց բռնեցինք... Դեբելա *) բոնա, նա էլ է դրանց մէջ... Քանի՞ քանի անգամ եմ պատահել այդ կովին և ամեն անգամ մտքիցս անցել է, որ այդ կնիկը սատանի բուն է և որ նա պետութեան դէմ թակարդ է լարում։

Բէյի խօսքերը վերաբերում էին վաթսուն հինգ տարեկան պառաւ բոննային, որը ոչ առաւօտ և ոչ երեկոյեան յետ չէր ընկնում եկեղեցուց և ամեն անգամ եկեղեցի գնալիս՝ կոնակի մօտից էր անցնում։

Ստեֆչովն ու Սամանովը ժպտացին։ Նրանք բէյին բացատրեցին, որ խօսքը դեղի տեղ գործածւող մի բոյսի մասին է։

— Կարդա՛, շարունակի՛ր, ասաց բէյը։

Ստեֆչովը շարունակեց։

— «Բարևիր տանեցո՛ց։ Սոկոլով»։

Բէյը բացականչեց.

— Բարև տանեցո՛ց... Հասկանալի՞ է... մէկ խօսքով՝ այդ նամակը սկզբից մինչև վերջը կոմիտէին է վերաբերում։

---

*) «Դեբելա» նշանակում է «հաստ, լիքը»։

— Բայց դրանից ոչ մի ամբողջական միտք չէ դուրս գալիս, անբաւականութեամբ նկատեց Սաեֆչովը։

— Մութն է, բոլորը մութն է, աւելացրեց Սամանովը։

— Ինչ որ մութն է, մութն է, հաստատեց և բէյը, բայց ինչ որ մենք չհասկացանք, կստիպենք որ ինքը՝ բժիշկը բացատրէ։

— Ո՛չ, հետաքրքիր է առաջուց իմանալ նամակի միտքը, ասաց Սամանովը յամառութեամբ, թղթին նայելով։ Տո՛ւր ինձ, ես գաղտնիքը կհասկանամ, խռովարարների նամակների համար ես բանալի ունեմ... Եւ նա նամակը ծոցը դրեց։

— Կեցցե՛ս, Պետրաքի էֆէնդի։

Սաեֆչովը տեղից վերկացաւ։

— Ուրեմն վճռուած է, այնպէս չէ՞, ասաց նա։

— Անեն բան վճռուած է... այս երեկոյ... հաստատեց բէյը։ Գնա՛ հանգիստ քնիր, բարեւիր չորբաջի Իւրդանին։

Սաեֆչովը բէյի մօտից դուրս եկաւ երջանիկ, պայծառ դէմքով։

Նա դեռ կոնակի դռանն էր, հասաւ Սամանովը։

— Դու այս երեկոյ ուրիշ տեղ չես գնալ, այնպէս չէ՞. ինքդ կղեկավարես խուզարկութիւնը, ասաց նրան Սաեֆչովը։

— Հանգիստ եղի՛ր, բոլոր հոգսերն ինքս եմ յանձն առնում, պատասխանեց լրտեսը։ Կիրիակ, մինչև առաւօտ ինձ մի լիրա *) պարտք տուր, հարկաւոր է, շտապով աւելացրեց նա։

Սաեֆչովը վայրկենապէս մռայլուեց և ձեռքը գրպանը տարաւ։

— Ահա՛, ա՛ռ այս երկու բուբլին, այս է, էլ չկայ։

Սամանովը փողը վերցրեց և ցածր ձայնով աւելացրեց.

— Տուր էլի, տուր, թէ չէ՝ բաւական է Ստրանգովի ականջին մի խօսք ասեմ, թէ այժմ ինչ հոր ես փորում նրան և դու մի լաւ դեղահատիկ կնդունես։

Եւ նա ծիծաղեց՝ ցոյց տալու համար, որ ասածը հանաք էր։

Սաեֆչովը անհանգստութեամբ նրան նայեց։

— Սամանով, եթէ առաւօտը լուր ստանամ, որ Սոկոլովն իր

*) Մօտաւորապէս 8 բուբլի արժեցող դրամ է։

խմբով բանտումն է, ինձնից տասը լիրա կստանաս, հանդիսաւոր կերպով ասաց նա։

— Լա՛ւ. բայց այժմ մի քանի կոպէկ հացի փող տուր, որ այսօր և եթ բուբլիանոցներս չմանրացնեմ... Շնորհակալ եմ։

Եւ Պետրաքին միւս փողոցը դառնալով, ուղղուեց դէպի պանդոկը, ուր ապրում էր։ Ճանապարհին Տէր-Սաւրիին պատահելով, կանդնեցրեց։

— Օրհնեա՛, Տէր, ասաց նա և համբուրեց տէրտերի ձեռքը։ Ի՞նչպէս էք, առողջ էք, եկամուտները լա՞ւ են, մեռնողն է շատ, թէ ծնողը։

— Եւ պսակելու շատ էլ լաւ ժամանակն է, քանի որ այսօր — էգուց երկրորդ գալուստը վրա կհասնի... Եւ Սամանովը խորհրդաւոր կերպով աչքով արեց։ Ապա յանկարծ խօսակցութիւնը փոխեց։

— Տէր հայր, մի յիսուն կոպէկ չունե՞ս, պարտք տաս մինչև առաւօտ։

Տէրտէրի դէմքը ծռմռուեց։

— Տէրտէրը փող չի ունենում, բայց օրհնութիւն-երքան կուզես... Եւ այդ հանաքով նա նորից փորձեց գլուխն ազատել։

Սամանովը խստութեամբ նրան նայեց և ձայնը ցածրացնելով ասաց.

— Տո՛ւր այս բոպէիս յիսուն կոպէկը. չէ՞ որ քո Գանչօն կոմիտէի քարտուղարն է... Մի խօսքով բաներդ բուրդ կանեմ։

Տէրտէրը սփրթնեց։ Նա հանեց դրամը և հեռանալիս լրտեսի բուռը դրեց։

— Աստուած քեզ հետ, տէր հայր ազօթքներիդ ժամանակ մեզ մի մոռանա։

— Անիծեա՜լ լինիս, հեռանալով փնթփնթաց տէրտէրը։

Անծրևը քանի դնում, սաստկանում էր։

— Փոքրիկ, մի կրակ բեր, օջախը վառիր, ներս մտնելով իր սենեակն, ասաց Սամանովը ծառային։

Ծառան զարմացած նրան նայեց, կարծես ասում էր.

— Էլ ի՞նչ մարդ ես, որ այսպիսի եղանակին մրսում ես։

— Քեզ ասում եմ կրակ բեր, հրամայաբար կրկնեց Սամանովը, թրջած սիւրտուկը հանելով։

Ծառան մի քանի վառ ածուխ բերեց և լցրեց օջախը։

— Այժմ դուրս գնա, հրամայեց Սամանովը և դուռը կողպեց։

Ապա գրպանից հանելով Ստեֆչովից վերցրած նամակը, մաքուր կողմով կրակին բռնեց։ Երբ թուղթը քիչ տաքացաւ, նա ձեռքերով հարթեց և ուշադրութեամբ զննեց, նրա դէմքին ցոլաց բաւականութեամբ խառն վառ հետաքրքրութիւնը։

Մաքուր ու սպիտակ թուղթն այժմ թանձր, մուք-դեղնագոյն տողերով ծածկուեց։ Ինչպէս յայտնի է, յեղափոխականներն իրանց նամակները գաղտնի թանաքով էին գրում, որի տառերը կրակի վրա տաքանալուց յետոյ էին երևում։ Սովորաբար նամակի միւս երեսին նրանք հասարակ ու աննշան նախադասութիւններ էին գրում կառավարութեանը խաբելու համար, եթէ նամակը վերջինիս ձեռքն ընկնէր։ Դժբախտաբար, ոչ մի գաղտնիք գաղտնի չէ մնում, երբ երկու հոգուց աւելի մարդ գիտէ։ Իսկ սրատես Սամանովը շուտով այդ գաղտնիքը իմացաւ։

Նամակը, որ փոխ նախագահ Սոկոլովի ստորագրութիւնն էր կրում, մատնում էր Սպիտակ-Եկեղեցու կոմիտէի գործերն ու ծրագրները։

Այդ ճակատագրական նամակը կարդալուց յետոյ Սամանովի դէմքին ինչ որ անորոշ ժպիտ խաղաց։

Նա մատիտը հանեց և փոխ նախագահի ստորագրութեան տակ բաց մնացած տեղն ինչ որ գրեց։

Ապա՝ շտապով դուրս եկաւ ու գնեց բանակը։

VI.

ԿՆՈՋ ՀՈԳԻՆ.

Հենց որ Ստեֆչովը աներոջ տնից դուրս եկաւ, նորա յետևից դուրս եկաւ և նորա կինը։ Կէսօրին սկսուած անձրևն այժմ էլ շարունակում էր տեղալ, թէև աւելի մանր, և կարծես մտադիր

էր մինչև երեկոյ տևել, որովհետև ամբողջ երկինքը ծանր ու խիտ ամպերով էր ծածկուած։

Լալկան՝ հովանոցը բացած, արագութեամբ անցնում էր փողոցից։ Նա այնքան էր շփոթուած ու գլուխը կորցրած, որ ծանօթների բարևներին չէր պատասխանում և նայելով չէր նկատում, որ այժմ քամու ուժի տակ անձրևը թեք էր գալիս, և որ նա ոտքից մինչև գլուխը թրջուել էր։

Լալկան շուտով եկեղեցու հրապարակը հասաւ, որտեղից անցնում էր կուսանաց վանքը տանող ճանապարհը։ Այժմ միայն նա հրապարակի ծածկոյթի տակ մտաւ և տարակուսանքով ինքն իրան հարց տուեց, թէ ի՞նչպէս է ինքը այստեղ հասել։ Նա մտաբերում էր, որ դուրս եկաւ Սոկոլովին անխուսափելի կորստից ազատելու։ Առանց երկար մտածելու, մի անտեսանելի ոյժից դրդուած, նա կայացրեց այդ վճիռը, չգիտնալով անգամ, թէ ինչպէս պէտք է իրագործէ։ Այժմ միայն նա քիչ լրջմտացաւ և շփոթուած սկսեց խորհել. ի՞նչպէս փորձանքի առաջն առնել։ Նա գիտակցում էր, թէ որչափ դժուար է այդ անելը։

Նա գիտէր, որ Ստեֆչովն այս իսկ րոպէին բէյի մօտ է և առաջարկում է բէյին ձերբակալել Սոկոլովին, գիտէր, որ վերջինս Միչա Բէյզադէտայի տանը ժողովի է։

Բայց ի՞նչպէս նախազգուշացնէ նրանց մօտալուտ վտանգի մասին։ Միչայի կնոջ մօտ հիւր գնալ — անյարմար, անվայել էր մինչև անգամ անմտութիւն էր։

Եթէ այս անձրևին գնայ Միչովիկայի մօտ, որը այդքան հեռու և օտար էր նրան և որի ամուսնու հետ իր հայրը կռուած էր, դա խիստ ստորացուցիչ ու վտանգաւոր բան կլինէր։ Յետոյ նա ի՞նչպէս պիտի ասէր Միչովիկային, որ ինքը, Ստեֆչովի կինը, այդպիսի վառ կերպով հետաքրքրուում է երիտասարդ ու համակրելի, սակայն թեթևամիտ Սոկոլովի վիճակով այնքան, որ նրան օգտակար լինելու համար ամեն պարկեշտութիւն մոռացել է... բացի այդ թէկուզ ակամայ արդեօք չի արատաւորի իր ամուսնու պատիւը, նրան չի՞ խայտառակի, դաւաճանի ստոր անունը չի կպցնի նրա ճակատին։ Որովհետև եթէ ինքը նոյնիսկ ծածկէ իր ամուսնու մասնակցութիւնն այդ կեղտոտ գործում, այնուամենայ-

նիւ՝ ամենքն էլ գլխի կընկնէին, որ կինը եկել է ամուսնու մատնած զոհերին ազատելու։ Առանց այդ էլ՝ նկատած կլինեն, որ նա այսօր կոնակումն էր։ Տէր-Աստուած, ինչո՞ւ իր մարդն այդպէս վատն է...

Բոլոր այդ մտքերը կայծակի արագութեամբ անցան նրա գլխով։ Ո՛չ, սոսկալի, խիստ սոսկալի, անկարելի բան է... Իսկ անձրևն աւելի ու աւելի սաստկանում էր։ Լալկան կանգնած էր ժածկոյթի տակ շփոթուած ու գլուխը կորցրած։

Ցանկարծ մի փայլուն մտք լուսաւորեց նրան։

Գնամ Նետկովիչինա մօրաքրոջս մօտ, ասաց նա ինքն իրան, նրանց Տաշկային կուղարկեմ նախազգուշացնելու։

Արդարև մօրաքոյր Նետկովիչինային, որպէս իր մարդուն, ազատ կերպով կարող էր ամեն ինչ պատմել և նրա տղին Սոկոլովի մօտ ուղարկել լուր տալու։

Նա թողեց իրան պատսպարող ժածկոյթն ու համառակ քայլերով առաջ շարժուեց, առանց ուշադրութիւն դարձնելու անձրևին ու ցեխին։

Նա քայլում էր բարձրացած հեղեղների միջով և շարունակում իր ճանապարհը դէպի վեր — հրապարակի միջով, անձրևի և քամու տակ։

Վերջապէս՝ ոտքից գլուխ թրջուած հասաւ մօրաքրոջ տունը։ Մօրաքոյրը դիմաւորեց նրան սրահում զարմացած, որ այդպիսի եղանակին դուրս է եկել։

— Ա՜խ, ա՜խ, այդ ի՞նչպէս ես թրջուել։ Այս անձրևին ի՞նչու ես դուրս եկել, հանիր շորերդ, ջուր ես դարձել, բացականչեց մօրաքոյրը։

— Մօրաքոյր, Տաշօն տա՞նն է։

— Առաւօտից գնացել է, մինչև հիմայ չկայ... Անպիտան դու չգիտե՞ս, ի՞նչ զաղ է նա... ինչի՞դ է պէտք։

— Ցաեսութի՛ւն, մօրաքոյր, պատասխանեց Լալկան և նորից վերցրեց հովանին։ Նա լուսնոտի էր նման։

— Ո՞ւր, ո՞ւր, զարմացած շուարած հարցրեց մօրաքոյրը։

Բայց Լալկան արդէն փողոցումն էր։

Բարեբախտաբար անձրևն յանկարծ դադարեց։ Ամպերի մէջ մի պատուհանք գոյացաւ, որտեղից փայլեց պայծառ արևը։

Միայն բարակ, անձրևի աննկատելի փոշին դեռ ևս ցրուած էր խաղաղ օդում և արևի դէմ փայլփլելով, սարդի հսկայական ոստայնի անծայր, ուղեղ թելերի պէս դեսին էր ընկնում։ Հրաշալի ծիածանը նկարուեց երկնքում և բազմերանգ ծայրով խորասուզուեց կիրճը։ Ծառերի խշխշան կատարները կանաչին էին տալիս այժմ աւելի թարմ և ուրախ։ Ամպերն արագութեամբ հեռանում էին և պարզ լազուրը յաղթաբար տարածուում էր երկնքի երեսին։ Փողոցներում անցորդներ երևացին։

Լալկան իրան աւելի առոյգ զգաց և կարծես սրտի ծանրութիւնն էլ թեթևացաւ։

Երկինքը լուսաւորող այդ ծիածանը նրա հոգուն յոյս էր տալիս։

Սրտի տրոփիւնով նա դիտում էր ամեն մի անցորդի, յուսալով, որ ծանօթ մարդու կպատահի։

Անսպասելի կերպով նա յիշեց կոյրին. սա իւր անծնազոհութեամբ արդէն մի անգամ փրկել էր նոյն տեսակ վտանգից Օգնեանովին։

— Տէր Աստուած, այժմ տեսնէի Կոլչոյին, աղերսում էր նա շուրջը նայելով։

Պատահմունքը, որ շատ անգամ մարդկանց հետ խաղ է անում և նրանց վիճակին ամենատարօրինակ, անհասկանալի ընթացք տալիս, այժմ էլ դեր խաղաց. — Լալկան իրանից յիսուն քայլի վրա, Կոլչոյին տեսաւ, որ զգուշութեամբ, շոշափելով, քայլում էր մի ձեռքով փայտը բռնած, միւսով դեռ բաց հովանին։

Ուրախացած, յուզուած, նա շուռ եկաւ, ակսեց կոյրի յետևից գնալ։

Կոյրը գիմում էր հէնց այն փողոցը, որ տանում էր դէպի Բէյզաղէտայի տունը։

— Երևի Կոլչոն էլ է այնտեղ գնում, մտածեց Լալկան. նա Ռաղայից իմացել էր, որ կոյրն ազատ մուտքի իրաւունք ունի կոմիտէի ժողովներին և որ նա ոչ մի նիստ բաց չի թողնում։

Լալկան շտապում էր. աւելի ու աւելի արագացնում էր իր

քայլերը, համարեա վազում էր։ Նրա աչքերը յառած էին կոյրի սև վերնազգեստին ու գլխին բռնած հովանուն։ Նա անցորդներից ոչ օրի այլևս չէր նկատում, ոչ Բրզոբեգունեկին, որ, ձախ ձեռքով բարևեց նրան, ոչ հաչի Սմիռնին, որ նրա յետևից ինչ որ կանչեց. և եթէ պատահէր հէնց իրան, Ստեֆչովին, նոյնպէս չէր ճանաչի։

Երկու բոպէից յետոյ Լալկան համարեա հասաւ կոյրին։ Նա առաջ էր գնում ծանր ու դանդաղ, կոյրերին յատուկ երազուն դէմքով։ Երբ Լալկան նրան հասաւ, շուրջը նայեց. կասկածելի մարդ չկար արդեօք և ցածր արտասանեց։

— Կոլչօ, Կոլչօ։

Բայց սաստիկ յուզմունքից շրթունքից ծայն դուրս չեկաւ և ինքն էլ չլսեց իւր ասածը։

Կոլչօն հէնց այդ վայրկեանին շուռ եկաւ և մտաւ կօշկակար Իվան Դաղայի խանութը։ Այդ աներևոյթանալը այնքան արագ ու անսպասելի եղաւ, որ Լալկային թւաց, թէ ինչ որ մի անտեսանելի ոյժ կոյրին զօռով ներս հրեց խանութի բաց դռնից։

Լալկան նորից մենակ մնաց, մենակ՝ աղմկալից փողոցում, որ այժմ նրան ամայի էր թւում։ Այդ ամայի անապատում նա միայն մի սև կէտ նկատեց. — դա ոստիկան էր, հրացանն ուսին, և նրան թւաց, որ դա մէկը չէ, հինգը, տասը, քսանը, մի ամբողջ բանակ... Նրա շուրջն ամէն ինչ պտտւում էր... Նրա մտքերը խառնուեցին, նա չէր զգում, արթո՞ւն է թէ քնած։ Եւ անգիտակցաբար նա առաջ էր շարժւում։

Նա չէր հասկանում թէ ի՞նչ փողոցներով էր անցնում, ոչ էլ թէ ի՞նչպէս և ե՞րբ հասաւ իրանց տունը։ Նա ամբողջովին կրակի մէջ էր, գլուխը պտտւում, բոլոր անդամները կարծես իրարից բաժանուել էին, սիրտը սաստիկ խառնում էր և բոլորովին ուժասպառ ու թուլացած՝ հազիւ հասաւ իր սենեակն ու անզգայ դրրութեան մէջ ընկաւ անկողնու վրա։

Լալկան տենդի մէջ էր։

VII.

ՎԵՐԱԿԱԶՄԱԾ ԿՈՄԻՏԷԻՆ.

Այս անդամ նիստը բայ Միչայի այգում՝ կանաչ խնձորիների և եղևնիների տակը չէր, այլ ներքնայարկում։

Ստեֆչովի լրտեսը լաւ հետևեց և ամէն ինչ մանրամասնօրէն տեսաւ։

Ցածր աթոռների վրա նստել էին անդամները, թւով մօտ տասը հոգի։ Նրանցից միքանիսը մեր ծանօթներն են։ Առաջին տեղը բռնել է տանտերը, որ միաժամանակ և նախագահն էր, ապա՝ Սոկոլովը, տէր-Դիմոն, Ֆրանգովը, Պոպովը, Նիկոլա Նեակովիչը, Կանդովը, որ այսօր ծափահարութեամբ էր ընդունւել։ Նոյնպէս և Ֆրադիւն, որ վերադարձել էր Ռումինեայից և ընդունել երկար խնդրելուց ու զղջումներից յետոյ։ Միւս անդամներն էին բանտ նստած և ամէն բանի պատրաստ կօշկակար Իլիա Սարանչովը, վաճառական Խրիստօ Բրագովը, կաղ կաշեգործ Դիմու Կափրսըզը — մշտական զոռագիրը, որ կոչւում էր նաև «բեզպորտեվ» և «խմբագիր»։

Կոմիտէի մի անդամը բացակայ էր — Պէնչօ Դիամանդիևը։

Նա գնացել էր Կարլովօ հրացաններ դնելու այն հարիւր լիբայիին, որը իր հօր յանձնարարութեամբ պէտք է Թոսուն-բէյին տանէր։

Արդէն մութն ընկնում էր։

Ժողովը, որ սկսել էր կէսօրին, դեռ ևս շարունակւում էր և ըստ երևոյթին, դեռ երկար էլ պէտք է տևէր։ Կաբլիչկովի հարտարախօս ու կրակոտ լեզուն ամենքին դիւթիչ էր, որոնք արդէն երկու ժամ էր, որ լսում էին նրան լուռ և անշարժ։

Կաբլեշկովը 1876 թւականի ապրիլեան շարժումը պատրաստող առաքեալներից ամենահամակրելի և ինքնատիպ անձնաւորութիւններից մէկն էր։ Նա 26 տարեկան մի երիտասարդ էր, միջահասակ, խիստ նիհար ու թոյլ կազմւածքով, դժգոյն ու թխադէմ, նոր ծլած բեղերով, երկար, սև ու դանդուր մազերը շուա-

շուտ լայն ճակատին էին թափուում, որոնց ամեն բոպէ նա ծեռքով յետ էր գցում և որոնք նորից անհոգ խոպոպներով ընկնում էին նրա լայն ու խելացի ճակատին։ Հէնց միայն նրա աչքերը, կրակէ, խորաթափանց հայեացքով, աչքեր, որոնց մէջ փայլում էր մէկ բանաստեղծի հիացմունքը, մէկ հայրենասէրի ոգևորութիւնը, լուսաւորում և աղնուացնում էին այդ դէմքը, որ տենդից ցամաքել և մշտական աշխատանքից ու անդուլ գործնէութիւնից տանջահար էր եղել։

Ոչ մի հայեացք չէր կարող դիմանալ նրա աչքերի ոյժին, որ հայելու պէս անդրադարձնում էին նրա զօրեղ, ըմբոստ ու կրքոտ հոգին — որը դժուար էր ենթադրել այդպիսի թոյլ ու փոքրիկ կազմուածքի մէջ։

Նա հագած ունէր կապոյտ մահուդի սիւրտուկ և յաճախակի ծի նստելուց ստստիկ քրքրուած մի սև շալւար։ Նա այժմ էլ սենեակում անընդհատ ման էր գալիս և շարունակում էր տաք խօսել, ստէպ-ստէպ յամառ հազից ընդհատուելով։

— Այո՛, օգնութիւնը, գլխաւոր օգնութիւնը, մեր մէջ է գրտնուում։ Մենք այնքան ոյժ ունենք, որ ինքներս կարող ենք փրթած Տաճկաստանի հետ հաշիւներս մաքրել։ Տաճկաստանը թոյլ է, նրա նիւթականը վատ, ժողովուրդը աղքատացած է. նա իսկի կռուի մէջ չի էլ խառնուել։ Նա ինքն է տնքում լծի տակ։ Զօրքը քայքայուած դրութեան մէջ, ուշադրութեան արժանի էլ չէ։ Օրինակ. վերցրէք Հերցեգովինայի ապստամբութիւնը. հազար-հազար բաւոր զինուորներ ուղարկուեցին, բայց դեռ ապստամբութիւնը ամենավառ շրջանումն է։ Եւ ո՞վ է ապստամբողը — մի բուռը ժողովուրդ։ Իսկ ի՞նչ պէտք է անէ այս քայքայուած ուժասպառ պետութիւնը, եթէ մե՛նք ոտքի կանգնենք։ Չէ՞ որ մի օրուայ մէջ հազար բոլգարացի ոտքի կ'ելնէ։ Տաճիկը դրանցից ո՞րի դէմ պէտք է դուրս գայ... Դորանից զատ մինթէ մենք մենակ ենք. Տաճկաստանից արևմուտք կազմ ու պատրաստ կանգնած են Սերբիան ու Չերնագորեայի բազէները, յետևը, Ցունաստանը, որ նոյնպէս բերանը բաց հանդիսատես չի մնայ... Հերցիգովինեան ու Բոսնեան ծայրից-ծայր բոցավառուած են, Կրէտէն, նոյնպէս... Աւելացրէք այդ բոլորին Պոլսի ներքին յեղափոխութիւնը, որ ամեն վայրկեան

պատրաստ, խառը ժամանակի է սպասում, խառը ժամանակի է սպասում, որ գահնկեց անէ Սուլթան Ազիզին... Ամեն տեղ քաոս է... Մեր ապստամբութիւնը Տաճիկ կառավարութեան մահերգը կլինի...

Խաւարի մէջ նրա աչքերը շիկացած ածխի պէս փայլում էին։

— Դու մի բան մոռացար, ձայն տուեց Միչօ Բէյզադեսոն,— Ռուսաստանը, Իւան պապը Հիւսիսից կթռչի Պոլիս և ամեն ինչ կվերջանայ։ Եւ գուշակութիւնը բառառ բառ կկատարուի։

Նա Մարտին Զատեկայի գուշակութեան մասին էր ակնարկում, որին նա ինքը հաւատում էր։

— Ի՞նչ տեղեր պատրաստ կլինեն ապստամբութեան, հարցրեց Ֆրանգովը։

— Ամբողջ Բոլգարեան, պատասխանեց Կարլեշկովը. Ֆիլիպպոլպն ու Պազարջիկը պատրաստուում են, Ռոգոբի գիւղերն ու Բատակը գաղտնի զինուորուում են. Տրընովոն Գաբրովոն և Շամին կրակ կգցեն Արևելեան Բոլգարեան, իսկ Արևմտեան բաժնում ոչ մի զօրք չկայ... Կապրիվշտենցն ու Պանագիւրիշտէն Սարելչայի հետ միասին միջին լերան անցքը կփակեն, գուք ու ձեր հարևանները Բալկանի բարձրութիւնները կբռնէք, իսկ Բալկանը մի ամրութիւն է, որ մի միլիոն զօրքն էլ չի կարող առնել։ Բոլգարեան մի՛ մարդու պէս ոտքի կկանգնի։ Մեր ապստամբութիւնը Եւրոպայի պատմութեան մէջ մի հրաշք կլինի... Եւրոպան պէտք է զարմանայ... Հաւատացնում եմ ձեզ, որ բարձր Դուռը զինուորուած խաղաղացման նոյնիսկ չի էլ դիմի... Նա անպատճառ մեզ հետ համաձայնութեան կգայ... Նրան ուրիշ ելք չի մնում...

Կարլեշկովը ոգևորութեամբ էր խօսում, որպէս զարգացած մարդ, հաւանականաբար գործի դրութիւնն ինքն իրան նա լաւ էր պատկերացնում, թէև այդ ուրիշներին սուտ գոյնով էր ցոյց տալիս։ Բայց նա այնքան էր տարուել իր գաղափարով, որ այն 'ի կատար ածելու համար ամեն միջոց թոյլատրելի էր համարում։ Գործի սրբութեան այդ վսեմ հաւատը միայն կարող է բացատրել այդ աղնիւ հոգու աւելի կամ պակաս անկեղծ չափազանցութիւնները։

Իսկ նրա պատկերները այն աստիճան համոզեցուցիչ — ճար-

տարախօս էին, որ ոչ մի առարկութեան տեղիք չէին տալիս։ Ամենքն արդէն հաւատում էին այն բանին, ինչ բանում որ համոզում էր Կաբլեշկովը։

— Մենք ի՞նչ պայմաններ կարող ենք առաջարկել Տաճիկ կառավարութեան, եթէ նա մեզ հետ բանակցութիւնների մէջ մտնի, հարցրեց Պոպովը։

— Մինչև բանակցութիւն սկսելը դեռ մի լաւ կդաղենք նրա լեզուն, ասաց Բեզպորաիևը։

— Իրչո՞ւ չ'պէտք է նա բանակցութիւններ սկսէ, նկատեց տէր-Դիմչոն։

— Այդ վերջի բանն է, պատասխանեց Կաբլեշկովը. սակայն առայժմ այդ մասին այսպէս են կարծում. — Բոլգարեան Դանուբից մինչև Արդա, Սև-Ծովից մինչև Սպիտակը, կկազմէ մի իշխանութիւն ներքին ինքնավարութեամբ սուլթանի գերիշխանութեան տակ։ Էկզարխութիւնն անձեռնմխելի կմնայ։ Որոշ հարկ Տաճկաստանին, զօրքը բոլգարական, սպանների կէսը տաճիկներ, ամենից առաջ...

— Իսկ իշխանը, հարցրեց Խրիստո Բրագովը։

— Հա՛, իշխանը, կրկնեց Բեզպորաևը։

— Եւրոպական թագաւորաղն։

— Վա՜հ...

— Բայց դու Ռուսաստանի մասին ոչինչ չասացիր. ճի՞շտ է, որ նա, ինչպէս ասում է Միչօն, պատրաստ է մեզ օգնելու, ասաց տէրտէրը։

— Տէրտէ՛ր, երեխայ մի՛ լինի՛ր, խօսեց Միչօն մռայլուած։ Ուրիշ կերպ կարող է լինել... Ռուս գեներալներն հէնց այժմ բռնաստում են Բուխարեստում և նա հարցական հայեացք ձգեց Կաբլեշկովին։ Նրան նայեցին և ամենքը սպասելով, որ հեղինակաւոր Կաբլեշկովը կ'հաստատէ Միչօի ասածները։ Կաբլեշկովն այդ հասկացաւ և խորհրդաւոր կերպարանք ընդունելով, ցածր խօսեց կարծես գաղտնի պահելու համար։

— Հէնց առաջին հրացանը պայթէ թէ չէ, երկգլխանի արծիւը մեզ իւր թևերի տակ կառնէ։

Եւ նա նայեց հանդիսաւոր հայեացքով։

Բոլորի դէմքը փայլեց։

— Ես կարծում եմ, խօսեց պարոն Ֆրատիւն, ամենքից լաւ հասարակապետութիւնն է։ Կարելի է «Բալկանեան հասարակապետութիւն» անուանել։

Օհո՜, տես թէ ո՞ւր թռաւ, չի լինի քիչ ցած իջնես... վրա բերեց Տէր-Դիմչոն...

— Էհ, ի՛նչ ուզում է լինի, մի ազատուե՛նք։

— Ես էլ հասարակապետութեան կողմնակից եմ, ձայն տուեց մի ուրիշը։

— Արդէն ասացինք, որ այդ յետոյ կմտածենք... Թէ ինչպէս կկառավարուենք, ո՞վ կլինի իշխանը և այլն, և այլն։

— Այդ մենք Գարչակովին *) կթողնենք, թող քաղաքագէտները լինեն մեր հրեշտակներն ու մարգարէները, ասաց Միչօ Բէյզադեան։

Սոկոլովը, որ այդ քաղաքական խօսակցութեանը չէր մասնակցում, յանկարծ բարկացած բացականչեց.

— Լա՛ւ, լա՛ւ, պարոններ, բաւական է դատարկ քաղաքականութիւններ անել, ժամանակը չի սպասում։ Վաղը արդէն կորոտան հրացանները Բալկաններում, իսկ մենք նստած այս հարցրն ենք լուծում. հասարակապետութի՞ւն կլինի Բոլգարեայում, թէ՞ կոմեդեա... Իսկ գործը այժմ չի սպասում... Գրողը տանի ձեր հասարակապետութիւնը... Դեռ արջը չսպանած, մորթին էք բաժանում... Նախագահ, ես առաջարկում եմ, որ այսուհետև մեր ժողովներում քաղաքականութեամբ զբաղուելն արգելուած լինի. դրա տեղը Գանկայի սրճարանն է։

— Ճշմարիտ է, աւելացրեց Կաբլեշկովը, գործ է պէտք, գործ ոչ թէ խօսք... Գործի դրութիւնը ես ձեզ պատմեցի, այժմ մտածեցէք ինչպէս սկսել, ոչ մի րոպէ պէտք չէ կորցնել։

— Այդ նախագահի մեղքն է, նկատեց քարտուղար Պապովը, որ արդէն մի ամբողջ ժամ էր, ինչ որ թղթեր կարդալու համար հերթի էր սպասում, — վիճաբանութիւնները նախագահը պէտք է դեկավարէր։

*) Ռուսաստանի այն ժամանակուայ արտաքին գործերի նախարարը։

Պապովի յանդիմանութիւնը բայ Միչային բարկացրեց։

— Ինձ ինչո՞ւ էիք ընտրում, թող աւելի երիտասարդ մարդ գտնէիք... Բոյչոյի տեղն ես եմ այժմ բռնում. նրան փոխարինելու համար մի աւելի արժանաւոր մարդ գտէք։

— Ո՛չ, բողոքում եմ, առարկեց բժիշկը, Բոյչոին միայն ինքը Բոյչոն կարող էր փոխարինել։

— Ա՜խ, տղերք, Բոյչոն խի՛սա մեծ կորուստ էր թէ՛ մեզ համար, թէ՛ Բոլգարիայի, յուզուած ասաց Կաբլեշկովը և խորը հոգոց քաշեց։

— Օգնեանովին յիշելիս բոլորի դէմքը տխրութեան քողով ծածկուեց։ Նրա կորուստը ընկերների միջև որպէս անդունդ մի դատարկութիւն բացեց։ Նոքա իրար նայեցին և տխուր մտածութիւնների մէջ ընկան։ Օգնեանովի ողբերգական պատէրը նոցա դիմացը կանգնեց։ Բոլորի կրծքերին կարծես կապը ժանրացաւ։ Կարծես թէ նրանք ամաչում էին, որ իրանք դեռ ևս ապրում են, այն ինչ հերոսը արդէն չկա՜ր...

VIII.

ԿՈԼՉՈՅԻ ՀԻԱՑՄՈՒՆՔԸ.

Դրսից ինչ որ արագ քայլեր լսեցին. մէկը իջնում էր ներքնահարկը։

— Կոլչոն է, ասաց Նեակովիչը։

— Չի կարող պատահել, առարկեց Միչօն, կոլչն ի՞նչպէս կարող է սանդուխքից այդպէս արագ իջնել։

— Բան է պատահել, նկատեց տէր-Դիմչօն։

Անդամները ակամայ վախեցան։ Քայլերը դռան մօտ կանգ առան։ Դուռը բացուեց, աւելի ճիշտ յետ ընկաւ։ Կայծակի պէս Կոլչոն ներս թռաւ. նա շնչասպառ էր լինում։

Ամենքը քար կտրած սպասում էին...

— Մերոնք են այստեղ, խղուած ձայնով հարցրեց նա։

— Բոլորը մերոնք են, ի՞նչ է պատահել, Կոլչո, հարցրեց բայ Միչօն։

— Կեցցէ, կեցցէ՜։ Փառք ու ցնծութիւն. ուրախացէք, եղբարքս։ Կխելագարուէի, ես է՛լ եմ խելագարուում, ցնդուածի պէս դռռում էր Կոլչօն։ Նա վերև էր գցում իր ֆէսը, ծափ էր տալիս, ամբողջ կէս արշին վեր էր թռչում... Այդ ժամանակ պատահմամբ դիպաւ Միչային և սկսեց համբուրել նրա շրթունքները, այտերը, ականջները, ուսերը... Փաթաթուել, թևերի մէջ խեղդել, այդ անբնական հիստերիքական ուրախութիւնը ամենքին ապշեցրել էր։ Եւ ամենքը միաժամանակ ենթադրեցին, որ խեղճ կոյրը ցնդուել է։

— Ի՞նչ է պատահել, Կոլչո, ցաւակցօրէն հարցրեց բժիշկը, աշխատելով նոքա դէմքի վերա դնել կատաղի խելագարութեան հետքերը։

— Չէ՞ք հասկանում, նա կենդանի՜ է, կեցցէ՜, գոռում էր Կոլչօն այժմ ընկնելով բժշկի վերա։ Կեցցէ՜... Կենդանի է կոմսը։

— Ի՞նչպէս, Բոյչո՞ն...

Այդ հարցը միանգամից տասը բերանից դուրս թռաւ։

— Նա կենդանի՜ է։

— Կոլչո՛, հանո՞ք ես անում, թէ՞ քեզ մէկը խաբել է, խրատութեամբ հարցրեց բայ Մեչօն։

— Կենդանի՜ է, կենդանի՜ է, բայ Մեչո, ես նրա ձեռքը սեղմել եմ, երեսը համբուրել եմ, նրա ձայնը լսել եմ, համարեա տեսել եմ նրան։ Դեռ դուք չէ՞ք հաւատում։

Կոլչօի ասածները համոզիչ էին. նոքա զարմացած իրար նայեցին։

Ո՞րտեղ է նա։

— Դրանը սպասում է. ինձ ուղարկեց, որ ձեզ իմացնեմ... Ես դրանը մօտեցայ թէ չէ, ձեռքս բռնեց. նրան ձեռքից ճանաչեցի...

Բոլորը վազեցին դէպի պատի ճեղքը, որ լուսամուտի տեղ էր ծառայում և տեսան, թէ ինչպէս բակի դուռը բացուեց, ներս մտաւ մի գիւղացի։ Գիւղացին լայն քուրքի մէջ էր փաթաթուած, գլխին հին փափախ ծածկած, ձեռքին հաւի ճուտեր։

Նրա մի աչքը, երևի հիւանդ, թաշկինակով փաթաթած էր։

Այլ դէպքում ոչ ոք չէր էլ մտածի, որ դա Օգնեանովն է։

Այժմ բոլորը ճանաչեցին աւելի շատ հոտառութեամբ, քան աչքերով։

Միչոն դուրս թռաւ և շինծու հանգստութեամբ կանչեց։

— Բայ Պեակօ, արի, արի այստեղ, տեսնենք քէֆդ ո՞նց է։

Բայց խեղճ նախագահի ձայնը յուզմունքից կիսում կտրուեց. կարծես մէկը սեղմեց նրա կոկորդը։

Օգնեանովը հանդարտ անցաւ ցեխոտ բակը, ծո՜նը իջաւ սանդուխքից և կոպիտ ձայնով ասաց։

— Տրեխներս ցեխոտ են, յատակը կկեղտոտուի, բայ Միչօ, ների՛ր...

Եւ Օգնեանովը սենեակ մտաւ։

Բոլորը վրա պրծան, շրջապատեցին նրան։ Սկսեց գրկախառնութիւնը, հարցուփորձը, բացականչութիւններ, զեղմունքներ, հիացում... բոլորը իրար խառնուեցին։ Օգնեանովն, ըստ երևոյթին, ամենքից հանդիսատ էր իրան պահում։

Երբ բոլորը հանգստացան, բայ Միչօն յուզուած ասաց. Նախագահ, տեղդ բռնիր, նիստը դեռ չի վերջացել։ Ապա հանաքով աւելացրեց։

— Հէնց նոր տղերքն ինձ դատապարտում էին... առաջնորդելու շնորք չունեմ։

— Ընդունում եմ, բայց միայն ոչ այսօր ծիծաղելով ասաց Օգնեանովը և անկիւնում նստեց։ Այժմ երևում էր, որ նա էլ է արտասուել։

Գաղափարակից ընկերների այդ անկեղծ սէրն ու համակրութիւնը յուզեցին նրան մինչ հոգու խորքը։

Բայ Միչօն մատնացոյց անելով Կանդովին, ասաց.

— Այժմ Կանդովն էլ մերն է։

Օգնեանովի ու Կանդովի հայեացքները իրար հանդիպեցին։

— Պարոն, Բոլգարեան արժանի է, որ մենք նրա համար աշխատենք։

— Եւ Նոյնիսկ, զոհւենք նորան։

Երկու իդէալիստներն իրար ձեռք սեղմեցին։

Իսկ բայ Միչօն Օգնեանովին նայելով հիանում էր և ուրախութիւնից չէր կշտանում։

— Բոյչօ, այժմ քեզ մեզանից հեշտութեամբ չեն խլի, ասաց նա, դուրս գալով նախասենեակը։ Վելիզարի՛յ, կանչեց նա, խրճթից քսան հատ փայտի կտոր բեր այստեղ։

Նրա որդին քսան հրացան բերեց գաղտնարանից և դրեց դռան մօտ։

— Այժմ բակի դրանը կողպէք դի՛ր։

Դրանից յետոյ Միչօն սենեակը վերադարձաւ։

Եւ նիստը վերսկսեց...

Մինչ այդ Կոլչոն, աննկատելի կերպով անյետացաւ։ Նա վազեց ուրախալի լուրը Ռադային հաղորդելու։

Այս անգամ կոյրը որոշել էր իրան աւելի զսպած պահել։ Նրա կատաղի թռիչքները, որ քիչ առաջ այդ զօրեղ տղամարդկանց շփոթեցրին, կարող էին թոյլ աղջկանը մահու չափ վախեցնել։ Բայց ինքնազսպումը նրա ոյժից բարձր էր։ Նա զգում էր, որ ուրախութիւնն իրան կխեղդէ, եթէ մի վայրկեան դոնէ աշխատի իրան սանձել։

Երբ նա մօտեցաւ Ռադայի տանը, զգաց, որ յուզմունքից սիրտը կարող է պատուել... հանգստանալու համար նա սկսեց մի ժաղրական երգ երգել...

Դուռն իսկոյն բացուեց։

— Կոլչո՛, բարով եկար, քաղցրութեամբ ասաց Ռադան։

— Ռադկա, այստեղ խոմ օտար ականջ չկա՞։

— Ես մենակ եմ, Կոլչո՛, ինչպէս և միշտ։

Կոլչոն յուզմունքից խեղդւում էր։

— Նստի՛ր, հանգստացի՛ր, Կոլչո՛, հրաւիրեց Ռադան, նրա յուզմունքը յոգնածութեանը վերագրելով։

Կոլչոն կանգնեց նրա դէմուդէմը և երկու կոյր աչքերը Ռադայի աչքերին սևեռելով, խօսեց.

— Ռադա՛, աչքակուսէքը տուր...

Այդ միակ խօսքն էր, որ նա կարողացաւ գտնել։

Ռադայի սիրտը մարեց։ Նա զգաց, որ Կոլչոն պիտի հաղորդէ ինչ որ ուրախալի, նոյնիսկ սարսափելի լուր։

— Ի՞նչ կայ, Կոլչո։

— Ռադկէ, ուրախացի՛ր, շատ կ՚ուրախանաս. լսո՞ւմ ես։ Ինչո՞ւ են քեզ Ռադկէ ասում։

Ռադայի լեզուն կապ ընկաւ։ Նա հասկացաւ և միայն մեքենաբար շշնջաց.

— Կոլչ՛ո, ինձ վախեցնում ես։

— Ես քեզ չե՛մ վախեցնում, ասում եմ, ուրախացի՛ր... Նա կենդանի՞ է...

Կոլչօն իր խօսքին հաստատ չմնաց — աստիճանաբար չպատմեց Բոյչօի կենդանի լինելու լուրը։

Նրա այս խօսքերի վերա Ռադան պատին յենուեց, որ վայր չընկնի. նա սրտով զգացել էր բանի էութիւնը։

Կան մեծ ուրախութիւններ, ինչպէս և մեծ վշտեր, որոնց մարդկային հոգին պէտք է, որ չկարողանար դիմանալ, բայց դիմանում է։ Որքան բարձր են լինում ուրախութիւնն ու վիշտը, այնքան աւելի է զօրանում հոգու ճկունութիւնն, եթէ միայն նա առողջ է։ Թուլութեան առաջին վայրկեանից յետոյ Ռադան սրբտապնդուեց։ Կարելի է այդ նրանից էր, որ ներքին բնազդն արդէն առաջուց նրան նախապատրաստել էր։ Նա բացականչեց.

— Կենդանի՞ է... Աստուա՞ծ իմ. ո՞ւրտեղ է, քեզ ո՞վ ասաց, Կոլչ՛ո։ Կենդանի՞, Բոյչօն կենդանի է։ Տէր-Աստուած, ուրախութիւնից կմեռնեմ. ի՞նչ անեմ։

Արցունքը նրան օգնութեան հասաւ և մասամբ թափեց այն բոցավառ զգացմունքը, որ խեղդում էր նորան։

Կոլչօն, արդէն աւելի հանգստացած, մանրամասն պատմեց իր անակնկալ հանդիպումը Բոյչօին Միչա Բէյզադատէի տան մօտ և այն, ինչ յետոյ պատահեց։

— Իսկ ե՞րբ կգայ։

— Երեկոյեան, երբ բոլորովին մթնէ։ Բացի այդ, այսօր նա շատ գործ ունի։

Կոլչօն թեթևացած հոգով դուրս եկաւ։

Այդ քնքոյշ, անծնուէր սիրտ աւելի ուրախութեամբ իրան իրան երջանիկ էր զգում։ Բնութիւնը ամեն բան նրանից խլելով, թողել էր այդ ընդունակութիւնը որպէս մխիթարանք։

Ռադան չգիտէր, ի՞նչ անէր։ Ի՞նչպէս սպասէ մինչև սիրելի

հիւրի գալը։ Ի՞նչպէս ծածկէ նրա այցելութիւնը։ Ցանեցող իմացնէ, թէ՞ չիմացնէ։ Գնայ նրանց մօտ — խելքը կթռցնէ. այստեղ մնայ — չի դիմանայ... Բոյչօին իրանից բաժանող այդ յաւիտենականութիւնը սպանելու համար նա սկսեց սենեակը հաւաքել, մաքրել, մաղերը սանրել, հայելու առաջ զուգել և հայելուն նայելով ժպտում ու ծամածռութիւններ էր անում, ժպտում էր — տեսնելով, որ ինքը գեղեցիկ է։ Իսկ երբ այլևս անելու բան չմնաց, նա հինգ տարեկան երեխի պէս մի ոտքի վրա պտոյտ եկաւ, ինչ որ երգեց, որից ոչինչ չհասկացաւ և որը իսկի չլսեց էլ։ Նրա ուշքն ու միտքը Օգնեանովի հետ էր. աչքը դրանը։ Ամենափոքր աղմուկն անգամ նրա սիրտը թրթռացնում էր։

Նա այնպէ՞ս բախտաւոր էր։

IX.

ՍՊԱՍՈՂԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ.

Արդէն մութն էր։

Հայելու առաջ՝ սեղանի վրա դրած ժանր, մեծ մոմկալը լուսաւորում էր Ստեֆչովի սենեակը։

Այդ սենեակը ծառայում էր ցերեկը որպէս ընդունարան, գիշերը — ննջարան այժմ միայն Ստեֆչովի համար։ Նրա հիւանդ կինը ներքին յարկումն էր պառկած։

Սենեակում ինքը՝ Ստեֆչովը, յոյն բժիշկը և Մերդվինջիևն էին։

Դէպի Սոկոլովը միատեսակ ատելութեամբ համակուած այդ երեք մարդն արդէն երկու ամբողջ ժամ է անհամբերութեամբ սպասում էին իրանց թշնամու և հայրենասէրների կորստեան լուրին։

Ստեֆչովն անհանգստութեամբ քայլում էր սենեակում, ամեն րոպէ նա սրում էր լսողութիւնը, սպասելով, որ ահա կլսէ Ռաչեօի ոտնաձայնը, որին ուղարկել էր լրտեսելու Բէյզադէտոյի տունը։

Վերջապէս Ռաչեօն եկաւ։

— Չը՞, ի՞նչ կայ, անհամբերութեամբ հարցրեց նա լրտեսին։

— Դեռ այնտեղ են...

— Սոկոլովը չէ՞ հեռացել։

— Միայն Կապրիվչանինը դուրս եկաւ և յետոյ Կոլչօն։

Ստեֆչովը թեթեւացած շունչ քաշեց։

— Այժմ ո՞ւր ես գնում, նորից դիմեց նա Ռաչեօին։

— Վասիլի պանդոկը, բայ Միչօի տան դէմուդէմը։ Այնտեղ էր և Պետրաքին. ինձ մի բաժակ արաղ խմացրեց, միւս բաժակն իմ հաշուոյս խմեցի։

— Հա՜, Պետրաքին այնտե՞ղ է, հիացմունքով հարցրեց Ստեֆչովը։ Կեցցե՛ս Ռաչեօ. Նորից գնա՛ Վասիլի պանդոկը և մի բան տեսնես թէ չէ, մեզ հաղորդիր։

Ամենքը լռեցին և սկսեցին ականջ դնել։

— Հրացանի պայթիւն է, նկատեց Ստեֆչովը։

— Մէկն էլ, դարձեալ, յուզուած կրկնեցին միւսները։

— Հարսանիքն սկսւեց, բացականչեց Ստեֆչովը և անասելի հրճւանքից նրա հայեացքը բոցավառուեց։

Նորից մի քանի պայթիւն լսւեց, ըստ երևոյթին բաւական հեռուից, այս անգամ արդէն Միչա Բէյզադէտայի տան կողմից։

Շուտով բաց լուսամուտից մարդկանց հեռաւոր աղաղակներ լսւեցին։

Երեք հոգի անշարժ կանգնած, իրար հարցական հայեացքներ էին ձգում։ Նրանց աչքերը արտայայտում էին ներքին հրճւանք։

— Կռւում են, լսո՞ւմ էք։ Զէնքով են դիմադրում... Լա՜ւ է... հիանալի՜ է... այդ մեր սպասածիցն էլ է դերազանցում։ Կեցցե՛ս Պետրաքի։ Հրաշք է, հրաշք...

Բայց Ստեֆչովը դադարեցրեց իր ուրախալից զեղմունքները, որովհետև հէնց իրանց փողոցում աղմուկ բարձրացաւ։

Նա վարագոյրը յետ քաշեց և դուրս նայեց։ Փողոցի խաւարի մէջ արագ մօտեցող ձիաւորների կերպարանքներ էին նկատւում։ Լսւեցին և ձիերի ձայներ, որ ստէպ-ստէպ խեղդւում էին դոփիւնից։

— Օնրաշիի ձայնն է, բացականչեց Ստեֆչովը։ Ամեն բան

այսպէս շո՞ւտ վերջացաւ։ Եւ նա շտապով պատուհանը բացեց ու գլուխը դուրս հանելով, կանչեց.

— Շէրիֆ աղա, գործն ի՞նչպէս է։

Պատասխանող չեղաւ։ Շէրիֆ աղան և իր ուղեկիցները արդէն հեռու էին... Երևում էր, նրանք Կարլովօ էին գնում։

— Արդէն քարշ տւին... պատուհանը փակելով, փնթփնթաց Ստեֆչովը։

Սակայն նորից լսւեցին հեռաւոր շների հաչոցների հետ խառն մերթ ընդհատւող աղաղակներ։

— Վիրաւորներ էլ կան, նկատեց բժիշկը։

— Աւելի լաւ. ուրեմն արիւն էլ է թափւել, պատասխանեց Ստեֆչովը։

— Ականջ դրէք, ձայն տւեց Մերդվենչիևը։

Բոլորովին մօտիկ, Ստեֆչովի տան առաջ մարդու հեծեծանք լսւեց։

— ՍաչեՀն է, զարմացած բացականչեց Ստեֆչովը։

— Վիրաւորւած է, ասաց բժիշկը։

— Գարշելի շուն... գնդակը նրան է դիպել... լաւ գործ կունենաս, կիր *) Ապոստոլ, դարձաւ Ստեֆչովը բժշկին։

— Թող ոտդ լինի գլխիցս, անիծւածը, փնթփնթաց յոյնը։

— Սոկոլովը, դու ասա՝ Սոկոլովը բռնւած լինի, իսկ այդ տխմար Ռաչեօն թէկուզ գետինն անցնի...

Այդ բոպէին դուռը ոյժով յետ ընկաւ և ներս վազեց Ռաչեօն, ամբողջովին ցեխի մէջ կորած։

X.

ՆԻՍՏԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է.

Քիչ յետ դառնանք ու նայենք, թէ ի՞նչ է կատարւում Բէյզադետայի տանը։

---

*) «Կիր» — յունական դարձւածք։

Նիստը Օգնեանովի նախագահութեամբ շարունակւում էր։ Կարլեշկովը արդէն հեռացել էր։ Նա ջերմում էր։

Շատ լուրջ խնդիրներ քննութեան առնւեցին. ի միջի այլոց նաև քաղաքի պաշտպանութեան հարցը, որովհետև բնակիչները վախեցել էին պատւող յամառ լուրերից, որ իբր թէ տաճիկները յարձակում պիտի գործեն քաղաքի վրա։ Գանչո Պապովը իր վրա առաւ գաղտնի պահնորդներ նշանակելու հոգսը. սրանք պէտք է գիշերները հսկէին քաղաքի շուրջը։ Բացի այդ, պաւաճանութեան նոր փորձերի առաջն առնելու և ոստիկանութեան ուշադրութիւնն ուրիշ կողմ դարձնելու համար զանազան միջոցներ ձեռք առնւեցին։ Ստրանգովը ներկայացրեց իր ընդունած ու բաժանած գրնդակների ու զէնքի հաշիւը, նաև այն հրացաններինը, որոնց դինն ամբողջովին չէր վճարւած, ուստի և Կարլովոյի ընդհանուր պահեստից դուրս չէր բերւած։

— Էլի քանի՞ լիրա է պակաս, հարցրեց Միչոն։

— Մօտ հարիւր լիրա։

— Այդ արդէն ճարւած է, խօսեց բժիշկը։

— Գտնւած է, կեցցե՜ս. ոռտեղից է գտնւած, բացականչեցին մի քանիսը։

— Գտած և ուղարկւած է։ Էգուց առաւօտ հրացաններն այստեղ կլինին, ասաց բժիշկը, ուշք չդարձնելով իրան ուղղած հարցերին։

— Ուրեմն զինելու գործը լաւ է գնում, նկատեց Օգնեանովը։

— Կարող ենք դիմադրել մի ամբողջ զօրագնդի և քսան օր դիմանալ մեր ամրութիւնների վրա, ասաց տէր Դիմչօն։

— Ի հարկէ, հասկանալի է, որ նրանք ոչ մի ամրութիւն չունէին։ Տէրտէրը քաղաքից դուրս ընկած բոստանների ցանկապատերն էր այդպէս անւանում։

— Իսկ եթէ թնդանօթով յարձակւեն մեզ վրա, հարցրեց Նեակովիչը։

— Այդ դէպքում բանը վատ կլինի, մտատանջութեամբ ասաց տէր Դիմչօն։

— Մենք էլ կարող ենք նրանց դէմ թնդանօթ հանել, նկատեց պարոն Ֆրատիւն։ Ես յօժարութեամբ կնւիրեմ մեր փայտէ տակառը. կրուպպի պէս նա կթնդայ։ Թող ուրիշներն էլ նւիրեն. այդպիսով մի ամբողջ արտիլլերիա կունենանք։ Եւ Ֆրատիւն հպարտութեամբ շուրջը նայեց։

— Տակառիդ բան չի դուրս գայ... Ցնից տուն ընկնել, հին տակառներ հաւաքելու մասին խօսելն իսկ ծիծաղելի է, վրա բերեց Օգնեանովը. սակայն, ուղիղ որ մեզ թնդանօթ հարկաւոր է։ Հէնց նրանց պայթիւնն իսկ սարսափեցնող ազդեցութիւն կունենայ թշնամու վրա... Կարելի է կեռասի բներից թնդանօթ շինել...

Օգնեանովի կարծիքը հաւանութիւն գտաւ և միաձայն ընդունւեց։

— Բուկչէն կշինէ, ասաց Միչոն։

— Բուկչէ՞ն. հա՜, ես նրան ճանաչում եմ, բացականչեց Օգնեանովը։

— Տակառագործին դու ճանաչո՞ւմ ես. հիանալի՜ վարպետ է, խօսեց բժիշկը։

— Իսկ կեռասենու բներ ո՞րտեղից ճարենք, հարցրեց Օրագովը։

— Այդ հեշտ է, խօսեց Նեակովիչը. ես իմ վրա եմ վերցնում։

— Վճռւած է. արտիլլերիան պատրաստելը Նեակովիչն իր վրա է առնում, հանաքով ասաց Օգնեանովը։ Այժմ ուրիշ հարցերի մասին խօսենք։ Ի՞նչ խնդիր կայ, Դիմչո։

— Պանագիւրիշչէի կոմիտէից մի նամակ։ Ժողովի սկզբում այնքան յուզւած էինք, որ չկարողացանք կարդալ։

— Բենկովսկո՞ւց է, կենդանութեամբ հարցրեց Օգնեանովը. շուտով կարդա՛։

Ամենքը լռեցին։

Քարտուղարը կարդաց Պանագիւրիշչէի կոմիտէի նամակը, որ առաջուց արդէն կրակի վրա բռնած, յայտնագործւած, պատրաստ էր։ Նամակը երկար էր և շատ խրատներ, կարգադրութիւններ, հրամաններ էր պարունակում և ուղղած կոմիտէին, որի գործողութիւնները ապստամբութեան ընդհանուր ծրագրի հետ ներդաշնակ պէտք է լինէին։

Տակը Բենկովսկու ձեռքով առանց որևէ քերականական

կանոնի ու կէսը եկեղեցական հին ձևի տառերով հետևեալ տողերն էր աւելացրած.

«... Եւ նոյն նամակաբերի հետ երկու հարիւր լիրա ուղարկեցէք, ինչպէս արդէն պարտաւորուել են և միւս կոմիտէները։ Այս հրամանն անպատճառ կատարեցէք... Եւ փիլիսոփայութիւններով շատ մի՛ զբաղուիք, այլ գործ արէք։

«Եւ դուք մինչև այժմ չէ՞ք վերջացրել Ս-ին. կնամարդի՛ք։

Եղբայրական ողջոյն Բենկովսկուց»։

Այս խօսքերն ունկնդիրների վրա տարբեր տպաւորութիւն թողեցին։ Տեղի հեռաւորութեան պատճառով, այստեղ Բենկովսկու հեղինակութիւնը դեռ այնքան զօրեղ չէր, իսկ նամակի կոպիտ տօնը միքանիսին բարկացրեց։ Պարոն Ֆրատիւն շտապեց նոյնիսկ աւելացնել.

— Այդ պարոն Բենկովսկին իրան շատ բան է թոյլ տալիս։

Սակայն Օգնեանովը նրան ընդհատեց և խստութեամբ ասաց.

— Ֆրատի՛ւ, քեզ խօսք չէ տրուած։ Ով ուզում է, որ իր հետ քաղաքավարի խօսեն, ապստամբութիւնից հեռու է մնում... Այստեղ կարգապահութիւն ու գործ է հարկաւոր... Ուշադրութի՛ւն. երկու հարիւր լիրա են պահանջում։ Պահանջում են, որովհետև սուրբ գործի համար անհրաժեշտ է և մենք առանց հակաճառելու պէտք է տանք։ Ունի՞ք դուք այդ։

— Նամակաբերն սպասում է. ընդհատեց Պապովը։

Կոմիտէն սկսեց եռանդուն կերպով զբաղուել այդ հարցով։ Առաջարկում էին կամաւոր ժողովարարութիւն անել, սակայն այդ, որպէս անիրագործելի մի ձեռնարկութիւն, մերժուեց։

Միչո Բէյզադեատն առաջարկեց դպրոցի փողերը վերցնել այն պայմանով, որ ապագայ իշխանութիւնն այդ պարքը վերադարձնէ Սպիտակ Եկեղեցու հասարակութեանը։ Այդ առաջարկն ևս տապալուեց։

Ապա առաջարկեցին պարք վերցնել և բոլոր անդամների ստորագրութեամբ մուրհակ տալ. — այդ էլ չանցաւ։ Փողի հարցը առաջնակարգ տեղ բռնեց — թէ ի՞նչպէս լուծել, ոչ ոք չգիտէր։

Բոլոր այդ խնդիրները, որ այժմ միայն ժպիտ կարող են առաջացնել, այն ժամանակ ամենայուրջ մարդկանց քննութեան ու լուծման առարկաներն էին։ Ձեռնարկութեան հմայիչ դեղեցկութիւնն ու նորութիւնը ամենքին հարբեցնում էր։

Օգնեանովը բոլոր այդ խօսակցութիւնները մռայլ դէմքով էր լսում։

— Այդ փողը ես կճարեմ, յանկարծ ասաց նա։

Բոլորը զարմացած նրան նայեցին։

— Որտե՞ղից, մեքենաբար հարցրեց Խրիստո Բրագովը։

— Այդ իմ գործն է, սառն կերպով պատասխանեց Օգնեանովը և այդպիսով վերջ տուեց ուրիշ հարց ու փորձերին։

Գենչո Պապովը ծայն խնդրեց։

— Պարոննե՛ր, արդէն ուշ է և նախ քան կոմիտէի ցրուելը էլի միքանի հարց կայ վճռելու։ Մեր մէջ նոր անդամներ կան, որոնք երդման թուղթը դեռ չեն ստորագրել։ Պէտք է, որ նրանք էլ մացնեն իրանց անունը. և նա թանաքամանն առաջ բերեց։

Նոր անդամները Բրագովը, Ֆրատիւն և Կանդովն էին։

Վերջին երկուսն առանց տատանուելու ստորագրեցին, բայց առաջինն այդ արեց ոչ առանց ներքին կռուի։

— Եղբայրնե՛ր, խօսեց նա շփոթուած, իսկ եթէ այս պիրը բռնուի՞։ Ես քրիստոնէի խօսք եմ տալիս, որ...

— Ի՞նչպէս թէ քրիստոնէի, հարցրեց Ֆրանգովը։

— Այդ այդպէս է, սիրելիք, բայց ես ընտանիքի տէր եմ...

— Մենք էլ ենք ընտանիքի տէր, անունդ գրի՛ր, որ սեր սպիտակի վրա լինի, բարկացած ասաց տէր Դիմչոն։

— Բա՛յ Խրիստո՛, ամո՞թ է, խստութեամբ բացականչեց Օգնեանովը։

Բրագովը ճնշուած սրտով ստորագրեց։ Բայց իր իսկական «Խրիստո Բրագով» անուն ազգանունի տեղ ստորագրեց — «Ռեստիւ Բրագասա», ինչպէս սովորաբար արտասանում էր։ Այդ խորամանկութիւնը նա գործ դրեց «յամենայն դէպս»։

XI.

ԴԱՒՍՃԱՆՈՒԹԻՒՆ.

Դուրսը բոլորովին մթնեց։ Անդամներից մի քանիսը ժամացոյցին էին նայում։

Ամենքի դէմքը արտայայտում էր նիստը վերջացնելու անորոշ ցանկութիւն, բայց ոչ ոք չէր վստահանում դրա մասին նախագահին որևէ բան ասել։

Վերջապէս պարոն Ֆրատիւն ընդհանուր ցանկութեանը թարգման հանդիսացաւ։

— Նիստը վերջացնենք, դիմեց նա նախագահին, որ Պանագիւրիշչէից ստացած նամակը երկրորդ անգամ էր կարդում։

— Սպասենք, պատասխանեց Օգնեանովը, նամակը ծնկին դնելով։ Բենկովսկու նամակում մի կարևոր կէտ էլ կայ. — նրա խօսքն ինչ Ս.-ի մասին է. եթէ չեմ սխալւում, այդ այն սրիկան է։

Ժողովականներից միքանիսը պնդում էին, որ Սամոնովն է, միւսների կարծիքով Ստեֆչովը։

— Լաւ որ յիշեցի, ընդհատեց նրանց Ֆրանդովը։ Այսօր Ստեֆչովը Սամոնովի հետ կոնակում բէյի մօտն էր... Իսկ նրա լրտեսը, Ռաչեօն Պերելետոն, դիտում էր մեզ, երբ սկսեցինք ժողովի հաւաքել։

— Ռաչեօն... ակամայ բացականչեց Օգնեանովը. ես դրան նայում էի, այդ ապուշին, Կանարի պանդոկում...

— Ուրեմն, ճիշտ է, որ դու նրան կապել ես։

— Նա պատմում էր այդպիսի մի հեքեաթ, բայց նրա ասածին ոչ կհաւատար։ Մենք ամենքս հաւատացած էինք, որ դու մեռած ես։ Բացի այդ, Ռաչեօն էլ քիչ ցնդած է։

— Նա ձեզ ճշմարիտ է պատմել, ասաց Օգնեանովը, որ իր գլխի անցքերը պատմելիս, այդ աննշան դէպքը չէր յիշել։ Բայց թողնենք... Ուրեմն, Ստեֆչովն առաջւայ պէս մեզ լրտեսում է. զգուշի՛ արարած։

Այս խօսքերի հետ Օգնեանովի դէմքը զայրոյթից բոցավառուեց։

— Խօսք եմ խնդրում, անսպասելի կերպով բացականչեց Կանդովը, որ մինչև այժմ լուռ էր։ Ես ամենահաւաստի աղբիւրից գիտեմ, որ Օգնեանովին մատնողը Ստեֆչովն է, որ նա է բոլոր դժբախտութիւնների պատճառը։

Նրա աչքերը, Օգնեանովին ուղղած, շիկացած ածուխի պէս փայլում էին։

— Ո՛չ, Ստեֆչովը չէ, Մանչոն է մատնել, վրա բերին ամենքը։

— Սխալւում էք, պարոններ, չարաչար սխալւում էք, պատասխանեց ուսանողը և ոտքի թռչելով, խիստ յուզած ձայնով պատմեց, թէ ինքն ի՞նչպէս է իմացել Ստեֆչովի կատարած մատնութիւնը։ Նա անհերքելի փաստերով ապացուցեց իր խօսքերը։

Անսանձ կատաղութիւնը տիրել էր ամենքին. լսեցին հայհոյանքներ, կատաղի բացականչութիւններ Ստեֆչովի հասցէին։ Դաւաճանի դիմակը պատռուած էր։

Օգնեանովը լուռ էր, բայց դէմքը ներքին մրրիկ էր արտայայտում։

— Բենկովսկին ճշմարիտ է ասում, մենք կնիկմարդ ենք, նկատեց Պապովը։

— Այսօր էլ էր նա մեզ լրտեսում։

— Ո՞վ գիտէ թէ հէնց այսօր մեզ ի՞նչ է սպասում։

— Մենք այնպէս բաց ու անխոհեմ էինք գործում, որ ես փոխւում եմ...

— Ամբողջ քաղաքում միայն Ստեֆչովն է վատնդաւոր։

— Իսկ Սամոնովին մոռանում ես։

— Սամոնովն էլ է այստեղ, անհանդստութեամբ բացականչեց Օգնեանովը։

— Գետինը մտնի այդ գարշելին ,թէև իմ ազգականն է, բարկացած ասաց Միչօն, նրանից, թէև նա իմ ազգականն է, ես զզւում եմ, ինչպէս կղկղանքից։

— Պարոն նախագահ, քո՞ կարծիքը։ Ի՞նչ միջոցներ պէտք են, դիմեց Սակոլովն Օգնեանովին։

Օգնեանովը, ամբողջ ժամանակ խորը մտածութիւնների մէջ ընկղմուած էր, վերջապէս գլուխը բարձրացրեց և վճռականօրէն պատասխանեց.

— Մահ։

— Երկու դաւաճաններին էլ։

— Այո։

— Յեղափոխական կանոնագրութիւնն էլ այդ պատիժն է նախատեսնում, նկատեց Պապովը։

Երևեցին թոյլ հակաճառութիւններ։

Բոյչօն հանդիսաւոր կերպով ընկերներին նայեց։

— Առաջարկում եմ մահուան պատիժ Ստեֆչովին և Սամսոնովին։

— Ընդունում ենք։

Միայն Միչօն և Բրադովը հրաժարուեցին ձայն տալուց։

— Ձայների մեծամասնութիւնը մահուան կողմն է, սառնութեամբ յայտարարեց Օգնեանովը։

Ամենքի մարմնով ակամայ դող անցաւ...

— Ցաւում եմ, որ մենք թշնամու արիւն թափելուց առաջ, Բոլգարացու արիւն պէտք է թափենք, մռայլ ասաց Օգնեանովը։ Բայց ոչինչ չի կարելի անել. հայրենիքը մեզնից այդպիսի զոհեր էլ է պահանջում և այդ զոհերն ամենածանրն են...

Կարճ ժամանակով լռութիւն տիրեց։

— Պարոն նախագահ, Ստեֆչովի համար ես իմ ծառայութիւնն եմ առաջարկում, խօսեց ուսանողը և նրա ձայնը դողդողաց։

Այդ պատրաստակամութիւնը տեսնելով, բոլորը զարմանքի ու համակրութեան հայեացքներ ծգեցին Կանդովի վրա։

— Կանդով, դու շտապում ես։ Ստեֆչովի արիւնը ե՛ս եմ ուզում թափել, ուրիշ մարդ իրաւունք չունի, բացականչեց բժիշկը։

— Վիճակ, վիճակ, գոռացին ժողովականները։

Բայց ոչ Կանդովը, ոչ Սոկոլովը վիճակ հանելու չէին համաձայնում։ Նրանք մոռացել էին իրանց քիչ առաջ կայացրած հա-

մաձայնութիւնը։ Նրանցից ամեն մէկը վախենում էր, որ վիճակը միւսին կնկնի։

Այդ բոպէին Օգնեանովը խօսեց հեղինակաւոր ձայնով։

— Քանի որ հարց է ծագում, թէ դաւաճանին սպանելու ով աւելի մեծ իրաւունք ունի, երկուսիցդ էլ այդ իրաւունքը ե՛ս խլում եմ. նրա զոհը ե՛ս եմ և իմ իրաւունքը ամենից դերադասելի է։ Եթէ դուք վիճակ հանելու չէք համաձայնուի, հաւատացնում եմ ձեզ, պարոններ, ես կօգտուեմ իմ իրաւունքիցս. ջուրն ընկածը անձրևից չի վախենայ։

— Ո՛չ, ոչ, այդ անկարելի է, թող Սոկոլովն ու Կանդովը վիճակ վերցնեն, ձայնեցին ժողովականները։

Բոյչօի խօսքերը երկու ախոյեանների համար էլ համոզիչ էր. ուստի և համաձայնուեցին կատարել ընդհանուրի պահանջը։

Վիճակը Սոկոլովին ընկաւ։

— Այժմ ես ձեր դէմ ոչինչ չունեմ, շնորհաւորում եմ չարացած ասաց Կանդովը և անկիւնը քաշուեց։

— Այժմ, Սամսոնովի համար, խօսեց Պապովը։

— Որքա՜ն մայրերի է լացացրել այդ հրէշը, ասաց տէր Դիմչօն։ Նրան ոչնչացնողը մինչև վիզն էլ որ մեղքերի մէջ լինի խրուած, Աստուծոյ հրեշտակի պէս սուրբ կդառնայ։

Եւ տէր Դիմչօն բարեպաշտութեամբ օդու բաժակը լցրեց, որ նա դուրս հանեց Տոցից և տուեց Սարանչևին։

Օգնեանովը բացականչեց։

— Պարոններ, այժմ Սամսոնովի համար...

Հէնց այդ ժամանակ բակի դուռը ծեծեցին։ Ամենքը ականջները սրեցին, բոլորի առաջ դաւաճանութեան պատկերը ցցուեց։

Սոկոլովը ատրճանակը հանելով, դուրս վազեց։

— Ո՞վ, է հարցրեց նա։

Ցածր ձայնով պատասխանեցին.

— Բացէ՛ք, նամակ կայ...

Բժիշկը նամակն առաւ, դուռը փակեց և ներս մտնելով բսկսեց կարդալ։

Մի բոպէ չանցած, նա փոխուած դէմքով ընկերներին մօտե-

ցաւ։ Զարմացած, ապշած, նա սփրթնել էր։ Նրա տեսքից ամենքի սիրտը մարեց։

— Դաւաճանութիւն, հարցնում էր ամենքի հայեացքը։

— Այդ ի՞նչ նամակ է, հարցրեց Օգնեանովը։

— Մեր գրած նամակն է, որ երեկ Պանագիւրիշչէ ուղարկեցինք, այժմ մեզ են վերադարձնում։ Ահա՛ տեսէք, թէ ո՞ւմնից է։

Նամակը տւին Օգնեանովին։ Սա կարդաց հետեւեալը.

«Պարոն փոխ նախագահ,

«Վատ էք անում, որ ձեր նամակները փողոցներում
«թափթփում էք։ Այս նամակը պարոն Սաեֆչովրն էր
«գտել։ Այսօր բէյի մօտ ես նրա ձեռքից առայ։ Բէ-
«յին նա թարգմանեց այն երեսը, որտեղ դուք Բելլադոնա-
«յի մասին էք խօսում, իսկ միւս երեսը յետոյ ինքս իմ
«սենեակում, կրակի մօտ կարդացի. դրա վերաբերմամբ
«մի՛ անհանգստանաք։ Այս երեկոյ ձեր գլխին փոթորիկ
«էր հաւաքւում, բայց ցրւեց։ Ինձնից շնորհակալ եղէք։
«Այսուհետև ուրիշ տեղ հաւաքւեցէք և աւելի զգոյշ։
«Ցանկանում եմ յաջողութիւն և յաղթութիւն։

«Բոլշար դաւաճան և լրտես պ. Սամոնով»։

Շփոթ բարձրացաւ։

— Այս նամակն ի՞նչպէս է ընկել Սաեֆչովի ձեռքը, դայրացած հարցրեց Օգնեանովը, երբ յուզման առաջին րոպէն քիչ անցաւ։

— Պենչօն վերցրեց, որ մեր նամակատարին յանձնէ և ինչպէս երևում է, կորցրել է։

Ճիշտ որ, նամակը ցած էր ընկել փողոցում, երբ Իւրդանի աղախինը առաւօտը Պենչոյի Սիւրտուկը թափ էր տւել։ Պենչոն դեռ չէր նկատել, որ նամակը իր գրպանից անյայտացել է։

— Եւ կարծես անպատճառ պէտք է Սաեֆչովը գտնէր, ա-

ռի՛ ու սրանից յետոյ, ասա, թէ ճակատագիր չկայ, խօսեց Կանդովը։

— Եւ որ նախախնամութիւնը գոյութիւն չունի, աւելացրեց Նեակովիչը։

— Կարելի՞ էր միթէ ենթադրել, որ Սամոնովն այդքան աղնւութիւն կունենայ, ասաց Ֆրանդովը։

— Պարզ է, որ մենք բացի այս դէպքից, ուրիշ շատ բանով ենք պարտաւոր նորան, նկատեց Գ..նչօ Պապովը։ Նա այսպէս ինչ որ փոթորկի մասին էլ է խօսում. հաւանականաբար մտադիր են եղել այս երեկոյ մեզ վերա յարձակւիլ և բռնել ամենքիս... Իզուր չէ, որ Սաեֆչովը կոնակ է դնացել, իսկ Նրա լրտեսը մեզ հետևել...

— Այո՛, այդ մարդը աղնւութիւն ունի, զարմացաւ Օգնեանովը։

— Եւ մեծ հայրենասէր էլ է. ինչպէս տեսնում էք։ Չէ՞ որ մեզ ազատելով, նա իրան ահագին վտանգի մէջ է ձգել. ասաց Նեակովիչը։

— Պարոննե՛ր, հանդիսաւոր ձայնով ասաց Օգնեանովը. սա ժամանակի խորհուրդն է։ Քանի որ իրանք, տաճիկների պաշտոնական լրտեսները, հայրենասէր ու մեզ դաշնակից են դառնում, ուրեմն մենք գործում ենք մի նշանաւոր բոպէում, նշանակում է ժողովուրդի ոգին պատրաստ է, նշանակում է նա պատրաստ է մեծ կռւի համար, հասունացել է...

— Պեարաքին այժմ իմ աչքում սուրբ է, յուզւած նկատեց բայ Միչօն։

Եւ բոլորի դէմքին հոգեկան անդորրութիւն ու աշխուժութիւն փայլեց։

Պէտք է նկատել, որ բոլորի անէծքին ենթակայ Սամոնովն իսկապէս մինչև այժմ ոչ մի դաւաճանութիւն չէր կատարել։ Նա լրտես էր դարձել միայն այն նպատակով, որ փող կորզէ թէ՛ Թուրքերից և թէ՛ բոլշարներից։ Վերջինների վրա ազդելու համար ոպառնալիքներ էր գործ դնում, բայց դրանից այն կողմը չէր անցնում։ Պատասխանատուութիւնը նրա մէջ մեռել էր, բայց խիղճը դեռ կենդանի էր։ Ըստ երևոյթին, այդ թշւառը լրտես լինելու համար

չէր ստեղծուած, բայց կեանքի ծանր պայմաններն ստիպել էին այդ կեղտոտ ճանապարհը բռնել։ Նկատենք, որ նախքան նամակը կոմիտէին վերադարձնելը, նա խորամանկութեամբ բէյին համոզել էր յարձակումը յետաձգել։

Նա մեռաւ աքսորի մէջ, Ասիայում, հէնց այն օրը, երբ Սան-Ստեֆանոյում ստորագրուեց ընդհանուր ներումը։

XII.

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԱՐՇԱՒԱՆՔ.

Նիստը վերջացաւ, բայց խօսակցութիւնը շարունակւում էր մեծ ոգևորութեամբ։

Ոչ ոք ընթրիքի մասին չէր մտածում։

— Լսեցէ՛ք, կարծես փողոցում ինչ որ աղմուկ կայ, ականջ դնելով ու բաց անելով դուռը, ասաց Բրազովը։

Բոլորը ականջ թռան և լարուած ուշադրութեամբ սկսեցին ականջ դնել։

— Այն ի՞նչ բան է. հարցնում էին մի քանիսը։

— Լսեցէք, լսեցէ՛ք։

Գիշերային լռութեան մէջ նոր աղաղակներ լսեցին. շները կատաղի հաչոց բարձրացրին, փողոցում արուիւն տարածուեց, հրացաններ որոտացին, փեղկերը, դռները փակուեցին... Հեռում լսւում էին մութ, անորոշ աղաղակներ։

— Ապստամբութի՞ւն է։

— Ո՛չ, թուրք աւազակները մեզ վրա են յարձակուել։

— Գուցէ մեզ պաշարել են։

— Ահա՛ դէնք, ո՞վ է ուզում, կանչում էր բայ Միչօն հրացանների ու ատրճանակների խուրջեր բերելով. մինչդեռ միւսներն անորոշ դրութեան մէջ էին։

— Վերցրէ՛ք, դոռաց Օգնեանովը։

Ամենքը խլեցին, ով ի՛նչ կարող էր և մի տեղ խմբուեցին։

Դրսի աղմուկը սաստկանում էր, շները սարսափելի ոռնոց էին ձգել։

Նոր, աւելի պարզ ձայներ լսուեցին։

— Հէ՛յ, մարդի՞կ, դռներդ կողպեցէք... Պետրէ, Նեագուլէ, բէ՛յ... Տրաքացրէք, խփեցէ՛ք...

Եւ նոր արուիւն։

— Բանա՞նք, հարցրեց Միչօ Բէյզադեանցն։

— Ամենքդ էլ ունէ՞ք դէնք, կոչեց բժիշկը։

— Բայ Միչո՛, բա՛ց, մռնչում էր Բգնեանովը։

Դուռը բացուեց։

Բոլորը փողոց դուրս թռան... Աղմուկը հեռանում էր... Շները դեռ ևս անհանգստութեամբ հաչում էին։

Ի՞նչ կայ, աւազակնե՞ր են... յարձակո՞ւմ է, փախչո՞ւմ են...

Ոչ ոք ոչինչ չէր հասկանում։

Նորից հրացանի ձայն լսուեց։

— Գնանք այն կողմը, որտեղ զգում են առաջարկեց բայ Միչօն, կարելի է այնտեղ հարկաւոր լինենք... Տղե՛րք, առա՞ջ։

Եւ սլացան։

Կանդովը հրացանն ուսին, եաթաղանը ձեռին ընկերներից առաջ անցաւ։

— Կանդո՛վ, կանչում էր նրան Օգնեանովը, զգոյշ, սպասիր։

Բայց Կանդովը չէր լսում. նա հաւատացած էր, որ ապստամբութիւնը բռնկուել է և շտապում էր առաջին շարքերն անցնել։

Փողոցները նորից դատարկուեցին։ Խմբի մօտենալուց, պատուհանների կրակը իսկոյն անհետանում էր։ Շուտով խումբը կոնակ հասաւ։ Կոնակը լուռ էր։ Բակում ոչ մի կենդանի արարած չկար։ Դուռը լայն բացած էր։ Միչօ Բէյզադեանցն կանչեց.

— Օնբաշի, Օնբաշի, այստեղ մարդ կա՞յ։

Երևաց բոլդարեայի հիւանդ պահապանը։

— Բայ Միչո՛, ասաց նա, այստեղ ոչ ոք չկայ։

— Ո՞ւր են գնացել։

— Կարլովո վազեցին. բէյն էլ, բոլոր ոստիկաններն էլ վազեցին դէպի Կարլովո։

— Ի՞նչ է պատահել։

— Մի՞թէ չէք լսել։ Աղաղակ, աղմուկ, հրացանի պայթիւն...

Այդ բոպէին նորից ձայներ լսեցին, որ քանի գնում մօտենում էին։ Խօսակցութեան հետ լսւում էր և բարձր ծիծաղ։ Խումբը տարակուսած, հրացանները ձեռքին, կազմ ու պատրաստ կանգնած էր...

Շուտով ծուռոգ փողոցը անցնելիս մարդիկ երևացին։

— Երևի հարբածներ են, շնչաց Օգնեանովը, տղե՛րք, ականջ դրէ՛ք։

Եկողները ծիծաղելով, մօտենում էին։ Նկատելով, որ այնտեղ ինչ որ սուերներ են թաղնուած. նրանք տաճկերէն ձայն տուին։

— Մի՛ք վախիլ։

— Ո՞վ էք, հարցրեց բայ Միչօն, այդ դո՞ւ ես, ծայն տուեց մէկը, բոլգարերէն։ Դա պահապան Միքայէլն էր։

— Բարի երեկոյ, ասացին ուրիշ ձայներ։

— Ի՞նչ է պատահել։

— Բժշկի արջն է, բայ Միչօ, գրո՞ղը տանի նրան... ամենքին վախեցրեց։

— Կլէոպատրա՞ն... բացականչեց բժիշկը. ո՞ւր է, ո՞րտեղ է։

— Լեռները փախաւ։

Սարսափելի հոմերական ծիծաղը փողոցը լցրեց։ Բոլորը հասկացան, որ աղմուկի պատճառը Կլէոպատրան է եղել։

— Խօ վնաս չէ՞ տուել, հարցրեց Ֆրանդովը։

— Միայն Ռաչեօ Պերալեսին ցեխն է կոխել։

— Ասուած նրա հետ... բայց ի՞նչ խայտառակ բան էր. բէյն իսկոյն ձիով սլացաւ այն կողմը, միւսներն էլ նրա յետևից։ Կարծեցին, խռովութիւն է. կարծես խռովութիւն անելն այսպէս հեշտ է։ Իզուր չեն ասել, ով գայլին տեսել է, բղաւում է, ով չէ տեսել, աւելի շատ է բղաւում։ Լաւ որ մարդ է ուղարկուած բանի էութիւնն իմացնելու, թէ չէ, Կարլովոից այստեղ թուրքերի մի ամբողջ վոհմակ կվազէր։

— Նրա մօտ ո՞ւմ ուղարկեցիք, հարցրեց բայ Միչօն։

— Սամսոնովը գնաց։

— Ի՞նչպէս, ինքը Սամսոնո՞վը։

— Այո՛, նա։ Վազը նա ուզում էր Փիլպպոպոլ գնալ, բայց երբ այս աղմուկը բարձրացաւ, այլևս չուզեց դիշերն այստեղ մընալ, գնաց Կարլովո, բէյին տեսնելու, որ այնտեղից ուղղակի իր ճանապարհը ընկնի։ Լաւ բան եղաւ, բարեկամս։

— Ահա թէ ինչ փչացած ժողովուրդ է մեզ վերա իշխում, ասաց Օգնեանովը ընկերներին, երբ յետ էին դառնում։ Ես ուղղակի ամաչում եմ, երբ մտածում եմ, որ մենք այսպիսի փթած պետութեան ենք ծառայում, հպատակւում։

Խումբը վերադարձաւ Միչօ Բէյզադէտոյի տունը, որ զէնքերը այնտեղ թողնէ։ Եւ երբ դուռն մօտ նոցա լուսաւորեցին, նոր միայն նկատեցին, որ Ֆրատիւն իրանց մէջ չէ։

— Նա դեռ մեր դուրս գնալու ժամանակ չկար, ասաց Պապովը։

— Այդ տղան երևի վախեցել ու մի տեղ պահուել է, պէտք է գտնել, թէ չէ դիշերը կմրսի, խօսեց բայ Միչօն։

Սկսեցին հասարակապետականին որոնել ամեն տեղ — փողոցներում, բոստաններում, ծառերի վրա։ Մոռացան միայն խաղողի վազերը և Ֆրատիւն հէնց նոցա վերա էր բարձրացել, բայց թէ ինչպէս էր համարձակւել օդային այդպիսի ճանապարհորդութիւն կատարել, ինքն էլ չկարողացաւ մտաբերել։

Սանդուխք դրին և նա անվտանգ ցած իջաւ, ընկերները քաջին ուրախ քրքիջով դիմաւորեցին։

— Ի՞նչ էր պատահել, հարցրեց նա։

— Ֆրատի՛ւ, դու հասարակապետութիւն էիր առաջարկում, այժմ արդէն այդ ունենք... սակայն այս ռեժիմը միայն մի դիշեր դոյութիւն կունենայ, ծիծաղելով ասաց Նիկոլա Նեգկովիչը։

XIII.

ՎԻԿԵՆՏԻՆ.

Ընկերներից բաժանելով, Օգնեանովը դիմեց քաղաքի ծայրը, ապա բռնեց վանքի ճանապարհը։

Բնութիւնն արդէն խորը քնի մէջ էր ընկղմուել։ Ընկուզենիները ու Ճանապարհի կողքին բուսած թփերը իրանց տերևներով քնքոյշ խշխշոց էին ծղել շուրջը։ Լեռնային ջրվէժների հեռաւոր խուլ աղմուկը տարածւում էր այդ լռութեան մէջ կարծես երկնային թովիչ երգի խուլ արձագանքը լինէր։ Հին լերան հսկայական, մութ գծագրութիւնները, որ գիշերային խաւարի պատճառով աւելի մօտ էին երևում, լուռ ու խաղաղ բարձրանում էին դէպի աստղերը։

Օգնեանովը ծեծեց վանքի մեծ դուռը. Մի րոպէ չանցած, մրշակը հարցրեց. «ով է» և բաց արեց։ Վանքի մի զոյգ ուժեղ դամփռները գիշերային հիւրի վրա յարձակուեցին, բայց ճանաչելով, լուռ մնացին ու պոչերը թափ տալով յետ, քաշուեցին։ Նա կամաց ներս մտաւ երկրորդ դռնից, որ ներքին դաւիթն էր տանում, անցաւ բարդենների ծառուղիով և ծեծեց սարկաւագի դուռը։

Դուռը բացուեց։

— Ո՞վ է, հարցրեց սարկաւագը, հագուստը փոխած Օգնեանովին չճանաչելով։ Քիչ դիտելուց յետոյ, նա հիւրի վզովն ընկաւ։

— Բոյչօ, Բոյչօ, դո՞ւ ես այդ։ Եւ խեղճ սարկաւագը լաց եղաւ։ Նա հարցեր թափեց հիւրի գլխին։ Օգնեանովը համառօտ կերպով բոլորը պատմեց, ապա աւելացրեց.

— Բայց ես քեզ մօտ գործով եմ եկել և ոչ թէ գլխիս անցածը պատմելու։ Վիկենտին զարմացած նրան նայեց։

— Ձի՞շտ, քեզ ո՞ր քամին է այս կողմը քշել այս ժամին։

— Հանգստացի՛ր, քեզ մօտ ապաստան խնդրելու չեմ եկել, ինչպէս մի տարի առաջ. այժմ ուրիշ բան եմ խնդրում և ոչ ինձ համար, այլ գործի...

— Աա՛, անհանգստութեամբ խօսեց Վիկենտին։

Հայր Երոթէյն այժմ այստե՞ղ է։

Սովորութեան համաձայն եկեղեցում աղօթքի է կանգնած, հարցի նպատակը չհասկանալով, պատասխանեց Վիկենտին —

Օգնեանովը մտածութեան մէջ ընկաւ։

— Երկա՞ր կմնայ դեռ այնտեղ։

— Սովորաբար մինչև ժամի երեք և կէսը այնտեղ աղօթում է։ Այս րոպէիս ժամի երկուսն է։ Ինչո՞ւ ես հարցնում։

— Դու դիտե՞ս չէ՞ նրա փողերի տեղը։

— Դիտեմ, ի՞նչ կայ։

— Նստի՛ր, քեզ մի բան պիտի ասեմ։

Սարկաւագը նստեց և աչքերը հիւրի վրա սևեռեց։

— Մենք անպատճառ պէտք է Պանագիւրեշչէի կոմիտէին երկու հարիւր լիրա ուղարկենք։ Կազմակերպութեան համար այդ անհրաժեշտ է։ Եւ այն մարդը, որ փողը պէտք է տանի Բենկովսկուն, այստեղ սպասում է։ Պէտք է ճարել և ես կոմիտէին խօստացայ, որ կճարեմ,

— Իսկ ի՞նչպէս պէտք է ճարես, հարցրեց սարկաւագը։

— Այդ փողը մենք պէտք է հայր Երոթէյից վերցնենք։

— Ի՞նչպէս, նրանից խնդրե՞նք։

— Ոչ, ես այդ չեմ ասում, նա ինքը իր կամքով չի տայ։

— Ուրեմն ի՞նչպէս։

— Քեզ ասացի, որ մենք ինքներս պիտի վերցնենք։

Սարկաւագը վախեցած, Օգնեանովին էր նայում։

— Դո՞ւ ինչպէս ես կարծում, հայր Վիկենտի։ խստութեամբ հարցրեց Օգնեանովը։

— Աւելի լաւ է, խնդրենք, կարելի է իր կամքովը տայ։

— Խնդրելու համար պէտք է նրան ամբողջ գործը բաց անենք... իսկ նա խի՛ստ մտերիմ է Իւրդան Դիամանդիևն, քաղաք գնալիս միշտ նրա տանն է իջնում։ Բացի այդ, ես դիտեմ, որ նա իր կամքով չի տայ, իզուր տեղը թանկագին ժամանակը կկորցնենք։ Շտապի՛ր, Վիկենտի։

Սարկաւագը մտածութեան մէջ ընկաւ. նա ամբողջովին Օգնեանովի խօսքերի ազդեցութեան տակ էր։

— Համաձայն ես, հայր Վիկենտի։

— Ծանր է ինձ համար, եղբա՛յր, համարեայ լացակումած պատասխանեց սարկաւագը։

Վիկենտին ոտքի թաթերի վրա դուրս գնաց։

Բակում խաղաղ էր և մութ։ Զորս կողմը բուսած խաղողի վազերը խաւարն աւելի խիտ ու խորհրդաւոր էին դարձնում։ Միջանցքներն ու սրահները լռութեան մէջ էին ընկղմուած։ Պատուհանները կարծես աչքեր լինէին, որ քննում են գիշերուայ ժալ-

քերը։ Անցնելիս, սարկաւագը եկեղեցին նայեց. հայր Երոթէյը դրբքակալի մօտ կանգնած, աղօթում էր։ Սարկաւագը շտապով առաջ անցաւ։ Առուակի միապաղաղ խոխոջը խլացնում էր նրա ոտների ձայնը, որ առանց այն էլ, անլսելի էր։ Խցի դուռն հասնելով, նա զգաց, որ ոտքերը ծալւում են, կարծես մի քանի ժամ ճանապարհ էր գնացել։ Սիրտը սկսեց արագ ու ցաւագին խփել։ Սարկաւագն զգում էր, որ ոյժերն իրան դաւաճանում են, վճռականութիւնը հալւում է, թուլանում... Նրա հոգու խորքերում ինչ որ մի բան զարթնել, աղաղակում էր, դատապարտում, տեղից շարժւել չէր թողնում։ Նա սկսեց ինքն իրանից վախենալ։ Այդ ի՞նչպէս պատահեց, որ այժմ հայր Երոթէյի դռանն է։ Աւելի լաւ չէ՞ այստեղից հեռանալ, գնալ և Օգնեանովին ասէ՞լ, որ Ծերունին տանն է, որ անկարելի է։ Օգնեանովին խաբէ՞լ։ Բայց նա ստախօսութիւնն ատում էր. կամ լաւ է, ուղղակի ասել, որ ինքը այդ գործը չի կարող յանձն առնել, որ այդքան համարձակութիւն չունի։

Բայց չէ՞ որ հէնց նոր Օգնեանովի մօտ պարծենում էր... Ինչպէս կդիմանայ նրա ծաղրանքին, կարելի է և արհամարական հայեացքին...

Ցեռոյ, մեծ նպատակը, որին նա ինքն էլ է ծառայում, այդ է պահանջում։ Առաջին դէպքն է, որ ինքը պէտք է գործին օգտակար լինի և յանկարծ կնամարդ կհանդիսանայ... Ո՛չ, յետ կանգնելն անկարելի է։

Վիկենտին վճռականութեամբ մօտեցաւ դրան։

Խուցը մութն էր. շուրջը դերեզմանային լռութիւն։ Նա երկու բոպէ ևս ականջ դրեց և դուռը հրեց, նա բացւեց։ Կանթեղիկը նւազ փայլփլում էր և շուջը լոյսի մարող ճառագայթներ արձակում։

Վիկենտին շոշափեց հայր Երոթէյի քաշ արած բահկոնը, ձեռքը դրպանը կոխեց, բանալիքը դուրս քաշեց և արագութեամբ մրտաւ բաց նախասենեակը։ Այնտեղ նա վառեց մեղրամոմը, մօտեցաւ երկու սնդուկներին և մոմը նրանցից մէկին կպցրեց. չոքեց մի լուսի առաջ, բայց ծնկները դողում էին և նա ծալապատիկ նստեց։ Ցածր չխկոցից յետոյ սնդուկը բացւեց։ Նրա մէջ փողով ու թանկագին իրեղէններով լցրած տոպրակներ էին դրած, այդտեղ

կային սաթի համրիչներ, ոսկէ ռուսական սրբերի պատկերներ, արծաթէ զգալներ ու ամաններ, սաթի խաչեր և սուրբ Աթոնից բերուած սրբերի պատկերների կապոցը։ Վիկենտին տոպրակները շոշափեց։ Նրանցից երկուսն, ըստ երևոյթին, խոշոր դրամներով, ռուբլիներով, մեջիդիներով էին լցրած, երրորդը արծաթէ մանր փողով։ Եւ վերջապէս մի կանաչ տոպրակ էլ պարունակում էր իւր մէջ փայլուն ոսկիներ։ Սարկաւագը վերջին տոպրակից երկու հարիւր լիրա փեշը լցրեց։ Փայլուն ոսկէ կոյտը ընկած էր նրա առաջ։ Վիկենտին արծաթասէր չէր, բայց այդ պսպղացող մետաղի հմայիչ փայլը նրան կախարդեց։

— Ահա՜ թէ ի՛նչ բանի համար են սոսկալի ոճրագործութիւններ կատարւում և ի՛նչ բան ծեռք բերելու համար է մարդն իր կեանքը զոհում... Ահա՜ թէ ինչո՞վ է կարելի ամբողջ աշխարհը գրնել... Բոլդարեան ազատելու համա՞ր էլ նոյնպէս փող է հարկաւոր... և հազարաւոր մարդկային կեանքեր... բայց ո՞րտեղ է այս Ծերունի՞ի ամբողջ հարստութիւնը, որը, ինչպէս ասում էին, հազարաւոր բեռների պիտի հասնէր, մտածում էր Վիկենտին։

Նա զարմանում էր։ Ոսկիները նա սկսեց փեշից դրպանը լցնել։

Մի անսպասելի խշխշոց լսւեց։ Սարկաւագը յետ դարձաւ։

Նրա յետևը կանգնած էր ի՛նքը, հայր Երոթէյը։

XIV.

ԿԱՆԱՉ ՏՈՊՐԱԿԸ.

Ծերունին պարթև հասակի տէր մի մարդ էր։ Նրա երկար, սպիտակ մօրուքը դեղեցիկ կերպով տարածւում էր կրծքի վերա։ Մոմի աղօտ լոյսի տակ, նրա լայն, չոր ու բարի դէմքը խաղաղ էր, ինչպէս և նրա հայեացքը։

Նա հանդարտ մօտենում էր։

Վիկենտին ծունկ չոքեց։

— Որդեակ, հաւատամ աչքերիս, վշտահար, դողդոջուն ձայնով ասաց նա։

— Ներեցէ՛ք ինձ և Վիկենտին ապերասանքով ձեռքերը Ծերունուն մեկնեց։

Հայր Երոթէը կանգնած, լուռ նրան էր նայում։ Վիկենտիի դէմքը սփրթնելուց անճանաչելի էր դարձել։ Նրա բոլոր անդամները փետացել էին։ Անշարժ դրութեան մէջ, նա աւելի շուտ արձանի էր նման, քան կենդանի մարդու։

Սենեակում դերեզմանային լռութիւն էր տիրում։

— Սարկաւագ Վիկենտի, շատ ժամանակ է, որ չար սատանան տիրել է հոգուդ։ Վաղուց է, որ մէջդ ծագել է ոսկու ու կողոպուտի տենչանքը։ Տէր Աստուած, Յիսուս Քրիստոս, ներիր ինձ մեղաւորիս։

Ծերունկը երեսը խաչակնքեց։

— Վէ՛ր կաց, սարկաւագ Վիկենտի, կոչեց նա խիստ ձայնով։

Վիկենտին մեքենայօրէն ոտքի կանգնեց. ծառի կոտրած ճիւղի նման նրա գլուխը քաշ էր ընկած։

— Ասա՛ տեսնենք, ինչո՞ւ ես գիշերային աւազակի պէս այստեղ մտել։

— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք, մեղաւոր եմ, հայր Երոթէէ, խօսեց Վիկենտին կարաւոդ, խուլ ձայնով, որ աւելի շուտ հեծկլտանքի էր նման։

— Թող Աստուած ներէ քեզ... Դու արդար ճանապարհից շեղուել ես, դու յաւիտենական կորուստի ես դիմում, դու հոգով ու մարմնով անդունդն ես գլորուում։ Ո՞վ սովորեցրեց քեզ այդ մահացու մեղքը։

— Հա՜յր, ների՛ր ինձ, այս փողերը ես ինձ համար չեմ վերցրել յուսակտուր ձայնով աղերսում էր Վիկենտին։

Ապա ո՞ւմ համար ես այս գայթակղութեան մէջ ընկել, Վիկենտի՛։

— Ժողովրդի, ազգի գործի համար, հայր։

Ծերունին զարմացած նրան նայեց։

— Ի՞նչ ազգային գործի համար։

— Այն գործի, որ այժմ պատրաստում ենք — բոլգարական ապստամբութեան համար. փող հարկաւորուեց... և... ես համարձակուեցի ձեռք տալ ձեր... Մի ինչ-որ նոր դդացմունք լուսաւորեց Ծերունու դէմքը։

— Որդեակ, ինչո՞ւ ինձ չհարցրիր։ Մի՞թէ ես չէի տայ. կամ մի՞թէ ինձ չես հաւատում։ Մի՞թէ Բոլգարիան ես չեմ սիրում։ Այսօր, էդուց Ամենաբարձրեալը մեղաւոր հոգիս կառնի. ո՞ւմ պէտք է թողնեմ իմ բոլոր ունեցածը։ Բոլորդ իմ ժառանգներն էք, բոլոր բոլգար երիտասարդները... Մենք, Ծերունիներս, դեռ չէինք հասկանում և չէինք կարող... Տէրը ինքը կօգնէ ձեզ քրիստոնէաներին ազատելու հագարացիների անիծեալ ցեղից... Ի՞նչ ես այդպէս նայում... Չե՞ս հաւատում... Արի՛ այստեղ, տե՛ս...

Եւ քարացած Վիկենտիի ձեռքից բռնելով, նա պահարանին մօտեցրեց, հանեց այնտեղից մի մեծ, կանաչ գիրք, դողդոջուն ձեռքով բաց արեց և ասաց.

— Կարդա՛ այս, այժմ ժամկէտու բան չունեմ։ Ների՞ր ինձ, Տէ՛ր։

Վիկենտին կարդաց Ծերունու ձեռքով գրած հետևեալ տողերը.

— «1865 թ. փետրուարի 5։ Ուղարկեցի պարոն Բ-ին Օդեսսա 200 տաճկական լիրա 5 բոլգարացի մանուկների ուսման վարձը վճարելու համար։

— «1867 թ. սեպտեմբերի 8։ Ուղարկեցի պարոն Ա.-ին Գաբրովո 100 տաճկական լիրա չորս բոլգարցի մանուկների ուսման վարձը տալու։

— «1870 թ. օգոստոսի 1։ Ուղարկեցի պարոն Վ.-ին Ֆիլիպպոպոլ 120 տաճկական լիրա հինգ բոլգար մանուկների ուսման վարձի համար»։

— Կա՛ց, ասաց հայր Երոթէէը թերթը դարձնելով, կարդա՛ այստեղ։

Վիկենտին կարդաց.

«Թող յայտնի լինի ամենքին — կանաչ, փոքր տոպրակում 600 տաճկական լիրա կայ. այդ փողը պէտք է տալ Կլիսարցի սարկաւագ Վիկենտիին, որ ձեռնադրել է Ս. Փրկչի եկե-

զեցում, որպէսզի նա Կիև գնայ աստուածաբանական կրթութիւնը շարունակելու յօգուտ Բոլգարիայի»:

Վերջին նկատողութիւնը Ծերունին որպէս կտակ էր գրել, իր մահից յետոյ կատարելու համար:

Վիկենտիին թւաց, թէ ինքը երազումն է: Նա չէր համարձակւում աչքերը բարձրացնել. այժ չունէր Ծերունու հայեացքին դիմանալու, որ այժմ շիկացած ածխի պէս փայլում էր: Նա միայն պատկառանքով ու երախտագիտութեամբ համբուրեց հայր Երոթէյի ձեռքը: Ամօթից գետնին սեւեռած աչքերը շնորհակալութեան արտասուքներ էին թափում:

Հայր Երոթէյը հասկացաւ և խղճաց ողորմելի Վիկենտիին. նա խրախուսական ձայնով ասաց նորան:

— Մկիթարեի՛ր, զղջացողին Աստուած ներում է: Քո ցանկութիւնը բարի ու գովելի է եղել... Ամենազէտն Աստուած տեսնում է... Սա՛, զէնքի համար ո՞րքան փող է հարկաւոր:

— Երկու հարիւր լիրա, հայր. Երոթէյ, դուք սուրբ էք, ձեր անունը անմահ պիտի մնայ, հիացմունքով բացականչեց յուզուած Վիկենտին:

— Մի՛ չարախօսի՛ր ո՛ղջի, խստութեամբ վրա բերեց Ծերունին, որքան փող որ հարկաւոր է, վերցրու և գործադրիր յօգուտ Բոլգարիայի, ինչպէս Տէրը քեզ սովորեցրել է... Օրհնում եմ ձեզ: Եթէ դարձեալ հարկաւորւի, խնդրեցէք: Իսկ ինչ վերաբերում է քո փողերին...

— Հայր Երոթէյ, ի սրտէ շնորհակալ եմ ձեր մեծահոգութեան համար... բայց ես այլևս իրաւունք չունեմ դոցանից օգուտներու. ես չեմ ուզում Բոլգարեան թողնել, ես ուզում եմ կռուել և մեռնել նրա ազատութեան համար: Այժմ ես ձեզնից հայրենիքի սիրոյ օրինակը տեսայ:

— Սարկաւագ Վիկենտիյ, լա՛ւ, որդեակս, ծառայիր Բոլգարեային, եթէ ժամանակը հասել է: Իսկ քո փողերը նորից կանաչ տոպրակում կլինեն, մի՛ անհանգստանա: Միայն թէ սրանից յետոյ, աւելի ապահով տեղ կպահեմ: Ամէն դողն քեզ պէս անոխակալ հրեշտակ չէ: Յետոյ, երբ կմեռնեմ, յիշիր ինձ...

Հայր Երոթէյի խօսքից Վիկենտին հարբածի պէս դուրս գնաց.

վազելով անցաւ գաւիթը և ինքն իրան կորցրած, ներս ընկաւ իր խուցը:

Օգնեանովը զարմացած նրան նայեց:

— Հը՞, ի՞նչ կայ: Երկար մնացիր... Ինչի՞ ես այդպէս սփրթնել, շտապով հարցնում էր նա. ինչո՞ւ ես լռում Վիկենտի, փող բերի՞ր:

Վիկենտին դրպանը շուռ տուեց:

— Ահա՛, վերցրո՛ւ:

Ոսկի դրամները թափուեցին յատակի վրա:

— Ո՞րքան վերցրիր:

— Բոլորը տուեց:

— Ո՞վ տուեց, հայր Երոթէ՞յը, ուրեմն նորանից խնդրեցի՞ր: Գնացիր իրա մօտ:

— Ո՛չ, գողանալիս վրա հասաւ:

— Մի՞թէ...

— Ահա Օգնեանով, Օգնեանով, ի՞նչ արինք, եղբա՛յր, որքա՜ն քիչ էինք ճանաչում մենք հայր Երոթէյին: Դու դեռ ոչինչ, բայց ե՛ս, ե՛ս, որ նրա շնորհներով այստեղ երեք տարի ապրել եմ: Ես ինձ չեմ կարող այդ բանը ներել: Այս գիշեր կարծես կայծակը փայլատակեց աչքերիս առաջ, նոցա բացեց և ինձ շանթահար արեց... Այո՛, ես իմ կեանքիցը կկարէի քսան տարի, միայն թէ այս բոպէն չտեսնէի: Երևակայի՛ր, եղբայրս, նա վրա հասաւ, երբ ոսկիները փեշս էի լցրել...

Եւ սարկաւագն մանրամասնօրէն ամէն ինչ պատմեց Օգնեանովին:

— Ի՞նչպէս... Այսօր նա եկեղեցուց սովորականից շո՞ւտ դուրս եկաւ:

— Ո՛չ, սովորական ժամին, բայց ես այդ չզգալով, բակում շատ ժամանակ կորցրեցի տատանման մէջ: Երևակայիր իմ դրութիւնը...

— Այո՛. այդ մարդը սուրբ է... հիացած բացականչեց Օգնեանովը:

— Ես քեզ ասում էի, եղբա՛յր. աւելի լաւ է խնդրենք...

— Բայց ես վեղարաւորների հայրենասիրութեան մասին վատ կարծիք ունէի։

— Պէտք է կարծիքդ փոխես։ Կարավելովի պէս մի անգամ գլուխս մտել է, որ վարդապետը ինչ որ անդրջրհեղեղեան կենդանի է, յաւիտեան քնած, ճարպի հաստ շերտով ծածկուած և որ նա իր կեանքը վանքի կատուների հետ զրոյց անելով է անցկացնում... Դու ծիծաղում ես, մոռանում ես ազգային գործիչների մի ամբողջ շարք, որ այդ դասակարգից են եղել։ Հայր Պայիսիայից սկսած, որը հարիւր տարի սրանից առաջ Բոլգարեայի պատմութիւնը գրեց, մինչև սարկաւագ Լեվսկին, որը հայրենիքի համար մեռաւ։ Վարդապետները բոլգարական շարժումից չեն խոյս տուել և նրանցից մէկը հէնց այս օրերս երդուեցրեց մեր կոմիտէին։ Այդ բոլորը, ինչպէս և այս երեկոյեանը մի՞թէ քեզ չեն համոզում, որ...

Դրսևում լսուեց աքաղաղների առաջին կանչը։

— Բարի գիշեր, ասաց Օգնեանովը թախտի վերա պառկելով։

— Քեզ էլ բարի գիշեր, եթէ միայն յեղափոխականի համար կարող է լինել խաղաղ քուն... պատասխանեց սարկաւագը և մոմը հանգցրեց։

Սակայն դեռ ևս երկար ժամանակ նրանց աչքի առաջ կանգնած էր հայր Երոթէյի վեհ կերպարանքը։

Հայր Երոթէն այն վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւններից մէկն էր, որոնք այն չափ շատ բան արեցին Բոլգարիայի վերածնութեան համար։ Նա նոյնիսկ Նէոֆիտ Բոզֆիլիի մտերիմ բարեկամն էր։ Հանդամանքները նրան թոյլ չտին անձամբ ծառայելու Բոլգարեայի մտաւոր արթնութեան գործին և նա գրքան աշակցում էր կոմիտէի կերպով. նա իր հաշուով բոլգար երիտասարդներին ուղարկում էր զանազան դպրոցներ ուսումն ստանալու։

Նա սրտով սիրում էր Բոլգարեան։

Զուտենալով ոչ ազգական և ոչ արտակից մէկը, նա իր ամբողջ սէրը նորան էր տուել։

Նա իրան երջանիկ էր համարում, որ կարող է իր հայրենիքին գէթ աննշան օգուտ տալ. բայց իր առատաձեռն բարեգործութիւնը նա գաղտնի էր պահում և նրա արածների միակ վկան Ս.ստուած էր։

Այդ խորը կրօնական հոգին լի պարզութեամբ վախենում էր գոռոզանալուց. նա երկիւղ էր կրում աշխարհիկ կեանքի խաբուսիկ ժխորից, որին այնպէս ագահութեամբ ձգտում են ունայն փարիսեցիները։

Նա բարիք էր կատարում, ինչպէս պատուիրել էր Փրկիչը։

Նա պայծառ հոգով սպասում էր իր վախճանին։

Հայր Երոթէյը գրանից յետոյ շատ չապրեց։

Երբ նրա սնդուկը բաց արին, այնտեղ գտան մի այն արծաթէ դրամներով մի տոպրակ նրա թաղման և աղքատներին բաժանելու համար։

Վիկենտին նրա թաղմանը ներկայ չէր։

Վերջին դէպքի հետևեալ օրն, ամօթից հալածուած, նա թողեց վանքն ու Կլիսարի գնաց։

XV.

ՄԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ, ՈՐԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է ԱՑՆՊԷՍ, ԻՆՉՊԷՍ ԱՑՆ ԺԱՄԱՆԱԿՈՒՑ ԲՈԼՈՐ ՆՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Այդ իսկ ժամանակ Սոկոլովը խիստ մտատանջութեան մէջ տուն էր վերադառնում։

Օգնեանովից բաժանուելիս, նա ասաց, որ հէնց այդ գիշերը կգործադրէ Ստեֆչովի մահուան դատավճիռը։ Ստեֆչովի տան շուրջը իսկոյն ։ եթ կատարած քննութիւնից հրա համար պարզուեց գործի դրութիւնը։

Սոկոլովն իմացաւ, որ Ստեֆչովի կինը հիւանդ է և պառկած է ներքին յարկում և որ տանեցիները հիւանդով են զբաղուած։ Նա տեղեկացաւ նոյնպէս, որ Ստեֆչովն այժմ իր սենեակումն է, վերին յարկում և երկու հիւր ունի. Մերովինչիև և յոյնը, որին պահել էր այսքան երկար երևի Լալկայի համար։ Հետևապէս գիշերն Ստեֆչովը մենակ պէտք է լինէր։

Մի քանի րոպէից յետոյ, Սոկոլովն արդէն Եարոսլաւ Բրզո-

բեգունեկի տան դռանն էր։ Ճանապարհին նա ոչ ոքի չպատահեց. փողոցները բոլորովին դատարկ էին։ Նա կամացուկ դուռը, ծեծեց, որն իսկոյն բացեց ինքը Բրզոբեգունեկը։

— Բարի երեկոյ։ Կաբլեշկովը գնաց։

— Դեռ աղմուկի ժամանակ է գնացել քո Կլեոպատրայի հետ։

Բժիշկը լռութեամբ մօտեցաւ պատի տակ դրած նստարանին, բարձրացաւ նրա վրա և զիշերային խաւարի մէջ սկսեց ինչ որ դիտել։

— Այդ ո՞ւր ես նայում։

— Դեռ լոյս է, ասաց Սոկոլովը և ցած իջաւ։

— Ո՞ւր էիր նայում, Ստեֆչովի պատուհանի՞ն։

— Այստե՛ղ արի։ Եւ բժիշկը նրան մութ սենեակը տարաւ։ Այդ խորհրդաւորութիւնը Բրզոբեգունեկին զարմացրեց։

— Սպասի՛ր, մոմ վառեմ, ասաց նա։

— Ո՛չ, հարկաւոր չէ։

— Ի՞նչ կայ, ցածր ձայնով հարցրեց Բրզոբեգունեկը. նա հասկացաւ, որ բժիշկը մի կարևոր բան ունի հաղորդելու։

— Կոմիտէն որոշել է, յանձնարարել է ինձ այս զիշեր և եթ Ստեֆչովին սպանել։ Եւ նա համառօտակի պատմեց, թէ ի՞նչ հանգամանքներ դրդեցին կոմիտէին այդպիսի վճիռ կայացնելու։

— Վաղուց արդէն այդ պէտք է արած լինէիք, բարկութեամբ շշնջաց Բրզոբեգունեկը։ Իսկ ի՞նչպէս ես ուզում գործը գլուխ բերել։

— Ահա թէ ինչպէս եմ ծրագրել. քո ցանկապատից կանցնեմ նրա բակը, կաշխատեմ պատուհանը բարձրանալ և ատրճանակով կխփեմ, ապա՝ պատից փողոցը կթռչեմ։

Բրզոբեգունեկը մի բոպէ մտածութեան մէջ ընկաւ։

— Դա շատ համարձակ ու պարզ ծրագիր է, ասաց նա, բայց մի բան կայ. գնդակդ ուզում է դիպչի, ուզում է չդիպչի, երկու դէպքում էլ կասկածը ձեզ վրա կնկնի, իսկ ամենից շատ՝ քո վերա... Ամեն ոք դիտէ, որ դուք վաղուց իրար թշնամի էք և որ դու շատ պատճառներ ունես...

— Ո՛չ, այդ կողմից չեմ անհանգստանում։

— Ի՞նչպէս չես անհանգստանում։ Մի՞թէ կարծում ես, որ ինձ կկասկածեն, ի՛նձ, ձեռքս վիրաւորուած խեղճ լուսանկարչիս։

— Ո՛չ, բայց ես, Կլիմենտի վարժապետի խօսքով ասած, շանթարգել ունեմ. Բոյչօն ինքն Ստեֆչովի տանեցոց կյայտարարէ, որ սպանողն ինքն է և որ ինչո՞ւ համար է սպանել։ Խփելուց առաջ պատուհանից ներս կգցեմ Բոյչօի գրած նամակը։ Ահա տես.

«Ներքոյ ստորագրողը դաւաճանի գործերին հատուցում տուեց։ Յատկապէս այդ նպատակի համար նա հիւր եկաւ Սպիտակ-Եկեղեցի մի քանի ժամանակով։ Օգնեանով»։

— Հասկանալի է, ի հարկէ, որ այդ դէպքում ամեն ինչ Օգնեանովի վրա կնկնի... Բայց եթէ նրան բռնե՞ն... Նրա ու ոստիկանութեան միջի տարաձութիւնը խիստ կարճ է։

— Նրան չեն կարող բռնել. նա չի էլ փախչի։

Ի՞նչպէս։ Նա Սպիտակ-Եկեղեցո՞ւմն է մնում։

— Հանգիստ եղիր, նա պահելու տեղ ունի։

— Ուրեմն դու կսպասես հիւրի գնալո՞ւն։

— Կսպասեմ, մինչև որ մենակ ինքը մնայ և եթէ մոմը վառ թողնէ, մի գնդակ նրա ջանին մատաղ կանեմ, իսկ թէ հանգցնէ, վեց գնդակ հիւր կուղարկեմ. այդքանից մէկը գոնէ նրան կսատկեցնէ։

— Լա՛ւ, այժմ դուրս գնանք դիրքն ուսումնասիրենք։

Նրանք դուրս եկան և նորից բարձրացան նստարանի վերա։

Բրզոբեգունեկի և Ստեֆչովի տները իրար կից էին։ Ստեֆչովի տան երկրորդ հարկի մի սենեակում դեռ լոյս կար, ներսը ինչ որ շաքներ էին շարժւում։

— Ստեֆչովի սենեակն այդ է։

— Այդ է։

— Բայց այստեղ ուրիշ մարդ էլ կայ, երևի տանեցիք են։

— Ո՛չ, տանեցիք չեն, ես այդ հաստատ դիտեմ... Տանեցիք ներքին յարկում հիւանդի մօտ են։

— Իսկ դրանք ովքեր են։

— Հիւրեր. Մերդվինչիևն ու Ապոստոլը։

Նոքա մի քանի ժամանակ ևս դիտում էին։

— Այդ անպիտանները դեռ կանգնած են, գայրացած ասաց Բրզոբեգունեկը։

— Թող. որքան ուշ, այնքան լաւ. երբ ամեն ինչ կհանգրստանայ... խօսեց բժիշկը։

Գիշերն անցնում էր։

Երկնքում, կենդանի աղամանդների պէս փայլում էին աստղերը։ Հարևան բակերից թեթև քամին բերում էր ծաղիկների քնքոյշ բոյրը։ Ամենքից խիստ զգացւում էր ճիւղառատ ակացիայի բուրալից շունչը։ Ծառերի տերևները նինջ ու քաղցր խշխշում, շշնջում էին և գիշերային զեփիւռի փաղաքշանքներից թրթռում։ Այդ անլուսին գիշերին ամենուրեք թովիչ, խորհրդաւոր խաղաղութիւն էր տիրում. Նստարանի վերևը, կատուի տակ երկու ծիծեռնակ մարդկանց ներկայութիւնից զարթնած, երկիւղով քնից դուրս նայեցին և նորից իրար կպան... Սիրոյ շունչը, երկնային և անհասանելի ինչ-որ ուրախութիւն փչում էր ամեն կողմից։ Եւ բոլորը, և՛ այդ լաղուր երկինքը, և՛ այդ աղամանդ աստղերը, և՛ այդ օդը, ծառերը, և՛ իրանց բմբուլէ անկողնում տաքացնող ծիծառները, ծաղկունքն ու բուրմունքը — այդ ամենը մարդու հոգուն ինչ որ բարերար հանգստութիւն էր ներշնչում, այդ ամենը խօսում էր խաղաղութեան, սիրոյ և պոէզիայի, գիշերային գիւթիչ անդորրութեան անվերջ փաղաքշանքների մասին...

Է՜հ, այդ հրաշալի, դարնանային գիշերները ոճրագործութեան համար չե՛ն ստեղծւած։

Բայց Սոկոլովը ոչինչ չէր նկատում, չէր զգում։ Նա այժմ հայեացքը սևեռեց լուսաւորւած պատուհանին և այնտեղ շարժւող շուքներին, որոնք սենեակի դռանը մօտեցան։

Բժշկի սիրտը թրթռաց. գործն սկսւում էր։

— Գնում են, անհանգստութեամբ ասաց Բրզոբեգունեկը։

Շուքները մի անգամ ևս երևացին և վերջնականապէս անյայտացան։ Սենեակը դատարկւեց։

— Այստեղ կանգնի՛ր, այժմ թշնամու շարժումներն ուսումնասիրենք, շշնջաց Բրզոբեգունեկը և իսկոյն դուրս պրծաւ։

Երկու րոպէից յետոյ նա վերադարձաւ։

— Դուրս գնացին, փսփսաց նա, Ստեֆչովն ինքը նրանց ճանապարհ դրեց և դուռը կողպեց։ Այդ նշանակում է, որ Ռաչեօն արդէն քնել է։

Այդ րոպէին պատուհանում կրկին երևաց Ստեֆչովի շուքը։ Նա ներս էր մտել։

Մի քանի րոպէ նոքա լուռ նայում էին, որոշելու համար, Ստեֆչովը պառկել է թէ ոչ։

Շուքը կռացաւ և ուսի մի մասն էր երևում։

— Նստեց մահճակալի վերա, խօսեց Բրզոբեգունեկը։ Այժմ ժամանակ է, գնա։

— Ժամանակ է, յուզւած կրկնեց բժիշկը և դէպի պատը գնաց, սանդուխքը պատուհանին մօտեցնելու համար։

Բրզոբեգունեկը բռնեց նրա ձեռքը։

— Ի՞նչ ես անում։

— Ուզում եմ վերև բարձրանալ, ասաց Սոկոլովը։

— Խելքդ խոմ չե՞ս թռցրել։ Այդ արշ տեղովդ մի աղիւս կգլորես, բոլոր հարևաններին ու շներին կզարթեցնես, իսկ առաւօտ ոստիկաններն ի՞նձ մօտ հիւր կգան։

— Ուրեմն ի՞նչպէս անենք։

— Դու ինձ դռան մօտ սպասիր, ասաց Բրզոբեգունեկը և կատուի պէս, պատը ծածկող խաղողի վազերի վերա մագլցեց — մի րոպէում նա արդէն վերևն էր։

Այդ ժամանակ բժիշկը տեսաւ, թէ ի՞նչպէս Բրզոբեգունեկի մութ կերպարանքը չորքոտանու պէս սողաց աղիւսէ կատուի վրայով։

Այդ օդային ճանապարհորդութիւնը ոչ մի աղմուկ չհանեց։ Շուտով չորքոտանին մթութեան մէջ խորասուզւեց և բժշկի աչքից անհետացաւ։

Նա արագութեամբ մօտեցաւ դրսի դռանը։ Փողոցն ամայի էր, քաղաքը քնած։ Ժամանակ առ ժամանակ դեռ ևս լսւում էր շների ծոյլ հաչոցը, այդ էր քաղաքի կենսական երակի վերջին զարկը։

Ամբողջովին ուշադրութիւն դարձած, նա մի տասը րոպէ էլ պասեց շէմքի վրա։ Լսւեց Բրզոբեգունեկի թեթև քայլերի ձայնը,

դուռը կամացուկ ճռռաց և բացվեց։ Բրզոբեգունեկը ներս մտավ և բժշկին իր հետ առնելով, նորից պատի մոտ դարձավ։

— Դեռ լույս է շշնջաց Սոկոլովը։

— Ծխախոտ է քաշում. դի՛, գնանք։ Եվ Բրզոբեգունեկն առաջ անցավ։ Բժիշկը մեքենայաբար նրանհետև եց դեպի միջին պատը, որի մեջ լույսին էին տալիս երկու պատուհանները։

Սոկոլովն իր ամբողջ հասակով ձգվեց, թաթերին բարձրացավ, բայց գլուխը պատուհանին չէր հասնում։ Հեռվից նրան թվացել էր, որ պատուհանը ցածր է և որ առանց ոտքերի տակը բան դնելու կհասնի։ Նա շփոթվեց։

Բրզոբեգունեկն նրա շփոթվելը նկատեց։

— Կա՛ց, ուսերիս բարձրացիր, ասաց նա և պատին թեքվելով, ձեռքերը ծնկներին դեմ արեց։ Սոկոլովը պատից բռնվեց, գետնից վեր թռավ և ոտքերը դրեց Բրզոբեգունեկի մեջքին։

Նա սպիտակ վարագույրի միջից ուշադրությամբ ներս նայեց, թէև անորոշ, բայց ներսում կատարվածը երևում էր։

Ստեֆչովն այժմ նստել էր, գլուխը պատին յենած։ Նա յաճախակի ծխախոտը բերանն էր տանում և ինչ որ տաճկական երգ էր շաղնում, ապացույց, որ նա ինչ որ մտքով տարված էր։ Փոքրիկ սեղանի վրա դրած մոմը սենեակը բավական լավ էր լուսավորում և նրա լույսն անդրադառնում էր պատին քաշ արած հայելու մեջ։ Հայելու մի կողքին կախած էր Աբդուլ-Ազիզի պատկերը մինչև գոտին, իսկական մեծությամբ, միւս կողքին, պատի ժամացույցը։

Ստեֆչովի դիրքը բոլորովին անյարմար էր անվրէպ, մահացու հարված հասցնելու։ Բժիշկը կանգնած էր անշարժ և նրա հայեացքն անդիտակցաբար շրջում էր պատերի, սուլթանի պատկերի, հայելու վրա և նորից դառնում էր Ստեֆչովի մեջքին։ Բժիշկն զգում էր, որ յոգնած է և զզում է։ Ստեֆչովը դիրքը չէր փոխում։ Նա ձգեց վերջացրած ծխախոտը և սկսեց միւսը շինել... Սոկոլովն ականջները սրեց. Ստեֆչովն անպատճառ տեղից պիտի վերկենայ, որ ծխախոտը վառէ, բոպէն մոտենում էր... Օգնականովի նամակը նա զգուշությամբ դրեց պատուհանը և աչքերը զոհին ուղղեց։ Ստեֆչովը դեռ ևս ծխախոտն էր ոլորում...

Սոկոլովն ատրճանակը հանեց... Նա խեղդվում էր... Երակները ուռում ինչ որ սառը հոսանք անցավ։

Մինչ այդ Բրզոբեգունեկը հաղիւ էր դիմանում, նրա շունչը կտրվում էր։ Նրա մեջքը, ուսերը, ձեռքերը, ծնկները Սոկոլովի ծանրությանն տակ դողում էին և նրա տանջանքները վայրկեան առ վայրկեան աւելի ու աւելի անտանելի դարձնում։ Խեղճը քրքրում էր վայրկեան աւելի ու աւելի անտանելի դարձնում։ Խեղճը քրքրում էր ոտքերից ջուր էր կտրել։ Նա գիտակցությունը կորցնում էր, այլ ևս այդ ծանրությունը պահելու ոյժ չունէր։ Նա ամեն վայրկեան սպասում էր, որ ահա ատրճանակը կպայթի. Նրա ջղերն այնքան էին լարվել, որ քիչ էր մնում տրաքվէին։ Դա սոսկալի, անասելի տանջանք էր և նրան թվում էր, որ այդ կտևէ ոչ թէ բոպէներ, այլ ժամեր։ Սահագին դժվարությամբ նա գլուխը վերև դարձրեց, խեղդուկ ձայնով շշնջաց.

— Պրծի՛ր։

Բայց Սոկոլովը չէր շարժվում, կենդանությանն նշույլ անգամ չէր ցոյց տալիս։ Արձանի պէս ձգվել — մնացել էր լուսամտի առաջ։

Ցանկարծ Ստեֆչովը տեղից վերկացավ և նրա սուերը դիպավ պատուհանի վարագույրին։ Բժիշկն ատրճանակը պարպեց։ Ստեֆչովն աղաղակեց և դեմին փռվեց։

Հենց այդ բոպէին Սոկոլովն զգաց, որ իր ոտքերի տակ մի բան փուլ եկավ. Նա էլ դեմին փռվեց, բայց իսկոյն վեր թռավ և իր առաջ մի չորքոտանի կենդանի տեսավ, որ մեկ սողում, մեկ թռչում էր դեպի դուռը։ Ինքն էլ նրան հետևեց։ Դռան մոտ չորքոտանին ուղղվեց, դուռը բաց արեց և երկուսն էլ իրար հրելով դիմեցին դեպի դուռը։ Առաջինը, Բրզոբեգունեկը նետի պէս դուրս թռավ, յետևից՝ Սոկոլովը։ Շփոթված, երկուսն էլ միաժամանակ վրա հասան բակի դուռը կողպելու։ Բրզոբեգունեկը առաջինը սենեակ ընկավ, նրան հետևեց բժիշկը։

— Սպանեցի... շշնջաց վերջինս։

— Մեռա՞վ, հարցրեց Բրզոբեգունեկը։

— Սպանեցի՜, սպանեցի՜... մթությանն մեջ նորից շշնջաց Սոկոլովը։

XVI.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Միայն հետևեալ երեկոյեան մթանը Օգնեանովը կարողացաւ տեսնուել Ռադայի հետ։

Սպասելուց, Ռադայի աչքերը ջուր կտրուեցին։ Եւ այդ մաշող սպասողութեան երկար ժամերը լի անընդհատ յուզումներով և անհանգստութեամբ, նորան ամբողջ դարեր թուացին։

Երբ վերջապէս Օգնեանովը դուռը ծեծեց, նա զգաց, որ իր ոտքերը ծալւում են։ Սակայն, վազեց դէպի դուռը և բաց արեց։

Երբ առաջին փոթորկալից զեղումները անցան, նոքա բախտաւոր ու ցնծասիրտ իրար կողքի նստեցին։ Նոքա իրարից չէին կշտանում։ Ռադան, որ ամբողջովին սէր ու երջանկութիւն էր դարձել, գեղեցիկ էր։ Բոյչօն այժմ աւելի ևս նրան գեղեցիկ էր թուում իր զիւղական հագուստով, որի մէջ աւելի էին աչքի ընկնում նրա, սովորականից դուրս խելացի, առնական դէմքի արտայայտիչ գծերը։

— Էհ, սամ տեսնենք, ի՞նչ ես անում, Թուչնիկս, խօսեց Օգնեանովը։ Խէ գճ, երեխայ, կատարեալ նահատակ ես դարձել։ Ես քեզ սպանեցի, ե՛ս քեզ զոհ բերի, Ռադո... Եւ դու, ինձ չես կըշտամբում, իմ հոգեակս, իմ քնքոյշ սիրտս, դու, որ ծնւած ես, արտասուքի, հրճւանքի ու փաղաքշանքի համար... Ների՛ր ինձ, ների՛ր Ռադկէ... Եւ Օգնեանովը սեղմում էր նորա ձեռքերը բռնած և հայեացքով նորա մեծ ու փայլուն աչքերի խորութեան մէջ սուզւում։

— Քեզ ներել, երբէ՞ք չեմ ների... բացականչեց Ռադան քմահաճ բարկութեամբ։ Սխալ դու ի՞նչ արեցիր։ դու մեռար և ուզում ես, որ չտանջւե՞մ։ Եւ յետոյ նոյն իսկ մի խօսք ինձ չգրեցիր։ Ա՜խ, Բոյչօ, Բոյչօ, ի սէր Աստուծոյ, էլ մի մոռնիր։ Ես այլևս քեզ չեմ թողնի. ես ուզում եմ միշտ քեզ հետ լինեմ, աչքիս լոյսի պէս պահպանեմ քեզ, սիրեմ քեզ շատ, շատ, և ուրախանա՜մ։ Դու սարսափելի տանջանքներ ես կրել։ Ա՜խ, Բոյչիկս, ես ի՞նչ անմիտն եմ. ս քաշել, այս ամիսները որտեղ էիր

թափառում — ամիսներ, որ ինձ համար սոսկալի, երկա՜ր դարեր էին...

— Շատ նեղութիւն քաշեցի և շատ վտանգների մէջ ընկայ, Ռադո... բայց Աստուած, ինչպէս տեսնում ես, մեզ էլ չի մոռանում և ահա կրկին միասին ենք...

— Ոչ, ոչ, ամեն ինչ ինձ հերթով պատմիր. ես ուզում եմ բոլորը իմանալ... այստեղ քո մասին այնպիսի պատմութիւններ էին անում, այնպիսի լուրեր էին պտտւում... մէկը միւսից սոսկալի... Տէ՜ր Աստուած, մարդիկ որքան անսիրտ են, ինչեր ասես, որ չեն հնարում... Պատմի՛ր, Բոյչօ. այժմ դու կենդանի ես, այժմ ինձ հետ ես և ես ամեն բան կարող եմ լսել, որքան էլ որ պատմածդ սարսափելի և ահաւոր լինի։

Եւ նա աղերսական հայեացքով, անասելի սիրով ու ցաւակցութեամբ Բոյչօին էր նայում։

Զէր կարելի մերժել։ Ռադան իրաւունք ունէր այդ պահանջն անելու. և հէնց ինքն էլ էր ուզում հոգին բանալ իր սիրած մարդու, արձագանք տուող սրտի առաջ։ Գլխով անցած տանջանքներ, կրած նեղութիւններ յիշելը մի այլ քաղցրութիւն ունի, երբ զեղւում են երջանկութեան բոպէներին։ Բոյչօն պարզ, բայց ոչ այնպէս չոր ու ցամաք, ինչպէս կոմիտէին ու Վիկենտիին, պատմեց իր գլխի բոլոր անցածները Սպիտակ-Եկեղեցին թողնելուց յետոյ։ Պատմելու ժամանակ Ռադայի ջինջ, մանկական աչքերում, կենդանի կերպով պատկերանում էին նրա հոգեկան բոլոր յոյզերը։ Նրանց մէջ երևում էին մե՛րթ երկիւղ, մերթ, խղճահարութիւն, ու ցաւակցութիւն, մերթ հրճւանք և ցնծութիւն։ Նա կլանում էր նրա ամեն մի խօսքը։ Այդ բոլորը նա հոգով թափանցում ու զգում էր, չհեռացնելով Օգնեանովից իր սիրող, տաք հայեացքը։

— Այժմ ինձ ճանաչո՞ւմ ես։

— Այո՛, թէկուզ գիմակ էլ դնես, էլի կճանաչեմ... Նայի՛ր, ի՞նչ կերպարանք ունես... Ի՜նչ ծիծաղելի ես, Բոյչո՛, ասում էր նա ուրախ ուրախ ծիծաղելով։

— Դու ինձ ճանաչում ես, որովհետև սիրում ես ինձ, իսկ օտար մարդը որտեղից պէտք է գլխի ընկնի, թէ ես ո՞վ եմ...

— Օ՜, անպիտանները սուր տեսողութիւն ունեն, դրանց հետ հանաք մի՛ անի։

— Այդպիսի հոտառու շների համար ահա՛ թէ ի՞նչ ունեմ, ասաց Բոյչօն կիսաքուրքի փեշը բարձրացնելով և ցոյց տալով գոտուց կախուած զոյգ ատրճանակն ու դաշոյնը։

— Աւազակ, ծիծաղելով ասաց Ռադան, հաչի Ռովոսման իզուր չէր ասում...

— Թէ ես աւազակ եմ, դու իմ կատարեալ հակապատկերն ես, դու հրեշտակ ես։

— Ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր վրաս, իհարկէ, խեղճ աղջիկ եմ։

Օգնեանովը նորից նստեց, քիչ մտածելուց յետոյ, խօսեց։

— Լսի՛ր, Ռադէօ, ուզո՞ւմ ես Կլիսուր տեղափոխուել, տիկին Մուրատլիսկու մօտ։ Ես այդ կարող եմ սարքել... Թէև այնտեղ էլ է վտանգաւոր, բայց գոնէ այստեղի բանբասանքներից կազատուես...

— Ուր որ կուզես, կերթամ, միայն թէ քեզ հետ տեսնելու յարմարութիւն ունենամ...

— Կլիսարն ինձ է յանձնուած, ես պէտք է ադիտացիա անեմ. Սպիտակ-Եկեղեցի սրանից յետոյ միայն մի՛ անգամ կգամ — ապստամբութիւն բարձրացնելու համար... Մինչև այն ժամանակ ես ու դու էլի կտեսնուենք, Ռադէօ, դրանից յետոյ, էլ Աստուած գիտէ, ո՞վ կմնայ կենդանի, ո՞վ կմեռնի... Կռիւը ծանր ու արիւնալից կլինի մեր տանջած հայրենիքի, որպէսզի կռուից յետոյ յարութիւն առնէ, թէև արիւնաշաղախ, բայց ազատ... իսկ ես ուրախութեամբ կմեռնեմ նրա համար... Մի վիշտ միայն գերեզմանումս էլ ինձնից անբաժան կլինի — այն, որ մահը քեզ ինձնից կաղատէ... որովհետև քեզ սիրում եմ անսահման, դու ես իմ սրտի տէրը, նա քոնն է... բայց կեանքս, Բոլգարեայինն է... Եւ ես հաւատացած կլինեմ, որ աշխարհում գոնէ մի՛ հոգի կայ, որը ինձ կխղճայ և անյայտ շիրիմիս վրա արցունքներ կթափէ...

Բոյչօի դէմքով մի ամպ անցաւ։

Ռադան, յուզուած, բռնեց նրա ձեռքը։

— Բոյչօ՛, դու պիտի կենդանի մնաս. Աստուած Բոլգարիայի համար կպահէ քեզ պէս հերոսին և դու դեռ ես մեծ փառքի պի-

տի արժանանաս և ես բաղդաւոր պիտի լինեմ, որքա՜ն երջանիկ պիտի լինեմ...

Բոյչօն թերահաւատութեամբ գլուխը շարժեց։

— Է՛հ, հրեշտակս, ասաց նա և լռեց։ Ապա բռնելով Ռադայի ձեռքն, աւելացրեց.

— Ռադկէ՛, ինչ էլ որ պատահի, ուզում եմ որ խիղճս հանգիստ լինի... ես կարող եմ մեռնել... այդ համարեա զգում եմ...

— Լռի՛ր, Բոյչո՛։

— Լսի՛ր, ես կարող եմ մեռնել, Ռադո՛, որովհետև, ուղղակի մահուան դէմ եմ գնում, բայց քո վերաբերմամբ ուզում եմ մի փոքր գոնէ հանգիստ լինեմ։ Դու բախտդ կապել ես ինձ հետ — մի դատապարտեալի, մի աքսորեալի, ամենքից մոռացուածի հետ. — դու ինձ «մենաբախտաւոր մարդը դարձրիր, դու ինձ զոհ բերիր այն, ինչ կեանքից էլ թանգ է — պատիւդ և այդ պատճառաւ դառն տանջանքներ կրեցիր։ Ինձ համար դու ամէն ինչ մոռանում ես։ Ես ուզում եմ իմանալ, որ մահիցս յետոյ Աստուծոյ և մարդկանց առաջ դու իմ ազնիւ, թէև դժբախտ կինը կմնաս։ Ես ուզում եմ, որ դու կրես ի՛մ, Օգնեանովի, անունը։ Ռադո՛, այդ անունը ոչ մի անարգնիւ վարմունքով չէ արատաւորուած։ Երբ Կլիսար գաս, ես քահանայ կկանչեմ, որ մեզ պսակէ և օրհնէ և ապա, ապահովութեանդ մասին կմտածեմ։ Հայրս ունևոր է և ինձ սիրում է... նա կկատարէ իր միակ որդու վերջին ցանկութիւնը... Այդ ես այստեղ կանէի, բայց այժմ անկարելի է... Մի ուրիշ բան կարող ենք անել։ Քեզ տալու համար մատանի չունեմ ոչ ոսկեայ, ոչ իսկ երկաթէ... Մօտիս երկաթը, որ ես կրում եմ, թշնամու համար է... բայց կարիք չկայ, թող վկայ լինի մեծ, արդարադատ Տէրը, Բոլգարեայի Տէրը, ճնշուած ու գրկանքների ենթարկուած հոգիների Տէրը, տանջող մարդկութեան Տէրը — նա տեսնում է, նա լսում է...

Եւ բռնելով Ռադայի ձեռքը, ծունկ չոքեց։

— Երդուե՛նք նրա առաջ։ Նա կօրհնէ մեր ազնիւ միութիւնը։

Ռադան նոյնպէս ծունկ չոքեց։

Եւ նրանց շրթունքներն ինչ որ խօսքեր արտասանեցին, որ միայն Ամենաբարձրեալը լսեց։

Երբ Օգնեանովը դուրս գալուց յետոյ իր յետևից դուռը փակեց, փողոցում բոլորովին մութն էր: Այդտեղ նա երես առ երես պատահեց, համարեա դիպաւ մի կոյսի: Օգնեանովը ճանաչեց, հաջի Ռոմոաման էր, որ իր եղբօր մօտ էր գնում: Դէպքի բերմամբ, նա հէնց այն ժամանակ էր անցնում Ռապայի տան մօտից, երբ Օգնեանովը դուրս էր գալիս:

Հաջի Ռոմոամանն աչքերը գիւղացուն յառեց, բայց չճանաչեց: Նա մի առիթ հնարեց, որ գնայ Լիլովիչների մօտ և իմանայ, թէ այդ ի՞նչ գիւղացի էր:

XVII.

ԿԵՌԱՍԵՆԻՆ.

Հէնց այդ առաւօտ քաղաքի ծայրի մի խուլ փողոցի վերջում Մարկօ Իվանովը մի դուռ ծեծեց:

Դուռն իսկոյն բաց արեց մի ջահիլ տղայ, շալւարով ու շապկով, թևերը յետ քաշած:

— Կեռասենու բունը ձեզ մօտ են բերել, հարցրեց Մարկօն:

— Այո՛, բայ Մարկօ, մեզ մօտ է, համեցէ՛ք: Եւ պատանին առաջ անցաւ, ցոյց տալով սրահի դուռը:

— Ահա այստե՛ղ է, նե՛րս մտէք:

Այդ բոպէին դուռը բացուեց և ամենից առաջ աչքի ընկաւ կեռասենու բունը:

Մեր հին ծանօթ տակառագործ Կալչօն ծառի կտորի վրա կանգնած, գայլիկոնով փորում էր ծառի վեր ցցած ծայրը: Քրտինքը կարկուտի պէս հոսում էր տակառագործի կարմրած դէմքից:

— Բարի աչողում, Կալչօ, ասաց Մարկօն քթի տակ քմծիծաղ տալով և հետաքրքրութեամբ նրա շինածին նայելով: Լա՛ւ է, լա՛ւ, անիծուածը լաւ է առաջ գնում:

— Ուստան գիտէ. պատասխանեց ինչ որ մի ծայն:

Մարկօն յետ դարձաւ և նայեց: Պատի մօտ ծալապատիկ նստած էր Միչօ Բէյզադէտոն:

— Օ՜, բայ Միչօ, ժպտերես ասաց Մարկօն, կոմիտէի նախագահին ձեռք տալով:

— Այսօր մենք ժողով ունենք, ճամբին ասի, արի՛ գնամ տեսնեմ ի՞նչ է անում մեր Բուլկէն:

— Որտե՞ղ է ձեր ժողովը, անտառո՞ւմ է, հարցրեց Մարկօն նստելով և աչքը ծառից չհեռացնելով:

— Կանաչ-Հովտում:

Կանաչ-Հովիտ կոչւում էր լեռան լանջի մի փոքրիկ տափարակը, որ կազմում էր Հին-Լեռան առաջին աստիճանը: Սաեֆչովի վրա գնդակ արձակելու նշանաւոր գիշերից յետոյ կոմիտէի ժողովներն այլևս Միչօի տանը չէին տեղի ունենում, այլ, ամեն անգամ մի նոր տեղ:

Ժողովն այսօր պէտք է Կանաչ-Հովտում լինէր:

Կարմրած, քրտնած Կալչօն ջլուտ ձեռքերով շարունակում էր պտտացնել տհագին գայլիկոնը. նա յանախ գործիքը դուրս էր հանում, որ թեփը մաքրէ, ծակից ներս էր նայում և կրկին պտտում: Վերջապէս գայլիկոնը հասաւ որոշուած տեղը: Վարպետը ծակը թեփից լաւ մաքրեց, մէջը մի աչքով դիտեց, փչեց և ինքնաբաւականութեամբ դարձաւ դէպի հիւրերը: Նրանք կռացան և նոյնպէս երախից ներս նայեցին:

— Այստեղ մեծ ռումբ էլ կմտնի, նկատեց բայ Միչօն, բայց մենք երկաթի մանր կտորներ կլցնենք. այդպէս աւելի շատ պիղծ անհաւատներ կդլորէ: Զէ՛, քո կեռասենին հրաշքներ է գործելու:

Մարկօի դէմքը հրճւանքից փայլում էր... կեռասենին նա էր տուել:

Բայ Մարկօի համոզմունքներն ու հասկացողութիւնները վերջին ժամանակ նշանաւոր փոփոխութիւն էին կրել: Սպիտակ-Եկեղեցին բռնած յեղափոխական շարժումը նրան էլ դուրս քաշեց սառնասիրտ հանդիսատեսի դերից: Սկզբում գործն սկսեց Մարկօին քիչ-քիչ հետաքրքրել, տպա հետաքրքրութիւնը զարմացրեց և վերջապէս յուզեց:

Նա մտածում էր, եթէ ամեն տեղ, ինչպէս ասում են, նոյնն

է կատարուում, ինչ որ Սպիտակ-Եկեղեցում մի՞թէ ճիշտ որ չի հրդեհւի ամբողջ Տաճկական պետութիւնը: Քանի որ երեխաներն էլ են զէնք կրում ու զէնքի հետ խաղում — ո՞վ գիտէ, թերևս ճշմարիտ որ այս թագաւորութեան անկումը մօտ է: Ո՞վ գիտէ...

Այս մտքերը թուլացնում էին նրա երկիւղը և աւելի ու աւելի զօրեղացնում հաւատը դէպի ճակատագիրը:

Առողջ դատողութեան տէր ու դրական մարդ լինելով, նա վերջիվերջոյ տարուեց ընդհանուր ոգևորութեամբ և սկսեց հաւատալ: Համաճարակը վարակեց նոյնպէս և նրան, այդ Բոլգարացի առողջ ու ազնիւ հոգուն...

Սակայն, այդ հոգեկան փոփոխութիւնը միանգամից չկատարուեց: Զօրեղ հաւատը մի ամբողջ շարք ուժեղ փաստերի ազդեցութեան տակ է մշակուում:

Սկզբում (այդ անցեալ աշնանն էր). տաճիկ ժողովրդի աւելի ու աւելի աճող դաղանութիւնը տեսնելով, նա ինքն իրան ասում էր.

— Այս կեանքը մի՞թէ կեանք է:

Յետոյ արդէն զարնանը, Կաբլեշկովի այցելութիւններից յետոյ, տեսնելով երիտասարդների ոգևորութիւնը, որոնք այդպիսի վճռականութեամբ պատրաստուում էին անմիա, բայց հպարտ ծեռնարկութեանը, նա իր կնոջը ասաց.

— Ո՞վ գիտէ, անմիաները գործում են, բայց գուցէ մի անմիա բան էլ շինեն...

Շուտով դրանից յետոյ, երբ մի անգամ Գանկայի սրճարանում այդ շարժմանն սպասող արդելքների և նրա ահարկու հետևանքների մասին խօսք եղաւ, Մարկոն ազդու կերպով ասաց Ալաֆրանկային.

— Միխալակի, զուռնի ու քէֆի ծախսը հաշի առնողը հարսնիք չի անի:

Նկատենք սակայն, որ Մարկոն իրապէս նախապատրաստութիւնների աշխատաւոր էր և ոչ իսկական ապստամբութեան: Նա տարուած չէր գործով, որ նրա պաշտպանը լինէր, ինչպէս Միչոն և նրա հաւատը դէպի պատերազմի յաջողութիւնը այն աստիճան

անդրդուելի ու կոյր չէր, որպէսզի պատրաստ լինէր ամեն ինչ զոհելու, ինչպէս Օգնեանովը:

Սպիտակ-Եկեղեցին պէտք է պատրաստ լինէր, որ կարողանար յետ մղել Բաշիբուզուկների յարձակումը, որը սպառնում էր նորան: Սպիտակ-Եկեղեցին ամեն կողմից բազմաթիւ թուրքական գիւղերով էր շրջապատուած և այդ պատճառով պէտք է դիմադրութեան պատրաստուէր: Իհարկէ այլ բան է, եթէ հրդեհը բռնկուի ամբողջ Բոլգարիայում — բայց արդեօք կբռնկուի՞...

Սակայն ինչ էլ որ լինի, Սպիտակ-Եկեղեցին պէտք է պատրաստ լինի:

Եւ Մարկոն պնդում էր, որ զինաւորուելն անհրաժեշտ է...

— Յետոյ ժամանակն ամեն ինչ ցոյց կտայ, ասում էր նա:

Երեք օր առաջ Նիկոլա Նետկովիչը նրա մօտ եկաւ և պատմեց, որ չէ կարողացել գտնել կեռասենի:

— Իմ կեռասենին կտրիր, ասաց Մարկոն:

Սակայն, եսասիրութիւնից,, թէ այս դէպքում կատարելապէս մնացած հայրենական զգացմունքից, նա չթողեց, որ իր որդիքն էլ մէջ խառնուեն... Նա ուզում էր, որ որպիքը դէմ կենան այն զօրեղ հոսանքին, որն արդէն իրան տանում էր... բայց դա մի անիրագործելի ցանկութիւն էր...

— Մի ընտանիքից մենակ ե՛ս էլ եմ բաւական, մտածում էր նա:

Նրա հոգում յեղափոխութիւնը դեռևս կատարեալ չէր — դրանից էին այդ տատանումներն ու հակասութիւնները:

Մի խօսքով Մարկոն ազգային կուսակցութեան չափաւոր տարրի ներկայացուցիչն էր:

Կալչօն շարունակում էր իր գործը: Նա աւելի բարակ գայլիկոնով երախի մօտ մի այլ ծակ փորեց, ապա փչեց այդ ծակից և բոլոր թեփը երախից դուրս թափուեց:

Ահա թէ ինչի՞ն են ասել, «եղիցի՛». տաճիկների մէջ լա՜ւ գործ պէտք է տեսնի, հա՜, հրճուանքով բացականչեց Կալչօն:

— Կեցցե՛ս, Կալչո, դու մեր թնդանօթաձիգը կլինես... Այժմ մնում է, որ դարբին բայ Լիլոն երկաթէ կապեր շինէ, և թնդանօթը պատրաստ կլինի. ասաց բայ Միչոն:

— Տէր Աստուած, ի՞նչ սարսափելի զոհոց պէտք է գցէ, նրկատեց Մարկօն։

— Կանաչ-Հովտում մի բարձր տեղ կամրացնենք ու ամբողջ գաշտավայրը կռմբակոծենք... Ո՛ր կողմից որ գան, արձակիր, մի խղճա նոցա։ Հրաշալի գիրք է։

Դուրսը քայլեր լսեցին։

— Մերոնցից է, ասաց Միչօն, հրամայել եմ միայն մերոնց ներս թողնել։

Ներս մտաւ քարտուղարը, Պապովը։

Նա բարևեց Միչօին ու Մարկօին։

— Այստեղ ի՞նչ գործ ունիս, Գանչօ, հարցրեց նրան նախագահը։

— Կանաչ-Հովիան էի գնում, ճամբին մտայ մեր արտիլերիան տեսնելու։

— Այո՛, այո՛, այսօր ամենքս պէտք է ժողովին ներկայ լինենք, որ վճռենք, ո՞ւմ Պանագիւրիշչէ ուղարկել։ Մեզնից ներկայացուցիչ են պահանջում։ Ես պէտք է Սոկոլովին առաջարկեմ։

— Ի՞նչ ներկայացուցիչ են ուզում, հարցրեց Մարկօն։

— Նրանց գլխաւոր ժողովին ներկայ լինելու համար։

— Իսկ ինչո՞ւ համար է այդ գլխաւոր ժողովը։

Սիրելի՛ս, ապստամբութեան ժամանակը պէտք է որոշի։

— Երևի ճայիսի մէկին կնշանակի, նկատեց Գանչօն։

Մարկօն մռայլուեց։

— Ո՛չ, աւելի ուշ կլինի... վարդերը հաւաքելուց շուտ չէ լինի նկատեց Միչօն։

— Ուրեմն, մենք էլ կապստամբենք։

— Այո՛, բոլորս մի օր կապստամբենք։

— Անմտութիւն մի՛ անիր։

— Անմտութիւն լինելն անմտութիւն չէ՛, այդ պէտք է կատարի. կտրուկ ասաց Միչօն։

— Զքնաղ աչքերի համար խօմ չէի՞նք այսքան ժամանակ պատրաստուում, աւելացրեց Գանչօն։

— Այդպէս է, այդպէ՛ս, բա՛յ Մարկո, տաքացած ծայն տուեց Կալչօն։

— Բան չեմ ասում, որ մենք բաշիբուզուկների դէմ պաշտպանելու պատրաստուենք, քանի որ կոյր չենք, ի՞նչ է շուրջերս կատարուում... իսկ այսպէս, վախում եմ, որ ինքներս խաթաբալի մէջ ընկնենք, ասաց բա՛յ Մարկօն։

— Ամօթ ու խայտառակութիւն կլինի, եթէ Սպիտակ-Եկեղեցին թէկուզ մի բոպէ ուշանայ... Ամբողջ ժողովուրդը մի օր կապստամբի և վա՜յն եկել է Տաճկաստանին, բորբոքուած բացականչեց Միչօն։

Մարկօն մտածութեան մէջ ընկաւ։

— Իսկ դուք հաստա՞տ գիտէք. որ այդ այդպէս կլինի։

— Ի՞նչպէս չգիտենք, երեխաներ խօմ չե՞նք։ Ես հէնց դրա համար էի քեզ կոմիտէի նիստին կանչել, որ ինքդ կարդայիր նամակներն ու Կաբլեշկովի խօսածը լսէիր։

Մարկօն թերահաւատութեամբ գլուխը շարժեց.

— Չոկ բան է, երբ մի բան ի՞նքդ գիտես և չոկ բան, երբ ուրիշներից ես լսում... Որևէ վճիռ կայացնելուց առաջ լա՛ւ մտածեցէք, երկա՛ր մտածեցէք, ամեն բան չափեցէք, թէ չէ Զապորի պատմութիւնը կկրկնուի։

Միչօն բարկացաւ.

— Այժմ ուրի՛շ բան է, երեխայ մի լինիր, Մարկո. ես քեզ ասում եմ, որ ամեն տեղ կբռնկուի... բոլորը կազմակերպուած է, միայն օրը պէտք է որոշել...

Մինչդեռ երկու տանտէրերը զրուցում էին ու վիճում, սրահը հաւաքուեցին կոմիտէի էլի մի քանի անդամներ։ Նրանք էլ ժողով գնային, եկել էին Սպիտակ-Եկեղեցու Կրուպին *) տեսնելու։ Շուտով մնացածներն էլ հաւաքուեցին դարձեալ նոյն նպատակով։ Այսպիսով պատահմամբ հաւաքուեցին կոմիտէի բոլոր անդամները, բացի Դիմօ Բեզպորտևից։

— Կափասրդը չի գալու, յայտարարեց Իլիա Սարանչովը, նա երևի էլի մի պանդոկում կոնծել է։

— Զափից դուրս լակելը լա՛ւ չէ, նկատեց տէր-Դիմչոն իր բաժակը լցնելով։

---

*) Թնդանօթի յայտնի գործարանատէր է Գերմանիայում։

Անդամները զարմանքից ու հիացմունքից չէին կարողանում աչքերը թնդանօթից հեռացնել։ Նա ընկած էր նրանց առաջ, որպէս մի երկար, ահագին կենդանի առանց դլխի ու ոտքերի, մի աչք մէջքին, խորը ահարկու երախով, որը պէտք է կրակ ու լաւայ դուրս ժայթքէր։ Նրա հարթ, դեղնագոյն փորի վերա մի խորհրդաւոր արծանագրութիւն էր սևին տալիս, որ փորագրել էր բայ Միչօն, մի սարսափելի memento mori*) Օտտոմանեան պետութեանը.

Տաճկաստանը կտապալւի։ 1876։

— Տղե՛ր, դիմեց անդամներին Նախագահը, որոշել ենք Կանաչ-Հովտում հաւաքւել։

— Այո՛, այո՛, դնանք։

— Բայց քանի որ արդէն հաւաքւած ենք, լաւ չէ՞ հէնց այստեղ էլ անենք ժողովը։ Իմ կարծիքով աւելի յարմար է... այս արջի ներկայութեամբ...

Նախագահի յաջող մտքին բոլորը հաւանութիւն տւին։

— Դէ՛հ նստեցէ՛ք։

— Իսկ դու ո՞րտեղ կնստես։

— Ահա իմ գահը, ասաց բայ Միչօն և հեծաւ թնդանօթը, Նիստը բացւեց։

XIX.

ՄԱՐԿՕԻ ՆՈՐ ԱՂՕԹՔԸ.

Կալչօի դինարանից Մարկօն դուրս եկաւ խորը մտածութեան մէջ ընկղմւած։ Նա ամբողջովին իր տեսածի ու լսածի ազդեցութեան տակ էր։

— Ո՞վ դիտէ... շշնջում էր նա, շուրջը փռւած կանաչ այգիներից անցնելով։

Աննկատելի կերպով նա հասաւ Սպիտակ-Եկեղեցուց դէպի

*) Ցիշի՛ր մահը։

արևելք գտնւող դեղը... Այդտեղ նա մի հայեացք ձգեց իր այդուն, կարած կեռասի արմատին և քմծիծաղ տւեց։ Ապա յետ դարձաւ, նորից անցաւ այգիների ու արտերի միջով և դուրս եկաւ դլխաւոր փողոցը, որ տանում էր Կարլովօ։ Գնչուների վրաններն անցնելով, որ խփած էին քաղաքից դուրս, դաշտավայրում, նա երգիչների մի ահագին խումբ տեսաւ։

Ինչ որ մի չքաւոր երիտասարդի հարսանիք էր կատարւում, որին մասնակցում էին բոլոր հարևանները։

— Աշխարհի բանն այսպէս է, մտածեց Մարկօն, այնտեղ թնդանօթներ են պատրաստում, իսկ այստեղ ամուսնանում են և վաղւայ մասին ամենևին չեն էլ մտածում...

Բայց նա իսկոյն համոզւեց, որ այստեղ էլ կայ յեղափոխական տարր. խումբը Բեզպորաևն էր կատարում, թէև կաղ, բայց մի յայտնի պարող։ Նա շարժում էր ձեռքում բռնած սպիտակ թաշկինակը և խիստ արտասովոր եռանդով պարում, իրան յետեւող անծայր կենդանի շղթային ամենաքմահաճ ձևեր և ոլորումներ տալով։ Մե՛րթ խումբը բոլորովին ուղիղ կիսաշրջանի էր նրմանւում, մե՛րթ քուն մտնող օձի պէս ոլորւում էր, տպա յանկարծ բացւում և ուղիղ գծով ձգւում, կամ նորից գալարւում, զանազան ֆանտաստիք ձևեր ընդունում։

Մարկօն մօտեցաւ և նկատեց, որ Բեզպորաևը թունդ հարբած է։ Նա այնպէս էր ցատկոտում ու այս-այն կողմն ընկնում և նրա հետ միաժամանակ նաև ամբողջ շարժուն շղթան, որ կարծես նորա յարձակում էին գործում ամբոցի վրա։ Բեզպորաևի ինքնամոռաց ոգևորութիւնը վարակել էր շղթայի նոյնիսկ ամենավերջին օղակը, որը հինդ տարեկան մի աղջիկ էր։

Բեզպորաևի հրամանով երաժիշտները լռեցին և միայն խմբին մասնակցողներն սկսեցին երգել, շարունակելով պտոյտ դալ։ Մարկօն լսեց երգի հետևեալ խօսքերը։

«Ցոյս ունե՞ս դու, Կալինո՛,
Որ քո Կոլիան պիտի դայ,
Որ քո Կոլիան պիտի դայ,
Քեզ ընծաներ պիտի տայ —

Ձերմակ վրդիդ ոսկէ մանեակ,
Բարակ մէջքիդ - արծաթ գօտիկ,
Շէկ ծամերիդ — կարմիր ծամթել,
Մանրը ոտքիդ — դեղին քօշեր...»

Եւ խումբը կատաղութեամբ պտտում էր...

Մարկոն կանգ առաւ, որ քիչ հանգստանայ և ուրախ հանդիսին նայէ:

Ցանկարծ Բեզպորտևը նրան նկատեց: Նա խմբից բաժանուեց և թաշկինակը ծածանելով ու եղանակի համեմատ վեր - վեր թռչելով մօտեցաւ Մարկոին: Նրա երկար ու չոր դէմքը, կապոյտ, շարժուն աչքերով ու փոքր սև լեզերով ինչ որ կատաղի ուրախութիւն ու հրճուանք էր արտայայտում, որ հոգեկան անծայր, կործանիչ վշտից առաջ եկած թունդ հարբեցողութեան յետևանքն էր:

— Կեցցէ՛ բայ Մարկօն, կեցցէ՛ Բոլգարեան, կեցցէ՛ն Բոլգարեայի փառաւոր որդիքը... բայ Մարկո, արաղ տուր, շնորհակալ եմ... կեցցէ՛ բայ Մարկօն... Ների՛ր բայ Մարկո, կինոյի պէս հարբած եմ... բայց խելքս դեռ գլխս է... ե՛ս եմ գինի խմում և ոչ թէ գինին ինձ... Այո՛, որպէս զգայուն բոլգարացի... Որովհետև ժողովուրդը տանջանքի մէջ է և ես ասում եմ. բաւակա՛ն, է որքան սարկութեան և արբեցողութեան մէջ անցկացրինք: Լաւ է մահ, քան այս տեսակ խայտառակ մի կեանք... Թող ասեն, թէ ես ռուսի պէս հարբած եմ... Ո՛վ ասէ, գաւաճան է... Սիրտս կսկիծում է Բոլգարեայի համար... Թշուառ սարուկուհու համար... Ես ճշմարտութիւն եմ որոնում, մարդկային արդարութիւն... «Ո՛չ փող կուզենք, ո՛չկ ին կուզենք»*)... բայց դու կասես, մարդիկ ամուսնանում են — և ի՞նչ ժամանակ... Ես քեզ կպատասխանեմ, այո ժողովուրդն է... իսկ վաղը նրան ասա՛ —

*) Ստամբուլովի հեռևեալ ոտանաւորի նմանութիւնն է:

Ո՛չ գանձ կուզենք,
Ո՛չ փող կուզենք,
Մարդավայել՝

Աղատ ապրել —
— Մենք այդ կուզենք:

մարշ, առաջ, կրակի՛ր տուն ու տեղդ, փախի՛ր Բալկանները... Ով հաւքերից վախենայ, թող կորեկ չցանէ... ասածս հասկանո՞ւմ ես. կեցցէ՛ն հայրենասէրները... նրանց ոտքն ու ձեռքը կհամբուրեմ... բայց չորբաչի Իւրդանից կենդանի - կենդանի կաշին կքերթենք... դարձեա՛լ Սաեֆչովը... ՕՀ, գրողը տանի այդ Սոկոլովին... բայց շունը թող քարի տակ քնի... մի խօսքով, ես հարբած եմ, որպէս... որպէս... հայրենիքի սէրն ինձ հարբեցնում է... ժամը մօտ է: Այսօր ես կենդանի եմ, վաղը ոգի կդառնամ, ուրուական, շուաք... մի խօսքով, վա՜ռ աշխարհ... և ով ժողովրդի համար մեռնի, նա յաւիտեանս - յաւիտենից կենդանի կմնայ... կեցցէ՛ Բոլգարեան... իսկ ես ի՞նչ եմ. ես արագահոս ջրից վախեցող մի էշ եմ...

Բեզպորտևը յանկարծ լռեց. նա մի թուրքի նկատեց, որ ծիով փողոցից անցնում էր. վերջին ժամանակ այդ շատ հազիւ էր պատահում... Բեզպորտևը թուրքին մատնացոյց անելով, երգեց.

Կռիւ է, կռի՛ւ... թող սրտե՛ր թնդան.
Մեր չար թշնամիք դալի՛ս են ահա.
Անծնուէր լինենք մեր պատուին, անուան,
Կապանքի ճանկում մենք էլ չե՛նք մնայ...

— Առաջ, առաջ, կոչեց Բեզպորտևը և կարծես իր յետևից եկող անտեսանելի զօրախմբի գլուխն անցած վազեց դէպի թուրքը:

Թուրքը յետ նայեց և դէպ իրան վազող Բեզպորտևին տեսնելով, կանգնեց:

— Թո՛ւրք, ո՞ւր ես գնում: Ի՞նչպէս ես համարձակւում կոխել այս սրբազան հողը... Սա բոլգարացիների հողն է, իսկ քոնն, Ասիայի անապատներն են, գնա՛ այնտեղ... կորի՛ր, անասուն, համբուրի՛ր մեր սուրբ հողը... թէ չէ, գեաւրն անցնի քո սուլթանն էլ, ներքինիներն էլ, հարեմն էլ...

Թուրքը Բեզպորտևի ասածը չէր հասկանում, բայց տեսնում

էր, որ նա սասարիկ հարբած է։ Նվիրեալ, ձին ասպանդակեց, որ ճանապարհը շարունակէ։

Բեզպորտաևը վրա վազեց և ձիու սանձը բռնեց։

— Ինձնից ի՞նչ ես ուզում, չորբաջի, շուարած հարցրեց Թուրքը։

— Կորի՛ր, թէ չէ արիւնդ կթափեմ, կատաղութեամբ գոռաց Բեզպորտաևը, փայլուն դաշոյնը հանելով։

Թուրքը պակաս չէր զինուած, բայց մոռացել էր, որ զէնք ունի։ Դողալով ու խոնարհութեամբ նա ձիուց ցած իջաւ։

— Ի՞նչ ես ուզում, չորբաջի, Բեզպորտաևի կատաղի դէմքից սարսափահար եղած, հարցրեց նա։

— Ո՞ւր ես գնում, Թո՛ւրք։

— Կարլովո։

— Իսկ Մեքքա ե՞րբ կգնաս։

Թուրքը բոլորովին իրան կորցրեց. նրա ձայնը կրծքում մարեց. նա հազիւ լսելի ձայնով շշնջաց.

— Չորբաջի՛, ինձ թո՛ղ։

— Արի՛ միասին Մեքքա գնանք, կոչեց Բեզպորտաևը, կա՛ց, նստեմ քո վերա, դու հազար անդամ ես բոլգարացու վրա հեծել։

Եւ Բեզպորտաևը ճարպիկութեամբ թռաւ նրա մէջքին, ձեռքերով բռնեց վիզն ու կոչեց.

— Առաջ, հայդէ՛ Մեքքա վազի՛ր։

Եւ ամբոխի առաջ, ընդհանուր աղաղակների ու ծիծաղի ուղեկցութեամբ Թուրքը Բեզպորտաևին մէջքն առած, շարժուեց։

Ձին տխուր ու հանգիստ, սիրոջը հետևեց։

— Ո՞վ գիտէ... ո՞վ գիտէ... շշնջում էր Մարկօն, առն դառնալիս։ Զարմանքից նա չէր կարողանում խելքը գլուխը հաւաքել։ Նրա համար բոլոր տեսածն ու լսածը նոր բան էր։ Նա յիսուն տարեկան մարդ էր. յիշում էր այն ժամանակը, երբ բոլգարացին կանաչ գոյնի շոր հագնելու իրաւունք չունէր և Թուրքի հանդիպելիս, ձիուց պէտք է ցած իջնէր։ Նա ինքն անձամբ այնքա՜ն սոռոութիւններ էր կրել, այնքա՜ն նախատինքներ էր սորուկի պէս լռութեամբ կուլ տուել, այնքա՜ն անպատուութիւն ու զրկանք կրել, որ այժմ աչքերին չէր հաւատում...

Ամբոխի առաջ, հազարաւոր ականատեսների ներկայութեամբ, կապ ու հարբած բոլգարացու հրամանով Թուրքը ձիուց ցած իջնի՞, մոռանա՞յ իր զէնքը և անասունի պէս մէջքը դէմ անե՞։ Եւ այդ բոլորն այնպէ՞ս հասարակ էր, այնպէ՞ս անսպասելի, այնպէս խի՛ստ անսպասելի... Եւ բոլոր ժողովուրդը քրքջում է ու ծափ տալիս, կարծես մի բոլորովին բնական բան է կատարուում... Ի՞նչ ժամանակի ենք հասել... ո՞րտեղից եկաւ ճնշածների այդ համարձակութիւնն ու տիրողների այդ ահը... կամ գուցէ, ճիշտ որ ազատութեան ժամը հասե՞լ է և Բէյզադեատն իրաւացի՞ է և երիտասարդութիւնն արդարացի՞...

— Ո՞վ գիտէ... ո՞վ գիտէ...

Դպրոցի կողմից, Մարկօին հանդէպ երեխաներ էին գալիս — դրանք Մ.Երովինջիևի աշակերտներն էին։ Իրար յետև շարուած, զոյգ-զոյգ, կանոնաւոր զինուորական քայլերով, կողքից գնացող տասնապետների և առաջից քայլող դեներալի ղեկավարութեամբ նրանք առաջ էին շարժուում... Ասէնը, նրա որդին, ծայրին կարմիր թաշկինակ կապած մի երկար փայտ էր բռնել, այդ էլ դրօշակն էր...

Ապշած Մարկօն կանգ առաւ։

— Բոլորն են ցնորուել, ժերունիներից սկսած, մինչև երեխաները, մտածեց նա, ամէն բան շարժումի մէջ է...

Նա Ասէնի ականջը քաշեց և քմծիծաղով ասաց.

— Շան լակոտ, այդ ի՞նչ ես տանում։

Եւ բաւականութեամբ յիշեց, որ գոնէ մեծ որդիները չեն վարակուած, որ գոնէ նրանք չունեն խռովարարի այդ ոգին, որն ամէնքին տիրել է, նոյնիսկ իրան։

— Գոնէ նրանք թող հեռու մնան, անվնաս լինեն։ Ես արդէն կորած մարդ եմ, գոնէ նրանք կենդանի մնան...

Բայց իսկոյն մի դառն միտք եկաւ նրա գլուխը և մռայլուած աւելացրեց.

— Բայց մի՞թէ այդ անպիտանների երակներում արիւն չէ հոսում։ Մի՞թէ ես չարչիներ եմ ծնել... Ո՛չ, այդպէս լաւ է, լաւ է թող անմասն մնան... ամէն մի ընտանիքից մի հոգին բաւական է...

Արդէն կէսօր էր։

Նա տուն դարձաւ անհանդիստ ու բարկացած։ Սենեակ մտաւ, նայեց պատեաններով քաշ արած հրացաններին ու ատրճանակներին, ապա բաց արեց դռան յետևը թաղցրած սնդուկը, որպէսզի պապերից մնացած, երկար տարիներ փոշու մէջ ընկած երկու հին ատրճանակները լցնէ։ Այդ սենեակը մութ էր և որպէս գաղտնարան էր ծառայում։

Մթութեան մէջ ձեռքով շոշափեց, ապա մոմը վառեց, որ աւելի տեսնի. և որքա՜ն մեծ եղաւ նրա զարմանքը, երբ մոմը սընդուկին մօտեցրեց։

Երկու հին ատրճանակների փոխարէն, նա մի ամբողջ հրաձիգ զինարան գտաւ։ Բացի այդ, կային արշաւանքի համար անհրաժեշտ նաև ուրիշ իրեր։ Մի անկիւնում պայուսակներ ու ամէն տեսակ հագանալի իրեր։

Մարկօն բղաւեց իր կնոջ վրա, որ հէնց այդ ժամանակ դուրս էր գալիս։

— Գաղտնարանն ո՞վ է բաց արել. ո՞վ է դրել այստեղ այս յիմար իրերը։

Իվանիցան զարմանքով սրա՜ նայեց։

— Ո՞վ է բաց արել, ես ի՞նչ գիտեմ... խօմ ես չե՞մ բաց արել... ամենքն են, Վասիլը, Դիմիտրին, Կիրօն, ամէն բոպէ այդտեղ են մտնում, փոշոտում, դուրս են գալիս... ո՞վ գիտէ մթութեան մէջ ի՞նչ են որոնում...

— Դեռի՞նը մտնեն զրանք իրանց խռովարարների հետ միասին, չարութեամբ բացականչեց Մակօն։

Ապա մի քիչ մոմը բռնած մնաց. շուրջը նայելով, շշնջաց.

— Անմիտնե՞ր, ցնորուածնե՞ր... յիմարնե՞ր, յիմարնե՞ր, իրանք իրանց կրակի մէջ են գցում...

Եւ նա նորից կողպեց գաղտնարանը, մօտեցաւ պատին քաշ արած Աստուածածնի պատկերին, սկսեց աղօթել, ջերմ աղօթել...

Նրա աղօթաբերում այդ աղօթքը չկար. դա մի նոր, ինքնահնար աղօթք էր...

Առաջին անգամն իր կեանքում, նա աղօթում էր Բոլգարեայի համար...

XX.

ՀԱՐԲԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ.

Քանի մօտենում էր ամառը, յեղափոխական շարժումը այնքան աւելի խստանում էր և հսկայական քայլեր էր անում։

Ամբողջ արևմտեան Թրակեան, որ յեղափոխութեան գլխաւոր շրջանն էր, հրաբուխի նման խուլ դոռոց էր հանում, նշան, որ ժայթքումը մօտ է։

Առաքեալների մի ամբողջ բանակ լեռներն ու գիւղերն ընկած, եռանդով կազմակերպում էր ապագայ կռիւը։ Ամէն տեղ նրանց դրկաբաց էին ընդունում. ժողովուրդն ագահութեամբ կը լսում էր ազատութեան սուրբ խօսքերը։ Նա անհամբերութեամբ սպասում էր, թէ ե՞րբ պէտք է իր խաչը Գողգոթա տանէ։

Սերմնացան կարապետների մի ամբողջ շարան, սկսած Պայիսիյ վարդապետից մինչև Լևսկիյ սարկաւագը — մշակեցին ու ցանեցին ժողովրդի սրտում. և առաջինը դորանցից օրհնեց իր ազգը Աթոռի բարձունքներից, երկրորդն իր կախաղանի վերայից։

Քսան տարի առաջ, երբ Ռակովսկին, յեղափոխութեան առաջին քարոզիչը, փորձ արաւ ժողովրդի մէջ ապստամբութեան մասին խօսել, ժողովուրդի կատաղութիւնից հազիւ կարողացաւ կենդանի շորեր հագած ազատուել։

Այժմ ժողովուրդը առաքեալների դիմաւորելու համար պատգամաւորութիւններ էր ուղարկում։

Եւ նա ականջ էր դնում, ագահութեամբ կլանում կենդանարար քարոզը, ինչպէս ցամաքած կոկորդը կուլ է տալիս բիւրեղանման կոհակները։

Եւ երբ նրան ասում էին, ժողովուրդ, պատրաստ եղիր, դու պէտք է մեռնես, — եկեղեցին տալիս էր քահանայ, զպրոցը — ուսուցիչ, գիւղը — գեղջուկ, մայրը — որդի։

Գաղափարը տարերական ոյժով թափառում էր ամենուրեք, ընդգրկում էր ամէն ինչ և լեռներ, և հովիտներ, և չքաւորի խրճիթը, և վարդապետի խուցը, նոյնիսկ չորբաջիները, մի դասակարգ, որ հնուց ի վեր խոչնդոտ էր յեղափոխական շարժման, այժմ գր-

տնում էր այն դաղափարի հմայքի տակ, որ յուզում էր ժողովրդային մաքերը։ Թէև նրանք հայրենասիրական շարժմանն ուղղակի կերպով չէին մասնակցում, բայց և չէին հակառակում, չէին դաւաճանում նրան։

Դաւաճանութիւններն ու ստորութիւնները ամէն կողմից վրա թափւեցին արդէն ադէտից յետոյ, ինչպէս այդ լինում է սովորաբար նման դէպքերում։

Իզուր են մի քանիսը ջանք անում այդ ոգևորութիւնը ժողովրդի միայն մի մասին վերագրել, միայն մի մասի օգտին դարձնել. — յեղափոխական ոգին, այդ կրակէ սերովբէն, իր թևերը մեկնեց ինչպէս տրեխաւորների վրա, այնպէս և համալսարանի մարդկանց, ինչպէս կամիլաֆկաւորների, այնպէս և ֆէսաւորների ու քոլոգաւորների վրա։

Ինչպէս որ Բոլգարիայի ամէն մի յառաջադիմական շարժման մէջ, այնպէս և այս գործում, դիտութիւնն ու խաչը, այսինքն ոգին, առաջին տեղն էին բռնում։ Բոլգարացի հոր նահատակների մարտիրոսագրութիւնն այդ շատ պարզ է ապացուցանում։ Մասնակցողների մեծագոյն մասը իհարկէ, ժողովուրդն էր մատակարարում, որովհետև նորա ոյժը հէնց թուումն է կայանում։

Բայց հարկաւոր էր ինտիլիգենցիա, որ այդ բազմութեան միտք ու հոգի ներշնչէր։

Ոգևորութիւնն աճում և ընդգրկում էր ամենքին։

Օրստօրէ շարժումը մեծանում էր թէ չափով, թէ ոյժով։ Միաժամանակ առաջ էին գնում և պատրաստութիւնները։ Մեծ ու փոքր — ամենքը գործի անցան։ Գիւղացիներն իրանց վարը չվերջացրած, սկսում էին դնդակներ ծուլել, քաղաքացիները, առուտուրը երեսի վերա էին դցում։

Գաղտնի փոստը գիշեր-ցերեկ անդադար զանազան կոմիտեների թղթակցութիւններն էր տանում։

Երիտասարդները հարիւրապետների ղեկավարութեամբ դուրս էին գալիս հրացաններով զինավարժութիւն անելու։

Կանայք կտաւ էին գործում, պարաններ հիւսում, թղթի փամփուշտներ պատրաստում։

Պառաւները խմոր էին հունցում, չորուկ պատրաստում։

Կոշկակարները պայուսակներ, տրեխներ և զինուորական այլ պիտոյքներ էին պատրաստում։

Նոյնիսկ իրանք, դիւղի պաշտօնեաները եռանդուն մասնակցութիւն էին ցոյց տալիս այդ պատրաստութիւններին։

Ամէն մի դիւղում հրացանների, վառօդի, դնդակների պաշարը մեծանում էր, վառօդն իրանք թուրքերն էին մատակարարում։

Մէջերը փորած, կոկած ու երկաթի օղերով կապած կեռասենու բները առտիլերիան էին կազմում։

Իսկ մեռաքսէ դրօշակները մռնչող առիւծների արծաթագոյն պատկերներով, յեղափոխական ֆանթաստիք հագուստները, քահանայական փայլուն շուրջառները, խաղերն ու խաչվառները, ապագայ վերահաս դեկորացիան պէտք է կազմէին։

Ընդհանուր արբումն արտայոլեց նոյնիսկ մանկական խաղերի մէջ, այլևս հոլն ու դնդակը չէին նրանց խաղալիքները։ Մանուկներն այժմ փայտի դաշոյններով, թիթեղի հրացաններով ու թմբուկներով կռիւներ ու զօրահանդէս էին սարքում...

Հին մարդիկ նրանց էին նայում և բարեպաշտութեամբ ասում.

— Այս Աստուծոյ ցուցմունքն է։

Սակայն երկինքը ոչնչով չէր մատնացոյց անում առաջիկայ սոսկալի փոթորիկը։ Ընդհակառակը վաղահաս գարունն ամբողջ Թրակեան եզեմային դրախտ էր դարձրել։ Վարդագոյն հովիտները ծածկւեցին դիւթական փարթամ ծաղիկներով, որպիսին երբէք չէր տեսնւած։ Դաշտերն ու արտերը առատ հունձ էին խոստանում — սակայն ոչ որ ժամանակ չպէտք է ունենար ժողովելու։

«Եւ մի երկու օրում աննշմար կերպով,

«Ժողովուրդը մեծցաւ մի քանի դարով»...

Սակայն չնայելով յայտնի ստահակ քարոզներին, ազմկալից զինաւորմանն ու ապստամբութեան պատրաստելուն, տաճիկ կառավարութիւնը նստած էր ձեռքերը ծալած. — և այդ ոչ միայն իր կուրութեան պատճառով, այլև այն կատարեալ արհամարանքի շնորհիւ, որ նա տածում էր դէպի «ռայաների» տեղ ոյժը։

— Այդ նապաստակային շփոթ է, ասում էին բարեմիտ էֆենդիները։

— Դրանք «դաժիվէյլերդենիներ»*) են, ասում էին դոռոզ դոստոյարներն ու արհամարանքով ծիծաղում։

Կան խօսքեր, որոնք ամբողջ պատմական շրջաններ են ներփակում։

«Դաժիվէյլերդենի» — այդ ազգային ինքնաճանաչութեան մարմնացումն է, որ յաղթող դուրս եկաւ եկեղեցու անկախութեան համար մղած եռեսնամեայ կռուից։

Բայց այն «դաժիվէյլերդենները», որ 1870 թուականին բոլգարական էկզարխութեան կենացն էին խմում, այժմ յեղափոխականներ էին դարձել և յանուն բոլգարական ժողովրդի ազատութեան, թնդանօթներ ու գնդակներ էին ձուլում։

Տաճիկներն այդ կերպարանափոխութիւնը չէին հասկանում։

Նրանք չէին կարողանում իրենց պարզել, ժամանակի նշանաբանը, գաղափարի յառաջադիմութիւնը. եթէ ըմբռնէին էլ, արդէն ուշ կլինէր։ Նրանք այնքան լայնածաւալ բանա, այնքան երկար շղթաներ չունէին, որ լեռներ շարժող անտեսանելի ու անհասանելի Մարկո Կորոլեվիչի հսկայական գաղափարը կարողանային կապել-կաշկանդել։

Մենք յատկապէս շեշտում ենք կռուի նախաբանի վրա, որովհետև միայն դա կարող է բարի հողի մէջ ընկած մեծ գաղափարի ապշեցնող ոյժի աստիճանացոյցը լինել։ Ինքը, կռիւն այդ անունին արժանի չէ։

Մենք նպատակ էլ չունենք այդ նկարագրելու։

Մենք սոսկալած կլինենք իրողութիւնների ընթացքը յիշատակելիս, այդ մեծ կռուի միայն մի՛ միջնադէպը պատմել, միջնադէպ, որ ներքևը կնկարագրենք, միջնադէպ, որը լուսաբանում է յեղափոխութիւնը ամենապայծառ յոյսերի այդ սոսկալի տապալումը։

*) «Լերդենի» — այն ժամանակ կոչւում էին ապստամբական խմբերը։ «Դա ժիվէյ» — նշանակում է կեցցեն, թող ապրեն «դաժիվէյլերդենի» — կեցցեն խմբերը։

XXI.

Ս. ՊՏՍ Ս. Կ.

Հետևեալ օրը Գանկայի սրճարանը լիքն էր ծխով և ուրախ բրքիչով։

Ծիծաղի պատճառը Իվանչո Եօտան էր։ Ֆրանդովը «Իրաւունք» թերթում կարդում էր մի յօդուած աւստրիական քաղաքականութեան մասին Արևելքում և «drang nach Osten»*) նա խաղասութեան վրա կակաղեց, իսկ Իվանչո Եօտան բացադրեց, որ այդ նշանակում է «մեր բարեկամ Օստէնը»։

Սրճարանում էր նաև Ստեֆչովը։

Որովհետև Ստեֆչովը սպանուած չէր։

Սոկոլովի գնդակը չէր դիպել այն պատճառով, որ նրա ոտքերի տակ կանգնած Բրզոբեդունեկը հէնց այն վայրկեանին ցրնցուեց, երբ նա ատրճանակը պարպեց։

Ստեֆչովը ոչ ոքի չյայտնեց, որ իր վրա սպանութեան փորձ է եղել։ Նա լուռ տարաձեց, որ անզգուշութեամբ ինքն է տարաքեցրել ատրճանակը։ Նա այդպէս ասաց, որպէսզի իր հիւանդ կինը չվախենայ և բացի այդ, որ իր մասին վատ լուրեր ու բամբասանքներ չտարածուեն։

Օգնեանովի նամակը նա չգտաւ, բայց շատ լաւ էր գուշակում, թէ այդ փորձն ում կողմից կարող էր լինել։

Ռաչկոն թէ նրան, թէ՛ ուրիշներին պատմում էր, որ ինքը տեսել է Սոկոլովին նրա բակից փախչելիս, բայց ոչ ոք նրան չէր հաւատում, որովհետև նա աւելացնում էր, որ Սոկոլովի հետ էր և նրա արջը։ Խեղճ Ռաչեօն չորքոտանու ձև ընդունած Բրզոբեդունեկին կլէոպատրայի տեղն էր ընդունել, որը մի քանի օր առաջ իրան ցեխի մէջ էր դցել։

Եւ այսպէս ընդհանուր ծիծաղը բռնել էր սրճարանը։ Միայն անկիւնում կանգնած Կանդովը չէր ծիծաղում. նրա միտքն երևի ուրիշ տեղ էր սաւառնում։ Նրա զժգոյն, մտաղբաղ դէմքը տխրութեամբ և հոգածութեամբ էր համակուած մի ինչ-որ հիւանդոտ

*) Գրոհ դէպ արևելք։

արտայայտութեամբ, որը շրջապատողների անհոգ, ծիծաղից փայլող դէմքերի կատարեալ հակապատկերն էր։

Ծաղրը դադարեց ու բոլոր ներկայ եղողները լուսամուտներից սկսեցին նայել եկեղեցուց վերադարձող զուգած կանանց և տղամարդկանց։

Կանանց մէջ էր և Ռադան։

Նա հագուած էր համեստ, դեռ ևս սև զգեստներ։ Այտերը փթթել էին, որպէս վարդեր. նա գրաւում էր բոլորի ուշադրութիւնը։ Նրան ուղղած հայեացքներից շատերը բարեացակամ չէին. կային նոցա մէջ և արհամարական հայեացքներ, որովհետև վերջին ժամանակները անախորժ լուրեր էին պատում։ Հաչի Ռոմոմանն էր այդ տարածել։

Լուրը վանքից քաղաք էր անցել։

Բոյչօին բամբասողներն ու ոսոխներն Օգնեանովից վրէժ առնելու համար, սկսեցին Ռադային քրքրել։

Միայն Ռադան էր, որ ոչինչ չգիտէր։

Նա ամբողջովին իր երջանկութեանն էր տրուած և ամենևին չէր նկատում ոչ սանամէրների հետաքրքիր, զննող հայեացքը, ոչ հանդիպողների խորամանկ ժպիտը։

Կանդովը խիստ վրդովւում էր։

Հէնց որ Ռադան անցաւ սրճարանի մօտից, Ստեֆչովը կռացաւ և Մերավինջիևի ականջին կծու ժպիտով ինչ որ մի բան փսփսաց։ Շշուկը տարածուեց։ Սկսուեց չարանենդ ծաղրանքը։ Ստեֆչովը տարած յաղթանակով չբաւականացաւ. նա արհամարանքով արտասանեց յեղափոխական երգի յայտնի տողը։

«Ո՞ւր ես, ուր, սէր դէպի ժողովուրդը...» և անամօթաբար ծիծաղեց։

Կանդովը, որ մինչ այդ համբերութեամբ լսում էր, այլևս չկարողացաւ իրան զսպել։

— Ո՞ւմ է վերաբերում ձեր ծաղրը. Ռադա գասպաժինային, հարցրեց նա Ստեֆչովին։

Սրճարանում լռութիւն տիրեց։

— Քո ի՞նչ պէտքն է։ Եւ ասենք թէ Ռադա Գասպաժինային, ձեզ ի՞նչ... պատասխանեց Ստեֆչովը։

— Եթէ դու նրա մասին ես այդպէս լրբաբար խօսում, ես յայտարարում եմ, որ դու զրպարտիչ ես, ստոր արարած, կոչեց ուսանողը շունչը կտրած։

Ե՞ս եմ ստորը, թէ՞ դու — այդ թող հասարակութիւնը դատէ։ Իսկ ինչ վերաբերում է Ռադա գասպաժինային զրպարտելուն, ներիր... շներին հարցրու... Նրանք է՛լ գիտեն...

— Դու կոպտութեամբ յարձակւում ես անպաշտպան աղջկայ վերա... խօսքերդ յե՛տ վերցրու, կոչեց Կանդովը։

— Ապացուցիր ինձ, որ քո այդ աղջիկը անցեալ շաբաթ գաղտնի կերպով հիւր չէ ընդունել...

Ստեֆչովը դեռ ևս իր խօսքը չէր վերջացրել —

— Այդ գաղտնի հիւրը Բոյչօ Օգնեանովն էր, նրա նշանածը, սրիկայ, կոչեց Կանդովը և մի ապտակ կպցրեց։

Զիլ հարուածը հնչեց սրճարանում։

Խլացած Ստեֆչովը սկզբում հարուածից ցնդուեց, բայց յետոյ յարձակուեց ուսանողի վրա, որը սակայն այդ բոպէին դէմ տուեց իր ձեռնափայտը։

Ներկայ եղողներն իսկոյն նրանց բաժանեցին։

Սրճարանն աղմուկով լցուեց։ Հետաքրքրուողները դրսևից խրմբուեցին պատուհանների առաջ։

Ստեֆչովը սրճարանից դուրս թռաւ կարմրած թշով, կատաղութիւնից կրակ կտրած։ Նա ուղղակի կոնակ դնաց այն մտքով, որ միանգամից վրէժը հանէ թէ՛ Կանդովից. թէ՛ Ռադայից։ Նա ուզում էր բէյին դրդել, որ երկուսին էլ տանջանքների ենթարկէ Օգնեանովի մասին տեղեկութիւն ստանալու համար... վրէժխնդրութիւնից երկիւղ կրելով, նա առաջ ստիպւել էր լռել իր վրա եղած սպանութեան փորձի մասին. այդ երկիւղն այժմ չկար։ Միայն վիրաւորուած ինքնասիրութեան սոսկալի կատաղութիւնն էր այժմ նրան ղեկավարողը։

Եւ նա արագ քայլերով կոնակին էր մօտենում։

Անսպասելի կերպով մէկը յետևից ծայն տուեց։

— Կիրեակ էֆենդի, աչքալուսէքը տուր։

Ստեֆչովը յետ դարձաւ. օնբաշին էր։ Նա մեքենայաբար ձեռքը թշին դրեց, կարծես ծածկելու համար։

— Շնորհաւորում եմ, քաղցր ժպտով ասաց Շերիֆ աղան, մօտենալով նրան։

Ստեֆչովն ապտակից շշմած, դեռ ևս չէր հասկանում բանի էութիւնը։ Նրան թւաց, որ օնբաշին իրան ծաղրում է։

— Գլխի չընկար, հրամանն ուտացել է... բէյը հէնց նոր ստացաւ տեղեկագիրը։

Ծայրահեղ տխրութիւնից, ճնշողական դրութիւնից, որի մէջ գտնւում էր Ստեֆչովը, նա մէկէն փոխւեց հիացմունքի ու հրճւանքի։

Ստացւե՞լ է, կոչեց նա։

— Ստացւել է. Հիւմուրջինի նահանգապետ... յաջողութիւն եմ ցանկանում, Թագաւորն իր արժանաւոր ու հաւատարիմ հրպատակներին չէ մոռանում...

Ստեֆչովի Ֆիլիպոպոլի հովանաւորները վաղուց էին աշխատում նորա համար յաջողեցնել այդ պաշտօնը...

Այժմ վերջապէս նա հասաւ իր ուզածին։ Ստեֆչովի դէմքը բաւականութիւնից փայլում էր...

Նա շտապով դէպի տուն դարձաւ, որ բարի լուրով հիւանդ Լալկային ուրախացնէ։

XXII.

ՀԻՒԱՆԴԸ.

Լալկան օրըստօրէ վատանում էր։ Խիստ տենդը, որ նրան անկողին էր գցել, վտանգաւոր բնաւորութիւն ընդունեց։ Լալկայի թոյլ օրգանիզմի վրա հիւանդութիւնը արագ ու քայքայիչ կերպով էր ազդում։ Միքանի օրւայ մէջ նա սաստիկ փոխւեց. դէմքը դուրս ցցւեց ու չորացաւ, այնպէս որ նրան ճանաչելն իսկ դժւար էր։ Նորա նիհար ու դժգոյն թշերը ներս էին ընկել։ Նորա խոր ընկած աչքերի շուրջը երկու մութ շրջանակ էին կազմւել։ Զոր ու արիւնաքամ շրթունքները ջերմ ու արագ շնչառութիւնից դողում էին։ Նորա սիրուն ու խաղաղ դէմքն այժմ տանջանքի պաղ ու

խիստ արտայայտութիւն էր ընդունել։ Նորա դէմքը մոռացութեան հաղւադէպ բոպէներին, զուրկ որևէ զոյնից և շարժունութիւնից, մեռելի դէմքի պէս, կորցնում էր իր կենդանութիւնը։ Միայն աչքերն էին իրենց խորը բներում անհանգստութեամբ փայլում, արտացոլելով ներքին կրակը, որ այրում ու ցամաքեցնում էր այդ երիտասարդ մարմնի կենսական հիւթերը։ Ժամանակ առ ժանանակ տաքացած արիւնը ներկում էր նրա չորացած այտերը անբնական կարմրութեամբ, որին շուտով կրկին փոխարինում էր մեռելային դեղնութիւնը։

Լալկան այժմ արևից այրւած ծաղկի էր նման։

Կարծում էին, որ ճգնաժամը դեռ ևս յաջողութեամբ կանցնի, որ Պիւանդութիւնը կյաղթահարւի։ Ասում են, տենդից մարդ չի մեռնի։ Բայց երեկւանից Լալկան ձայնը կորցրեց։ Մեծ դժւարութեամբ միայն նրա ցամաքած շրթունքները ինչ-որ մռայլ, բարկացկոտ ձայն էին բաց թողնում. գիշերը նա զառանցում էր, կամ անշարժ տենդոտ հայեացքն առաստաղին յառում և երկար ժամանակ պառկած տեղը քարացած մնում։ Նրա մայրն ու հաջի Ռոմոման առանց աչքերը թարթելու նստած էին ամբողջ գիշերը նրա անկողնի մօտ... միայն լուսադէմին հիւանդը հանգստացաւ և խորը քուն մտաւ։ Զարկերակը և շնչառութիւնը կանոնաւորւեցին. իսկ կուրծքը սկսեց աւելի հանդարտ բարախել։ Այդ արտաքին լաւանալը տանեցիներին ուրախացրեց և Իւրպանեցան կոյսերին նորից պատւիրեց, որ իր աղջկայ առողջութեան համար աղօթք անեն։

Երբ արևն սկսեց այրել, Լալկան զարթնեց քրտնքից ջուր կտրւած խիստ տաքութեան մէջ։ Նրա թշերն այրւում էին, իսկ մարմինը ցրտից դողում։ Հիւանդը նորից կորցրեց գիտակցութիւնը։ Միայն ժամանակ առ ժամանակ անհանգստութեամբ շարժում էր ձեռքը, կարծես ուզում էր ինչ որ բան ասել։

Դուռը բացւեց և ներս մտաւ Ստեֆչովը։ Ցուզմունքից կարմրած, նրա դէմքն ուրախութիւնից փայլում էր, այստեղ թագաւորող յուսահատութեան ու վշտի սարսափելի հակապատկեր։ Բայց տեսնելով Լալկային, նրա դէմքը փոխւեց և զզւելի պաղ արտ-

տայայտութիւն ընդունեց, որ նրա համար սովորական էր. միայն ճակատը թոյլ ու հիւանդոտ կնճիռներով ծածկուեց:

Նա մօտեցաւ կնոջը:

— Լալկէ՛, կանչեց նա:

Լալկան յանկարծ դողաց, աչքերը կիսով չափ բացեց, նայեց ամուսնուն և միւս կողմը դարձաւ:

— Իմ խղճուկս. նա սիրով է քեզ նայում... ցաւակցութիւնը ճնշում է նրան... շշնջաց հաջի Ռոմոման Ստեֆչովին:

Լալկան, կարծես մի բանից դրդուած, նորից շուռ եկաւ. նրա թաց աչքերն տեսան Ստեֆչովին և նա կրկին դարձաւ դէպի պատը:

— Կիրեակ, դու նրան անհանգստացնում ես, դուրս գնա, խստութեամբ ասաց Իւրդանեցան:

Ստեֆչովը գլուխը քաշ դցած, սենեակից դուրս եկաւ:

Տանեցիք Լալկային սխալ հասկացան. նա չէր խղճում իր ամուսնուն, այլ խորը ատում ու արհամարում...

Այդ զգացմունքները, որ ծագել էին նրա հիւանդանալու օրը, մինչ այդ թաղնուած էին նրա ցաւատանջ կրծքում և միայն նրա կեանքի ճակատագրական րոպէին դուրս պրծան:

Ստեֆչովի տեսքը ցնցեց նրա ամբողջ էութիւնը և տանջանքները սաստկացրեց...

Առաջ էլ նա այդ մարդուն երբէք չէր սիրել, բայց այժմ նրանից ուղղակի զզուում էր...

Եթէ կարողանար խօսքերով ասել այդ բանը, կասէր. մահուան րոպէները համարձակութիւն են տալիս մարդուն, բայց լեզուն կապում...

Ստեֆչովի երևալը նրա մէջ ցասմունք առաջացրեց և անորոշ ցնորքների աշխարհից իրական կեանքը տեղափոխեց:

Նրա անասելի տանջանք արտայայտող հայեացքը կանգ առաւ տանեցիների վրա. կարծես իր վերջին հրաժեշտը տալիս լինէր...

Տանջանքն ու սէրը թրջեցին նրա աչքերը, արցունքները փայլեցին և միւսների աչքերում: Մայրը խուլ հեծկլտաց: Մեծ աղջիկը, Գինկան, բռնեց նրա ձեռքը, որ լռեցնէ, բայց ինքն էլ սկսեց հեծկլտալ...

Լալկան նորից սկսեց զառանցել: Արցունքը նրա աչքերից գոլորշիացաւ և նրա հայեացքները ուղղուեցին տարածութեան մէջ հեռու-հեռու և այդպէս անշարժացան:

Այդ րոպէին սենեակում գտնուողներն ակամայ յետ դարձան, որ տեսնեն եկողն ով էր:

Ռադան էր:

Միայն այսօր էր իմացել Լալկայի հիւանդութեան մասին:

Նրա համար արդէն վաղուց էր փակուած Իւրդանի տան դուռը, բայց այս րոպէին նրա գալը ոչ օրի չզարմացրեց, այլ շփոթեցրեց — նա Լալկայի ընկերուհին էր:

Եւ ոչ օր իրաւունք էլ չունէր խլելու մեռնողից վերջին մնաս բարեաւը, բարեկամներին ու թշնամիներին:

Այնտեղ, ուր մահն է մուտք գործում, դռների ամենակուռ փականքներն են փշրուում: Մեծեր ու փոքրերը, հարուստն ու աղքատը — ամենքը յաւիտենականութեան ընդունարանում ցանկալի հիւրեր են:

Տանեցիք հիւրին ճանապարհ տուին մահիճին մօտենալու:

Ոտքից գլուխ սև հագած, թաց աչքերով, Ռադան լռութեամբ անցաւ նրանց մօտից և ժունկ չոքեց ընկերուհու գլխավերևը: Նա բռնեց հիւանդի չորացած բազուկն ու համբոյրներով ծածկեց: Լալկան նրա հպումից ցնցուեց, աչքերն առաստաղից հեռացրեց և Ռադային յառեց... Նրա հայեացքը պարզուեց... յուզմունքը նրա մեռած դէմքին թոյլ կենդանութիւն տուեց... Նրա շրթունքները անկարող կերպով շարժուեցին, բայց Ռադան հասկացաւ հիւանդի ասելիքը... յանկարծ երկու խոշոր, ադամանդեայ արձունքներ ցոլացին Լալկայի աչքերին և թշերի վրայից ցած գլորուեցին: Ռադան զգաց, որ նա ձեռքը սեղմեց:

Նա իր երեսը մօտեցրեց հիւանդին և ընդհատուող ձայնով շշնջաց.

— Քոյր, քոյրի՛կս... ինչ ես անում, Լալկէ... Մի վշտանար...

Լալկան լռեց: Գլխի շարժումով նա բացասական նշան արեց և նորից սեղմեց ընկերուհու ձեռքը, որը բաց չէր թողնում իր ձեռքից:

Ընկերուհուն ուղղած նրա անշարժ հայեացքի մէջ այնքա՞ն

ուրախութիւն, երջանկութիւն, անսահման սէր և հրաժեշտի խօսքեր էին տեսնում... Նա հրաժեշտ էր տալիս այս աշխարհին... այդ շատ պարզ էր երևում նրա դէմքից:

Մահը արդէն իջնում էր նրա վերա և նրան առնում իր թեւերի մէջ:

Ընկերուհիների հրաժեշտը լուռ, սրտակտուր էր...

XXIII.

ԿԱՆԴՈՎԸ.

Կանդովի, Ստեֆչովին ապտակելու ժամանակ ասած խօսքերը ներկայ եղողներին ապշեցրին, բայց ամենից շատ՝ Ստեֆչովին:

Նոքա ընկան, ինչպէս որոտը պարզ երկնքից:

Սակայն տաքարիւն ուսանողի ինքնամոռացումը նրա համար վատ հետևանքներ չունեցան:

Այն ինչ միքանի խորաթափանց մարդիկ հասկացան, որ Կանդովի բռնկումը միայն նրա բնաւորութեան ասպետական յատկութեամբ չէ բացատրւում:

Եւ նոքա խաբուած չէին:

Երիտասարդ ուսանողն այն տեսակ կրքոտ բնաւորութիւններից էր, որ կեանքի խորհուրդը միայն իդէալին երկրպագելու մէջն են դրանում: Դրանք կարող են ապրել, երբ ամբողջովին տրուած են լինում իրանց կրքոտ, բուռն զգացմունքներին:

Բայց նախքան Բոլդարեան տեսնելը, նրա հոգում մի այլ ասուած բնակւեց. նա Ռադային տեսաւ:

Այդ պատահեց Օգնեանովի Սպիտակ-Եկեղեցուց փախչելուց յետոյ:

Ռադայով գրաւիլը սկզբում թոյլ, արագօրէն ուժեղանում էր և կրքի փոխարինւում:

Իրան շրջապատող աշխարհից Կանդովը փոքր-առ փոքր խորթանում էր և առանձնանում, ցնորական թմրութեան մէջ էր

ընկնում. այդ դրութիւնից նա դուրս էր գալիս, միայն Ռադային տեսնելիս:

Այդպէս տևեց մինչև դարունը, երբ նա յանկարծ սթափւեց ուշքի եկաւ և սկսեց զայրանալ ինքն իր վրա:

Այդ կիրքը նրան ստոր թւաց, ստոր — Օգնեանովի վերաբերմամբ, որն իր բարեկամն էր, մեղսալից Բոլդարիայի վերաբերմամբ, որին պէտք է նուիրուած լինէր ինքը:

Նա ինքն իրանից վախեցաւ և մտածեց, որ միայն մի ուրիշ զգացմունք, աւելի զօրեղ ու յուզիչ կարող է փրկել իրան և վերակենդանացնել: Նա վճռեց ամբողջովին անձնատուր լինել պատրաստող կռուին. նրա բազմաթիւ վանգների մէջ մոռանալ ամեն ինչ, ընկղմւել նրա փոթորկալից ալիքների տակ, հարբելու չափ ծծել, շնչել անմիտ ոգևորութեան և յեղափոխական գործնէութեան տաք մթնոլորդում:

Հէնց այդ ժամանակ, նա ինչպէս մենք տեսանք, անսպասելի կերպով Սոկոլովի մօտ եկաւ և խնդրեց, որ իրան էլ կոմիտէի անդամ ընդունեն և միաժամանակ Ստեֆչովին սպանելու առաջարկութիւնն արեց:

Բարեբախտաբար, թէ դժբախտաբար, վիճակը Սոկոլովին ընկաւ և Կանդովի ծրագիրը հիմնայատակ քանդւեց: Նա յուսահատ դրութեան մէջ էր...

Բայց նորա առաջ դեռ կար յեղափոխութիւնը և այդ էր նրան մխիթարողը:

Սակայն, նրա հոգու խորքերում կռիւը դեռ ևս շարունակւում էր և նրան տանջում: Զնայելով, որ նա կրքերի բոլոր ոյժով տրւել էր յեղափոխական գործին, այնուամենայնիւ, յիշողութիւնը Ռադայի մասին նրանից դեռ չէին բաժանւում: Հայրենիքի պատկերի յետևից միշտ գաւառանոցէն նկարւում էր Ռադայի պատկերը: Նրա հոգում վերջինս աւելի խորն էր նստած, աւելի ինքնավստահ էր և ցաւակցաբար էր դիտում ժամանակաւոր հիւրին, որ այնպիսի տեղ է մուտք գործել, ուր տէրն ու իշխողն ուրիշն է...

Այսօր Ստեֆչովին ապտակելուց յետոյ, Կանդովն զգում էր, որ ինքը մի տարօրինակ դրութեան մէջ է: Նա նուիրել էր Բոլ-

դարիայինն, բայց սիրահարուել Ռադայի վրա։ Եւ իրերի ընթացքով Օգնեանովն ըստ կոչման, նրա ընկերն էր, իսկ սիրոյ ախոյեանը։

Գաղափարը կապում էր նորան Օգնեանովի հետ, իսկ կիրքը բաժանում։

Ռադայի պատուին հասցրած վիրաւորանքը պատժելով նա միաժամանակ և Օգնեանովի վրէժն էր հանում։

Հակասութիւնը պարզ էր, բայց կռիւը երկար չտևեց։

Յաղթութիւնը տարաւ սիրտը. այսինքն՝ խռովութիւնը յաղթեց հոգեկան աշխարհին։

Կանդովն ամբողջապէս տրուեց իր սիրոյն։

Ռադայի սիրան ազատ չէր, և նա այդ գիտէր, բայց չէր տեսնում ու շարունակում էր այրուել։ Սէրը կոյր է։ Իզուր չէ որ յունական դեղարուեստն սիրոյ թևաւոր աստծուն կապած աչքերով է պատկերացնում։

Այդ ժամանակամիջոցում, երբ Ռադան Օգնեանովին սպանուած էր համարում և այնպիսի խորը վշտի մէջ էր, որ Կանդովի վարմունքները ոչ մի կասկած չէին ժաղեցնում նրա մէջ, քանի որ վերջինիս այցելութիւններն էլ այնքան յաճախակի չէին։

Բայց Կանդովն սկսեց նրան աւելի շուտ-շուտ այցելել, շատ անգամ պատահական ձև տալով իր այցին։

Ժամանակն անցնում էր սակայն Ռադան, կնոջը յատուկ հոտառութեամբ հասկացաւ, որ ուսանողը դէպ իրան անտարբեր չէ։

Ամեն մի յետագայ այցելութեան ժամանակ այդ զգացմունքի նշաններն աւելի ու աւելի պարզ էին երևում, քանի որ զգացմունքն էլ էր օրըստօրէ աճում։

Ռադան շարունակում էր Կանդովի հետ, որպէս Բոյչօի բարեկամի և ազնիւ մարդու հետ, քաղցր վարել։ Խեղճը կարծում էր, որ սիրալիր ընդունելութիւնն ցոյց տալով և իր սեւորակ աչքերի կրակով շոյելով, որի ոյժը չգիտէր, թեթևացնում է Կանդովի տանջանքները։

Վա՛յ դեղ...

XXIV.

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՑՑԸ.

Ստեֆչովի հետ պատահած ընդհարումից յետոյ Կանդովը տուն դարձաւ խիստ յուզուած։ Իր սենեակում փակուած նա մինչև երեկոյ միևնոյն գիրքն էր կարդում։ Մերթ-ընդ-մերթ մատիտով գրքի վրա տեղեր էր նշանակում և նորից շարունակում ընթերցումը։

Երբ գիշերային լռութիւնը տիրեց, սեղանի մօտ նստած, նա սկսեց նամակ գրել։ Այդ աշխատանքը մինչև կէս-գիշեր տևեց։ Ապա նա պառկեց նստարանի վրա ոչ թէ քնելու, այլ երազելու։ Մոմը մինչև լոյս վառ էր։ Արևի առաջին ճառագայթները սենեակ ընկան և դիպան ինքնամոռացութեան տրուած ուսանողի երեսին։ Նա ուշքի եկաւ, հոգնած ու անհանգիստ քնից ուռած աչքերը բացեց։ Ապա սաստիկ յուզուած մօտեցաւ սեղանին, նորից կարդաց նամակը, ծալեց, սկսեց ծրար որոնել, բայց չգտաւ, կրկին բացեց նամակը, կարդաց առաջին տողերը և սեղանի վրա դրեց։

— Այժմ, թէ՞ յետոյ — շշնջաց նա ինքն իրան։

Եւ մտապբաղ մի բոպէ կանգնած մնաց։

— Ոչ, յետոյ, թող յետոյ հասնի... երբ ես տեսնուած կըլինեմ...

Ու նա շտապով հագնուեց, դուրս եկաւ։

Փողոցում միայն նա հասկացաւ, որ դեռ ես շատ վաղ է։ Արևը հորիզոնից շատ չէր բարձրացել։ Այն տունը, որտեղ ապրում էր Ռադան, զցել էր իր շուքը թէ փողոցը, թէ՛ ղէմի տան վրա։ Կանդովը մի քանի անգամ փողոցի մի ծայրից միւսն անցաւ, ամեն անգամ նայելով Լելովիցայի տան յետևի պատին (Ռադայի պատուհանները բակն էին դուրս գալիս)։

Արևն արդէն լուսաւորել էր ամբողջ Չին-Պլանինան (Չին լեռը), և քաղաքի կողքին բարձրացող բլուրները, և տների աղիւսէ կտուրները, սպիտակ խողովակներն ու արևելք նայող պատուհանները։

Սրճարանատէրերը բաց էին անում սրճարանները, խանութ-

պաններն աւաղ ցանեցին իրենց դռների առաջ, փողոցներում մարդիկ երևացին, սկսեց շարժումն ու կեանքը, քաղաքն աղմկեց զանազան հնչիւնների ու ձայների սովորական խառնուրդից։

Բայց Կանդովը այդ բոլորը չէր նկատում. նա արագ քայլերով մօտեցաւ Ռադայի տանը, ներս նայեց բակի ճաքճաքւած դրան ճեղքից։

Դուրս եկան երկու կին. — Լիլովեցան և Ռադան։ Նրանք շտապով փողոցից վերև անցան։ Միայն այժմ նա լսեց Կլեպալօի *) զիլ հարւածները։

— Երևի տօն է և երկուսով եկեղեցի գնացին, մտածեց նա։

Կաշկանդուածի պէս, Կանդովը տեղում կանգնած մնաց և հայեացքով հետևեց աւելի ու աւելի հեռացող աղջկան։ Վերջինս նրան չտեսաւ, որովհետև դուրս գալիս, աչքերը գետին էր դցել։ Կանդովն ակամայ նկատեց, որ այսօր Ռադան սև էր հագել։

— Ո՞ւր գնաց նա այդ սոսկալի պառաւի հետ։ Այս ի՞նչ յիմար կլեպալօ է։ Ի՞նչ շարունակ տներ են հնարում... հիմայ տօնի ժամանակ է, և տօնն այդ կռապաշտներին ինչի՞ն է պէտք։

Այսպիսի բացականչութիւններ մերթակի դուրս էին թռչում Կանդովի շրթունքներից, որը դեռ շարունակում էր փողոցում անցուդարձ անել։ Բայց Ռադան չէր վերադառնում։

— Այսի՞նչ անաստւած տօն է, կատաղած մռթմրթաց նա։

Սակայն նա չէր աշխատում իմանալ ի՞նչ տօն է. առաջին պատահող մարդը կարող էր նրան պատասխան տալ։

Բայց շուտով նա ստացաւ իր անհամբեր բացականչութիւնների պատասխանը։

XXV.

ԿԱՆԴՈՎԻ ԶԱՐՄԱՆՔԸ ԱՃՈՒՄ Է.

Դիմացի փողոցից լսւեց մանուկ երգիչների միապաղաղ սուր

*) «Կլեպալօ»-ն չուգունէ տախտակ է, որ բոլգարական եկեղեցիներում զանգի տեղ են գործածում։

ձայնը։ Երգին ինչ որ մի «բաս» էր կառավարում. երգը եկեղեցական էր։ Տարօրինակ համերգը մօտենում էր և աւելի ու աւելի լսելի դառնում։ Շուտով երևաց մանուկների մի շարք, ձեռքերին խաչվառներ ու սև ժապաւէն կապած երկար ու շիտակ մոմեր, յետևից այլ մանուկներ խմբով և նրանց հետ երգեցողութեան ուսուցիչ Մերդվինչևը։ Դրանց հետևում էին զգեստաւորւած քահանաները։ Օդում տարածւել էր խնկի հոտը. դա Լալկայի յուղարկաւորութիւնն էր։

Խեղճը զիշերն էր մեռել։

Երբ յուղարկաւորութիւնը հասաւ հրապարկը ուր փայտի պէս ցցւած էր Կանդովը, պատգարակը գետին դրին և սկսեցին աղօթք կարդալ։ Այդ րոպէին Կանդովը տեսաւ հանդուցեալին և ճանաչեց։

Նա պառկած էր հանդիստ ու խաղաղ, ցած թողած սիրուն թերթերունքներով և աւելի շատ քնածի էր նման, քան մեռածի։

Մարմարի պէս ճերմակ դէմքը հագիւ էր ջոկւում փետուրէ բարձից, որի մէջ թաղւած էր նրա գլուխը։ Նրա փոքր մարմինը կորել էր պսակների ու զարնանային թարմ Դաղիկների ասկ, որ կանանց ու աղջիկների վերջին նուէրներն էին։ Նրա ուսերի երկու կողմը հազւադիւտ սպիտակ վարդերի մի-մի փունջ էր դրած. նոյնտեսակ վարդեր խրած էին նաև նրա մազերին։ Նրա սպիտակ, նուրբ ձեռքերը գրացիայի արձանի մարմարեայ ձեռքերի պէս խաչաձև ծալած էին նորապսակի հաղուստի վերա, իսկ կրծքին դրած էր Աստւածածնի պատկերը։ Մաղիկների հարբեցուցիչ բոյրը, խնկի ծխին խառնւած, լցրել էր հրապարակը և հմայում էր մարդու սիրտ։

Աղօթքը վերջացաւ։ Մօր ձայնը ճեղքեց օդը։ Պատգարակները վերցրին և յուղարկաւորութիւնը յուզի ընկաւ։ Կանդովը համարեա մեքենայաբար ամբոխին միացաւ։ Նրա դէմքը անփոփոխ էլ մնաց։ Այս սրտառուչ տեսարանը, որին նա ականատես էր, նրան բոլորովին չդիպաշարժեց։ Ընդհակառակը նրա դէմքին ինչ-որ մի կատաղի ուրախութիւն էր փայլում։ Նա հասկացաւ, որ Ռադան, Լալկայի ընկերուհին, այստեղ է գտնւում։ Յուզարկաւորութեան հանդէսը նրա մէջ միայն այդ միտքը զարթեցրեց։ Նա սկսեց կանանց մէջ

Ռադային որոնել, բայց չէր գտնում: Նա դիտմամբ չեռ ընկաւ, որ դաղաղն ուղեկցող կանայք իր մօտից անցնեն: Ցանկարծ նա տեսաւ պառաւ Լիլովեցային և նրա մօտ սկսեց Ռադային որոնել: Բայց Ռադան չկար: Նրա սիրտը կոտրուեց: Ինչպէս... մի՞թէ կարող է պատահել, որ Լալկայի ընկերուհին այստեղ չլինի: Անկարելի է, անկարելի՛, անկարելի: Եւ նա նորից մտաւ ամբոխի մէջ, նորից սկսեց որոնել, բայց դարձեալ չէր գտնում:

XXVI.

ԹԱՂՈՒՄԸ.

Փողոցներում աւելի ու աւելի խտացող ամբոխն այժմ բոլորովին լցրել էր եկեղեցին:

Պատգարակը դրել էին մարմարէ տախտակների վրա, որոնք զարդարուած էին փորանկար երկդլխան արծիւներով: Դագաղն այն կենդրոնն էր, որի շուրջը խռնուում էր ամբոխը, վառած մոմերը ձեռքին:

Հոգեհանդստի ազօթքը սկսուեց: Բուրվառներից կապոյտ ծուխը քուլայ-քուլայ բարձրանում էր դէպի կամարները: Սեղանի առաջ վառած էին մեծ մոմակալներն ու կանթեղները, որոնց առատ լոյսը ամբողջ եկեղեցուն հանդիսաւոր կերպարանք էր տալիս... և այդ փայլը պէտք է մխիթարէր Լալկայի վշտացած ընտանիքին...

Այդ նպատակով էր հրաւիրուած նաև ուսուցիչ Կլիմենտին դամբանական ասելու: Որպէս ասուածաբան, նա ճարտասանական ընդունակութիւն ունէր և խօսակցութեան մէջ էլ շարունակ Սուրբ գրքից նախադասութիւններ էր դործածում: Բայց նա հիւանդութեան պատճառով նա հրաժարուեց: Ֆրանդովին հրաւիրեցին: Քիչ ցաղութիւնը դադարեցրին և եկեղեցում լռութիւն տիրեց:

Խիստ յուզուած, ուսուցիչը հայեացքն ուղղեց հանդուցեալին և բարձր, դողդոջ ձայնով սկսեց.

«Եղբայրներ և քոյրեր...»

Բայց նա ստիպուած էր իսկոյն լռել: Դռան մօտ ինչ որ անսովոր բան կատարուեց: Ժողովուրդը շփոթուած սկսեց այս ու այն կողմը ընկել: Ցուզիչ շշուկ տարածուեց, ապա լսուեցին և վախեցած ձայներ: Շփոթը տարածուեց և հասաւ դագաղը շրջապատող առաջին կարդերին: Ամենքը հարցնում էին, ամենքը շուրջն էին նայում և չիմանալով բանի էութիւնը, խմբուում էին դէպի սեղանը: Հոծ ամբոխը խելագար և անդուսպ կերպով առաջ էր շարժուում, որպէս մրրկալից ալիք և քիչ մնաց հանդուցեալի դագաղը վայր դցէր:

Տիրեց սարսափելի իրարանցում ու շփոթ:

— Գալի՞ս են, կանչում էին մի քանիսը

— Տէ՞ր Աստուած, դալի՞ս են, ճղճղում էին կանացի ձայները:

— Ո՞վ է դալիս, ո՞վ, ձայն էին տալիս տղամարդիկ եկեղեցու ներսից:

— Թուրքե՞ր, Թուրքե՞ր...

— Սրի կքաշեն...

Իսկոյն եկեղեցու ծանր դուռը վրա զարկին և ներսից կողպեցին: Իրարանցումը շատացաւ: Ճիչն ու աղաղակը լցրեց Աստուծոյ տունը: Ժողովուրդը վախեցած հօտի պէս վազվզում էր, առանց իմանալու, թէ ուր պաշտպանութիւն գտնէ: Մի մեծ խումբ կազմուեց Իւրդանի և Սաեֆչովի շուրջը: Որպէս տաճիկների մօտ ազդեցիկ, նրանց մօտ էին ուղում պաշտպանութիւն գտնել և նրանց հետ ազատ ու խնայուած մնալ: Իսկ ժողովրդի մեծ մասը վազվզում էր եկեղեցում, այս ու այն կողմն ընկնում, իրար սեղմում միևնոյն տեղը պտոյտ գալիս, երեսը խաչակնքում: Երիտասարդ կանայք աղաղակում էին և ուշաթափ ընկնում, բայց ոչ ոք նրանց ոչ մի օգնութիւն չէր հասցնում: Մի քանի կանայք սեղանի սանդուխքի վրա ղլորուեցին և ոտքի տակ գնացին: Շատերը սրփրտնել էին և Լալկայից էլ աւելի սպիտակ գոյն ստացել:

— Վերև բարձրացէք, աղաղակեց մէկը:

Եւ ամենքը խմբուած սկսեցին բարձրանալ սանդուխքներով աջ ու ձախ կողմից վերնատունը — կանանց բաժանմունքը, որ ա-

ռանձնացած էր ցանկապատով։ Որովհետև մտածեցին, որ այնտեղ ապահով կլինեն, եթէ թուրքերը սկսեն հրացանածգութիւնը։ Ամբոխը խռնուեց սանդուխքի վերա և իրար հրելով աշխատում էին շուտով բարձրանալ։ Միքանի րոպէում բոլոր ժողովուրդը լցուեց կանանց բաժանմունքը։ Եւ եկեղեցու ներքևում գրեթէ դատարկուեց։ Մէջտեղում դրած էր դագաղը, շրջապատուած մոմակալներով։ Մի քիչ հեռու ձեռքերը կրծքին ծալած կանգնել էր Կանդովը և տխրութեամբ հանգուցեալին էր նայում։ Նա բոլորովին անտարբեր մընաց դէպի այն բոլորը, ինչ որ կատարուում էր նրա շուրջը։

Այդ ժամանակ վերնատնից լսուեց Սոկոլովի ձայնը.

— Մի՛ վախէ՛ք, ոչինչ չկայ։

Դեռ ևս իրարանցումի սկզբին, նա բարձրացաւ վերնատունը, որ բարձրի պատուհաններից տեսնի, թէ ինչ է կատարուում դուրսը։ Բայց այնտեղ ոչ մի վտանգաւոր բան չերևաց։ Զկար ոչ մի տաճիկ։ Ընդհակառակը նա տեսաւ Բեզպորտևին ու նրա ընկերներին, որ դէպի եկեղեցին էին դալիս։ Սոկոլովը ամեն ջանք գործ դրեց ժողովրդին հանդստացնելու. աղաղակելուց նրա ձայնը կորրուեց, բայց ընդհանուր աղմուկի մէջ նրան ոչ ոք չէր լսում։

Այժմ ուրիշներն էլ ձայն տուին.

— Հանդիստ եղէ՛ք, հանդի՛ստ, ոչինչ չկայ։

— Ո՞վ էր վախեցնողը, կոչեց մի ուրիշը։

— Դուռը բացէ՛ք։

— Ո՞վ էր խաբողը, ո՞վ...

Դուռը բացին։ Ներս մտաւ խմբագիրն իր ընկերներով, շունչը կտրուած, բայց առանց երկիւղի նշանի։ Նորեկներն սկսեցին երեսները խաչակնքել, առանց կասկածելու, որ իրարանցումի պատճառն իրանք են։

Բանն նրանումն է, որ Ռաչեօն, նրանց ձեռքից փախչելով, սարսափահար ներս ընկաւ եկեղեցին և երբ կանայք հարցրին թէ ի՞նչ կայ, նա պատասխանեց.

— Գալի՞ս են...

— Ո՞վ է գալիս։

— Ղափասրդը*), նրա հետ, էլի ուրիշները, շա՞տ են, շա՞տ...

Հարցնողներին թուաց, թէ նա ասաց.

— Ղափասրդ... շա՞տ են, շա՞տ...

Այդքանը բաւական էր, որ մի ամսից աւելի տաճկական կոտորածների սպասող բնակչութիւնն ահի մէջ ընկնէր...

Իրարանցման պատճառն այդ էր...։

XXVIII.

ՓՈԹՈՐԻԿ ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ.

Ռադալի Կլիսար գնալն անակնկալ էր։

Հէնց նոր էր նա Լալկալի թաղումից տուն եկել, երբ Կլիսարցի մի մարդ յայտնեց որ Բոյչօի յանձնարարութեամբ նրան պէտք է տանի Կլիսարի։ Ռադան իսկոյն պատրաստուեց և անյապաղ ճանապարհ ընկաւ։

Ռադան իջաւ տիկին Մուրատլեսկու տանը, որ նոյնպէս նոր էր եկել Կլիսարի։ Նա ուրախութեամբ կատարեց Օգնեանովի խընդիրը և անտուն աղջկանն իր մօտ ընդունեց։

Տան պատուհաններն արևելք էին նայում և այնտեղից երևում էին ամբողջ Կլիսար քաղաքն ու Հին-Պլանինան։ Դեռ ևս ձմեռուայ ճերմակ թաղով պսակուած Ռիլարեցի հսկայական գագաթը հարաւային կողմից համարեայ ուղղահայեաց ցած էր իջնում։ Լերան տակ Կլիսարն էր, իսկ նրա սիզաւէտ լանջերին մերթ այստեղ, մերթ այնտեղ, երևում էին նոմադների հօտերն ու կարմիր վրանները։ Արևելեան կողմից, քաղաքի մօտ, ապառաժների ու խորխորատների մի ամբողջ շարք էր ձգուած, որ տեղ-տեղ լերկ տեղ-տեղ, խաղողի վազերով ու վարդի թփերով էր ծածկուած։

Գալարուն շաւիղը մինչև կատարն էր հասնում և տանում էր դէմադէմի, Սատանի-Ձորը որտեղից անցնում է Սարիմի հովիտը տանող ճանապարհը։

---

*) «Ղափասրդ» — Բեզպորտևի մականունն էր, «ղափասրդ» նշանակում է և «աւազակ»։

Միւս կողմից, Կլիսարիին կից, տարածւում էին բլուրները: Քաղաքը ամբողջովին կորել էր խորը հովտում, սուզված այգիներ ու պարտէզների կանաչի մէջ, պատած վարդի թփերով, որոնք օդը լցնում էին իրենց անուշահոտ բուրմունքներով: Զմեռ ժամանակ աշխարհից կտրուած, տխուր ու խեղդուկ քաղաքն այժմ մի հրաշագեղ անկիւն էր ներկայացնում, դով ու բուրալից:

Երկար տատանումներից յետոյ, Կանդովը վճռեց Կլիսար գնալ: Այդ բանը նոյնիսկ նրա համար այնքան անսպասելի եղաւ, որ Ռադայից գրած նամակը մոռացաւ սեղանի վրա: Նամակը գտաւ Նեակովիչը և ուրիշի ձեռքը չանցնելու համար, իր քսակում թաղցրեց:

Ռադայից մի օր յետոյ գալով Կլիսարի, Կանդովն իր մի ազգականի մօտ իջաւ: Այդ օրն իսկ նա այցելեց Ռադային, որ Լալկայի մահուան պատճառով արտասւում էր: Նա հասկացաւ, որ այդպիսի հանգամանքներում իր այցը անտեղի է և չնայելով դրան, նա իրան աւելի թեթև և ուրախ զգաց: Ե. կարծես նոյնիսկ մի տեսակ երջանկութիւն նա զգաց, որ Ռադային տեսաւ:

Այսօր Կանդովը նորից էր եկել Ռադայի մօտ: Դեռ ևս բաւական վաղ էր: Ռադան այսօր աւելի էր վշտացած ու վախեցած: Լալկայի մահուան պատճառած վշտին այժմ աւելացել էր նաև Բոյչօի դարդը, որի մասին Ռադան չգիտէր թէ, ո՞ւր է... այնինչ արդէն լուրեր էին պատւում Կապրիվշչենում սկսելիք ապստամբութեան մասին: Հոգեկան այդպիսի ճնշած դրութեան մէջ լինելով, Ռադան Կանդովի գալուն ուրախացաւ:

— Ի՞նչ նորութիւն կայ, պարոն Կանդով, հարցրեց նա անհանդստութեամբ:

— Ապստամբութեան մասին են խօսում չոր պատասխան տուեց Կանդովը:

— Ի՞նչ կլինի այժմ, Աստուած իմ...

Իսկ Բոյչօից էլ ոչ լուր, ոչ բան... ի՞նչ կլինի...

Կանդովը ցրուած էր պատասխանում, կարծես նորան հարցնելիս լինէին Նոր-Զելանդեայի բնակիչների բարքերի մասին: Սակայն դէպի Բոլգարեայի ապագան որոշող դէպքերը ցոյց տուած

այդ սառը վերաբերմունքի տակ կատարեալ յուսահատութիւն էր թաղնուած: Բայց ոչ ինքը, ոչ Ռադան այդ չէին նկատում:

— Ապստամբութիւնն սկսուած դէպքում դո՞ւք ի՞նչ էք մտադիր անելու:

— Ինչ հարկաւոր լինի:

— Ի՞նչպէս թէ ի՞նչ հարկաւոր լինի: Դուք չէ՞ք կուելու:

— Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, Ռադկէս միայն մի բան — մեռնե՞լ... պատասխանեց Կանդովը մռայլուած:

Բակի դուռը երեք անգամ զարկին:

— ԲոյչՕն է, բացականչեց Ռադան և դուրս վազեց դուռը բանալու:

Ներս մտաւ Օգնեանովը գիւղացու հագուստով, յոգնած ու ամբողջովին փոշով ծածկուած: Նա Պանագիւրիշչէից էր վերադառնում: Այնտեղ նա գնացել էր Մեչկայի գլխաւոր ժողովին ներկայ լինելու, ուր որոշուել էր ապստամբութեան օրը, մայիսի 1-ը: Այժմ Օգնեանովն Սպիտակ-Եկեղեցի էր շտապում, որպէսզի միքանի օրում վերջացնէ հարկաւոր պատրաստութիւնները և նշանակուած օրը ապստամբութեան դրօշը բարձրացնէ:

Նա Կլիսարի էր եկել Ռադային հրաժեշտ տալու: Այստեղ նա Սպիտակ-Եկեղեցուց մի նամակ ստացաւ և իսկոյն Ռադայի մօտ վազեց: Ճանապարհին նրան ոչ ոք չ'պատահեց:

Օգնեանովը կանգ առաւ և սառը, թափանցող հայեացք ձրգեց Կանդովի վրա, որը պատուհանի առաջ հանգիստ կանգնած էր:

Ռադան սկսեց ինչ-որ խօսել, իր ուրախութիւնը յայտնել, բայց Օգնեանովի սառը հայեացքը տեսնելով, շփոթուած մնաց:

— Ներեցէ՛ք, ամբողջովին սփրթնած, դառն ծաղրով ասաց Օգնեանովը:

Այժմ միայն նա Ռադային նայեց:

— Ի՞նչ է Բոյչօ, խեղդուած ձայնով հարցրեց Ռադան և մօտեցաւ նրան:

— Ցարդելի օրիորդ, բաւական է կեղծել, ամՕթ է, սառնութեամբ կարեց նրա խօսքն Օգնեանովը:

Ռադան դէպի նա վազեց, բայց Օգնեանովը յետ գնաց:

— Բաւական է, ազատեցէ՛ք ինձ ձեր փաղաքշանքներից... Ապա, Կանդովին դառնալով, նա ջղաձգօրէն ասաց.

— Պարոն Կանդով, չգիտեմ ձեզ ի՞նչպէս յայտնեմ շնորհակալութիւնս, որ հրաւէրս ընդունեցիք և իսկոյն եկաք Սպիտակ-Եկեղեցուց այստեղ...

Կատաղութիւնից նա խեղդւում էր և հազիւ էր կարողանում խօսել:

Կանդովը նրան դարձաւ:

— Ի՞նչ հրաւէր, հարցրեց նա չոր կերպով:

— Ի՞նչ ես ուզում ասել, Բոյչօ, ապշած հարցրեց Ռադան: Պարոն Կանդովն իր ազգականի մօտ հիւր է եկել: Նա...

Ռադան չկարողացաւ շարունակել և հեկեկաց:

Նա հեկեկաց այն պատճառով, որ կեանքում առաջին անգամն էր սուտ խօսում: Սպիտակ-Եկեղեցում ունեցած կարճ տեսակցութեան ժամանակ նա չկարողացաւ Օգնեանովին հաղորդել Կանդովի տարօրինակ վարմունքների մասին և որին նա չէր վստահանում դուրս անել: Այժմ Օգնեանովն այսպէս վաղ, երկուսին միասին էր տեսնում: Երևի արդէն լուրեր են հասել նրա ականջը այդ այցելութիւնների մասին, իսկ անիծեալ պատահմունքն այսօր աւելի վաղ հաստատեց նրա կասկածները, քան թէ ինքը կարողացաւ պարզել գործի էութիւնը:

Ռադան յոյս ունէր, որ Կանդովն ինքը նրան այդ տանջալից դրութիւնից դուրս բերելու համար բացատրութիւն կտայ, բայց նա լուռ էր:

— Պարոն Կանդով, դուք էլ մի բան ասացէք, ես ուզում եմ ուրախանալ, չարացած ասաց Օգնեանովը, արհամարական հայեացք ձգելով իր ախոյեանի վրա:

— Ես ոչինչ ասելիք չունեմ, ձեզ եմ սպասում, սառնասրտութեամբ պատասխանեց ուսանողը:

— Այդ ստորութի՛ւն է, կոչեց Օգնեանովը հայեացքը մէկի վրայից միւսին դարձնելով:

Կանդովը սփրթնեց: Վիրաւորւած ինքնասիրութիւնը դուրս բերեց նրան մռայլ անտարբերութիւնից:

— Օգնեանով, կոչեց նա կատաղած:

— Աւելի բարձր դոռա՛, կարելի է ինձ վախեցնես, նոյն ձեւով պատասխանեց Օգնեանովը: Կատաղութիւնից նրա ծնօտը դողում էր:

Ռադան դէպի նա վազեց, վախենալով, որ մի փորձանք առաջ չբերէ. նա ճանաչում էր Օգնեանովի դիւրագրգիռ, անզուսպ բնաւորութիւնը:

— Տէ՛ր Աստուած... Բոյչօ, ի՞նչ ես անում: Սպասիր ես քեզ կպատմեմ, բացականչում էր Ռադան արտասուալից ձայնով:

Օգնեանովը նրա վրա թունաւոր հայեացք ձգեց:

— Կարիք չկայ, Ռադա՛, կոկորդիլոսի արտասուքներով քեզ մի՛ ստորացնիլ — որին դու շատ հմուտ ես: Եւ ե՛ս, յիմարս, հաւատում էի, որ անմեղներից անմեղն եմ ճարել... Այնքան սիրեցի, այնքան բուռն սիրեցի... Սիրտս փողոցն եմ եղել գցած... Որպիսի՞ կուրութիւն...

— Բոյչօ, հեկեկալով, յուսահատաբար բացականչում էր Ռադան:

— Դադարիր, մեր մէջ այլևս ոչինչ չի կարող լինել: Դիմակը պատռւած է... Որպիսի՞ մոլորութիւն... Կարծել, որ դու ինձ սիրում ես, թափառաշրջիկիս, որին ցիցը կամ կախաղանն է սպասում, քանի որ այդպիսի մեծ մեծ ֆրազաներ ասող, խորիմաստ ու բարեմիտ, վատ ու երկչոտ ասպետ ունես... Տէ՛ր Աստուած, աշխարհում որքան ստորութիւն կայ...

Եւ նա դարձաւ, որ գնայ:

— Օգնեանով, խօսքերդ յետ վերցրու, կոչեց Կանդովը, նրան հասնելով:

Օգնեանովը կանգնեց:

— Ասածս կրկնում եմ — ստորութիւն և կեղտոտութիւն: Դա բարեկամական հաւատի զազրելի պղծումն է: Կամ դուցէ, կժխտե՞ս այդ ակնայայտնի բանը, ասաց Օգնեանովը, կատաղած հայեացքը ուսանողին ղցելով:

— Կամ խօսքերդ յետ վերցրու, կամ՝ մահ, գոռաց Կանդովը զայրոյթից դողալով:

— Մա՞հ — դա միայն այնպիսի յեղափոխականներին կարող

է վախեցնել, որոնք կանանց փեշի տակ պահելով են Բոլգարեան ազատում։

Կանդովը բռունցքը բարձրացրած, Օգնեանովի վրա յարձակուեց։ Երկար ժամանակ կրած նրա բոլոր վշտերն ու տանջանքները կատաղութեան մի հեղեղ դարձան, իրանց անուղղակի սկզբնապատճառի դէմ ուղղուած։

Օգնեանովը բռնեց նրա ձեռքից, դէպի պատը հրեց և դուռց ատրճանակները հանելով, ասաց.

— Վատ հոգու պէս չեմ ուզում. առ ատրճանակը — և ատրճանակներից մէկը տուեց ախոյեանին։

Ռադան երկիւղից ու յուսահատութիւնից խելքը թռցրած, պատուհանը բացեց և սկսեց օգնութիւն կանչել։

Հէնց այդ րոպէին զանգահարութիւն սկսուեց։ Զիլ, արձականգը յուղիչ կերպով տարածւում էր շուրջը։

Օգնեանովը, ատրճանակը ձեռքին սառած մնաց։

Նոյն րոպէին արագ քայլեր լսուեցին և դուռն աղմուկով յետ ընկաւ։

Ներս մտան մի քանի զինաւորուած երիտասարդներ։

— Կեցցէ՞ Բոլգարեան, ապստամբութիւնը յայտարարուած է, կեցցէ՞ Բոլգարեան, աղաղակեցին նրանք։

— Ժողովուրդը ո՞րտեղ է հաւաքւում, յուզուած հարցրեց Օգնեանովը։

— Սատանի-Զորում... շտապեցէ՛ք։

Եւ ապստամբներն արագ հեռացան աղաղակելով. «Կեցցէ Բոլգարիան» և երգելով երգեր։

Իսկ զանգերը հնչում էին կատաղի կերպով։

Օգնեանովը դարձաւ Կանդովին.

— Այժմ ես գործ ունեմ... ասաց նա։ Եթէ կենդանի մնամ քեզ բաւականութիւն կտամ... իսկ այժմ տիրուհուդ մօտ կաց, որ չվախենայ, դրաղեցրու։

Եւ իսկոյն դուրս գնաց։

Ռադան ուշաթափ դեռին փռուեց։

Տիկին Մուրատլինսկին աղաղակների ձայնին ներս վազեց և սկսեց Ռադային ուշքի բերել։

Կանդովը զառանցանքի մէջ ընկած մարդու պէս էր լսում զանգահարութեան ձայնը։

Գետնին մի թղթի կտոր տեսնելով, կռացաւ և վերցրեց. դա Օգնեանովի ձեռքից էր ընկել։ Նա կարդաց.

«Կոմս։ Բարեկամներ ունենալը վատ չէ. Կանդովդ մի ամբողջ գանձ է։ Իմացիր, որ նա քանի դեռ այստեղ էր, մի րոպէ անգամ Ռադա Գասպաժինայից, բո այդ հաւատարիմ հրեշտակից, անմեղ աղաւնեակից չէր հեռանում։ Երեկ Կանդովը Կլիսարի դնաց. նա աղաւնեակիցդ նամակ էր ստացել. խեղճի հոգին ու սիրտը չափից դուրս շատ էր տանջւել քեզ համար, սաստիկ կարօտել էր — ուստի Կանդովին կանչել էր, որ քիչ մխիթարէ։ Լաւն է քո Ռադկէն, շատ լաւ։ Ասենք բարեկամդ էլ պակաս չէ... երանի՞ քեզ... բացի այդ, լաւ գիտենաս, որ այս բոլորը «գաղտնիք» է։ Բայի տէրտէրից ու ամբողջ գիւղից, միայն դու չես իմանում... Կեցցէ՞ Բոլգարեան, թող ազատ լինի Բոլգարեան, Ռադա Գասպաժինան էլ մեր թագուհին կլինի»։

Նամակն երեկ էր Կլիսարի հասել, անյայտ ճանապարհով։ Անստորագիր էր։

Այդ գարշելիքը Կանդովը կտոր-կտոր արեց և թքեց վրան։

XXIX.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.

Հինգ օր է արդէն, որ Կլիսարին բռնկուել է ապստամբութեան բոցով։

Բոլոր գործերը կանգ առան, ամեն բան մոռացուեց։ Ամենքի դէմքին անսովոր յուզմունք էր նկատւում։ Քաղաքը հիացմունքի, երկիւղի ու անհանգստութեան մէջ էր։ Ամենուրեք նոյն հարբու-

ցիչ մթնոլորտն էր տիրում... Այս հինգ օրվայ մեջ Կլիսարին մի քանի կեանք անցկացրեց, մի քանի դարերի երկիւղ, յոյս, ցնծութիւն ու յուսահատութիւն զգաց...

Մեչկայի գլխաւոր ժողովի Կլիսարիի ներկայացուցիչը ապրիլի 20-ին եկաւ Կապրիվշչինայից, որը այդ օրը ապստամբել էր, զրկախառնուեց իր տանեցիների հետ և յայտարարեց, որ ապստամբութեան ժամը հասել է...

Իսկոյն գլխաւոր դաւադիրները դպրոցի շէնքում ժողով գումարեցին և Կարաչովը մի ոգելից ճառ ասաց: Երբ բոլորը խմբով երգեցին ազգային յեղափոխական «կռիւ է կռիւ...» երգը որն սքանչացած բացականչութիւններով ընդունուեց, շուրջը զանգահարութիւն տարածուեց և ամբողջ քաղաքն իրան ապստամբած յայտարարեց...:

Անմիջապէս դեսպաններ ուղարկուեցին Բալկանեան միւս քաղաքների կոմիտէներին, որպէսզի այնտեղ էլ բարձրացնեն ապստամբութեան դրօշը:

Տաճապետներ ու հրամանատարներ նշանակուեցին, զէնք տուին բոլոր ցանկացողներին, թուրք ոստիկաններին հալածեցին լեռները:

Բոլոր տղամարդկանց քաղաքից դուրս կանչեցին և լեռների բարձունքների վրա տեղաւորեցին: Քաղաքը պաշտպանելու համար, բոլոր ռազմագիտական կէտերում 15-20-ական հոգի պահապաններ նշանակուեցին և հոգաթումբեր կառուցին: Այդ պահակատեղերում կանգնեցրին համաբեա քաղաքի բոլոր արական սեռի բնակիչներին 18-ից մինչև 50 տարեկան հասակը: Այլևս ոչ ոքի չէին թողնում քաղաքը գնալու: Հրաման արձակուեց, որ ամեն մի ապստամբի պաշար և անհրաժեշտ իրերը տանեցիք հասցնեն:

Հետևեալ օրը, երբ քահանաներն ու կանայք, տղամարդիկ ամրութիւնների վրա էին — եկեղեցում ջերմեռանդ աղօթք էին անում Բոլգարեան սարկութիւնից ազատելու, քաղաքի աւադները, որ նոյնպէս մեծ ուրախութեամբ շարժման էին յարել, զինուորական խորհրդի անդամներ և գլխաւոր հրամանատար ընտրեցին:

Կէսօրից յետոյ, մեծ հանդիսով առիւծանկար դրօշակը տարան Սատանի Զորի բարձունքները և նրա պաշտպաններին յանձնեցին: Օրվայ մնացած մասը բարձունքները զինուորական պիտոյքներ էին տանում, զանազան ամրութիւնների համար հրամանատարներ էին նշանակում և քաղաքի պաշտպանութեան համար այլ կարգադրութիւններ անում:

Սակայն ուրիշ տեղերից եկած լուրերը մխիթարական չէին: Բացի Միչին-Լեռնից ոչ մի նոր կէտ ապստամբութիւն չէր բարձրացրել:

Գիշերվայ դէմ ապստամբները ընկան տարտամ դրութեան մէջ:

Ապրելի 22-ին նրանք երկու ճամբորդ թուրք սպանեցին:

Արիւնը թափած էր և վիճակը վերջնականապէս ձգած:

Բայց իղուր էին բարձրութիւններից Ստրեմի հովիտը դիտում, որ այնտեղի տաճկական գիւղերում հրդեհ տեսնեն: Դա պէտք է նշան լիներ, որ Կաբլեշկովը ապստամբեցրել է այնտեղի բոլգարական գիւղերը:

Այդ ժամանակ նրանք ընտանիքների համար լեռներում թաղստեան տեղ գտան և ուղարկեցին Կապրիվշչինա օգնութիւն խնդրելու:

Ապստամբները մռայլուեցին և ողով թուլացան:

Ս. Գէորգի տօնը ոչ օրի չուրախացրեց և աղօթողներին տաճար հրաւիրող զանգերը տխուր ու մելամաղձոտ էին հնչում, կարծես մարդկանց յուղարկաւորութեան էին կանչում:

Բայց ահա զանգահարութիւնը ուրախ ու կենդանի դարձաւ և ապստամբների դէմքը ուրախութիւնից փայլեց:

Վոլովը Կապրիվշչինից յիսուն հոգուց բաղկացած մի օգնական խումբ էր բերել, մեծ մասամբ Միչին-Լերան գիւղից:

Խումբն ուղղակի եկեղեցի մտաւ, ուր հանդիսաւոր մաղթանք կատարուեց...

Զանգերը հնչում էին աւելի խիստ, քան սովորական տօներին: Դրանից յետոյ Վոլովը քահանաների ուղեկցութեամբ խաչով-խաչվառով դէպի ամրութիւնները դիմեց: Այնտեղ, որպէս լրտեսներ, մահուան դատապարտեցին մի քանի ցիգաններ և թուրքեր: Դրանցից մէկի գլուխը Վոլովն ինքն իր ձեռքով թոցրեց:

Այդ արշաւանքից յետոյ Վոլովը Կապրիվշչինա դարձաւ:

Մնացած ժամանակը գործ դրին հողաթումբերը վերջացնելու։

Հետևեալ առաւօտ դարձեալ ամենքին յուսահատութիւնը տիրեց։ Իզուր էին հեռատես պահապանները ամբողջ ժամերով աչքերը յառած ցանկալի հրդեհին սպասում։

Կարլեշկովի արշաւախումբը առանց որևէ գործ կատարել կարողանալու, յետ եկաւ Կապրեվշչինա։

Ապստամբութեան առաջին օրերն այստեղից անցնող փոքրաթիւ ճանապարհորդներն ասում էին, որ հովում ամեն ինչ խաղաղ է և որ մօտալուտ ապստամբութեան ոչ մի նշան չկայ... Իսկ երեկւանից արդէն ճանապարհորդներ էլ չկային... Նրանց փոխարէն բլուրի վրա մի քանի ծիաւոր թուրքեր երևացին, հրացանները պարպեցին և իսկոյն անհետացան...

Ցուսահատութիւնն աւելի ու աւելի սասկանում էր։ Եւ չէին օգնում ոչ սրտոտների խրատները, որոնց թիւը փոքր առ փոքր նւազում էր, ոչ խաբելը և ոչ խիստ ներշնչումները։

Կլիսարցիների այդ տխուր տրամադրութիւնն ապրելի 25-ին աւելի զօրեղացաւ։ Նրանք տեսան, որ բաղդի հաճոյքին են թողնւած, այսինքն անխուսափելի կորստեան... այդ անկասկած էր։

Մի բուռն պաշտպանները, որ կարող էր քաղաքը դուրս հանել, ընդամենը 250 հոգի, զանազան կէտերում ցրւած, բոլորովին անբաւարար էր կանգնելու բաշիբուզուկների սարսափելի վոհմակի դէմ — որ արևելքից ու արևմուտքից պէտք է վրա թափւէր...

Կապրիվշչինից նոր օգնութիւն սպասելը զուր էր, քանի որ ինքը օգնութեան կարօտ էր։

Ցուսահատութիւնը վարակում էր բոլոր ամրութիւնները։ Կարգապահութիւնը թուլանում էր։ Զզջումը, տրտունջը, կարգ ու կանոնի անկումը առաջապահների շարքից փախուստ տալը, լքումն ու վհատութիւնը — ահա դրանք փոխարինեցին ապստամբութեան առաջին ոգևորութեանը։

Թշնամին դեռ ևս չէր երևում, բայց ամենքն զգում էին, որ նա մօտ է, ահարկու և անխուսափելի։

Ապստամբները ջարդւած բանակի էին նմանւում — յաղթւած,

դեռ կռիւ չմտած։ Նրանք կարծես եղնիկների մի երկչոտ հօտ լինէին, քշւած-մտած մի անել անկիւն, զգալով գազանների մօտալուտ ոռնոցը։

Փչերն էին պահել հոգու արիութիւնը, աւելի ևս քիչ էին յաչող ելքի յոյս ունեցողները։

Բարոյական տանջանքներին միացաւ և ֆիզիքականը։ Ամբողջ գիշերը Բալկաններից փչում էր սառը քամին և ամրութիւնների պաշտպանները, քանի որ ստիպւած էին գիշերներն առանց կրակ անելու խոնաւ գետնի վրա քնել, սառել-փայտացել էին։

Այդ խեղճ մարդիկը, խեղճ արհեստաւորները, որ ամբողջ կեանքն ասեղը ձեռքին խաղաղ աշխատանքով էին անցկացրել, այժմ որպէս ապստամբներ, ոտքից գլուխ զինւած, խիստ ողորմելի տեսք ունէին։ Հողաթումբերի վրա գիշերը տարածւում էին խուլ տնքոցներ ու հառաչանքներ, ոչ ոք ցրտից ու անհանգստութիւնից աչքը չէր կարողանում փակել։

— Աչքդ լոյս — այդ խօսքերով էին դիմաւորում իրար կանայք ապստամբութեան առաջին օրերը։

— Կորա՞նք, փչացա՞նք, շշնջում էին այժմ այն ժամանակւայ ամենակրակոտ դաւադիրները։

Ցուսահատութիւնն աճում էր։ Այդ պարզ գրւած էր երկիւղով համակւած դէմքերին։ Սակայն, փախուստ տալու, ամրութիւններն ու զէնքերը թողնելու մասին դեռ ևս ոչ ոք չէր խօսում։ Բայց մտածում էր դրա մասին ապստամբներից ամեն մէկը։

Այսպէս էր բոլորի տրամադրութիւնն այդ օրն բարձրութիւնների վրա։ Նոյն տրամադրութիւնն էր տիրում նաև Սատանի Զորում, պաշտպանութեան ամենակարևոր կէտում։

XXX.

«ՍԱՏԱՆԻ-ԶՈՐԻ» ՄԱՐՏԿՈՑԸ.

«Սատանի Զոր»-ը, որ քաղաքից հիւսիս-արևելք էր գտնւում, հրաշալի ռազմական կէտ էր։ Նա տիրապետում էր ամբողջ

շրջակայքի վրա և Կլիսարի Սարեմի հովիտը տանող ճանապարհի կենտրոնն էր։ Այստեղից երևում էին դեպ արևելք ընկած ալիքածև բլուրները, որոնց վրա հեռատես պահնորդներ էին նշանակված, որոնք Կլիսարեան բանակի շրթան էին կազմում։

Սատանի Զորի պաշտպաններն ամենքից շատ էին, այնտեղ էին Վոլովի Միջին-լեռները։ Առաջին անգամ թշնամին այստեղ պետք է զինաւորված դիմադրութեան հանդիպէր։

Այսօր այդտեղ առանձին կենդանութիւն էր տիրում։ Մարդիկ համեմատաբար առոյգ էին նայում։ Բայց ամենքի հայեացքը ոչ թէ դէպի արևելք էր ուղղված, որտեղից սպասում էր թշնամին, այլ դէպ այն հովիտը, ուր բուն էր դրած Կլիսարին։ Ամենքը լարված ուշադրութեամբ նայում էին շաւիղին, որ անդունդի կողքին ոլորելով վերև էր տանում։ Այնտեղից հսկայ հասակով մի ապստամբ շալակին ինչ որ սպիտակ, երկար, ցիլինդրաձև առարկայ էր բարձրացնում։ Նրա յետևից մի լիքը և բարձրահասակ կին, որպէս հագուստից երևում էր, գեղջկուհի, նոյնպէս մի ծանր բեռ տակ մէջքը ծռած, վերև էր քայլում։

Այդ երկու հոգու վրա էր ուղղված ապստամբների հայեացքը։

Եւ իզուր չէր — դրանք Սատանի-Զորն էին բարձրացնում աթաթերիան...

Այդ կազմում էր միայն ու միայն կեռասենու բունը։

Կեռասենին հսկայի շալակն էր։

Ռումբերը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ երկաթի կտորներ, կշռաքարեր, ցիգանի մեխեր և այլն։ Դրանք վերև էր բարձրացնում գեղջկուհին։

Ապստամբների աչերը բաւականութիւնից փայլում էին. ընդհանուր ոգևորութիւնը տիրել էր Սատանի Զորին։

Վերջապէս հսկան քրտնքից ամբողջովին ջուր կտրված թընդանօթը տեղ հասցրեց։

— Օ՜հ... սրա... տնքալով բացականչեց նա մահաբեր զէնքը գետին գլորելով։

Ամենքը մօտեցան և սկսեցին դիտել թնդանօթը։

Մի քանի հատ էլ այդպիսի թնդանօթներ կային, որոնք միւս ամրութիւնների համար էին նշանակված և դրանք դեռ քաղա-

քումն էին։ Այդ մէկը վերև էին բերել, որ ոյժը և հեռու խփելու ընդունակութիւնը փորձեն։ Ուստի բարձր տարան, որտեղից կարելի էր ռմբակոծել ճանապարհն ու լեռնային մերկ ձորերը։ Թընդանօթը լցրին և դեռնից ցցեր խփելով կապեցին ցցերից. վերջապէս յետևը մի փոս փորեցին թնդանօթածիդն թաղցնելու համար։

Ապստամբներն անհամբերութիւնից այրում էին։ Նրանք ուզում էին որքան կարելի է շուտ լսել բոլգարական առաջին թընդանօթի որոտը։ Մանկական ուրախութիւնն ու անասելի հրճիռանքը տիրել էր ամենքին։ Մի քանիսը արտասուում էին...

— Լսեցէ՛ք, ազէ՛րք, բալկանեան առիւծը որոտաց թէ չէ՛, նրա ձայնը կցնցէ Սուլթանի գահը և ամբողջ աշխարհին կազդարարէ, որ Չին-Պլանեան ազատ է... ասաց Սատանի Զորի պահակների հրամանատարը։

— Այդ որոտը կարթնացնէ Սարեմի հովիտը, մեր միւս եղբայրներին ու կյիշեցնէ նոցա իրենց պարտականութիւնը։ Նոքա զէնք կառնեն և ընդհանուր թշնամու դէմ կելնեն, ասաց միւսը։

— Այստեղից մենք կիշխենք ամբողջ հովտին... Ապա՛ թող թուրքերը երևան, բոլորին կտոր-կտոր կանենք։

— Ո՛չ մէկին կենդանի չենք թողնի, գոռաց Բորիմիչկան, շարունակելով կարմրած դէմքից քրտինքը գլխարկով սրբել։

Թնդանօթը լեռ բարձրացող հսկան մեր հին ծանօթ Իվան Բորիմիչկան էր։ Գնդակները բերողը, նրա կինը։

Նրանք դեռ մի ամիս առաջ իրանց անձնական գործերով Կլիսարի էին տեղափոխուել, բայց շուտով յետադարձեցին։

Թնդանօթածիդը պատրաստուում էր պատրոյգը կպցնել։

— Կա՛ց, Դելչո՛, երեխայքն ու կանայք կվախենան, պէտք է նրանց զգուշացնել, ասաց կոշկակար Նէագիլը։

— Ուղիղ ես ասում, ծայն տուին միւսները, քաղաքը պէտք է մարդ ուղարկել իմացնելու, այնտեղ չգի կանայք կան...

— Էլ ի՞նչ կարիք կայ մարդ ուղարկելու, ժամանակ կորցնելու, ով բարձր ձայն ունի, թող այստեղից ձայն տայ, ամենքը կիմանան։

Բորիմիչկան ուրախութեամբ լանձն առաւ այս նոր պաշտօ-

նը։ Նա հարցրեց թէ ի՞նչ պէտք է յայտարարուի, լաւ սովորեց և գնաց քաղաքին մօտիկ բարձրութիւններից մէկը։ Այնտեղ նա ծրգուեց ամբողջ հասակով, կրծքի խորքից շունչ քաշեց, թոքերում օդ հաւաքեց, գլուխը յետ գցեց, բաց արեց լայն բերանն ու պարզ հասկանալի կոչեց.

— Էյ — հէյ, մարդի՛կ... իմացէ՛ք, որ մենք փորձի համար պէտք է բոլգարական թնդանօթն արձակենք... Թող կնիկմարդիկ ու երեխերքը չվախենան, այլ՝ ուրախանան։ Ճաշիկները դեռ ևս չկան... Դարշելիները դեռ չեն երևում...

Նա մի քանի անգամ կրկնեց այս յայտարարութիւնը։ Բորիմիչկայի զօրեղ ձայնին պատասխան տուեց Բալկանների արձականը։ Ձայնը քաղաքի բոլոր տները մտաւ։

Ամբողջ քաղաքն զգուշացնելուց յետոյ, գործի անցան։

Դելչօն կրակ արեց, մի մեծ կտոր բամբակ վառեց, անցկացրեց մի երկար ձողի և թնդանօթին մօտեցրեց։ Բամբակը ծխում էր և օդի միջից դէպի երկինք ուղարկում ծխի մի կապոյտ ամպ... Սրտի տրոփիւնով ապստամբները սպասում էին պայթիւնին։ Ոմանք հեռու փախան, մի քանիսը նոյնիսկ հպարտումբերի յետևը թաղնուեցին, որպէսզի ոչինչ չտեսնեն, ուրիշները մատներն ականջները կոխեցին, ձեռքերով աչքերը փակեցին... Մի քանի վայրկեան ամենքի ջղերը սարսափելի լարման մէջ էին... Կապոյտ ամպը բարձրանում էր պատրոյքի մօտից, բայց վերջինս չէր կպել... Սրտերն այնպէս էին խփում, որ կարծես այս է կպայթեն... Այդ տանջալից դրութիւնն անտանելի էր դառնում...

Վերջապէս, սպիտակ բոցը պատրոյգին հասաւ, վերջինս բոցավառուեց և յանկարծ... Թնդանօթը թոյլ, կարծես նեղացած, եղեղան — ճաքճաքոցի պէս մի ձայն հանեց, խիստ նման կոտրատուող չոր տախտակի ձայնին... Թնդանօթը ծխի խիտ ամպով էր ծածկուած...

Այդ հիւանդոտ հազից յետոյ թնդանօթը թաքեց և լռեց։ Մի քանի քայլ միայն հեռու թռաւ... Ապստամբներից շատերն այդ ձայնն իսկ չէին լսել...

Դժբախտ փորձը ցոյց տուեց արտիլլերիայի թերութիւնները։ Շնորհիւ դորան սկսեցին միւս թնդանօթներն ուղղել։ Երկաթէ

կապեր զարկին, իսկ մի քանիսը ներսից թիթեղով պատեցին։ Նոյն օրն ևեթ ամեն մի ամրութիւնը երկուական թնդանօթ բարձրացրին, պինդ լցրին, ամրացրին դեռնին և թնդանօթաձիգի համար յետևը փոսեր փորեցին։

Ամեն մի թնդանօթը միայն մի՛ անգամ կարելի էր արձակել և այն, մի յայտնի, որոշ կողմը։

XXXI.

ԳԵՐԻՆ.

Մինչ այդ Սատանի Ձորի պաշտպաններն իրանց ուշադրութիւնն այլ կողմ դարձրին։ Նրանցից շատերն արևելք էին նայում, ուր բլուրի ստորոտում երեք մարդ էր երևում։ Նրանցից երկուսը զինաւորուած ապստամբներ էին, երեի հեռաւոր կէտերում կանգնած պահնորդներ, իսկ երրորդը, որին քշում էին իրանց առջևից, ոչնչով զինուորի նման չէր։ Ակնյայտնի էր, որ դա գերի էր։

Ամենքը հետաքրքրուեցին և սկսեցին ուշադրութեամբ այդ մարդկանց դիտել։

Շատով երեքն էլ հասան վերևի ամրութիւնները։

Ամենքը շրջապատեցին նոր բերած գերուն։

Դա մի բոլգար էր փոքր հասակով, ապուշի արտայայտութեամբ, վախեցած դէմքով, մաշուած վարտիկով և աբայով ու ղլխին սեղմած ֆէսով։ Շալակին մի տոպրակ կար, մահուդի և այլ կտորտանք, թել, մկրատ և դերձակի այլ պիտոյքներ լցրած։

— Լրտե՛ս է, լրտես է, խօսեցին Սատանի Ձորի պաշտպանները։

— Դեռ բոլգարացի էլ է, զայրոյթով ասում էին միւսները։

— Դրան ինչո՞ւ այստեղ բերիք, այդ շանը. պէտք է տեղն ուտեղը գլուխը ջարդէիք, կոչեց երրորդը։

— Ո՛չ, ո՛չ, կարելի է դա մեզ որևէ նորութիւն կայտնի. այ, թող ասէ. իրան ո՞վ է ուղարկել... իսկ գնդակն իր ժամանակին կուտէ ու կուտէ... ձայն տուին ուրիշները։

Մոտեցաւ ամբութեան իշխանաւորը, դա ինքն էր գլխաւոր հրամանատարը։

— Դրան ո՞րտեղ բռնեցիք։

— Հովտում, գետի մօտ. թփի տակ պահել էր, պատասխանեցին երկու հեռաւոր պահնորդները։

— Տոպրակինն ի՞նչ է, նայե՞լ էք։

— Մահուդի կտորներ են, ուրիշ ոչինչ։

— Նա դիտամբ է առել այդ բաները, որ բռնելու դէպքում անմեղ ձևանայ, նկատեց մէկը։

— Դա լրտես է, նորից կրկնեցին միւսները։

— Տաճիկներն են ուղարկել, որ մեր դիրքն ուսումնասիրէ, տեսէք, ի՞նչպէս է վախեցել ու ճահճի գորտի պէս, աչքերը չռել։

Եւ իսկապէս, երկիւղից դէրին ցնորւել էր։ Դողդողալով նա յիմար ու անմիտ հայեացքներ էր ծգում շրջապատող ապստամբների վրա։ Նա այն մարդու տեսքն ունէր, որ ո՛չ լսում էր, ո՛չ հասկանում շուրջը խօսածն ու կատարուածը։

Գլխաւոր հրամանատարը քննական հայեացք ծգեց նրա վրա։

— Ձերդ ողորմածութիւնը ո՞րտեղացի է։

Անծանօթը լուռ էր։

— Ես քեզ հարցնում եմ, ո՞րտեղացի ես, բարկացած կրկնեց հրամանատարը։

Դէրին շրթունքները շարժեց, կարծես ուզում էր մի բան ասել, բայց ոչինչ չասաց...

— Համր է, ասաց մէկը։

— Ի՞նչ համր. երբ բռնեցինք՝ այնպէս ծվվաց... Դրա ձայնի վախից փորն է ընկել, բացատրեց պահնորդներից մէկը։

— Լսի՛ր, եթէ այժմ էլ չպատասխանես, թէ ո՞րտեղից ես և ի՞նչ ես փնտռում, կհրամայեմ, որ քեզ շան պէս գնդակահար անեն, կոչեց գլխաւոր հրամանատարը։

— Դէ ասա՛, խօսիր, գնդակները մեզ ուրիշ մարդկանց համար են հարկաւոր, կոչեց Իվան Բորիմիչկան, որ արդէն համբերութիւնը կորցնում էր։

Գլխաւոր հրամանատարը խստութեամբ Իվանին նայեց։

Այստեղ անխուսափելի վտանգի երկիւղը դերու լեզուն կապող սարսափին զերազանցեց և նա մեծ դժուարութեամբ, անկապանկապ արտասանեց։

— Ես... Ես... Սպիտակ-Եկեղեցուց եմ...

— Սպիտակ-Եկեղեցուց է, ասաց հրամանատարը։

— Եթէ Սպիտակ-Եկեղեցուց է, այդ կարևոր է։

— Այո՛, այո՛, արդէն երեք օր է, այնտեղից տեղեկութիւն չկայ։

— Սրան ո՞վ կարող է ճանաչել։

— Նիդելչեվին կանչեցէք։

— Սարկաւա՛գ, սարկաւա՛գ, կանչեցին ամէնքը երեսը հողաթմբերինց մէկին դարձնելով, ուր մի քանի ապստամբներ ինչ-որ փորում էին։

Իսկոյն մի երիտասարդ ապստամբ մօտեցաւ, յեղափոխականի թեթև հագուստով։

Դա մեզ Ծանօթ Վիկենտի սարկաւագն էր, այժմ Նեդելչեվ աշխարհական անունն էր կրում։

— Նեդելչե՛վ, ճանաչո՞ւմ ես այս պարոնին, հարցրեց հրամանատարը։

Վիկենտին դերուն նայեց և ասաց.

— Թւում է, որ Սպիտակ-Եկեղեցում տեսել եմ։

— Ի՞նչ մարդ է։

— Լաւ չեմ ճանաչում։

— Անունն ի՞նչ է։

— Զգիտեմ։

— Էյ, անունդ ի՞նչ է։

Բայց դերու լեզուն նորից կապ էր ընկել։ Նա ոչինչ չկարողացաւ արտասանել։

— Էլ ի՞նչ ժամանակ կորցնենք այս անասունի վրա, այստեղ լրտեսելու է եկել։ Թող մի կողմ տանեն, հաշիւը վերջացնեն։

— Բայց կարևոր է իմանալ, թէ Սպիտակ-Եկեղեցին ի՞նչ դրութեան է, նկատեց հրամանատարը։ Սուրը հանելով, նա դէմ արեց դժբախտի վզին և կատաղաբար կոչեց.

— Պէտք է խօսե՞ս թէ չէ...

— Կոմա... կո՞մա... կո՞մա... թոթովեց դերին։

— Ի՞նչ է դուրս տալիս։

— Հասկացայ, սպասեցէք, ասաց Վիկենտին և մոտեցաւ դերուն։

— Կոմսին ճանաչում ես։

Կոմս... կոմս...

— Ով է այդ կոմսը, հարցրեց հրամանատարը։

— Սպիտակ-Եկեղեցում Օգնեանովին են «կոմս» ասում, այդ անունը նրա վրա Գենովիվայի ներկայացումից յետոյ մնաց, բացադրեց սարկաւագը։ Ապա դարձաւ դերուն.

— Ուրեմն դու կոմսին ճանաչում ես, նա էլ քեզ է ճանաչում։

— Ճանաչում է... ճանաչում է... կոմսը... այս անգամ աւելի հաւանական արտասանեց դերին։

— Դէ սրան տարէք Օգնեանովի մօտ, նրա ամրութիւնները, ասաց հրամանատարը։ Բորիմիչկա, այս անասունին տարէք Օգնեանովի մօտ, թող քննէ, իսկ յետոյ, ինչ ուզում է անէ։

Այդ խօսքերը լսելով դերին մի կրկնակի զգացման արտայայտութիւն ընդունեց — հանդստութիւն ու սարսափ։

Տասնուհինգ րոպէ չանցած, Բորիմիչկան դերուն արևելեան ամրութիւններից մէկը բերեց, ուր հրամանատարը Օգնեանովն էր։

XXXII.

ՆՈՐ ՔՆՆՈՒԹԻՒՆ.

Այդ ամրութիւնը Սատանի-Զորի ու Հին-գետի արանքում ընկած բլրի վրա էր և ռազմական տեսակէտից նոյն նշանակութիւնն ունէր, ինչ-որ Սատանի-Զորինը, այն առաւելութեամբ սակայն, որ այնտեղից երևում էր արևելքում մերկ բլուրների յետևը կանաչին տուող Սարեմի հովտի մի մասը։

Ամրութեան պաշտպանները, թուով երեսուն հոգի, վհատուած, մտաղբաղ, այս ու այն կողմն էին շրջում։ Միւս ամրութիւնների պէս, յուսահատութիւնն այստեղ էլ էր տարածել իր թևերը։

Օգնեանովը դեղջուկի շորեր հագած, երկու անբաժան ատրճանակները մէջքը խրած, հոգաթումբերի վրա կանգնած, հեռադիտակով հովիտն էր նայում։ Նրա ուշադրութիւնը գրաւել էր ինչ որ մի կապտագոյն ծով, որ ոմանք ընդունեցին հրդեհի տեղ։

Օգնեանովը ցած թողեց հեռադիտակը, հոգաթումբից իջաւ և մոտեցաւ փնթփնթաց։

Այդ րոպէին նա տեսաւ Բորիմիչկային դերու հետ։

Նրա դէմքին մի ակամայ ժպիտ խաղաց։

Նա ճանաչեց Ռադէ Պերզլէտին։

Ռաչկօն երէկ դուրս էր եկել Սպիտակ-Եկեղեցուց դէպի Ռահմանլարի, որ տաճիկների համար կար անէ, մի ազատ զբաղմունք, որը Սպիտակ-Եկեղեցու շատ չքաւորներին ապրուստի միջոց էր տալիս։

Իր միամտութիւնից, նա ոչինչ չէր հասկացել թէ՛ Սպիտակ-Եկեղեցում, թէ ուրիշ տեղերում կատարուածից, ուստի ապուշ կարուեց, երբ Ռահմանլարում կարի պատուէրների փոխարէն զրգռուած տաճիկներից մի քանի բռունցք ստացաւ և ամենակոպիտ հայհոյանքներով դուրս արուեց։

Դատարկաձեռն տուն չդառնալու համար, նա մտածեց Կլիսարի մտնել, որ հեռու չէր. բայց, տաճիկ ծիաւորների պատահելով, վախեցաւ և ծռուեց դէպի Հին-գետը, որ այնտեղից Կլիսարի գնայ։ Այսպիսով նա առաջապահ պահնորդների ձեռքն ընկաւ։

Բորիմիչկան բարեխիղճ զեկուցում արեց։

Օգնեանովը խոժոռ դէմքով Ռաչկօին դիմեց.

— Այստեղ ի՞նչ գործ ունես։

Ռաչկօն արդէն քիչ սիրտ էր առել։ Թէև նրա մտքում դեռ ևս մնացել էին անդուր յիշողութիւններ Օգնեանովի մասին, բայց այդքան զինաւորուած ու թշնամաբար տրամադրուած աւազակների մէջ (Ռաչկօն բոլորին աւազակների տեղ էր ընդունել) Օգնեանովը նրան համարեա իր մարդը, նոյնիսկ բարեկամը թուաց... Ռաչկօի լեզուն բացուեց և նա մեծ դժուարութեամբ պատմեց իր ողիսականը։

Բոյչօն ուրախացաւ, երբ լսեց, որ նա Սպիտակ-Եկեղեցուց է գալիս։

— Սպիտակ-Եկեղեցում ի՞նչ լուրեր կան։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, փառք Աստծու... ոչինչ։

Այդ «ոչինչը» կարծես Օգնեանովի գլխին սառը ջուր ածեց։

— Մի՛ խաբիր, ուղիղ ասա։

— Ոչինչ չկայ, կարող ես հանգիստ լինել, ոչինչ չկայ։

Ինչպէ՞ս, մի՞թէ այնտեղ ոչինչ չէ պատահել։

— Հաւատա՛, ոչի՛նչ... կուզե՞ս երդւեմ...

— Այս էլը ոչինչ չգիտի, վրդովւած մտածեց Բոյչօն, բայց արդեօք ուղի՞ղ է խօսում, թէ՞ ճիշտ որ Թուրքերն են ուղարկել։ Այդ ի՞նչպէս է պատահել, որ նա կարողացել է այս տեղերը գալ, իսկ ուրիշները չեն կարողանում։

Եւ նա կրակոտ, քննական հայեացքով դէրուն նայեց.

— Լսի՛ր, ճշմարիտն ասա՛, թէ չէ, կհրամայեմ, գլուխդ քարով փշուր-փշուր կանեն, ասաց նա բարկութիւնից կարմրած

— Ո՛չ ուսուցի՛չ, դրան ի՛նձ տուր, մէջ մտաւ Բորիսիչկան, դրա գլուխն ինձ հարկաւոր է, ես ձեռքերով կպոկեմ թնդանօթիս ռումբ կանեմ, թող Ռահմանլարի թռչի, տեսածը Թուրքերին պատմէ...

Եւ հսկան ագահութեամբ աչքերը Ռաչկօին դարձրեց։

— Ամե՛ն, ամե՛ն բան կպատմեմ... սարսափահար փնթփնթաց Պաչկօն։

— Ասածս մի՛տդ պահիր, կրկնեց Օգնեանովը։

— Միտս է, մի՛տս, քեզ ասում եմ, միտս է...

— Ճշմարիտ է՝ որ դու Սպիտակ-Եկեղեցուց երէկ ես դուրս եկել։

— Երէ՛կ, երէ՛կ, արևն այ այստեղ էր։

— Ի՞նչ լուր կար Սպիտակ-Եկեղեցում։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, հանգիստ եղիր։

— Ստեփչովից ինչո՞ւ հեռացար։

— Դուրս արեց, Աստուած նրա պատիժը տայ։

— Ինչո՞ւ դուրս արեց։

— Նրա վրա գնդակ էին արձակել... դրա համար վռնդեց... Մի՞թէ դու չես լսել, որ Ստեփչովի վրա թնդանօթ էն արձակել... Ես արդէն քնել էի, թէ սուտ ասեմ, կախիր, յանկարծ մի բան,

ռեռռ... ձայնից զարթնեցի... կուզե՞ս ասեմ, զցողն ո՞վ էր... Ես միայն աղնուութեան համար եմ ապրում...

Ո՞վ էր։

— Բժիշկը։

— Բժիշկ Սոկոլովը։

— Սոկոլովը, այո, նա ինքը։

— Լռի՛ր, լիմա՛ր։

— Ես քեզ ասում եմ, Սոկոլովն էր, թող ես Ռաչկօ Պերդլեար չլինեմ, թէ սուտ եմ խօսում... Մարդս միայն աղնիւ անուան համար է աշխարհումս... Նա Սոկոլովն էր, դէմքից էլ, արջից էլ ճանաչեցի...

— Ի՞նչ արջ։

— Մի՞թէ չգիտես։ Նրա արջը... նորից բռնել է... արջն առաջից էր վազում, ինքը յետքից...

Օգնեանովը նրան ձեռքով արեց, որ լռէ։

— Երէկ Սպիտակ-Եկեղեցուց դուրս գալուցդ առաջ ո՞ւմ տեսար։ Սոկոլովին տեսա՞ր։

— Տեսայ, բայց ո՛չ երէկ, նախանցեալ օրը, նեմեցի հետ էր, իր տունը մտան։

— Այնտեղ ո՛չ մի աղմուկ չկա՞յ։

— Ոչինչ չկայ։

— Թուրքերին չե՞ն սպասում։

— Ոչ մի շուն չկայ։

— Բէյը ոչ ոքի չէ՞ բանտարկե՛լ։

— Չեմ լսել։

— Ուրեմն ամեն ինչ խաղաղ է։

— Ես քեզ ասում եմ, հաւատա՛ ինձ...

— Այնտեղ մարդիկ ի՞նչ են խօսում։

— Մարդիկ լաւ են խօսում...

— Ի՞նչպէս թէ՝ լաւ։

— Ամեն մարդ իր գործին... օրինակ՝ ես... ընտանիքի տէր եմ, տոպրակն ուսս գցեցի ու հա՛յդէ գիւղերն աշխատանքի... կարելի է մտածես, թէ ամօթ է... ի՞նչ ամօթ... կոմս... Ռաչէօ Պեր-

տլեռոն նոյնն է... պատուով, ազնիւ... Որովհետև մարդս ինչու համար է ապրում... լաւ անունի համար...

Օգնեանովը դարձեալ նրան ընդհատեց.

— Սարսափելի շատախօսն ես, լսի՛ր, խմբագիրն այնտե՞ղ է։

Ռաչկօն զարմացքով աչքերը չռեց.

— Բեզպորտևը, բացադրեց Բոյչօն։

— Ո՞վ։

— Ղափասրդը։

— Նրան էլ տեսայ...

— Ո՞րտեղ տեսար։

— Գանչօի, Տէր-Նեստորի ու Ստրանգեվի Գուլիբալեան փողոցից անցնում էին...։ դուրս գալիս, նրանց պատահեցի...

— Նրանք ի՞նչ էին անում, յուզուա՞ծ էին, խռովուած հարցրեց Բոյչօն, որ աշխատում էր այդ ապուշի բերնից գոնէ մի փոքրիկ տեղեկութիւն ստանալ որևէ մօտիկ շարժումի մասին Սպիտակ-Եկեղեցում։

Բայց Ռաչկօն դարձեալ չգիտէր, ի՞նչ պատասխանէ.

— Նրանք ի՞նչպէս էին գնում, արագ թէ՞ դանդաղ, փոխեց հարցն Օգնեանովը որ աւելի հասկանալի լինի։

— Ինչպէս բոլոր մարդիկ... Ո՞վ էր նրանց յետևից ընկել...

Բոյչօն չարացած, ձեռքերը սեղմեց։

Մի անօգուտ հարց էլ տալուց յետոյ նա համոզուեց, որ չի յաջողի ոչինչ իմանալ այն հասարակ պատճառով, որ Ռաչկօն ոչինչ չէ հասկացել, նաև այն պատճառով, որ Սպիտակ-Եկեղեցում ոչինչ չկայ։

— Ուստուցի՛չ, սրան ի՞նչ անենք, ի՞նչ ես հրամայում, հարցրեց Իվան Բորեմիչկան։

— Իվան, դու գնա՛ քո տեղը, իսկ սա թող այստեղ մնայ։ Սա լրտես չէ, այլ ուղղակի յիմար աւանակ...։

Լսելով, որ սարսափելի Բորեմիչկային հեռացնում էն, Ռաչկօն աւելի ազատ շունչ քաշեց։

— Ես, կոմս... Ների՛ր... կարող եմ և այս թափառականների համար կար անել... Եթէ գործ լինի... աշխատանքն ամօթ չէ... Եւ մարդը... եթէ ազնիւ է... քանի որ պատիւ ունի...

— Ի՞նչ թափառականներ, խստութեամբ հարցրեց Բոյչօն։

Ռաչկօն ձայնը ցածրացրեց։

— Ա՛յ, սրանք, այս աւազակները... Աստուած հեռու տանի... ուզում էին արիւնս խմեն... և նա աչքերով ցոյց տուեց ապստամբներին։

— Հողաթումբերի վրա սրան աշխատանք տուէք, հրամայեց Օգնեանովը և հեռացաւ։

XXXIII.

ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ.

Տասնապետը մօտեցաւ Օգնեանովին։

— Ի՞նչ կայ, Մուրչեվ։

— Բանը վատ է, շշնջաց տասնապետը. Ամրութիւններում կարգապահութեան ոգին սկսում է թուլանալ։

Օգնեանովը յօնքերը կիտեց։

— Ով ուրիշներին յուսահատեցնէ, մահւան պատիժ կստանայ... ասաց նա վրդովուած։ Ո՞ւմ ես նկատել, Մուրչե՛վ։

Տասնապետը չորս անուն տուեց։

— Կանչի՛ր դրանց։

Մեղադրեալները եկան։ Դրանք արդէն հասակաւոր մարդիկ էին — արհեստաւորներ ու առևտրականներ։

Օգնեանովն աչքերը սևեռեց նրանց վերա և հարցրեց.

— Պարոննե՛ր, այդ դո՞ւք էք ժողովրդին փչացնում։

— Մենք ոչ ոքի չենք փչացնում, բարկացած պատասխանեց նրանցից մէկը։

— Գիտէ՞ք դուք, թէ այսպիսի ճակատագրական րոպէին ինչպէս է պատժւում նման արարքը։

Նրանք ոչինչ չպատասխանեցին, բայց այդ լռութիւնն աւելի շուտ յամառութիւն էր արտայայտում, քան երկիւղ։ Օգնեանովի դէմքը յանկարծ բարկութիւնից բորբոքուեց, բայց նա իրան զսպեց և հանդստութեամբ ասաց.

— Գնացէ՛ք տեղերդ, պարոննե՛ր... մենք յեղափոխութիւն սկսեցինք, այժմ արդէն ուշ է զղջալը... Թշնամուն պէտք է դիմաւորենք այստեղ և ձեզանից ոչ ոք Կլիսարի կողմը թող չնայէ... Դուք միայն այն ժամանակ պաշտպանած կլինիք ձեզ և ձեր ընտանիքը երբ աներկիւղ այստեղ կմնաք, և ոչ տուն դառնաք: Խնդրում եմ՝ ինձ դժւար դրութեան մէջ չդնէք:

Ապստամբները չէին հեռանում:

Օգնեանովը զարմացած նրանց նայեց: Ակնայայտնի էր որ այդ բողոք էր:

— Էլ ի՞նչ ունէք ասելու:

Ապստամբներն իրար նայեցին, ապա նրանցից մէկը խօսեց.

— Մենք կողմնակից չէինք այս բանին:

— Ես ամբողջ կեանքումս ձեռքս հրացան չեմ առել, աւելացրեց միւսը:

— Մեզանից ո՞վ է հրացան գործածել որ...

— Մենք արիւն թափել չգիտենք...

— Վախեցա՞ք, հարցրեց Օգնեանովը, կարծելով որ այդ հարցով նրանց կամաչեցնէ...

— Ամօթ խօտ չէ, եթէ ասենք որ...

— Վախեցա՞նք, այո՛, չարութեամբ ասաց առաջինը:

— Մենք կնկայ, երեխի տէր ենք...

— Մեզ մեր կեանքը հարկաւոր է, համարեա՝ բարկացած աւելացրեց նրանցից մէկը, աւելի համարձակ:

— Ձեր կեանքն էլ, ձեր երեխաներն էլ, տներն էլ, Բոլգարեայի ազատութեան և որ գլխաւորն է Բուլգարիայի պատուի առաջ ոչ մի գին չունեն, դողդոջուն ձայնով կոչեց Օգնեանովը: Ես ձեզ կրկին խնդրում եմ, փոքրոգութիւն մի՛ անէք և ինձ մի՛ ստիպէք ձեր դէմ ծայրահեղ միջոցների դիմել:

— Մենք ո՛չ մի ժամանակ հրացանների հետ գործ չենք ունեցել, բունթ չենք սարքել

— Այժմ ի՞նչ էք ուզում:

— Որ մեզ արձակես:

— Մենք ոչ մի անդամ մարդու վրա գնդակ չենք արձակել, այդ մեր գործը չէ՝:

Օգնեանովը տեսաւ, որ քաղցր խօսքերով նրանց յամառութիւնը չի կարող կոտրել... բարկութիւնից նա կրակ էր կարել, բայց իրան զսպում էր: Նա ցաւօք սրտի համոզուեց, որ միայն խորը յուսահատութիւնն ու կռւի սարսափը կարող էին այդ փոքրոգիներին այնքան համարձակութիւն տալ, խոստովանելու հրամանատարի առաջ իրանց վախկոտութիւնը, առանց ամօթից կարմրելու:

Այդպիսի խոստովանութիւնից մինչև կատարեալ ահաբեկումը միայն մի քայլ է անում: Նա որոշեց անխնայ վարուել:

Պէտք էր վարակման առաջն առնել, նախ քան ամենքին կը-վարակէր: Կարգապահութիւնն ամենի՛ց առաջ:

— Պարոննե՛ր, կատարելո՞ւ էք ձեր պարտքը, թէ՞ ոչ, վճռապէս հարցրեց նա:

Եւ մռայլ հայեացքով, սրտի տրոփիւնով պատասխանի էր սպասում:

Այդ րոպէին նրա յետևն անսպասելի աղմուկ լսուեց:

Նա յետ նայեց. Բորեմիչկան դաշտավայրում մի ցիգանի հետևն էր ընկել: Մեւս ապստամբներն ևս խմբուած նրանց էին նայում և աղաղակներով Բորեմիչկային խրախուսում էին, որը չնայելով իր հսկայական քայլերին, չէր կարողանում հասնել թեթևաշարժ, ոտաբոբիկ ցիգանին... Մի քանիսը հրացանը նրան ուղղեցին, բայց Օգնեանովը չթողեց: Երևում էր, որ փախստականը մինչև այժմ Կլիսարիում թագ էր կացել և այժմ ուզում էր որեւէ թրքական գիւղ ապաստանել: Ապստամբութեան սկզբի օրերին փախած ցիգաններն առաջինն էին, որ թուրքերին լուր բերին Կլիսարիի ապստամբութեան, նաև ապստամբների ոյժի և զիրքերի մասին: Նրանց շահերն ու ծագումը դրդում էին, նոցա տաճիկների հաւատարիմ դաշնակիցը լինել...

Բորեմիչկան շարունակում էր հետևել ցիգանին, հսկայական թռիչքներ էր գործում և տարերքի պէս առաջ էր թռչում... Բայց ցիգանը նրան գերազանցում էր և քանի գնում հեռանում էր ամրութիւնից... Այժմ արդէն գնդակն էլ նրան չէր հասնիլ: Բայց յանկարծ նա անվճռականութեամբ կանգ առաւ, դէմը երկու ապստամբներ երևացին որ առաջապահներից էին. ցիգանը երկու

կրակի մէջ ընկաւ։ Նոյն բոպէին Բորեմիչկան վրա հասաւ, երկու թաթերով բռնեց ու գետին գլորեց։ Ամրութիւններից ուրախ բացականչութիւններ լսեցին... Նրան ձայն էին տալիս.

— Այստե՛ղ, այստե՛ղ, այս կողմը բե՛ր։

Բարկութիւնից կատաղած Բորեմիչկան ցիգանին քշում էր և միաժամանակ հայհոյանքների կարկուտ տեղում նրա գլխին — որ ամրութիւնների վրա պարզ լսւում էր։

Շուտով փախստականին բերին։

Ապստամբները շրջապատեցին նրան։ Գաղանային զգացմունքները կենդանութիւն տին նոցա տխուր դէմքերին։ Այդ ցիգանին ամենքը ճանաչում էին։ Դա արդէն երկու անգամ փորձ էր արել Կլիսարիից փախչել, առաջին անգամ, ինչ որ գաղտնի յանձնարարութեամբ որ նորան տւել էր կոնակից քաղաքում բռնւած թուրքը և այժմ նա բանտարկւած էր։ Այս անգամ նորան ներելու ոչ մի հիմք չկար։

Ամրութեան գլխաւորը տասնապետին դարձաւ և մի քանի բոպէ ցածր ձայնով խօսում էր։

— Այո՛, այո, վերջացրեց Օգնեանովը, այժմ որսէ գիշում և ներում վնասակար է։ Մահւան տեսքը կարելի է փոքրոգիներին աւելի սիրա տալ համարձակութեամբ մահու դէմ ելնելու... բայց դատավճիռը պէտք է զինւորական խորհուրդը տայ։ Մարչեվ, այս բոպէիս գնա՛ Սատանի-Զորը և գործի եղելութիւնը պատմիր... իմ կարծիքը և խնդիրը — մահն է, մա՛հ, շո՞ւտ...

Տասնապետը գնաց։

Օգնեանովը խիստ տեսքով ասաց ապստամբներից մէկին, մի ծերունու.

— Մարինէ պապի, այս ցիգանին վերցրու ու վերան հսկի՛ր։

Ապա երկու երիտասարդ ապստամբներին դարձաւ.

— Տղե՛րք, սրանց, այս նոցին ողորմածութիւններին, այս երկչոտներին տարէք այն կողմը, հրացանները առէք և հսկեցէք մինչև հիտևեալ հրամանը։

Զորս խռովարար ապստամբները սփրթնեցին, բայց հնազանդեցին և պահպարժեցին դէպի իրենց բանտարկութեան տեղը։

XXXIV.

ՄԿՐՏԻՉԸ.

Օգնեանովը սաստիկ յուզւած, հողաթումբերի վրա այս ու այն կողմն էր գնում։ Նրա դէմքը — նիհար ու դժգոյն, խորը վիշտ ու մտահոգութիւն էր արտայայտում։

Նա մօտեցաւ ապստամբների մի խմբի, որ եռանդով նոր փորւածքներ էր անում, մեքենաբար նրանց նայեց և առանց նկատելու Ռաչկոի բարեկամական ժպիտը, նորից հողաթմբի վրա բարձրացաւ, հեռադիտակով արևելք նայեց և դէմքի աւելի ևս պաղած գծերով ցած իջաւ, գնաց իր տեղը։

— Ի՞նչ մարդիկ են, ի՞նչ մարդիկ են, փնթփնթում էր նա։

Մարչեվը վերադարձաւ։

— Մահւան դատավճիռ, ասաց նա շունչը կտրւած։

— Զինւորական տաեանը կարդաց։

— Այո՛, մա՛հ առանց յետաձգելու, աւելացրեց Մարչեվը բարձրը ձայնով, ասպա ինչ-որ փսփսաց Օգնեանովի ականջին։ Օգնեանովը գլխի շարժումով դրական պատասխան տւեց։

«Մահ, առանց յետաձգելու» — խօսքերն ուրիշ մարդիկ էլ լսեցին. շշուկը տարածւեց և կալանաւորների ականջին հասաւ։

Նոքա, որ առաջ դժգոյն էին, այժմ դունատւեցին ինչպէս պատը։

Նրանք հասկացան, որ հանաք անելու միտք չունեն Զինւորական Տաեանը միանգամից մեծացաւ, ինչ-որ սարսափելի, հրսկայական, ճակատագրի պէս անյողդողդ դարձաւ։ Միայն Ինքն Աստուած էր նրանից աւելի մեծ թւում։

Մի ապստամբ Օգնեանովին մօտեցաւ.

— Կալանաւորները զզջում են և ներումն են խնդրում։

Օգնեանովը չոր պատասխանեց.

— Դատավճիռը կայացել է... այժմ արդէն ուշ է... ապա նա հրամայաբար աւելացրեց.

— Բրայկով, Նեադուլին, Բլագոյին և Իսկրովին հետդ առ,

այդ դատապարտեալներին ծորը տարէք, որ այնտեղ Զինուորական Ատեանի վճիռը կատարուի:

Բրայկովը այդ ամենից բաւական զարմացած ու շփոթուած, գնաց իշխանաւորի հրամանը կատարելու:

Ոչ մի ձայն այլևս 'ի պաշտպանութիւն դատապարտուածներին չլսուեց... Ոչ ոք չէր ուզում, որ իրան էլ նրանց համամիտ կարծեն: Ամենքն էլ զգում էին, որ այժմ իրանց կեանքն ու մահը Զինուորական Ատեանից է կախուած — որը միակ ու անբեկ դատաւորն է:

Դատապարտուած ապստամբները չորս պահապանների ուղեկցութեամբ ամրութիւնից դուրս եկան և ծորն իջան:

— Ցիգանին էլ այնտեղ բերէք, ձայն տուեց Օգնեանովը:

Ապա նա ցածր ձայնով ինչ որ հրամաններ տուեց տասնապետին, որը դրանից յետոյ, նոյնպէս իջաւ ծորը:

Կառափնատեղին մի փոքրիկ տափարակ էր, առուակի ափին: Համարեա ամեն կողմից ժայռեր ու խոռոչներ էին բարձրանում: Օգնեանովի ամրութիւնը վերևն էր, դէպի արևմուտք: Բոլոր ապստամբները խմբուեցին հովտի մօտ և սկսեցին դիտել կառափնարանը:

Առուակի ծախ կողմը կայծակից կիսով չափ այրուած մի կաղնի կար:

Երկու ապստամբները նախ ցիգանին կաղնուն մօտեցրին, բանդեցին նրա կարմիր գօտին և նրանով ցիգանին կաղնուն կապեցին:

Սարսափից Թշուառականի ատամներն իրար էին կպել:

Ձեղքուած շրթունքներից արիւնը դուրս ցայտեց:

Նրանից ոչ հեռու կանգնած էին չորս բոլոր դատապարտեալները: Նրանք իրանց հերթին էին սպասում: Կենդանական երկիւղը նրանց դէմքն այլանդակել էր:

Մարչեվը կանչեց.

— Դրանց էլ այստեղ բերէք:

Դատապարտեալներն առաջ շարժուեցին: Բայց նրանցից երեքը հազիւ էին ոտքերը քարշ տալիս. ստիպուած թևերից բռնեցին և բերին տասնապետի ցոյց տուած տեղը:

Մարչեվը նրանց շարքով կանգնեցրեց — տասը քայլ դիջանեց հեռու... Երևի նրա համար, որ լաւ տեսնեն իրանց առաջի սոսկալի տեսարանը. շուտով իրենք էլ պէտք է այդպիսի տեսարան ներկայացնէին վերևը խմբուած ընկերների համար:

Նրանց չկապեցին: Բայց ահը նրանց քարացրել էր և փախուստ տալը մտքերից անգամ չէր անցնում: Եւ այդ յիրաւի, անկարելի էլ էր:

Մի բոպէ գերեզմանային լռութիւն տիրեց:

— Մօտեցէ՛ք, հրամայեց Մարչեվը դատապարտեալներին ուղեկցող վեհ զինուած ապստամբներին:

Նրանք կարգով մօտեցան:

Մարչեվը բարձրաձայն և հանդիսաւոր կերպով յայտարարեց.

— Ցիգան Մահմեդը, Կլիսարցի որ մեղադրւում է երէք անգամ բանդից փախուստ տալու փորձի մէջ, բուլղարեայի թշնամիներին ծառայութեան մտնելու զզուելի նպատակով, դատապարտւում է բարձրագոյն Ատեանի կողմից մահուան, որ օրինակ լինի իր նման դաւաճաններին:

Ապա դարձաւ չորս դատապարտեալներին:

— Պարոննե՛ր երեսներդ Մահմեդին դարձրէ՛ք:

Նրանք մեքենաբար հրամանը կատարեցին:

— Սրանց ամեն մէկին մի-մի հրացան տուէք...

Ապստամբները յուզուած, մի-մի հրացան տին:

Դատապարտեալներն ապուշ կտրուած, հրացաններն առան:

— Այժմ դրան գնդակահար արէ՛ք. ես կհաշուեմ. մէ՛կ, երկուս, երե՛ք...

Հրացանները պայթեցին և չորս դատապարտեալները ծխի մէջ կորան:

Ցիգանը ինչպէս կապած էր, այնպէս էլ մնացել էր: Ո՛չ մի գնդակ նրան չէր դիպել: Աւրծակողները երևի նշան չէին դրել: Բայց ցիգանը մեռելի նման էր

— Ամո՞թ է պարոններ, բարկացած բացականչեց Մարչեվը, մի անգամ է՞լ...

Եւ նա հրամանը կրկնեց: Հրացանները նորից պայթեցին... Ցիգանը գլուխը թեքեց ձեռքերը ցած գցեց:

Վերևը ծափահարեցին։

— Ձեր պատիժն այս անգամ այն էր, պարոններ, որ արիւնով մկրտուիք... Շնորհակալ եղէք Օգնեանովի մեծահոգութիւնից և Զինուորական ատեանից ողորմածութեան համար։

Երբ դատապարտեալներն հասկացան, որ մահից ազատ են, խոր քնից նոր զարթնած մարդու պէս ինչ որ տարօրինակ ու երկչոտ հայեացք ձգեցին իրենց շուրջը։

Շուտով սակայն, երջանկութեան ժպիտը փայլեց նրանց դունատ դէմքին։

Ամբութիւնների վրա նոր, ուրախալից ծափահարութիւններ հնչեցին։

XXXV.

ՍՏՐԵՄԻ ՀՈՎԻՏԸ ԲՈՅԱՎԱՌԻԵՑ.

Զարմանալի է... տարօրինակ է... անբացատրելի... ի՞նչ կայ Սպիտակ-Եկեղեցում։ Մեռածի պէս լուռ են։ Լռւռ... Սարսափելի լռութիւն է, տարսափելի... ենթադրել անգամ չեմ կարող որ նրանք ձեռքերը ծալել են և «խելօքութիւն» են բանեցնում... Չէ՞ որ այդ ապուշը ճշմարիտ էր խօսում, բոլորովին ճշմարիտ... բայց չէ՞ որ այնտեղ են Սոկոլովը, Պապովը, այնտեղ է խմբագիրը... այնտեղ են իմ բաղէները, փորձուած երիտասարդներս, ապ գլուխները... ինչի՞ն են սպասում, գուցէ ի՞նձ... իսկ եթէ ես չգնամ, եթէ գետնի տակն անցնե՞մ, մի՞թէ նրանք ձեռքերը ծալած պիտի նստեն... կամ նրանք խուլ ու կոյր են, ոչինչ չե՞ն տեսնում։ Կլիսարին ապստամբել է, Կապրովշչինը ապստամբել է, Պանագիւրիշչէն վառւում է, Միջին-Լեռը կրակի մէջ է։ Միայն Ստրեմի հովիտն է քնած։ Կամ գո՞ւցէ որևէ դժբախտութիւն է պատահել, որևէ անսպասելի արգելք։ Բայց այդ անկարելի է։ Եթէ Սպիտակ-Եկեղեցին չի կարող ապստամբել, գոնէ մի օգնական խումբ կուղարկէր, թէկուզ տասը հոգուց... այդ միւսներին էլ սիրա կրտար... բայց նա կանգնած է, չի շարժւում... բոլոր տեղեկութիւն-

ներն այդ են հաստատում... իսկ որպիսի սարսափելի ոգևորութիւն էր տիրում... որպիսի լուրջ պատրաստութիւններ. նոյնն էր ասենք և ամեն տեղ։ Ժանտախտը, Աստուծոյ մնէծքը Բոլգարեաստի վրայ է կախ ընկել...

Տաճկի շոր հագած, այսպիսի մռայլ մտքերով, Օգնեանովը Հին-Գետի ձորի միջով զգուշութեամբ դուրս էր գալիս Ստրեմի Հովիտը։

Արդէն կէսօր էր, երբ Օգնեանովը հովիտ իջաւ, Ամբողջ հովիտը ծառերի սաւերների մէջ էր սուզուած։ Բիւրեղ ու փեթ վրտակներ հոսում էին կանաչի վերայով կաղնեայ խիտ ծառների միջից։ Օդը յագեցած էր վարդերի բուրմունքով։

Լազուր երկինքն ու արևի ուրախ փայլը երկրային դրախտի պէս հովիտը սքանչելի ու սիրաւէտ էին դարձնում։ Բայց այդ բոլորը անցորդի ուշադրութիւնը չէր գրաւում. նա ոչինչ չէր տեսնում...

Ճանապարհը Ռահմանլարի թուրք գիւղից էր անցնում, որ Կլիսարիի ամենամօտն էր, Նա համարձակ գիւղ մտաւ։ Վարդի պարտէզներից անցնելիս, նրան մի քանի զինաւորուած թուրքեր կանգնեցրին. դրանք պահապաններ էին։

— Որտեղից ես գալիս։

— Ալտենովից։

— Ո՞ւր ես գնում։

— Աքիեվո... Այնտեղ խաղող է։

Աքիեվոն Սպիտակ-Եկեղեցուն ամենամօտ թուրքի գիւղն էր։

— Փա՛ռք Աստծու, այնտեղ խաղող է։

Ցաւից Օգնեանովի սիրտը կծկուեց։

— Աւելի լաւ է գիւղում կա՛ց, առաւօտ Կլիսարիի վրա պիտի յարձակուենք։

— Տեսնեմ... Աստուած յաջողի...

Եւ Օգնեանովը գիւղ մտաւ։

Փողոցներում անսովոր կենդանութիւն էր տիրում։ Թուրքերը ոտքից գլուխ զինուած այս ու այն կողմն էին վազվզում։ Սրբազարները բաղմութեամբ լիքն էր։ Խանութները, պանդոկները, նոյնպէս լիքը։ Պարզ էր, որ հարևան գիւղից հարիւրաւոր թուր-

քեր էին այստեղ հաւաքել, Կլիսարիի վրա յարձակում գործելու։ Ռահմանլարին նրանց հաւաքատեղին էր։ Սարսափելի նախազգացումով, Օգնեանովն աշխատում էր աւելի դրական տեղեկութիւններ հաւաքել Սպիտակ-Եկեղեցու մասին։ Այդ նպատակով նա մի պանդոկ մտաւ, որի տէրը Սպիտակ-Եկեղեցուց էր։ Բայց դաւաճանութիւնից վախենալով, շուտով այնտեղից դուրս եկաւ։ Նա շարունակեց առաջ գնալ, հայեացքով թուրքերի որևէ խումբ որոնելով, որտեղ կարողանար ամբոխի մէջ կորչել և հարկաւոր բաներն իմա[illegible]։ Պատահմամբ նա մղկիթ հասաւ, որ բազմութեամբ լիքն էր։ [illegible]ուրան էլ էր ամբոխը խռնել և էլի շարունակում էին գալ ու գալ։ Կարգ էր որ այստեղ ինչ-որ արտաքոյ կարգի բան էր սպասւում։ Օգնեանովը հասկացաւ, որ «խոջան» քարոզ պէտք է ասէ, որպէսզի ժողովրդի մէջ վառէ վայրենի ֆանատիկոսութիւնը։ Մի անդիմադրելի հետաքրքրութիւն տիրեց նրան և նա աղօթողներին խառնուեց։

Օգնեանովը չսխալուեց։ Մի բոպէ չանցած քարոզիչը բարձրացաւ փայտէ ամբիոնը։ Օգնեանովը տեսաւ, որ դա սովորական, գիւղացի խոջա չէ, այլ, Պոլսի մի «սոֆտա», որ հաւանականօրէն յատկապէս այդ նպատակով էր Կարլովոից եկել։

Իսկոյն լռութիւն տիրեց։

Սոֆտան հանդիսաւոր կերպով սկսեց.

— Հաւատացեալնե՛ր։ Կար ժամանակ, մեր մեծ սուլթանների փառաւոր թագաւորութեան օրերին, երբ ամբողջ աշխարհը գողում էր Օսմանլիի միայն անունից։ Արևելքն ու Արևմուտքը նրա՛ առաջ էին խոնարհւում, ծովերը նրան էին ուղարկում իրանց նաւերները, թագաւորներն ու թագուհիները երեսների վրա ընկնում և լիզում խալիֆի գահի առաջի սրբազան հողը։ Մե՛ծ էր այն ժամանակ Ալլահն ու իր սուրբ մարգարէն՝ Մահմէդը։ Ինչպէս երևում է մենք շատ ենք մեղք գործում Տիրոջ առաջ, անհաւատների հետ եղբայրանում ենք և նրանց օրէնքներն ընդունում... և ահա՛ Աստուած մեզ թողեց, որ ոտքի տակ տրորուածները մեզ ոտնակոխ անեն, անպատիւները մեզ անպատուեն ու հայհոյեն... Ալլա՜հ, իլ-Ալլա՜հ... Առաքի՛ր մեզ Ազրայիլ հրեշտակի կրակէ սուսերը, որ Արևելքն ու Արևմուտքը քո թշնամիների արիւնով ողողենք, ծովերը ներկենք ու երկինքը փառաւորենք... այդ է իմ խօսքը, ուղափառնե՛ր։ Սրեցէ՛ք սրերդ, աղօթելով պատրաստեցէք ձեր բոլոր զէնքերը և պատրաստ եղէ՛ք որովհետև ժամը հասել է և մենք մեր ամօթը Իսլամի միակ և մեծ Ալլահի առաջ դեւերների պիղծ արիւնով պէտք է սրբենք...

Այդ ոգով ու ճարտասանական այդպիսի ոճով սկսեց ճառախօսն իր քարոզը... Նա խօսում էր երկար և հարիւրաւոր աղօթողներ լարած ուշադրութեամբ ու բորբոքած հայեացքով նրան էին լսում։

— Ահա՛ թէ այստեղ ի՛նչ է կատարւում... առանց Օգնեանովը և առանց քարոզի վերջանալուն սպասելու, փողոց դուրս եկաւ։ Ուրեմն այդ քարոզների մասին տարածւած լուրերն ուղիղ են։ Մենք տաճիկ պետութեան դէմ ենք ապստամբութիւն քարոզում, նրանց առաքեալները, բոլգար ազգին ջնջել են քարոզում։ Ուրեմն, մեր կռիւը սարսափելի պէտք է լինի. ժողովուրդ՝ ժողովրդի դէմ... էլ պէտք չէ ինքնախաբէութիւն անել... Բոլգարական հողը երկու ցեղի համար նեղ է...

Աղօթքը վերջացաւ և ուխտաւորները եկեղեցուց դուրս եկան։ Փոքրիկ խմբեր կազմուեցին, որ քարոզի առթիւ զրոյց էին անում։ Օգնեանովը դրանցից մէկին մօտեցաւ և սկսեց ականջ դնել։ Այժմ դործի էութիւնը նրա համար պարզուեց։ Կլիսարիի ապստամբութիւնն սկզբում հարևան գիւղերի թուրքերին վախեցրել է, տաճիկները կարծել են, որ Կլիսարի ռուսաց գօրք է եկել... այդ երկիւղից, նրանք սկսել են ունեցած-չունեցածը հաւաքել ու ընտանիքներով փախչել, ազատուելու համար։ Սակայն, շուտով իմացել են, որ ռայաների, մեծ մասամբ գերձակների և մի քանի ուսուցիչների հետ գործ ունեն. և այդ վերազարձրել է նրանց համարձակութիւնն ու ինքնավստահութիւնը։ Նրանք որոշել էին առանց զինուորական օգնութեան սպասելու, Կլիսարցիների հետ իրանք վերջացնեն հաշիւները։

Բացի այդ՝ Օգնեանովն իմացաւ, որ Ռահմանլարցիները հրմուտ հետախաղութիւններ են արել և որ ամբութիւնների գիրքերը ապստամբների ոյժերը թշնամուն մօտաւորապէս յայտնի են։ Տաճիկներն սպասում էին, որ միւս օրը Կարլովոից գայ թոռան-

բէյը բաշիբուզուկների վոհմակներով — և հետևեալ օրն իսկ նրանք միացած ոյժերով պէտք է վրայ տային ապստամբ քաղաքին։

Այդ տեղեկութիւններն Օգնեանովին սարսափեցրին։ Նրան աւելի ևս պարզ դարձաւ, որ անհրաժեշտ է միւս բոլգարական քաղաքներն էլ ապստամբեցնել։

Եւ Օգնեանովը դիմեց դէպի Սպիտակ-Եկեղեցի։

Գիւղից ոչ հեռու ճանապարհն իջնում էր դէպի ստուերախիտ ձորը, որը կտրում էր դաշտավայրը։ Այդտեղ իջնելով, նա թմբուկների ու երաժշտութեան խուլ ձայներ լսեց։ Երևի թրքական գիւղում հարսանիք էին կատարում։ Շուտով սակայն, ձայները կտրեցին և նա էլ մոռացաւ դրա մասին։

Բայց երբ ձորի միւս կողմն անցաւ, թմբուկներն ու փողերը նորից հնչեցին և այժմ աւելի մօտ։ Զարմացած, նա մի բլրակի վրա բարձրացաւ և մի տեսարանի ականատես եղաւ, որից մազերը բիզ-բիզ կանգնեցին։

Նրա առաջն ընկած դաշտավայրը թուրքերով էր սևացել. նրանք իրանց բարբարոսական երաժշտութեան ուղեկցութեամբ առաջ էին շարժւում։ Մի քանի Կարմիր դրօշակները ծածանում էին քամու տակ։ Բոլոր այդ ամբոխը շարժւում էր աղմուկով, առանց կարգի, ցրիւ եկած։ Բաշիբուզուկների ուսերին արևի տակ փայլփլում էին հրացանների փողերը, մանգաղներ, կացիններ նիզակներ... Կէսօրուայ շոգի պատճառով ամբոխի մեծամասնութիւնը կիսամերկ էր։ Սրանց անցած բոլոր թրքական գիւղերը ամայանում էին. — բոլոր տեղերի բնակչութիւնը խուժանին էր միանում։ Այդ խռովարար ամբոխի մէջ ոչ մի կարգ ու կանոն չկար, բայց մէկ վայրենի ու կատաղի նպատակ կապում էր նրանց, առաջ էր մղում և ոգևորում։ Արիւն ու աւար։ Հրացաններ էին առել նրանք, որ արիւն թափեն, իրար յետև շարուած անթիւ սայլեր էին տանում, որ աւարը բերեն... Առաջից ձիով գնում էր առաջնորդը, նիհար, սև, բարձրահասակ մի մարդ։

Նա ցիգաններին ձեռքով նշան արեց, որ լռեն։

— Էյ, մուսուլման այստեղ արի՛, կանչեց նա Օգնեանովին։

Օգնեանովը մօտեցաւ, խոնարհ գլուխ տալով։

— Որտեղից ես դալիս։

— Թէքէից։

— Ի՞նչ կայ այնտեղ։

— Ոչի՛նչ... փառք Աստծու, ամեն բան լաւ է։

— Ո՞ւր ես գնում։

— Կարլովո։

— Մեզ հետ արի՛։

Օգնեանովն ակամայ սփրթնեց։

— Բէյ էֆենդի, թո՛ղ...

— Դարձի՛ր կանչեց Թոռան-բէյը, ձին ասպանդակեց և առաջ անցաւ։

Խուժանը նորից շարժւեց. փողերն ու թմբուկներն հնչեցին։

XXXVI.

ԷԼԻ ՄԻ ՓՈՐՁ.

Նոյն երեկոյեան Թոռան-բէյի բանակը Ռահմանլարի հասաւ։ Ճանապարհին նա աւելի ստուարացաւ նորա մոլեռանդութիւնն աւելի սաստկացաւ։ Ռահմանլարում էլ միացաւ նրան սպասող մի նոր խուժան։ Այդպիսով հետևեալ օրը երկու հազարից աւելի թուրք պիտի յարձակուէր Կլիսարցիների վրա։

Գիւղն ամբողջովին լցել էր եկեղներով։ Նոր հիւրերի հագիւ թէ կարողանար ընդունել։ Գիշերը պարզ էր, ուստի և շատերը բաց երկնքի տակ քնեցին։

Ակամայ նոյնն արեց նաև Օգնեանովը։

Նա մենակ պառկած էր պանդոկի դիմացը, որը պահում էր Սպիտակ-Եկեղեցու մի բնակիչ։

Պանդոկի պատուհանները դեռ ևս լոյս էին. ներսը բազմութեամբ լիքն էր։

Սակայն Օգնեանովը քնել չկարողացաւ։ Եւ վճռեց չքնել։ Գիշերը նա պէտք է փախչէր այդ խուժանի միջից։ Վաղն արդէն ուշ կլինի։ Եւ նա մաքերը լարած, մտածում էր, թէ ինչպէս ճեղքէ

անցնէ պահապանների խիտ շարքերը, որոնք պահպանում էին գիւղից դուրս տանող ճանապարհները։

Տաճկական սովորութիւններին ու լեզուին լաւ ծանօթ լինելու շնորհիւ այդ նա կարող էր անել. բայց աւաղ, դրանից ի՞նչ օգուտ, որ նա ինքն իրան ազատէ, որ ողջ ու անվնաս իր ամբոխութիւնները վերադառնայ...,

Սպիտակ-Եկեղեցին չի ապատամբի և Կլիսարին անխուսափելի կերպով կկորչի։

Այդ գիշերը Սպիտակ-Եկեղեցի գնալու փորձ անելն էլ անհնարին էր. — գիւղի արևելեան ծայրի պահապանները հրաման էին ստացել ոչ ոքի չթողնել. հրամանը խուժանից փախչողների դէմ էր ուղղուած... Հետևեալ օրուան սպասելն աւելի ևս անօգուտ կլինէր։ Եւ այսպիսի մի նշանաւոր օր նա չէր էլ կարող Կլիսարիի պաշտպանների հետ չլինել։ Նորա բացակայութիւնը փախուստ ստորութիւն կհամարէին. Ո՛չ, անկարելի՛ է։ Բայց ի՞նչպէս մի լուր հասցնէ Սպիտակ-Եկեղեցի։

Չէ՞ր կարելի արդեօք մի փորձ ևս անել, վերջին փորձ։

Եւ Օգնեանովը ուղեղը լարած, մտածում էր։

Յանկարծ նրա միտքը լուսաւորուեց։

Թէև մտածուածն իրագործելը մեծ դժուարութիւն էր ներկայացնում, բայց խնդիրն այնքան լուրջ էր որ արժանի էր և՛ ջանքերի և՛ վճռականութեան։ Այո՛, մեծ վճռականութեան, որովհետև ամենից առաջ նա ստիպուած էր իր վիճակը հաւատալ մի այնպիսի պանդոկապետի, որն յուսալի մարդ չէր։ Նա վճռեց խնդրել պանդոկապետին, որ իր որդիներից մէկին Սպիտակ-Եկեղեցի ուղարկէ։

Բարեբախտաբար նա ծանօթ էր պանդոկապետին ու նրա ընտանիքին, որովհետև մեծ որդու ուսուցիչն էր եղել։

Նա վերկացաւ, մտաւ դարպասը, անցաւ բակը և մօտեցաւ խորքում գտնուած սենեակի փոքրիկ պատուհանին։ Դէպքը օգնութեան հասաւ նրան, դուռը բացուեց և մի կնոջ պատկեր երևաց։

Օգնեանովը տանտիրուհուն ճանաչեց, վերջինս տաշտով դարի էր տանում գոմը. մթութեան մէջ նա կամ Օգնեանովին չնկատեց,

կամ թուրքի տեղ դրեց, որ դուրս էր եկել իր ծիուն մտիկ տալու։

Օգնեանովը մօտեցաւ և բոլգարերէն որոշակի ասաց.

— Բարի երեկոյ, Աբրամիցէ մօրքուր։

Նա զարմացած, աւելի շուտ վախեցած յետ դարձաւ։

— Ինձ չէ՞ք ճանաչում, մեղմ ձայնով հարցրեց Օգնեանովը կնոջը հանգստացնելու համար և ասաց իր անունը։

— Ձեր Նանկայի ուսուցիչն եմ, Օգնեանովը...

— Ո՞վ ես, կոմսը, հարցրեց կինն ապշած և տաշտը ցած դրեց. դու այստեղ ի՞նչ ես անում։

Բայց իսկոյն նա ուշքը վրան հաւաքեց։

— Գնանք, նե՛րս գնանք... քիչ սպասի՛ր ծիուն դարի տամ յետոյ գնանք...

Մի րոպէից Աբրամիցէն ու Օգնեանովը նեղլիկ նախասենեակից մտնում էին մութ, փոքրիկ սենեակը։

Տանտիրուհին զարկեց լուցկին, վառեց նաւթէ ճրագը, որ իսկոյն լուսաւորեց սենեակն ու հիւրին։

— Այս դուռը մեր այգին է տանում, իսկ այնտեղ ցանկապատից կարող ես փողոցը թռչել... Ցամենայն դէպս այդ գիտցի՛ր, թէ հարկաւորուի, շշնջաց Աբրամիցէն և Օգնեանովին մի ցած դռնակ ցոյց տուեց, որով մարդը միայն մինչև մէջքը կռացած կարող էր անցնել...

— Բայց այստեղ ի՞նչ գործ ունես, հարցրեց նա հիւրին։

— Կլիսարիից Սպիտակ-Եկեղեցի էի գնում... Թոռան-բէյը պատահեց յետ դարձրեց։

Օգնեանովն պարտք համարեց, տանտիրուհու քաղցր հիւրընկալութեան փոխարէն, կատարեալ անկեղծութեամբ պատասխանել։ Առանց այդ կնոջ օգնութեան, նա չէր էլ կարող որևէ բան անել...

— Չե՞ս կարող արդեօք վաղը առաւօտ Նանկային կամ Կուզմանին Սպիտակ-Եկեղեցի ուղարկել։

Մայրը զարմացած նրան նայեց։ Նրա դէմքին անհանգստութիւն էր արտայայտում։

— Իսկ ինչո՞ւ ես ուզում Սպիտակ-Եկեղեցի ուղարկել։

— Մի նամակ կտամ, պէտք է, տանել իմ ծանօթին, ուրիշ

ոչինչ չունեմ, կարող է իսկոյն դառնալ։ Վաղը կէսօրին նա տանը կլինի։

Այստեղ Աբրամիցէն լիշեց Բոյչօի առաջին խօսքերը և իսկոյն զուշակեց, թէ հիւրը ի՞նչ յանձնարարութեամբ է ուղում իր որդուն Սպիտակ-Եկեղեցի ուղարկել։ Նա մատանչութեան մէջ ընկաւ։

— Վարժապե՛տ, դրա համար պէտք է հօրից թոյլտուութիւն ստանամ։

— Խնդրում եմ, Աբրամիցէ մօրաքոյր, դրա մասին բայ Աբրահամին ոչինչ մի՛ ասի։ Ձե՞ս կարող Նանկային ծածուկ ինձ մօտ ուղարկես։

Օգնեանովը գիտէ՛ր որ իր նախկին աշակերտն իրան պաշտում է և վարժապետն ի՛նչ էլ խնդրէ կկատարէ։

Տանտիրուհու դէմքը խիստ արտայայտութիւն ստացաւ։

— Ո՛չ, ո՛չ, առանց Աբրահամի կամքի այդ բանն անկարելի է։

Ժամանակն անցնում էր և պէտք էր գիւղից դուրս դալու յարմար բոպէն չկորցնել։ Նա վճռեց հարցը շուտով պարզել։

— Աբրամիցէ մօրաքոյր, մի բոպէով կանչիր բայ Աբրահամին, ես նրա հետ կխօսեմ։

XXXVII.

ԱԲՐԱՀԱՄԸ.

Օգնեանովը մենակ մնաց։ Նա վճռեց Աբրահամի հետ էլ անկեղծ խօսել։

Դուռը բացուեց և պանդոկապետը ներս մտաւ։ Նրա լիքը, կարմիր դէմքի վրա ժպիտ խաղաց։

— Օ՜, կոմս, բարի լինի գալուստդ, ի՞նչպէս ես, քէֆդ, հալը՞ղ — խօսք լա՞ւ է..., Ի՞նչ հիանալի բան ես արել, որ եկել ես մեզ տեսնելու, խօսելու... Շա՞տ ուրախ եմ, շա՞տ... Ամենքս ուրախ ենք, կինս էլ, որդիկս էլ։ Արդէն կէս տարի է Նանկան

քեզ չէ տեսել։ Դու նրա վարժապետն ես, դաստիարակը... բարով ես եկել, բարով... Տես...

Պանդոկապետի հեացմունքի զեղումներին սահման չկար...

Օգնեանովը նոյնպէս հիացած էր։ Նա վստահօրէն զործին անցաւ և մի քանի խօսքով պատմեց Աբրահամին ապստամբութեան դրութիւնն ու իր խնդիրքը։

Աբրահամի դէմքը բաւականութիւնից ու հրճուանքից աւելի ու աւելի փայլում էր։

— Լա՞ւ։ լա՞ւ, հիանալի՞ է, իհարկէ։ Իսկի ասել էլ պէտք չէ։ Ո՞վ չի ուզում այդին օգնել... Նանկային ուղարկենք, նա մեծ է ու աւելի խորամանկ։

Պանդոկապետը զրպանից մի ճխլուած թղթի կտոր հանեց. Օգնեանովի առաջ մի թանաքաման դրեց և ասաց.

— Դու նամակը գրի՛ր, իսկ ես մէկ խանութը վազեմ, խօսքդ գիտես այդ շներն ի՞նչ աւազակներ են...

Օգնեանովն շտապով գրեց.

«Ապստամբութիւնն իր տաք շրջանումն է։ Ոչ մի բոպէ չուշացնէք, այդտեղ էլ իսկոյն յայտարարեցէք։ Թող մի զօրաբաժինը Թոռան-բէյի յետևից յարձակի. միւսը գիւղերն ապստամբեցնէ։ Եռանդ ու հաւատ։ Շուտով ես էլ ձեզ մօտ կգամ Բոլգարեայի համար մեռնելու։ Կեցցէ՛ յեղափոխութիւնը։

Օգնեանով»։

Նա ինքն իրան շնորհաւորում էր յաջողութեան համար։ Ոչ մի դէպքում նա չէր կարող ենթադրել, որ Աբրահամն այդչափ հայրենասէր է ու պատրաստ ազգի օգտին աշխատելու։ Նա այժմ անհամբերութեամբ ականջ էր դնում և սպասում, թէ ե՞րբ կդան հայր ու որդին։

Յանկարծ հարևան սենեակում սիրտ կտրատող կանացի մի ձայն լսուեց։

Օգնեանովը ցնցուեց։

Նա ճանաչեց Աբրամցէյի ձայնը։

Ինչով պէտք էր բացադրել այդ աղաղակն ու հեկեկոցը։

Ակամայ երկիւղը պատեց նրան։

Նա նորից ականջ դրեց։ Այս անգամ նախասենեակից ինչ-որ ոտքի խուլ ձայներ լսեց։

Նա մօտեցաւ ցածլիկ դռանը և հրեց։ Դուռը չբացուեց։ Նա հրեց աւելի ուժով։ Դարձեալ չբացուեց, կարծես մեխած էր։

Սարսափը տիրեց Օգնեանովին. ամբողջ մարմնով դող անցաւ։

— Դաւաճանեցին, մատնեցին ինձ, հեծեծաց նա։

Այդ րոպէին փոքրիկ դրան յետևը ինչ որ ձայն լսուեց. կարծես բանալիք էին դնում։ Ցանկարծ դուռը բացուեց և գիշերային քամին ներս փչեց։ Օգնեանովը հայեացքը մութ անցքին էր յառել. — այնտեղ մի գլուխ երևաց։

Դա Աբրահամցէն էր։

— Դուրս արի, շշնջաց նա կամացուկ,

Որքան էլ որ լամպը թոյլ էր լուսաւորում, այնուամենայնիւ Օգնեանովը նկատեց, որ կնոջ աչքերին արցունք էր փայլում։

Նա դուրս եկաւ այդին։

— Ահա այս կողմը, ցածր ձայնով շշնջաց Աբրամցէն ցոյց տալով ցանկապատի մօտի սալօրենին։

Եւ ինքն անյայտացաւ խաւարի մէջ։

XXXVIII.

ԳԻՇԵՐԸ.

Արդէն կէս գիշերն անց էր, երբ Օգնեանովը վերջապէս հասաւ իր ամրութիւնը։

Պահապանները թէև պառկած տներից բերած գորգերի վրա, դեռ արթուն էին։ Եափունջիների մէջ փաթաթուած, հայեացքներն անլուսին, աստեղազարդ երկնքին ուղղած՝ ցածր ձայնով զրուցում էին։ Առանց մի ձայն հանելու, Օգնեանովն անցաւ նրանց մօտից և ֆիզիքապէս ու բարոյապէս ջարդուած՝ մեռածի պէս գետին ընկաւ։

— Ասուա՜ծ իմ, Ասուա՜ծ իմ, մտածում էր նա, ցրտից եափունջու մէջ փաթաթուելով. հանդամանքների ո՞րպիսի դասաւորութիւն, ի՜նչ հիասթափումներ... ի՜նչ դաւաճանութիւններ... Եւ սրանից յետոյ արի՛ ու սեփական կեանքիդ մասին մտածիր, պահպանիր քեզ... վաղը կռիւն է և հետևանքն արդէն այսօր ես նախատեսում եմ...

Պաղ քամին տխուր շոյում էր նինջ երկիրը։

Շրջակայ լեռները խուլ ու չարագուշակ աղմուկ էին արձակում, որից գերեղմանային խաւարն աւելի ևս խօլանում էր։ Կարծես բոլոր լեռները, ժայռերն ու հովիտները սարսափահար արնքում էին։ Երկնքում աստղերը երկիւղով ու անհանգստութեամբ բրփրտում էին։ Ժամանակ առ ժամանակ գիշերային հաւն ընկնում էր թփերի մէջ և նորից տիրում մեռելային խաւարը։

Միայն լեռնային քամին է փչում հողաթումբերի տակ պառկած ապստամբների գլխին. նրա խուլ ձայնը կարծես հեռաւոր տեղից եկած հառաչ լինէր, որ հիւանդագին արձագանք էր տալիս ապստամբների հոգում. նրանք վախեցած վեր էին թռչում ու գիշերային խաւարի մէջ շուրջը դիտում։

Եւ անհանգիստ նինջը նորից տիրում էր նրանց՝ լի սարսափի դժգոյն ուրուականներով, որպէս զի նորից ընդհատուի պաղ ցողից և քամու սառցային համբոյրներից։

XXXIX.

ԱՌԱՒՕՏԸ.

Զնայելով իր հոգեկան անհանգիստ դրութեանը, Օգնեանովն մի երկու ժամ խորը քնի մէջ էր ընկղմուած։ Ասում են, այդպէս կարողանում են քնել նաև մահուան դատապարտուածները՝ գլխատման օրամտին։

Լուսաբացին նա զարթնեց և շուրջը դիտեց։ Բնութիւնը արթնանում էր։ Լուսը ծագում էր։ Գունատ — կապտագոյն երկրնքից անհետացաւ վերջին աստղը ևս...

Օգնեանովը վեր կացաւ, նայեց այծի մորթիների ու եափունջիների մէջ փաթաթուած ապստամբներին և քայլերն ուղղեց դէպի Սատանի-Զորը։ Նա գնում էր զինուորական խորհուրդ՝ դրութիւնը քննելու։

Առաւօտ էր։ Արևը դիպաւ։

Ամրութեան վրա բոլոր ապստամբներն արդէն ոտքի վրա էին և տասնապետի հսկողութեամբ սկսել էին աշխատանքները։ Նրանք նոր հողաթումբեր էին փորում, որովհետև իրանց թիւն այդ գիշեր եկած մի փոքրիկ խմբով ևս աւելացաւ. ուստի և նոր հողաթումբեր հարկաւորուեցին։

Ապստամբներն այսօր աւելի աշխոյժ տեսք ունէին։ Մարչևը նրանց ասել էր, որ Օգնեանովը նոր հեռախուզութիւններ է արել Թէքէի միւս կողմը և դրականապէս իմացել է, որ այսօր Սպիտակ-Եկեղեցին էլ պէտք է ոտքի կանգնի...

Այդ տեղեկութիւնը որոշ չափով եռանդ ներշնչեց։ Երիտասարդները սիրտ առան, դէմքերն ուրախութիւնից փայլեցին և մի քանիսը նոյն իսկ սկսեցին ծիծաղաշարժ երգեր ասել։ Բոլգարացուն յատուկ իւմորը երևան եկաւ...

Ցանկարժ առաջապահներն սկսեցին պայմանաւոր նշաններ տալ, որ թշնամին երևացել է։ Նրանցից երկուսը վազեցին դէպի Սատանի-Զորը, մանրամասնութիւնները Զինուորական Ատեանին հաղորդելու։ Նրանք Սատանի-Զորը հասան թէ չէ՝ Ռահմանլարի կողմից տաճկական երկու ձիաւոր զօրախմբեր երևացին՝ քսանական հոգուց կազմուած։ Նրանցից մէկը ճանապարհով էր գալիս, միւսն՝ անտառով։ Ապստամբները յուզմունքով էին դիտում, թէ արդեօք դրանց յետևից թշնամու նոր ոյժեր չէ՞ն երևալու։ Բայց դեռ ոչ ոք չկար։

Իսկոյն երկու հետիոտն զօրախմբեր, տաճիկներից աւելի գերազանց թիւով, ամրութիւնից ցած իջան թշնամուն դիմաւորելու։ Երրորդ խումբը Սատանի-Զորից հասաւ օգնութեան։

Տաճիկները կանգ առան, երբ տեսան բոլգարական զօրախմբերը և սկսեցին յետ քաշուել։

— Քրաիներները կոխեց, — ուրախութեամբ խօսեցին մի քանի բոլգարներ։

— Այսօր էլ կռիւ չի լինի...

— Ինչ թուում է, որ Սպիտակ-Եկեղեցին արդէն սրանց շատ գլխացաւանք է պատճառել...

Եւ ամրութիւնների վրա նորից աշխատանքը եռ եկաւ, նորից սկսեցին ուրախ խօսակցութիւնները։

XL.

ԿՌԻԻԸ.

Արևն այրում էր։

Մարտկոցի աջ կողմում Օգնեանովն ու ու մի քանի ուրիշ ապստամբներ քրտնակոխ՝ շտապում էին նոր հողաթումբը վերջացնել։ Ինչպէս ասացինք, դեռ գիշերը Զինուորական Ատեանը տասը մարդուց բաղկացած մի նոր խումբ ևս նրանց օգնութեան էր ուղարկել։

— Վարժապետ, ծայն տուեց նրան յիսուն տարեկան մի գեղջուկ։

Օգնեանովը նրան դարձաւ։

— Ի՞նչ ես ուզում, Մարինէ պապի։

Վերիդովցին նրան մի ծալած թուղթ տուեց։

— Քեզ նամակ կայ։

— Ո՞վ է բերել, հարցրեց Օգնեանովը թուղթը չբացած։

— Իվան Բորեմիչկան։ Նա գիշերուանից քեզ էր որոնում, բայց չգտաւ, ինձ տուեց և խնդրեց, որ գաս թէ չէ՝ քեզ յանձնեմ։

— Զասա՞ց ումնից է։

— Վարժուհուց։

Օգնեանովի սիրտը ցաւից կծկուեց։ Նա ջղաձգութեամբ արձակեց թուղթը և ուզում էր դէն ձգել, բայց տեսնելով, որ շրջապատողները նայում են, գրպանը կոխեց։ Ապա տենդօրէն աշխատանքին կպաւ, որ հոգեկան ծանր տանջանքները խեղդէ...

— Եւ այսպիսի ժամանակ ո՞ւրտեղից լոյս ընկաւ այդ Ռադէն... ինչո՞ւ է նամակ գրում, ենձանից ի՞նչ է ուզում... Չէ՛ որ

ես կռուից յետ չեմ գնայ, Թշնամու առաջից չեմ փախչի... չէ՞ որ պէտք է մեռնեմ... Չէ՞ որ այս բոլորն ինձ համար շուտով կվերջանայ...

Այդ բոպէին ապստամբների շարքում ինչ-որ մի առանձնակի բան տեղի ունեցաւ: Բոլորը խմբուեցին հողաթմբերի վրա և սկսեցին անհանգստութեամբ արևելք նայել:

Օգնեանովը գլուխը բարձրացրեց և նոյնպէս սկսեց հեռաւոր բլուրները դիտել, առաջապահներն զգուշացուցիչ նշաններ էին տալիս:

Մի բոպէից յետոյ մի քանի հրացան պայթեց — պայմանական նշան, որ զօրեղ Թշնամի է երևացել:

Շուտով պահնորդներն սկսեցին յետ փախչել, վախեցած աղաղակելով.

— Թուրքե՞ր, Թուրքե՞ր, շա՞ տ են...

Ապստամբներն ահաբեկ եղան: Սփրթնած՝ նրանք սկսեցին այս ու այն կողմն ընկնել:

— Տեղե՛ր, գոռաց Օգնեանովը հրացանը խլելով:

Այս հրամանն ապստամբներին ուշքի բերեց և նրանք նորից բռնեցին իրանց տեղերը:

Շունչը կտրած եկան նաև առաջապահ պահնորդները: Օգնեանովը նրանց դէմ ելաւ:

— Ո՞վ է գալիս:

— Տաճիկները. անասելի շատ են... հազարից էլ անց... բաշիբուզուկներն ամբողջ ճանապարհը բռնել են...

Օգնեանովը նրանց աչքով արեց, որ լռեն:

— Տեղե՛ր... դէնքերդ առէ՛ք, հրամայեց Բոյչոն:

Ամենքն իրանց տեղը բռնեցին: ✓

Ճիշտ որ՝ հեռուն, գլխաւոր ճանապարհի վրա, երևաց խիտ զօրասիւնի գլուխը — սա ծգուում էր և աւելի ու աւելի երկարանում, կարծես անծայր Թրթուր լինէր... Դա Թոռան-բէյի խումբն էր... որքան շատ էր մօտենում, այնքան բազմանում էր... Թուրքերը չորս-չորս շարքով առաջ էին շարժուում, հետևերը կրելոն քսան փոքր և երեք մեծ կարմիր, կանաչ և ուրիշ գոյնի դրոշակներ... Շուտով նրանք բռնեցին Կալիից մինչև Սպիտակ-Ջուրն

ընկած ամբողջ ճանապարհը — մօտ երկու վերստ երկարութեամբ:

Ապստամբների մէջ նոր շփոթ ընկաւ. այլևս ոչ ոք չէր կարողանում իր տեղում հանդիստ մնալ: Ամենքը վեր էին թռչում և սա բսափահար՝ շուրջը — ընկերներին ու Թշնամիներին նայում:

Միայն Օգնեանովի կատաղի հայեացքն էր, որ նրանց քիչ զսպում էր:

Սև զօրասիւնը շարունակում էր առաջ սողալ. արդէն մօտեցել էր ջրհորին, ուր ամրութիւններից կարելի էր գնդակ հասցնել:

Այդ ժամանակ Սատանի-ձորից ապստամբները մի քանի հեռաձիգ հրացան պայթեցրին: Իսկոյն՝ Օգնեանովի հրամանով որոտաց նաև մեր ամրութիւնը: Թանձր ծուխը բռնեց հողաթումբերը և բարձր արձագանքը շուրջը տարածուեց:

Թրքական զօրասիւնի առաջին շարքից մի քանիսը գետին ընկան...

Այդ ժամանակ Օգնեանովը երեք մարդ նկատեց, որ իջնում էին դէպի Հին-Գետի հովիտը: Դրանք ապստամբներ էին, որ ծխից ու առաջին շփոթից օգուտ քաղելով, փախուստի էին դիմել:

Մի քանի թռիչքով նա ձորաբերանը հասաւ: Փախստականները իրար յետև շարուած ցած էին իջնում ոլորուն շաւղով:

— Ցե՛տ, յե՛տ դարձէք, թէ չէ գնդակահար կանեմ, կոչեց նա, հրացանը նրանց դարձնելով:

Փախստականները յետ դարձան և տեղերում քարացած մնացին: Նրանք իրանց հրացանները վերևն էին թողել: Օգնեանովը ճանաչեց, որ նրանցից մէկը Վիկենտիյ սարկաւագն էր աշխարհականի հագուստով: Խեղճ երիտասարդն ամօթից կաս-կարմրել էր:

Երեքն էլ մեքենաբար քայլերը յետ ուղղեցին:

— Մարինէ պապի, այդ կնամարդիկներին բեր հողաթումբերը... Եթէ որևէ մէկը ձայն հանէ, քեզ իրաւունք եմ տալիս տեղնուտեղը գլուխը ջախջախելու:

Եւ Օգնեանովը շտապով բռնեց իր տեղը:

Իշխանաւորի այդ խիստ վարմունքը միւս ապստամբներին էլ խաղաղացրեց: Նրանք մեծ ջանք զորձ դնելով միայն կարողացան ծածկել իրենց երկիւղը: Շատերը շրթունքները կծել — արիւնել էին:

Տաճիկները դեռ ևս ոչ մի անգամ հրացան չէին պայթեցրել։ Ընկերներից մի քանիսի մահը նրանց առաջին շարքերում բոպկական շփոթ առաջացրեց։ Վիրաւորներին այդիները տարան և իրանք էլ շտապով յետ նահանջեցին։

Այդ առաջին յաջողութիւնը ապստամբներին սիրտ տւեց և նրանք շարունակում էին Թշնամու դէմ կրակ տեղալ։ Հրացաններին անընդհատ որոտից լեռներն ու բլուրները զողում էին։ Բլուրների կատարները պատած խիտ ծուխը ցոյց էր տալիս ամրութիւնների իսկական տեղը։ Հրացանածգութիւնը շարունակւում էր և այն ժամանակ, երբ արդէն զնդակներն այլևս Թշնամուն չէին հասնում։

Բաւական հեռու, հետիոտն զօրքից այն կողմը մի քանի ծիաւոր էր երևում։ Դա Թոռան-բէյի գլխաւոր շտաբն էր։ Խուժանը յետ նահանջեց դէպի այն կողմը և շրջապատեց զօրավարին։ Այնտեղ խմբւած՝ բաւական ժամանակ կանգնած մնացին։ Երևում էր, որ խորհուրդ են անում և որ յարձակման ծրագիրը փոխւում է։

Վերջապէս խուժանը ալեկոծուեց և մի քանի մասի բաժանուեց։ Տւած նշանին համաձայն, այդ զօրամասերը ցրիւ եկած, կատաղի աղաղակներով, սարսափելի արագութեամբ վրա ընկան։

Մի քանիսը դէպի մերկ բլուրներն էին վազում, միւսները՝ Հին-դետի խոռոչները, որ Կլիսարի ճանապարհին էին, ոմանք՝ դէպի Սատանի-Ջորը, միւսները՝ դէպի մեր ամրութիւնը։ Դեռ ևս հեռից ապստամբները նրանց զնդակներով դիմաւորեցին, բայց Թուրքերը միայն այն ժամանակ սկսեցին հրացան արձակել, երբ տեսան, որ զնդակները կարող են տեղ հասնել։ Ծխի ամպերը Թուրքերի աչքերից ծածկում էին ամրութիւնները, բայց ապստամբների զնդակներն աւելի որ աւելի նօսրանում էին, իսկ Թուրքերինն՝ ընդհակառակը։

Օգնեանովը ցեխից ու վառօդից սևացած՝ քրտնաթաթախ, հարբած արիւնի հոտից ու գլխի վերևը Թռչող զնդակների սուլոցից խլացած՝ մէկ ուղղւում էր ու հրացանը լցնում, մէկ էլ նորից ծածկւում ամրութիւնների տակ։

Ժամանակ առ ժամանակ, առանց շուրջը նայելու, նա կոչում էր.

— Եղբարք, համարձակ, զարկէ՛ք, արձակեցէ՛ք։

Յանկարծ նա լսեց Մարինէ պապի ձայնը, որ մէկին ասում էր.

— Տղայ, ցած կաց, կռացի՛ր, հիմա քեզ կխփեն։

Օգնեանովը ակամայ այն կողմը դարձաւ և քամուց նօսրացած ծխի մէջ մի երիտասարդ տեսաւ, որ ուղիղ կանգնած՝ հրացան էր պարպում դէպի Թշնամին, առանց ծածկւելու եկող զնդակներից։

Նրա համարձակութիւնն անմտութեան էր հասնում։

Օգնեանովն ապշած՝ ճանաչեց Կանդովին։

Նա մեքենաբար ուսանողին մօտեցաւ և ծխի մէջ, ձեռքը նրան մեկնեց.

— Եղբայրս, ձեռքդ տուր։

Կանդովը յետ դարձաւ, հանգիստ, սառնութեամբ նրան նայեց և սակայն պինդ սեղմեց նրա ձեռքը։

Օգնեանովի ձեռքը Կանդովի ձեռքի վերջից տաք արիւնով ծածկւեց։

Օգնեանովն այդ նկատեց, բայց չզարմացաւ։ Նա նոյնիսկ չըհասկացաւ տաք արեան նշանակութիւնը։ Նրան աւելի զարմացրեց այն, որ նա Կանդովին այստեղ տեսաւ։

Իրաւ՝ Կանդովին այդ ամրութիւնն էր ուղարկել Զինւորական Ատեանը դեռ ևս գիշերը, բայց Բոյչօն, ամբողջովին իր գործին տրւած, նրան չէր նկատել։

Օգնեանովը յետ գնաց և շուրջը նայեց։ Այդ ժամանակ միայն նա նկատեց որ ամրութիւնները համարեա դատարկւել են։ Հողաթուքերի վրա միայն հինգ-վեց հոգի էին մնացել, որոնք շարունակում էին կրակել։ Պայթիւններն հետզհետէ նօսրանում էին նաև միւս ամրութիւնների վրա, որոնց պաշտպաններն նոյնպէս հեռացել էին։

Ընդհակառակ Թշնամու զնդակներն աւելի ու աւելի խտանում էին և հողաթմբերի տակ մնալը վտանգաւոր դարձնում։

Կատաղութիւնից խելքը կորցրած և բոլորովին յուսահատւած, Օգնեանովը մնացած մի քանի քաջերի հետ շարունակում էր անհաւասար կռիւը վճռելով, տեղնուտեղը փռւել։ Այդպիսով նրա

ամրութիւնը, որ ամենքից արևելք էր ընկած, դեռևս շարունակում էր ծխալ։

— Մայրիկ իմ, հիւանդագին հեծեծաց մէկը նրա կողքին։

Օգնեանովը հեծեծանքից ցնցւեց և այն կողմը դարձաւ։

Երեսնիվայր փռուն էր գլորւում Վիկենտին։ Արիւնը հոսում էր նրա վզից և գետինը ներկում։ Գնդակը մահացու էր։ Այդ արիւնը սրբեց նրա նախատինքը։

— Մարինէ պապը մի կողմ տարաւ նրան, որ յետոյ քաղաք հասցնեն։ Բայց ամրութեան վրա այլևս ոչ ոք չկար։

Ամայացած հողաթումբերի վրա լռութիւն էր տիրում։

Միայն քաղաքից դէպի հիւսիս և արևմուտք ընկած բարձրութիւններից լսւող հատուկտոր պայթիւնները միանում էին Օգնեանովի ամրութեան ծայներին, որն այժմ իրան էր ձգում թշնամու գնդակները ինչպէս մագնիսը քաշում է երկաթէ թեփը։

Տաճիկները առաջանում էին և անընդհատ պարպում։ Նրանք զգուշութեամբ անցնում էին խաղողի վազերով և վարդի թփերով, որոնք ընկած էին Օգնեանովի դիրքի և իրանց մէջտեղը. թագնւում էին պատահակի ժայռերի յետևը, ինքնաբերաբար պառկում էին երբ նկատում էին որ դեռ ևս որևէ ամրութիւն ծխում է։

Մէկը միւսի յետևից բռնում էին նրանք ամրութիւնները և ապստամբների կամ նրանց դիակների փոխարէն՝ զէնք, հագուստ, պաշար ու զանազան իրեր էին գտնում։ Գտան նաև կեռասի թնդանօթները, ամեն մի ամրութեան վրա երկու-երեք հատ։ Թնդանօթները պատրաստի լցրած մնացել էին, որովհետև ոչ ոքի միտքը չէր ընկել նրանց պատրոյզը կպցնելը և ոչ ոք այդքան սիրտ էլ չունէր։

Նոյն դրութեան էր և Օգնեանովի մարակոցը։

Թուրքերը երևացին և Շայկովչի բարձունքներում, և հէնց քաղաքի մօտ։

Քաղաքի փողոցներից հրացաններ էին արձակում որոնցից ընկաւ տաճիկ դրօշակակիրը և մի ուրիշ թուրք։

Բայց կռւի ու քաղաքի վիճակն արդէն որոշւած էր յօդուտ Թոռան-բէյի ու նրա խուժանի.

XLI.

Ռ Ա Դ Ա Ն.

Հէնց որ հրացանի առաջին պայթիւնը քաղաքին աղդարարեց ճակատագրական կռւի սկիզբը, ժողովուրդը սարսափահար ու ահաբեկւած առանց իրան հաշիւ տալու, փախուստի դիմեց։ Նա ուղղւեց դէպի Կապրեվշչինա, Վերմիշչենի ճանապարհով, լցւեց Միջին-Լերան կիրճը, որտեղից հոսում էր նոյնանուն գետը և քաղաքից դէպի հարաւ-արևմուտք Հին-Գետը թափւում։

Տիկին Մուրատլիյկայան որի տանն ապրում էր Ռադան, շտապով հաւաքեց իր երեխաներին և շատ թէ քիչ դին ունեցող իրերը, որպէսզի ուրիշների հետ փախչի։ Նա գնաց Ռադային ևս իր հետ տանելու։ Սակայն չնայելով սիկնոջ թախանձագին աղաչանքներին, Ռադան չէր ուզում նրան հետևել, նա վճռել էր այդտեղ մնալ։

Բարի Մուրատլիյսկա արցունքներն աչքերին ողերսում էր նրան, միասին ճանապարհւելի և չէր կարող անտէր աղջկանը մենակ, այդպիսի սարսափելի վիճակում թողնել։ Թուրքերն արդէն երևում էին բլուրների վրա և ամեն մի րոպէն թանկ էր։

— Գնա՛, գնա՛, տնիցը երեխաներին տար... խնդրում եմ, ինձ թող, պնդում էր Ռադան և տիկնոջը դէպի դուռը քաշում։

Տիկին Մուրատլիյսկայան սարսափահար նրան էր նայում և յուսահատութիւնից ձեռքերը կոտրատում։ Պատուհաններից երեւում էր ինչպէս թուրքերն արդէն քաղաք էն իջնում։ Նա չգիտէր ի՞նչ անել։

Ռադան յուսահատւած էր։

Նրա մեակ մխիթարութիւնը Ստայկայի, Բորեմիչկայի կնոջ հետ ունեցած տեսակցութիւններն էին. վերջինս նրա հարևանն էր։

Բորեմիչկան մի քանի անգամ զանազան յանձնարարութիւններով քաղաք էր իջել և այցել էր իր կնոջը. նա ի միջի այլոց, տեղեկութիւններ էր հաղորդում նաև Օգնեանովի մասին։

Այդպիսով Ռադան շուտ-շուտ Օգնեանովի մասին լուրեր էր

ստանում, որ նա կենդանի է և առողջ, որ խիստ զբաղուած է. բայց դրանից դուրս, ոչինչ տեղեկութիւն չունէր։

Որպէս դարեր երկար այդ վեց օրւայ ընթացքում տանջանքների հետ տճում էր և նրա սէրը դէպի Բոյչօն, որը նոյնքան դժբախտ էր, որքան և առաքինի ու քաջարի։ Ռադայի սէրը պաշտամունք դարձաւ։

Երեկ նա առաջին անգամ տեսաւ Իվան Բորեմիչկային, բաց արեց իր սիրտը նրա առաջ և երկար ժամանակ աղի արցունքներ էր թափում։ Բարեսիրտ Բորեմիչկան, որքան կարող էր նրան մխիթարում էր։ Խոստացաւ Ռադայի նամակն անպատճառ հասցնել Բոյչօին, բայց վերջինիցս պատասխան չստացաւ։

Փողոցում ձայներ լսեցին. Մուրատլիյսկան դուրս նայեց և տեսաւ, որ ապստամբներն էին. նա հարցրեց իր ծանօթներից մէկին.

— Բայ Խրիստօ։ վերևն ի՞նչ կայ։ Օգնեանովն այժմ ո՞րտեղ է։ Ուր ես վազում։

Ապստամբը շտապով պատասխանեց.

— Մա՜հ, կատորա՜ծ... ջա՜րդ... Օգնեանո՜վը... խեղճը վերևը մնաց... շուտ արէ՛ք դէպի Վերմեշնիցա փախէ՛ք... խօսքը չվերջացրած, Խրիստօն անյայտացաւ։

Ըստ երևոյթին բայ Խրիստօն Օգնեանովի խմբից էր։ Ռադան խելագարի պէս հեկեկաց։ Տիկին Մուրատլիյսկան նրան տանելու նոր, անօգուտ փորձանքներից յետոյ, իր անից փախաւ։

Եւ արդէն ժամանակ էր։ Ռադայի ականջին հասաւ կանացի յուսահատական աղաղակ ու ճիչ — որ գալիս էր տաճիկների գրաւած քաղաքամասից։ Վշտից խեղդւած ու թուլացած, նա կանգնել էր պատուհանի առաջ։ Այդ բոպէին բաշիբուզուկների մի խումբ անցաւ փողոցից. երկու բոլդարների տեսնելով, բաշիբուզուկները վրա հասան և երկուսի էլ գլուխը թռցրին... Ռադան լաւ նկատեց թէ ինչպէս ընկածների կոկորդից կարմիր մի բան դուրս ցայտեց... նա տեսաւ մահը, սարսափելի մահը, իր ամենասոսկալի ձևով և մահացու երկիւղը իրան էլ տիրեց...

Ինքնապահպանութեան զգացմունքը և ապրելու ցանկութիւնը տարերական ոյժով զարթնեցին մատաղ աղջկայ մէջ և խեղ-

դեցին նրա բոլոր միւս զգացմունքները, ոչնչացրին մեռնելու վճռականութիւնը, որ անծայր յուսահատութեան արդիւնքն էր։

Փախչել, շուտով փախչել մահից կամ խայտառակ կեանքից, որն անշուշտ սպասում էր նրան այդ տափոտ աւազակների ձեռքում...

Նա բացեց դուռը, որ սանդուղից իջնի, բայց հէնց այդ վայրկենին դարպասի դուռը թրխկաց և սարսափելի ճռռոցով յետ ընկաւ։ Ծառերի յետևը նա մի բաշիբուզուկ տեսաւ, նրա մօտ մի ուրիշ մարդու, — երկուսն էլ արագութեամբ դէպի սանդուխքն էին դիմում ուր կանգնած էր ինքը քարացած։

Ռադան շուտով ուշքի եկաւ, յետ դարձաւ դէպի սենեակը, դուռը վրա զարկեց, բանալիով կողպեց և ահից կիսամեռ դարձած, փախաւ հակառակ անկիւնը։ Նա հազիւ կարողացաւ այդ անել որ սկսեցին դուռը ծեծել, ջարդել... Եւ այնտեղից գաղանային մի սոսկալի ոռնոց լսւեց...

Սակայն դուռը դիմանում էր։ Դրան յետև եղածները սկսեցին կացնի նման մի բանով տախտակները կտրատել... վերջապէս՝ դիմադրութիւնը յաղթահարւած էր — դուռը ճռռաց, տրաքտրաքւեց. բացւած ճեղքից մի հրացանի փող ներս կոխեցին, սկսեցին, պտոյտ տալ, աշխատելով դուռը կտրել։

Ռադան լսում էր չոր տախտակների ճաքճաքոցը որ տեղի էին տալիս երկաթի թափին և նա տեսաւ ճեղքից ներս խրած մի ոտք։

Այդ բոպէին աննկարագրելի սարսափը տիրեց նրան և զատողութիւնը խաւարեցրեց։ Մահը նրան հազար անգամ աւելի ցանկալի թւաց, քան այն՝ ինչ որ իրան էր մօտենում... Նա դէպի սեղանը վազեց, կպցրեց լուցկին և անկիւնը վերադարձաւ։ Այնտեղ միւս սեղանի վրա մի տոպրակ կար, ամբողջովին վառոդով լիքը, որ հաւանականաբար ապստամբներն էին մոռացել թողել։

Ռադան մօտ վազեց տոպրակին, լուցկին ծախ ձեռքին առաւ իսկ աջ ձեռքի ցուցամատով սկսեց տոպրակը քրքրել որ ծակ բացանէ և կրակը վառօդին տայ։ Տոպրակը ծակւեց։

Այդ վայրկենին սարսափելի ճռինչով դուռը գետին գլորեց և հսկայական հասակով մի մարդ սենեակն ընկաւ։

Իվան Բորեմիչկան թռաւ դէպի Ռադան։

Նրա հետինը Ստայկան էր։

Ռադան նրանց ընկատեց և լուցկին վառօղին մօտեցրեց։

XLII.

ԵՐԿՈՒ ԳԵՏ.

Իսկ այդ ժամանակ Օգնեանովն արդէն հեռու լեռներումն էր։

Ամրութիւնից նա ամենքից վերջինը հեռացաւ, երբ տաճիկներն արդէն բարձրանում էին հողաթումբի վրա և նրանց միւս զօրախումբը հարևան ամրութիւնը գրաւած՝ սկսեց նրա վրա գընդով արձակել, նա՝ արիւնաթաթախ, ցեխոտուած, ծխից ու վառօղից սևացած՝ մի ինչ-որ հրաշքով կենդանի մնաց և թշնամու գնդակներից խուսափեց...

Նա մահ էր որոնում, բայց ինքնապահպանութեան բնազդը, որ այդպիսի բոպէներին աւելի զօրեղ է լինում կամքից, նրան փրկեց։

Այժմ նա Վերմիշնեցի ձախ ստորոտումն էր, որից քիչ ցած գետակն էր հոսում...

Արիւնի, քրտնքի, վառօղի ու փոշու մէջ կորած՝ նրա դէմքն այժմ արցունքներով էր լւացւում...

Օգնեանովը լալիս էր։

Նա կանգնած էր գլուխը բաց և նայում էր յեղափոխութեան խորտակման սարսափելի պատկերին։

Ներքևը, հովտում՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների ամբոխը խելագարութեան չափ ահաբեկուած, լեռներումն էր փրկութիւն որոնում։ Լացն ու կոծը պարզ հասնում էին Օգնեանովին։

Հեռուն՝ Կլիսարին բոցերի մէջ էր։

Ցանկարծ նրա հայեացքն իր աջ ձեռքին ընկաւ, որ արիւնով էր ներկուած։ Նա մտաբերեց, որ այդ Կանդովի արիւնն է։

Եւ նոյն վայրկենին նրա միտքը Ռադային դարձաւ... Սարսափը տիրեց նրան։ Նա ձեռքը գրպանը տարաւ և Ռադայի նամակը հանեց։ Բաց արեց ու կարդաց թուլացած, դողդոջուն ձեռքով գրած հետևեալ տողերը.

«Բոյչո։ Դու արհամարհանքով ինձնից երես դարձրիր։ Առանց քեզ ես չեմ կարող ապրել... Աղաչում եմ, գոնէ մի խօսք գրիր ինձ... Եթէ կհրամայես՝ կապրեմ... Ես անմեղ եմ... Պատասխանի՛ր, Բոյչո, ես սարսափելի բոպէներ եմ քաշում... Եթէ ոչ՝ մնաս բարև, մնա՛ս բարև ի՛մ պաշտելի։ Ես ինձ Կլիսարիի աւերակների տակ կթաղեմ...

Ռադա»

Սարսափելի վիշտը պատեց Օգնեանովին։ Նա հայեացքն ուղղեց դէպի քաղաքը, ուր հրդեհն աւելի ու աւելի մեծանում էր։ Քաղաքի զանազան կէտերում՝ կտուրներից բոցեր էին բարձրանում և իրանց դժգոհ-կարմիր լեզուներով օդը լիզում։ Ծխի սև ամպերը պատել էին քաղաքը և ծածկել ամբողջ երկինքը. սկսում էր վաղահաս երեկոն։ Հրդեհն արագութեամբ տարածւում էր շուրջը։ Արնագոյն վերջալոյսն արտացոլում էր Ռիբարիցի խոռոչների ու ժայռերի վրա և Հին-գետի ալիքներում... Օգնեանովն սկսեց աչքերով Մուրատլիյսկու երկյարկանի տունը փնտրել։ Շուտով նա գտաւ և սրտի սրոտիւնով ճանաչեց Ռադայի սենեակի երկու պատուհանները։ Տունը դեռ ևս հրդեհով չէր բռնուած, բայց հարևան շինութիւններն արդէն բոցավառւում էին և կրակը մօտենում էր նրան։

— Մէ՛խ, նա՛, թշուառը, դեռ ևս այնտեղ է... Սոսկալի է, սոսկալի՜...

Եւ նա ծորից ցած սլացաւ դէպի հովիտը։

Նա իջաւ, կամ աւելի ուղիղ՝ գլորեց սարից և յետ վազեց դէպի գետաբերանը, դէպի Կլիսարի։

Վերմիշնիցի լեռնանցքը երկու սեռի, ամեն հասակի ու դասակարգի փախստականներով լեցուն էր։ Այդ ահաբեկուած ամբոխը, որ ծգւել էր գետի երկարութեամբ, նոյնպէս նման էր գետի, որ հոսում էր առաջնի հակառակ կողմը։

Օդեսաւոր երկիւղն ամայացրել էր Կլիսարին և այդ լեռնանցքը մարդկանցով լցրել։

Ամենքը փախչում էին, ամենքը վազում, սարսափից խելքերը թռցրած՝ շնչասպառ եղած — կարծես քայլ առ քայլ նրանց հետապնդողներ կային։ Մի քանիսը փախուստի էին դիմել այնպէս՝ ինչպէս կային. միւսները՝ շփոթուած վերցրել էին կապոցներ, ան իրեղէններ, նոյն-իսկ բոլորովին անպէտք բաներ։ Տեղ-տեղ այդ հասել էր կոմիզմի։ Այսպէս օրինակ, մի հարուստ տանտէր թեւի տակ դրած ունէր պատի ժամացոյցը — ան ամբողջ կարողութիւնից նա այդ էր տեսել։ Մի այլ տեղ՝ մի կին մի անպէտք մաղ էր քաշ տալիս՝ որ սաստիկ խանգարում էր փախուստին։ Քիչ հեռուն, Օգնեանովը մի ծծի երեխայ տեսաւ, որը լացից կապտել էր և որին մայրը թողել էր, երեւի որպէսզի ինքն աւելի թեթեւանայ... Պառաւներ, երիտասարդ տղամարդիկ ու կանայք անցնում էին այդ թշուառ արարածի մօտից, բայց ոչ ոք նրա վրա ուշք չէր դարձնում։ Ամեն մէկը միայն սեփական անձի մասին էր մտածում...

Երկիւղը մարդկանց սիրտը քարացնում է. դա եսասիրութեան ամենաբարձր, ամենախայտառակ ձեւն է...

Օգնեանովը մեքենաբար կռացաւ, երեխին վերցրեց և առաջ վազեց... Եւ կարծես՝ ի լրումն այդ բոլորի, երկնքից սկսեց հեղեղի պէս անձրև տեղալ...

Գոռում-գոչիւնով անձրևը վրա հասաւ և լեռներն ու ձորերը վայրենի արձագանքով լցրեց։

Եղանակն աւելի և աւելի վատանում էր։ Խոռոչներից պրդտոր հոսանքներ վազեցին դէպի գետը և կիրճը լցրին... Թշուառ ամբոխը, ոտքից-գլուխ ջուր կարուած՝ ցրտից փէտացած՝ շարունակում էր փախչել լպրծիւն ցեխի միջից... Սուգն ու շիւանն աւելի ևս սաստկացան...

Ժայռերն արձագանք էին տալիս տանջանքի ու փոթորկի վայրենի ոռնոցին, որոնց միացաւ նաև վարարած գետի աղմուկը։

Ցանկարծ Օգնեանովը ճանաչեց դէմից եկող կնոջը — առաջին մարդը, որին նա կարողացաւ ճանաչել այդ ժխորի մէջ։

Դա տիկին Մուրատլիսկան էր, որ ձեռքին բռնած ունէր

ծծի երեխային. իսկ միւս երեք երեխաները գնում էին նրա յետեւից։ Օգնեանովն անցաւ պղտոր գետակն ու դիմեց տանջահար կնոջը.

— Ռադան ո՞ւր է։

Կինը բերանը բացեց, որ պատասխանէ. բայց յոգնածութիւնից չկարողացաւ ոչ մի խօսք արտասանել և միայն մատով ցոյց տուեց դէպի քաղաքը։

— Ձեր տունը, հարցրեց Օգնեանը։

— Այնտե՛ղ է, այնտե՛ղ... շո՛ւտ... դժուարութեամբ շշընջաց նա։

Տիկին Մուրատլիսկան ուրիշ ժամանակ թուլակազմ կին լինելով՝ հազիւ թէ կարողանար այդքան ճանապարհ գնալ։ Բայց այժմ ջղերի տեղ՝ եռանդն էր գործում... մօր եռանդը ոգևորում, սիրտ էր տալիս նաև նրա՝ հրեշտակի պէս դեղեցիկ մանկիկներին...

— Երեխային ո՞ւր ես տանում, հարցրեց նա թոյլ ձայնով՝ որ խլանում էր անձրևից։

Օգնեանովը նրան նայեց և այժմ միայն նկատեց, որ իր ձեռքին ինչ որ երեխայ ունի, որին քաշ է տալիս առանց հասկանալու թէ ո՞ւր։ Այժմ միայն նա լսեց երեխայի ճղճղոցը, լացը։

Նա զարմանքով նայեց տիկին Մուրատլիսկուն։

— Տո՛ւր ինձ, տո՛ւր...

Եւ կինը վերցրեց երեխային, իր փոքրիկի հետ կրծքին սեղմեց ու առաջ շարժուեց։

Արդէն մութն էր, երբ Օգնեանովը եկաւ Վերմիշևեցի գետաբերանը։ Այդ տեղից երևում էր ամբողջ քաղաքը։ Հրդեհն անձրևից հանգել էր։ Միայն տեղ-տեղ փուլ չեկած կտուրների տակ պատուհաններից կրակներ էին երևում և կարմրագոյն բոցեր արձակում դէպի քաղաքը, որ խորասուզուած էր մթի մէջ։

Ժամանակ առ ժամանակ լսւում էր փուլ եկող շինութիւնների աղմուկը... Շուտով կրակը նորից բոցավառուեց և նոր շինութիւններ բռնկեց։

Ցանկարծ Օգնեանովը քաղաքի հարաւային մասում մի նոր հրդեհ տեսաւ. բոցը ճաքճաքելով շինութիւններից դուրս էր ցայտում և միլիոնաւոր կայծեր ցրում օդի մէջ... Օգնեանովը նկա-

տեղ, որ Մուրատլիյսկու տունն այդ տեղն էր... Այո՛, այդ այն տունն էր... Մի ակնթարթում վերին յարկը դեղին ծխի ու կրակի ծովը թափեց: Վերին յարկումն էր և Ռադայի սենեակը...

Նա կատաղած՝ ընկաւ բոցավառուող փողոցները, որ արդէն լիքն էին գազանացած արիւնարբու թուրքերով և կորաւ նոցա մէջ:

ՎԵՐՋԱԲԱՆ.

I.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՑ.

Մի քանի օրում ապստամբութիւնը ամէն տեղ ճնշուած էր: Նա մեռաւ՝ նախ քան ապրիլ սկսելը:

Այդ ապստամբութիւնը նոյն իսկ պատմութիւն էլ չունէ: Այդպէս արագ կատարուեց նրա ճնշումը:

Ոսկի յոյսերը, խորը հաւատը — հսկայական ոյժը և ոգևորութիւնը — մի քանի դարերի տանջանքների պտուղը — բոլորը կորաւ ոչնչացաւ քաոսի մէջ մի վայրկեանում:

Սարսափելի՛ արթնացումն:

Եթէ այդ շարժումն իր դժբախտ հետևանքներով յառաջ չբերէր «ազատարար պատերազմը» անողոք դատավճիռը կախուած կլինէր նրա դլխին: Առողջ դատողութիւնը անմտութիւն կհամարուէր այն. ազգերը — ամօթալի, իսկ պատմութիւնը կճանաչէր մեղսալի:

Որովհետև պատմութիւնը, աւա՜ղ, միայն յաջողութեան առաջ է դլուխ խոնարհեցնում:

Միայն բանաստեղծութիւնը կներէր նորան և հերոսական դափնիներով կպսակէր, ոգևորութեան այն թափի համար, որը խաղաղ դերձակներին կեռասէնու՛ց շինուած թնդանօթներով միջին լերան կատարները բարձրացրեց:

Բանաստեղծական անմտութիւն:

Օգնեանովն արդէն երեք օր ու գիշեր թափառում էր հին պլանիայում: Նա շարունակ դէպի արևելք էր գնում, որպէս զի սպիտակ-եկեղեցի իջնէ, որի մասին նա ոչ մի տեղեկութիւն չունէր:

Խաղաղ բնակչի համար Կլիսարից մինչև սպիտակ եկեղեցին միայն վեց ժամուայ ճանապարհ է, բայց կախաղանից փախչող խռովարարի համար բաւական չէ և վաթսուն: Ցաճախ-լեռների բարձունքից երեկոյեան հեռու հորիզոնից տեսնում էր նա կարմիր արշալոյսը, որ շատ նման էր մայր մտնող արևի վերջալոյսին, բայց երբ մութը տիրում էր երկրին, լոյսը աւելի կարմրատակում պայծառանում էր: Եւ նմանում էր հիւսիսափայլին, որ հիւսուած էր հարաւում:

Այդ հրդեհների բոյն էր, որ բաղմաթիւ շէն գիւղեր մոխիր դարձրեց:

Դա մի տեսարան էր որ միաժամանակ և՛ ահռելի էր և վեհապանծ:

Օգնեանովը այս գիշեր Բալկանի կատարներից սարսափով նկատեց նոյնպիսի բոցավառումն և ամբողջ միջին լերան երկարութեամբ: Կարծես թէ լերան հազարաւոր խռովարարներից կրակ ժայթքող հրաբուղխ լինէր:

Օգնեանովը յուսահատութեամբ մազերն էր փետփետում: Աչքերը յառած դէպի հրդեհը, կորաւ Բոլդարի՝ն կորաւ, բացականչում էր նա: Ահա մեր սուրբ ջանքերի պտուղը. ահա թէ ինչ ծնեցին մեր վեհապանծ յոյսերը — արիւն և բոց: Աստո՜ւծ իմ, Աստո՜ւծ իմ:

Իսկ այնտեղ-մորմոքով դառնալով կլիսարի կողմը-յարեց նա-այնտեղ մեռաւ և իմ սիրտը... Երկու կուռք-որոց նա երկրպագում էր. երկու յոյս-արև միաժամանակ խորտակուեցին:

Մէկը ահու սարսափի մէջ մեռաւ-միւսը անարդ դաւաճանութեամբ: Այժմ ես մոլար ուրուական եմ միայն, որն իզուր որոնում է իր գերեզմանը:

Եթէ նա ուրուական էլ չէր-բայց կմախք-այո՛:

Բոլոր հովիւներին և լեռնական բոլգարներին խստիւ հրամայուած էր-կասկածաւոր մարդկանց օթեան և կերակուր չտալ:

Բոլգարները դրանից էլ աւելին էին անում. նոքա փախստականներին մատնում էին Թուրք ոստիկանների ձեռքը յաճախ նոքա այնքան խստասիրտ էին դտնում, որ մինչև իսկ վերքից ու քաղցից կիսակենդան ապստամբներին գնդակահար էին անում։

Նոյն բոլգարները դեռ երկու շաբաթ առաջ առաքեալներին, իբրև ցանկալի հիւրերի, զրկաբաց ընդունում էին։

Հին Պլանինան քաջ և ազնիւ երիտասարդների համար այլևս զորավարութ ծնող չէր — այլ չարանենդ խորթ մայր։

II.

ՄԻ ՀԱՏ ՍՊԻՏԱԿ ՀԱՏ։

Օգնիանովը զարթնեց անտառում, լերան հիւսիսային լանջին — որի ստորոտում հոսում է Օսիմա գետը։

Քաղցից ու յոգնածութիւնից նա ուժասպառ էր եղել։

Դառը խոտերը՝ որոնցով նա կերակրւում էր, նրա դայլի սխորժակն աւելի էին գրգռում։ Իսկ նրանից հարիւր քայլի վրայ դտնւում էր հովւի խուղը՝ լի հացով, պանրով ու կաթով...

Օգնիանովը ծանապարհ պէս տանջւում էր։

Նա անտառից դուրս եկաւ, անցաւ գետն ու համարձակութեամբ մտաւ հովւի խուղը։

Ներսը երկու կին կային. մէկը՝ պառաւ, միւսը՝ ջահել. երկուսն էլ ինչոր կարում էին. և երկու աղջիկ որոնք ինչոր հիւսում էին։ Շները ոչխարների մօտ էին, երևի ոչ հեռուն։

Երբ կանայք տեսան քաթանի կեղտոտ շորեր հագած, գլխաբաց, ցեխոտ դէմքով, անծանօթ մարդուն՝ երկիւղից ճիչ արձակեցին։

— Ինչ կայ, ներսից ծայն տւեց մէկը։

Եւ՝ իսկոյն հրացանը ձեռքին՝ դուրս եկաւ մի ծերունի — կկացած մակեդոնացի։

Օգնիանովը ճանաչեց ծերունի Եանին՝ որ յաճախ իւղ էր բերում Սպիտակ-եկեղեցին՝ ծախելու։ Ծերունին էլ նրան էր ճանաչում։

— Բարի առաւօտ, ծեր Եանի, ի՛ սէր Աստուծոյ՝ ինձ մի կտոր հաց տուր, շտապով ասաց Բոյչօն, որպէսզի հառկանան որ ինքը խաղաղ մարդ է։

Ծեր Եանին ուշադրութեամբ նրան նայեց։ Արդեօք այս անգամ նրան ճանաչեց՞ թէ ոչ սակայն նրա հայեացքը Օգնիանովի վրայ լաւ տպաւորութիւն չը թողեց։ Ապա՝ նա խոժոռած դէմքով կէս հաց կտրեց և ինչոր փսփսաց կողքի աղջկայ ականջին։

— Ահա՛, միայն շուտով այստեղից հեռացիր՝, թէ չէ մի վնաս կը հասնի։ Քրիստոնեա՛, քեզ այստեղ կը տեսնեն, խստութեամբ ասաց նա և հացը տւեց Օգնիանովին։

Օգնիանովը շնորհակալութիւն յայտնեց ու շտապով հեռացաւ։ Նա քայլերն ուղղեց դէպի հովիտը որպէսզի այնտեղից գնայ այն անտառը ուր գիշերն էր անցրել։

— Աստուա՜ծ իմ, մտածում էր նա, այս յոյնը, այս կեսավայրենին՝ ինձ խղճաց, իսկ բոլգարները երէկ անէծքներով ու հայհոյանքներով վռնդեցին և շներն էլ վրաս բաց թողեցին՝ կարծես գազան լինէի...

Հովտում Բոյչօն դեռից ջուր խմեց և միւս ափն անցաւ՝ որ այնտեղից անտառը գնայ։

Նա իսկոյն զգաց կերակրի բարերար ազդեցութիւնը. ոյժերը տեղն եկան։

Երբ նա բլուրին մօտեցաւ՝ լսեց՝ որ մէկն իրան կանչում է. յետ դարձաւ։ Այն բլրից՝ որտեղ հովւի խուղն էր՝ չէրքեզներ էին իջնում և նրան ձեռքով էին անում։ Նրանց առաջին դամփռներ էին վազում։

Օգնիանովը տեսաւ, որ իր կորուստը մօտ է։ Իրան յատուկ հոգեկան արիութեամբ իսկոյն պատկերացրեց իրերի դրութիւնը։ Իր և իրան հետապնդողների մէջ մի փոքրիկ բարձրութիւն կար, որը նրան մի-երկու րոպէ հալածողներից պէտք է ծածկէր Այդ կարճ միջոցում նա կարող էր անտառը հասնել, բայց դրանից ոչ մի շահ չկար, ոստիկանները դարձեալ կը հասնէին։ Փախչելով՝ դամփռներից ու գնդակներից չի կարելի ազատուել։

Իսկ հովտում, դեռի մօտ՝ երկու փլատքների մէջ կարճ թփեր էին բուսել։ Սակայն՝ թփերն էլ չէին կարող նրան թաքցնել. եթէ մարդիկ խաբուէին՝ շները չէին խաբուիլ։

Այո՝, կորուստն անխուսափելի է։

Բայց Բոյչօն երկար ու բարակ մտածելու ժամանակ չունէր. անհրաժեշտ էր որևէ բան ընտրել. բնազդմամբ՝ նա դերադասեց հովիտը և նեռի պէս՝ ցած սլացաւ։ Մի բոպէում՝ նա թփերին հասաւ։ Փլատքի տակ սևին էին տալիս մեծ-մեծ ծակեր, կարծես գետինն ամբողջովին փորփրրած էր։ Օգնիանովը արագութեամբ ներս սլքեց վայրենի գազանների բունը։ Այդտեղ նա մտադիր էր դիմաւորել իրան հետապնդողներին և իր կեանքը թանկ ծախել։

Ատրճանակը ձեռքին՝ Օգնեանովը միքանի վայրկեան շուրջն էր նայում։ Այդ վայրկեանները նրան դարեր թուացին։ Հաչն սկզբում մօտենում էր, ապա սկսեց հեռանալ և վերջապէս՝ բոլորովին կարուեց Նա սպասում էր։ Արդեօք ինչ՞ պատահեց։ Երևի իր հետքը կորցրին։ Օգնեանովը գլխի ընկաւ՝ որ իրան անտառում են որոնում։ Հասկանալի է որ իզուր տեղն անտառում դեղերկլուց յետոյ՝ կը դառնան հովիտը — եթէ միայն հէնց սկզբից շները չգտնեն նրան։ Բնազդը կենդանիներին երկու անգամ չի խաբում։ Թէ այդպիսի լարուած դրութեամբ նա որ՞քան սպասեց — ինքն էլ չգիտէր։ Հայեացքն ուղղած էր դէպի հովիտը, դէպի չոր թփերը, որ կախ ընկած դէպի գետակը, խաղաղ խշխշում էին։

Ամեն մի վայրկեան նա սպասում էր, որ ահա կը տեսնի շան, իր հաճար ճակատագրական կենդանու դունչը կամ կը լսէ նրանց հաչը։

Ցիրաւի, յանդարձ հաչոց լսուեց։ Օգնիանովի աչքերը դուրս ցցուեցին, մազերը բիկ-բիկ եղան։

Ամեն բանի պատրաստ, նա ջղածգութեամբ սեղմեց ատրճանակը։

III

ԴԷՊԻ ՀԻՍՍԻ՞Ս.

Շան հաչոցն այլևս չլսուեց. դրա փոխարէն մի այլ ձայն ընկաւ Օգնեանովի ականջը — մարդկային քայլերի ձայն։ Այո՝, այստեղ մարդիկ էին գալիս։ Նրանք լեռնային խոռոչից ցած էին իջնում և փախստականի թաքնուած ծակը ոտքերով աւաղ թափում։ Շուտով երկու տրեխաւոր ոտքեր երևացին նրա գլխի վերևը և նորից իսկոյն կորան։ Ուրիշ երկու ոտքեր էլ տրեխաւորից յետոյ անցան. քիչ յետոյ, մի այլ մարդու ոտքեր էլ երևացին և վերջապէս, եկաւ չորրորդը. սա տեղում կանգնեց և չէր հեռանում։ Սկսեց շուրջը դիտել, ապա կռացաւ։ Եւ Օգնեանովը տեսաւ զզզուած, երկար գլուխ — կապկի գլուխ։ Այն արարածը, որին պատկանում էր այդ տարօրինակ գլուխը, սկսեց գուլպի կապն ամրացնել որ գետնին քաշ էր գալիս։

Օգնեանովն ատրճանակը ձեռքին, արձանացել էր։

Գլուխը ներս նայեց նրա որջը։

Ապա իսկոյն բարձրացաւ։

— Սս... սս... նշան արեց նա ընկերներին, որ յետ դառնան։

Եւ գլուխը նորից կռացաւ, ներս նայեց։ Օգնեանովը վճռեց ատրճանակը պարպել։

— Ինչ՞ մարդ ես, հարցրեց մի կոպիտ ձայն։

— Բա՛յ Իվան, կոչեց Օգնեանովը։

Ճիշտ որ, դա Իվան Բորեմիչկան էր։

— Ուստուցիչ՛, բացականչեցին մնացածները, դէպի որջը կոտնալով։

Առանց հրաւէրի սպասելու, Բորեմիչկան առաջինն իջաւ որջը և պինդ սեղմեց Օգնեանովի ձեռքը։ Նրա աչքերին արցունք էր փայլում։ Իշան նաև միւս երեքը։ Դրանք — կլիսարցիներ էին։

Բոյչօյի առաջին հարցն էր — այդ ի՞նչ շան հաչոց էր լսում։

Կլիսարցիները պատասխանեցին.

— Շուն չէր, այդ Բորեմիչկան էր հաչում։

Օգնեանովը ժպտաց։ Նա մտաբերեց հսկայի սովորութիւնը։ Այդ ժամանակ նա հարցեր տեղաց եկեղեցիների դլխին։ Դրանից յետոյ միայն նա հանդստացաւ։ Նա հասկացաւ որ այս անդամ էլ է ինքը հրաշքով ազատուել, հրաշք՝ որ առաջին անդամը չէր ճակատագիրը նրան ուղարկում։

— Այժմ ու՞ր էք գնում։

— Դէպի Ռումինեա։ Իսկ դո՞ւ։

— Ահա երեք օր է, ուղում եմ Սպիտակ-Եկեղեցի գնամ, ահա տեսնում էք, ինչքան եմ առաջ գնացել։

Մի կլիսարցի խօսեց.

— Լաւ խորամանկութիւն արեցին այդ Սպիտակ-Եկեղեցցիները. տեղերը հանդիստ նստել են։

Այդ խօսքերը բարկութեամբ ասուեցին. նոյնիսկ, ոչ այնքան բարկութեամբ, որքան անբաւականութեամբ, թէ ինչու՞ Սպիտակ-Եկեղեցցիներն էլ չկոտորուեցին... աւաղ, այդպէս՝ է մարդկային բնութիւնը։ Մարդս աւելի հեշտ է դիմանում դժբախտութեան, երբ դիտէ, որ ինքը մենակ չէ, որ ուրիշներն էլ, թէկուզ իր մտերիմները — նոյն վտանդի մէջ են և նոյն տանջանքներին են ենթակայ։

— Սպիտակ-Եկեղեցու մասին ինչ՞ տեղեկութիւն ունէք, հարցրեց Օգնիանովը։

— Ասացի... լաւ խորամանկութիւն արին... Միայն մեզ՞ էր մնացել բոլդարական թագաւորութիւնն ազատելը։

— Բայց այնուամենայնիւ տարօրինակ է, այնքան ոգևորուած էր Սպիտակ-Եկեղեցին — մտածկոտ ասաց Օգնեանովը։

— Աւելի լաւ՝ որ անվնաս մնաց... ինչ՞ օգուտ, եթէ նա էլ փչանար։

Տեսա՞ր, որքա՞ն գիւղեր մոխիր դարձան, խօսեց միւս կլիսարցին, տեսա՞ր գիշերը երկինքն ինչպէս բոցավառուում էր։

— Տեսայ, յանքերը կիտած պատասխանեց Օգնեանովը։

— Շատ մարդ կոտորուեց։ Էհ, մի՞թէ սա ապստամբութիւն էր. սա միայն խայտառակութիւն էր, աւել ոչինչ։ Եւ մենք, հասակաւոր ուսանողներս, հաւատում էինք։ Դէ թո՛ղ հիմի Աստծուն

պատասխան տան ժողովրդին խաբողները։ Եթէ որ՞ամեն բան դեռ ևս պատրաստ չէր, ինչո՞ւ չէին տեղները հանդիստ նստում։

Օգնեանովը լռութեամբ լսում էր այդ յանդիմանութիւնները ու կշտամբմանքները։ Դրանցից նա չնեղացաւ։ Աւելուած, քանդուած ժողովրդի բերանում դա եթէ ոչ բոլորովին արդարացի, գոնէ կատարելապէս բնական էին։ Նա էլ իր մտքում էր շատ անդամ մեղադրել ժողովրդին որն այժմ իր դեկավարներին էր մեղադրում։ Դա էր անյաջողութեան տխուր, բայց տրամաբանական հետևանքը։

— Էհ, ի՞նչ էք երեսներդ թթուեցրել, ի՞նչ էք լաց լինում։ Տիրոջ սուրբ կամքն այդպէս էր։ Եթէ Կլիսարը կորաւ — Բոլգարեան դեռ ևս չէ կորել, աշխատեց մխիթարել նրանց Բորեմիչկան։

— Բայ Իվան, ընտանիքդ ի՞նչ արիր, կնոջդ ո՞ւր ուղարկեցիր, հարցրեց Բոյչօն։

— Ստայկայե՞ն... նա կենդանի է... նրան ես Ալտենովո տարայ, իսկ այնտեղից... հա՛ մոռացայ ասել վարժուհու մասին...

Օգնեանովն այդ խօսքերից ցնցուեց։ Նա գուշակում էր թէ Ռադան ի՞նչ դժբախտ վիճակի է արժանացել. բայց այժմ վախենում էր ուրիշից լսել, որ իր սոսկալի գուշակութիւնը ճիշտ է։ Նա գիշերն ականատես էր եղել՝թէ ինչպէս Ռադայի բնակարանը հրդեհին զոհ գնաց, թէ ի՞նչպէս փուլ եկաւ ամբողջովին... անշուշտ այդ աւերակների տակ գտաւ իր մահը խեղճ աղջիկը — եթէ միայն առաջուց ինքնասպանութիւն չէր գործել։ Երբ ինքը վազեց նրան փրկելու, արդէն ուշ էր։ Եւ այդ միտքը նրա հոգուն ծանր բեռ էր եղել։ Մի այլ զգացմունք էլ, որի համար չէր ուզում ինքն իրան հաշիւ տալ, նրան լուզում ու տանջում էր։

— Քիչ մնաց խեղճ աղջիկը կորչէր։

— Ի՞նչպէս, նա դեռ կենդանի՞ է, բացականչեց Բոյչօն։

— Կենդանի է, այո՛ կենդանի է, վարժապետ... բայց թէ որ չէ՛ր եղել Բորեմիչկան...

— Այժմ որտեղ է, հարցրեց Բոյչօն ապշած, աշխատելով որ մի վայրկենում Իվանի բարեհամբոյր դէմքի վրա կարդայ իր հարցի պատասխանը։

— Դարդ մի՛ անի, լաւ մարդու մօտ եմ թողել, հանգստացրեց նրան Բորեմիչկան։

Բոյչօն մի հաճելի թեթեւութիւն զգաց։ Նրա դէմքը փայլեց և նա յուզուած, ասաց հսկային.

— Շնորհակալ եմ, բայ Իվան, ինձ սարսափելի տանջանքներից ազատեցիր։

— Բայց լաւ էր որ, ընդհատեց նրան Իվանը, մեր Ստայկան ժամանակին ինձ իմաց տուեց... որովհետև երբ տանտիրուհին փախչելիս է լինում, ճամբին տեսնում է մեր Ստայկին և ասում. «Ստայկա՛, Իվանին ասա, այսինքն ինձ, որ Ռադան չի ուզում փախչել, որքան էլ աղաչեցի — լսեց, նրան չթողնէք, զօռով էլ է հեռներդ տարէք...» Այդ որ լսեցի — հողն իմ գլխին — իսկի կթողնէի՞ նրան... Տուն վազեցի, դուռը կողպած է, ծեծում եմ, ձայն եմ տալիս, չի բաց անում. կոտրեցի, ներս մտայ, ի՞նչ տեսնեմ... Ձրագը ձեռքին բռնած, կանգնել է սեղանի մօտ, իսկ սեղանի վրա տոպրակը.

— Վառօդի տոպրա՞կը, բացականչեց Օգնեանովը սառած, երբ հասկացաւ, թէ Ռադան ինչ ձևով է ուզեցել վերջ դնել իր կեանքին։

— Վերցրել է վառօդով լիքը տոպրակը, ուզում է ինքն իրան հազար կտոր անէ... տեսնում էք, ինչ չիմար աղջիկ է։ Բայց ես էլ այն ժամանակ գլխի չէի ընկել, որ դա վառօդ է և առանց մտածելու մօտ վազեցի։ Երևի Տիրոջ կամքն էր որ հէնց այդ բոպէին, դուռը բացի թէ չէ քամին փչեց, մոմը հանգաւ...

— Այստեղ ի՞նչ ես անում, վարժուհի՛, հարցնում եմ ես, ամենքը փախչում են, մենակ այստեղ ինչի՞ ես մնում։ Բռնեցի ու հա՛յդէ դէպի Բալկանները, մեր Ստայկան էլ յետևիցս։ Ստայկան նրան մխիթարում է, սիրտ է տալիս, իսկ նա լաց է լինում, վո՞ւշ ու վո՞ւշ է անում... Է՜, վարժապետ, նա քեզ համար ինչքա՞ն արտասուք է թափել... Ես քեզ մեռած էի կարծում, բայց նրան խաբում էի (այդտեղ քիչ սատանութիւն չբանեցրի), ասում էի վարժուհի՛, վարժապետը կենդանի է, դարդ մի՛ անի, վարժուհի... բայց մենք արդէն ուշացել էինք... Թուրքերն արդէն Վէրլիշնիցի մօտ էին... Այնտեղ գնալ չէր կարելի... Է՜հ, աշխարհը նեղացել էր, ի՞նչ անէինք... Սարերը բարձրացանք ու գիշերով մեր գիւղն եկանք... վար-

ժուհուն էլ, կնոջս էլ յանձնեցի մեր Վօլկին, աներորդուս և նորից Հին-Պլանինա բարձրացայ... Ուրեմն դու էլ ես կենդանի, հա՞։

Օգնեանովը լուռ սեղմեց Բորիմիչկայի աջը։

— Ես նրանց Ալտինովոյում թողի, բայց այժմ պէտք է Սպիտակ-Եկեղեցում լինին։ Վօլկը հետևեալ օրը նրանց պէտք է Թուրքի շոր հագած այնտեղ տանէր։ Ալտենովոյում Թուրքերը սարսափելի շատ են... Իսկ Սպիտակ-Եկեղեցին, ասում են խաղաղ է։ Վարժապե՛տ, եթէ դու այնտեղ ես գնում, մեր Ստայկին էլ տեսութեան գնա՛, իմ կողմից բարևիր, ասա՛ որ ինձ ողջ-առողջ տեսար... Ասա՛ որ ամեն օր տապակած գառ ու մեղրած սէր եմ ուտում, թող դարդ չանէ...

— Բայ Իվան, դժուար թէ ես Սպիտակ-Եկեղեցի գնամ։

Բորիմիչկան զարմացած նրան նայեց։

Մի՞թէ փոխեցի՞ր։

— Այո՛, էլ չեմ ուզում գնալ։

— Բաս ո՞ւր կգնաս...

— Տեսնենք...

— Սրի՛ քեզ էլ Ռումինիա տանենք...

— Չէ՛, դուք գնացէ՛ք, ջոկ-ջոկ գնացէք, խմբով լաւ չէ։

Օգնեանովը դէպի հիւսիս դիմեց։

Երկինքն ամպամած էր։ Լեռներն ու ծորերը սարսափելի խաւարի մէջ էին խորասուզուել։

Ամբողջ գիշերը նա լեռներն ու ծորերն էր չափչփում։

Լուսադէմին մի սարի գլխին էր։ Լեռնից դէպի հարաւ երևում էր մի գեղեցիկ դալար հովիտ։ Նա ճանաչեց — այդ Սարեմի-Հովիտն էր, լեռան տակ ընկած էր Սպիտակ-Եկեղեցին...

Յաղթողը՝ ճակատագիրն էր։

IV.

ԴՐՕՇԱԿԸ.

Ծանր քնից նոր զարթնածի պէս՝ Օգնեանովը վերջապէս հաս-

կացաւ, որ ճամբից շեղուել է և անննպատակ թափառում է, բայց արդէն ուշ էր:

Օրը ցերեկով, անտառից կամ որևէ թագստեան այլ տեղից հեռու և Սպիտակ-Եկեղեցուն այդչափ մօտ լինելուց յետոյ, նրա կողմից այլևս անմտութիւն կլինէր յետ դառնալը: Այժմ նրան մնում էր միայն ցած իջնել վանքի դեպի հովիտը, որ ինքն ըստ ինքեան լաւ ապաստանատեղ էր և այդտեղից Սպիտակ-Եկեղեցի գնալ: Ճակատագրին հպատակելու սովորած լինելով, նա վճռեց գնալ հէնց այնտեղը, որտեղից զիշերն աշխատում էր ըստ կարելոյն հեռու փախչել:

Օգնեանովի, ինչպէս և Կանդովի, առաջին սիրահարութիւնն էր: Ռադայի կողմից նրա սրտին հասցրած վէրքը երևակայական էր և ոչ իրական դաւաճանութիւնից առաջացած: Առաջին իսկ խելացի բացատրութիւնը կարող էր վերջ դնել նրա տանջանքներին: Պատահմունքն օգնութեան էր գալու նրան:

Եւ ճիշտ որ այդ պատահմունքն եկաւ:

Բայց Օգնեանովն այդ բոլորը ճակատագրի նենգութիւնն էր համարում:

Ուստի երբ նա իջաւ հովիտը, հասաւ այնտեղ, ուր վանքի դեռը ծուում էր և երբ տեսաւ եղևնիների անտառը, անակնկալ կերպով միտքը փոխեց:

— Ո՛չ, ասաց նա, ցերեկն այս անտառում կպահուեմ, իսկ երեկոյեան յետ կդառնամ... Բալկանների որևէ գիւղում հագուստս կփոխեմ և հայդէ — Ռումինիա... Ռադայի մօտ՝ երբէ՛ք, ոչ մի դէպքում... Եւ նա թագնուեց ծառերի արմատների մօտ — որոնք տերևներով ու վայրի խոտերով շրջապատուած լինելու պատճառով, նրան էլ ծածկեցին: Գիշերուան սպասելու դիտաւորութեամբ նա երկար ժամեր համբերութեամբ պառկած մնաց:

Երբ սկսեց մթնել, զիմացի բլրի վրա Օգնեանովն ինչ որ մի սև բան տեսաւ, որ առաջ էր շարժուում և ինչ որ օդում ծածանում էր: Դա մի հսկայական թռչունի էր նման, որ միևնոյն տեղը կանգնած, թևերը թափահարում է: Ապշած նա աչքերը չռեց:

— Դրօշա՞կ է, ասաց նա զարմացած: Ցիրաւի, դա մի կարմիր դրօշակ էր, բլրի գագաթին՝ ժայռի վրա ցցած: Քամին կամացուկ փոփոխում էր այդ դրօշակը, որ Սպիտակ-Եկեղեցուց էլ էր երևում: Դրօշակի մօտ ոչ ոք չկար: Ո՞վ է բարձրացրել — և ի՞նչ նպատակով: Արդեօք ապստամբութեան նշանը չէ՞ր: Օգնեանովը վերջին եզրակացութեանն եկաւ: Այդ դրօշակին ուրիշ ոչ մի խելացի բացատրութիւն տալ չէր կարելի...

Օգնեանովը չհամբերեց: Նա ամեն զգուշութիւն մոռացած, դուրս թռաւ իր թագստեան տեղից, արագութեամբ բարձրացաւ իր իջած բլրի գագաթը, որպէսզի այնտեղից տեսնի Սպիտակ-Եկեղեցին: Այժմ նրան թւում էր, որ հեռուից հրացանի ձայներ է լսում... Ո՞րտեղից էին այդ ձայները... Նա աչքերը սևեռել էր քաղաքի վրա... Ցանկարծ՝ օդի անսովոր մաքրութեան ու պարզութեան շնորհիւ քաղաքի ծայրին նա մի սպիտակ ծուխ նկատեց — ըստ երևոյթին՝ հրացանի ծուխ:

— Բունթ է, բունթ է Սպիտակ-Եկեղեցում, ուրախացած բացականչեց նա: Իմ հաւատարիմ բարեկամներս, Սոկոլովը, Պապովը, խմբագիրը, բայ Միչօն — ձեռքերը ծալած չեն նստել... Պարզէ որ ապստամբութիւն է բռնկուել այժմ և ուրիշ տեղերում... Եւ այդ դրօշակը պայմանական նշանն է... Հանգած հրդեհը նորից բոցավառուեց... Ապստամբութի՞ւն է, Աստո՞ւած իմ, դեռ ևս յոյս կայ, ամեն ինչ կորած չէ՞... Եւ նա, կարծես թևեր առած, ցած սլացաւ:

V.

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ.

Արդէն բոլորովին մութն էր, երբ Օգնեանովը նորից հասաւ վանքի դեպի հովիտը: Նա առանց կանգ առնելու, անցաւ վանքի մօտից բայց հարկաւոր չհամարեց հայր Նաթանայէլին այցելելու. առանց այդ էլ նա շատ թանկագին ժամանակ էր կորցրել: Այն միտքը, որ Սպիտակ-Եկեղեցում ապստամբութիւն է, նրան էլեկտրականացրել էր և վերադարձրել թէ՛ ֆիզիկական, թէ հոգեկան բոլոր ոյժերը:

Նա ընկաւ մեծ ճանապարհը և մի քանի բոպէից, տեսաւ քաղաքի շինութիւնների, խողովակների ու այգիների մռայլ ուրուականները։ Այդտեղ նա ճամբից դուրս եկաւ, բարձրացաւ բլուրը, որտեղից երևում էր ամբողջ Սպիտակ-Եկեղեցին։ Այդ բարձրութեան գլխին էր քաղաքային դպրոցը։

Այդ բարձրութիւնից նա սկսեց դիտել քաղաքը։ Քաղաքը քուն էր։ Ոչ մի տեղ լոյս չէր երևում... Ոչ մի առանձին աղմուկ կամ որևէ այլ բան չկար որից կարելի լինէր եզրակացնել, որ քաղաքում ապստամբութիւն կայ։ Գալիս էր միայն շների սովորական հաչոցը։ Դա Օգնեանեանովին զարմացրեց։ Ի՞նչ անէ։ Քաղաք գնայ, բարեկամներից որևէ մէկի դուռը ծեծէ, անխոհեմութիւն կլինի։ Նա վճռեց գնալ մօտիկ գտնուող տղայոց դպրոցը։ Այնտեղ նա պահպանից կիմանայ թէ ի՞նչ կայ Սպիտակ-Եկեղեցում։ Եւ նա դպրոցի պարսպից ներս թռաւ։ Շուրջը նայելով, նա տեսաւ որ ինքը գերեզմանոցումն է, վերջինս դպրոցի բակի մի մասն էր բռնում։ Կենդրոնում կանգնած էր հինաւուրց եկեղեցին, լուռ ու մռայլ շիրիմի նման։ Բակի խորքում սևին էին տալիս դպրոցի շինութիւնները, նոյնպէս լուռ ու խաւարով պատած։ Ինչ-որ մի սառնութիւն էր փչում թէ սարսափելի խաղաղութիւնից, թէ այդ տեղի խաւարից։ Այդ մեռելային խաւարը որ ապստամբած քաղաքի աղմուկի ու իրարանցումի փոխարէն դէմ եկաւ Օգնեանովին ապշեցրեց նրան ու սև մտքեր զարթեցրեց նրա մէջ։ Այդ շիրիմները գիշերից ստացած իրանց հրաշալի ձևերով կանգնած էին նրա առաջ լուռ, ինչպէս կիսով չափ գերեզմանից դուրս եկած մեռելներ։ Նա չկարողացաւ զսպել իր սրտի ակամայ տրոփիւնը և խաւարի ու անյայտութեան այդ սառը թագաւորութիւնից շուտափոյթ դուրս գալու գաղտնի ցանկութիւնը...

Անսպասելի կերպով, խաւարի մէջ, որին նրա աչքերն արդէն ընտելացել էին Օգնեանովը եկեղեցու ցածր պատուհանում մի թոյլ, անշարժ, լուսին սպիտակին տուող կէտ նկատեց։ Անկասկած դա կանթեղի կամ մոմի լոյս պէտք է լինի... Այդ կարմիր կէտը մի գիւբեկան աննկարագրելի անհանգստութիւն էր։ քաղաքի այդ ընդհանուր խաղաղութեան մէջ կեանքի միակ նշանը, լոյս էր տալիս նրան բարեկամաբար ու սիրով, համարեա ուրախ։ Օգնեանովն անյաղթելի

հետաքրքրութիւնից դրդուած, զգուշութեամբ անցաւ շիրիմների մօտից, մօտեցաւ պատուհանին և ներս նայեց։

Եկեղեցու սիւներից մէկի մօտ մեծ, պղնձէ մոմկալի մէջ մի մոմ էր վառւում։ Դեղնագոյն բոցը յատակի վրա մի փոքրիկ շրջանաձև տարածութիւն հազիւ էր լուսաւորում։ Այդ շրջանից դուրս եկեղեցին խորհրդաւոր խաւարի մէջ էր ընկղմուած։ Յատակի այդ թոյլ լուսաւորուած տարածութեան մէջ Օգնեանովն ինչ-որ տարօրինակ, ծռուած մարմիններ տեսաւ։ Դրանք ի՞նչ պէտք է լինէին։ Նա դէմքը ապակուն հպեց և սկսեց դիտել։ Եւ նա լաւ հասկացաւ թէ դրանք ինչեր էին։ Այնտեղ, փսիաթի վրա երեք դիակներ էին։ Նրանց շուրջը արիւնի փայլուն շերտեր էին երևում։ Այդ պատկերին մոմի բոցը դողդոջիւն, երկչոտ լոյս էր դցել։ Դէմքերը ծռուած ու բաց բերանով, մարտիրոսական տանջալից մահւան հետքեր էին կրում։ Նրանցից մէկի աչքերը, լայն բացած, խիստ ու յամառ կերպով նայում էին եկեղեցու մութ կամարներին։ Օգնեանովի մարմնից սարսուռ անցաւ։ Բայց նա պատուհանից հեռանալու ոյժ չունէր. մեռեալի յանցանքը նրան տեղից շարժելու չէր թողնում։

Յանկարծ նա ճանաչեց որ դա Կանդովն է։ Նրա պարանոցի վրա մի սև ծակ էր երևում։ Նա մորթած էր։

Օգնեանովը շուռ եկաւ այդ սարսափելի պատկերից և շտապով հեռացաւ։

ՄԱՐԻՑԿԱՆ.

Օգնեանովը գիշերը վանքի հովտում գտնուող ջրաղացում անցկացրեց։

Առաւօտ վաղ, նա խռռոչի ժայռերով ծածկուած ափը բարձրացաւ, որպէսզի ինքն աննկատելի մնալով, տեսնէ հովտում բոլոր կատարուածը։

Հովտում մարդ չկար։

Բայց ահա՛ նրա հայեացքը փայլեց։ Ջրաղացներից մէկի դուռը բացուեց և մի աղջիկ դուրս եկաւ. նա աղբիւրին մօտեցաւ և սկսեց երեսը լուանալ։

— Մարիկա՞ն է, ուրախութեամբ բացականչեց Օգնեանովը, որի սուր աչքերը ճանաչեցին Ստոյեան պապի որբ աղջկանը։ Նա դլխի ընկաւ՝ որ հօր մահից յետոյ, աղջիկը հօրեղբոր մօտ է ապրում։

Նախախնամութիւնը նրան օգնութեան էր դալիս։

Շտապով նա իջաւ դէպի գետը և քարի յետևը պահուած կամացուկ ձայն տուեց աղջկանը։

Վերջինս յետ դարձաւ և Բոյչօին ճանաչեց. իսկոյն մօտ վազեց նրան։

— Բոյչո՛ քեռի, այդ դո՞ւ ես։

— Այստեղ եմ, Մարիկա, այստեղ արի՛, ձայն տուեց Բոյչօն իր թագստեան տեղից։

Լայն բացած, ուրախութիւն ու զարմանք արտայայտող աչքերով, աղջիկն Օգնեանովին էր նայում։

Սրա սարսափելի նիհարած դէմքը, ցեխի և արիւնի մէջ կորած հագուստը, բաց գլուխն ու ծանր գզգուած մարդու տեսքը, մարդու՝ որ ամբողջ տասն օր անց է կացրել անքննութեամբ, մարդոց ու տարերքների, քաղցի ու գրկանքների դէմ կռիւ մղելով — այդ բոլորը կարող էին թոյլ աղջկանը վախեցնել, եթէ դա Օգնեանովը չլինէր։ Իսկ դէպի վերջինս նա մի առանձին համակրութիւն ու հաւատ էր տածում։

— Մարիկա՛, քաղաքում ի՞նչ կայ, եղաւ Օգնեանովի առաջին հարցը։

— Թուրքերն են, Բոյչո քեռի։

Օգնեանովը գլուխը ձեռքերով բռնեց և մտածութեան մէջ ընկաւ։

— Երէկ ի՞նչ հրացանաձգութիւն էր. ի՞նչ էր պատահել։

— Երէ՞կ, Բոյչո քեռի, չգիտեմ, Բոյչո քեռի։

— Մի՞թէ դու չլսեցիր հրացանաձգութիւնը։

— Երէկ ես Սպիտակ-Եկեղեցի չեմ գնացել Բոյչո քեռի։

Մարիկան չգիտէր՝ ի՛նչ պատասխանէր, բայց Բոյչօն արդէն

գուշակում էր իրողութիւնը։ Ապստամբութեան փորձ է եղել, բայց իսկոյն թուրքերը ճնշել են և այժմ ամբողջ Սպիտակ-Եկեղեցին նրանց ձեռքին է։

Ուրեմն՝ ինքն ուշացել է։ Երկու ժամ առաջ գար ինքը կարելի է գործը ուրիշ ուղղութիւն ստանար։ Այդ ուշանալն էլ ճակատագրական պատահմունքներից մէկն էր՝ որոնք այնպէս յաճախ ազդեցութիւն են ունենում մի ամբողջ ժողովրդի վիճակի վրա...

Քիչ մտածելուց յետոյ՝ Օգնեանովը հարցրեց.

— Մարիկա՛, ձեր տանը մարդ կա՞յ։

— Մանչօ հօրեղբայրս է, նա դեռ քնած է։

— Մարիկա՛, դու գիտե՞ս որտեղ է ապրում բժիշկ Սոկոլովը։

— Գիտեմ, Եակիմիչինա մամի տանը։

— Այո՛, այնտեղ։ Իսկ գիտե՞ս որտեղ է ապրում Բրզոբէգուեվը, նէմեցը, այսպիսի մօրուքով։

— Է՞ն որ սև մարդիկ է շինում։

— Այո՛, այո՛, նա է, Մարիկա, ժպտալով ասաց Օգնեանովը։ Սիրելիս, մի բան որ տամ կարո՞ղ ես նրան տանել։

— Կարող եմ, Բոյչո քեռի, ուրախացած պատասխանեց աղջիկը։

Օգնեանովը գրպանը քրքրեց և մի մատիտ ու ճխլտուած թղթի կտոր հանեց։ Դա Ռադայի նամակն էր։ Բոպէապէս, նրա ճակատին քրտնքի կաթիլներ երևացին։ Դողդոջուն ձեռքով նա կրտրեց թղթի չգրած մասը, մի քանի խօսք գրեց և ծալեց։

— Մարիկա՛, ահա այս թուղթը տար բժիշկ Սոկոլովին։ Իսկ եթէ նրան չգտնես՝ տա՛ր նէմեցին, լա՛ւ պահի՛ր, չկորցնես։

— Լա՛ւ։

— Եթէ նրանք տեղս հարցնեն՝ ասա, բայց ուրիշ ոչ ոքի չասես, լսո՞ւմ ես, միայն նրանց ասա։ Ասա՝ որ ես հին ջրաղացում եմ, Խամբարովի ջրաղացի յետևը։

Նամակում Օգնեանովը չգրեց՝ ոչ իր անունը, ոչ էլ թագստեան տեղը՝ երկիւղ կրելով՝ որ ուրիշի ձեռքը կարող է ընկնել։ Մարիկայի անձնանուիրութեանը նա կատարելապէս հաւատացած էր, բայց վախում էր որ նա անփորձութիւնից որևէ վնաս հասցնէ։

Ցանձնարարութեան նշանակութիւնն աւելի լուրջ դարձնելու համար՝ նա կամացուկ աւելացրեց.

— Որովհետև, Մարիյկա, եթէ դու նամակը կորցնես, կամ սխալմամբ ուրիշին ասես տեղ՝ Թուրքերը կգան ինձ կսպանեն... Զգոյշ եղի՛ր, անուշիկս։

Այդ խօսքերից յետոյ Մարիյկայի դէմքը լրջացաւ և երկիւղի արտայայտութիւն ստացաւ, իսկ ձեռքը ակամայ շոշափեց կրառան տակը, որտեղ՝ հագուստի տակ, պահել էր նամակը։

— Ես գնամ հօրեղբորս ասեմ որ հացի եմ գնում։

— Լաւ, Մարիյկա, միայն՝ տե՛ս, ասածս չմոռանաս։

VII.

ՄԱՐԻՅԿԱՅԻ ԱՆՑԱՔՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Վանքի առաջ հրապարակում Մարիյկան կանգ առաւ և անհանգստութեամբ շուրջը նայեց։ Բայց տեսնելով, որ ոչ ոք չկայ, նորից ճանապարհն ընկաւ ու վազ տուեց։ Մինչև քաղաքը նրան ոչ մի կենդանի արարած չպատահեց. շրջապատը դատարկ էր, դատարկ էր և այն փողոցը՝ որով նա գնում էր։ Ցանկարծ Մարիյկան նորից կանգ առաւ. փողոցի հակառակ ծայրին երեք Թուրք երևացին։ Երկիւղով համակուած՝ նա շտապով յետ դարձաւ և այգիների ու վարդի Թփերի միջից ցած վազեց որպէսզի միւս փողոցից քաղաք մտնի։ Նա ստիպուած էր մեծ շրջան անել, որի պատճառով և Սոկոլովի տնից հեռացաւ։ Վերջապէս Մարիյկան քաղաքի արևմտեան ծայրը հասաւ։ Փողոցը բոլորովին դատարկ էր — ոչ բոլգարացի կար, ոչ Թուրք։ Բոլոր խանութները փակ էին, ինչպէս և դարպասներն ու փեղկերը։ Այդ ամայութիւնն աղջկանը հանգստացրեց և նա նորից վազ տուեց։ Հազիւ կարողացաւ նա մի քանի քայլ անել՝ որ մի ինչ-որ նախազգացումով յետ դարձաւ և տեղում քարացած մնաց։ Դաշտից մօտիկ՝ ծանր քայլերի և ձիու ոտնաձայն ու խառն աղմուկ էր լսւում։ Դա Թոռան-Բէյի խուժանն էր։ Նոր էր վերադառնում աղմկալից յաղթական

երեք օրեայ աւարառութիւնից, կողոպուտից ու սպանութիւնից յետոյ... Դա միայն խուժանի մի մասն էր, մի քանի հարիւր Բաշիբուզուկներ — բոլորն էլ Սպիտակ-Եկեղեցու շրջանակների բնակիչներից։

Խուժանը երևաց Թէ չէ՝ Մարիյկան ամբողջ ոյժով սկսեց փախչել, ապա ուրիշ փողոցներ ծռւեց, որ դեռ ևս դատարկ ուլուռ էին։ Վերջապէս նա հասաւ Սոկոլովի դարպասին, սկսեց ծեծել։ Դուռը չէին բաց անում։ Մի քանի անգամ ևս ծեծեց։

— Ո՞վ է ծեծում, ներսից հարցրեց մի պառաւ։

— Եակիմիցէ մամի, բա՛ց արա, շունչը կտրուած հազիւ արտասանեց Մարիյկան։

— Ի՞նչ ես ուզում։

— Բժիշկ Սոկոլովին, բա՛ց արա, լացակումած աղաղակեց աղջիկը։

Պառաւը բարկացած ինչ-որ փնթփնթաց, բայց բաց արեց։

— Ի՞նչ ես ուզում, նա այստեղ չէ, մրթմրթաց պառաւը։

— Իսկ ո՞րտեղ է, մամի։

— Դու տեղն ասա՛ — ես գտնեմ... Երէկ նրան որոնում էին և մինչև այսօր հետքն անգամ չկայ... Դէ՛ գնա։

Եւ պառաւը դուռը կողպեց։

Մարիյկան շփոթուած՝ կանգնած մնաց դարպասի մօտ, փողոցում։

Նա նորից վազեց։ Լուսանկարչի տունը հեռու չէր. դուռը ծեծեց։

— Ի՞նչ ես ուզում, աղջի՛կ, հարցրեց նրան մի նիհար, ցընցոտիներ հագած կին։

— Նէմեցին...

— Ի՞նչ ես ուզում։

— Ինձ նէմեցի մօտ թո՛ղ, ասաց Մարիյկան կնոջը կողքի բռթելով՝ որ իր համար ճանապարհ բանայ։

— Խելքդ թռցրե՞լ ես, ի՞նչ է, աղջի՛կ։ Երէկ չէ՞ր որ նէմեցին մորթեցին, կատաղած հարցրեց կինը և Մարիյկին փողոցը վռնդեց։

Սարսափը տիրեց խեղճ աղջկանը։ Այժմ նա մտածում էր որ

երևի Բոյչօ քեռուն էլ կմորթեն, որ երևի թուրքերը հէնց դրա համար էլ եկել են և որ իր մօտի նամակը ձեռքից կխլեն։ Այժմ ի՞նչ անէ ինքը։ Եւ նա սկսեց հեկեկալ։ Այդ յուսահատ դրութեան մէջ յանկարծ նա լեռևը թխկթխկոց լսեց։ Դա Կոլչօն էր։

Վերջինս գնում էր փողոցով և ձեռնափայտը թրխկթրխկացնում սալայատակին։ Նրա դէմքը տխուր ու մտախոհ էր։

— Ի՞նչ ես լալիս, աղջի՛կ, հարցրեց կոյրը աչքերի սպիտակ բիբերը Մարիյկին յառած՝ կարծես ուզում էր նրան ճանաչել։

Եթէ Մարիյկան աւելի մօտ ճանաչէր Կոլչօին՝ Բոյչօի պատուէրը կխախտէր և ամեն ինչ կպատմէր կոյրին՝ որը կարող էր Սոկոլովին փոխարինել։ Կոլչօն նոր ծեծել էր Սոկոլովի դուռը նրա մասին տեղեկութիւն իմանալու և պառաւը նրան յայտնել էր որ քիչ առաջ մի աղջիկ էլ էր հարցնում։ Նախազգացումը կոյրին ասում էր որ այդ աղջիկը հէնց Մարիյկան էր, և որ նա հարկաւոր գործով եկած կլինէր բժշկի մօտ և երևի անյաջողութեան հանդիպելուց էր լաց լինում։ Այնպիսի ժամանակ նրան ո՞վ կարող էր ուղարկել Սոկոլովի մօտ։ Երևի այնպիսի մէկը որ նոր է եկել այս կողմերը և կատարուածի մասին տեղեկութիւն չունի... Արդեօք նա չէ՞... Դեռ ևս գիշերը լուր տարածուեց որ Բոյչօն չէ սպանուել, որ նա ազատուել է և լեռներում դեգերում է։ Բոյչօն չլինի՞ աղջկանն այստեղ ուղարկած։ Այո, այո՛, Մարիյկան նախախնամութեան զէնքն է։ Եւ նա առաջ գնալով սկսեց կանչել.

— Աղջի՛կ, Մարի՛յկա, Մարի՛յկա, սիրելի՛ս...

Բայց նրան ոչ ոք չէր պատասխանում։

Կոլչօն յուսայատուած՝ հառաչեց։

Այդ ժամանակ նա հրապարակն էր հասել։

Աղմուկ, մարդկային ձայներ — բոլորն իրար հետ խախնուել։ Խօսակցութիւնը տաճկերէն էր։ Ապշած՝ Կոլչօն սրճարանի մօտ կանգ առաւ և սկսեց ականջ դնել։

Մի ձայն բոլգարերէն խօսում էր.

— Օհ՜, տե՛ս թէ ի՞նչ վճիռ են կայացրել։ Մեր քաղաքը կրա՞կ տան... Քիչ էր մնում շան պէս բոլորիս էլ կոտորէին, հողու մոխիր դարձնէին... Ասացէք մէկ՝ ո՞րտեղ են այդ չարագործները, որ ուզում էին բունթ անեն... Նրանց մէկ այստեղ քաշ տուէք ցոյց տամ թէ՝ ի՞նչ է նշանակում բունթ անելը։ Բունթ... Ո՞ւմ դէմ... Թագաւորի՞ դէմ... մեր հօր ու բարերարի՞ դէմ, մեր տիրոջ դէ՞մ որ աչքի լոյսի պէս է խնամում մեզ, չի թողնում՝ որ մի մազ անգամ մեր գլխից կորչի... Քանի՞ հարիւր տարի մենք ապրել ենք սուլթանական գահի շուքի տակ, քանի՞ հարիւր տարի երջանիկ կեանք ենք վարել... Մեր պապերն էլ, մեր հայրերն էլ, մեր որդիքն էլ սուլթանի տիրապետութեան մէջ ոչ մի վատ բան չեն կարող դտնել... Ով այստեղին չի հաւանում՝ թող կորչի գնայ Մասկովեայ... Մեզ համար այստեղ շատ լաւ է...

— Կեցցէ՛ նորին մեծութիւն սուլթանը, ոգևորուած բացականչեց մի ուրիշ մարդ։

Կոլչօն դրանց ճանաչեց։ Առաջին խօսողը Իւրդանն էր, երկրորդը — Ֆրատիւն...

Ապրիլեան անյաջողութիւնը սարսափելի է ոչ այնքան իր կոտորածներով, որքան անկման խայտառակութիւնով...

Կոլչօն խորը հոգոց քաշեց։

VIII.

ԴԱՇՏԱՎԱՅՐՈՒՄ.

Կէսօրին մօտ քաղաքից դուրս ընկած դաշտավայրում կանաչ ծառերի սուէրի տակ մի ընտանիք էր նստած։ Այդ դաշտավայրը ու այգին չորբաջի Իւրդանին էին պատկանում. ծառերի տակ նրա ընտանիքն էր նստած։ Բացի Իւրդանի ընտանիքից ոչ ոք չէր համարձակւում քաղաքից դուրս գալ, չնայելով որ քաղաքի անձնատուր լինելուց յետոյ՝ ամեն ինչ խաղաղ էր։ Լալկայի մահից յետոյ նրա կինը վտանգաւոր կերպով հիւանդացաւ և արդէն մի քանի օր է՝ անկողնից չէր վեր կենում։ Բժշկի պատուէրով՝ այսօր նրան քաղաքից դուրս էին բերել որ քիչ ազատ օդ շնչէ։

Քիչ հեռու նստած էր օստիկանը՝ որ պահպանէ չորբաջու ընտանիքը։

Այդտեղ կային և երկու օտար կանայք. մէկը մի յաղթանդամ, հաստ գեղջկուհի և միւսը՝ Ռադան։

Գեղջկուհին Բորեմիչկայի կինը՝ Ստայկան էր՝ որին Գինկան ազախին էր վարձել։

Գինկան էր ընդունել և Ռադային։ Հանդուցեալի մտերիմ ընկերուհու՝ Ռադայի ներկայութիւնը նրանց համար քաղցր ու վշտալի մխիթարութիւն էր։ Առաջաւոր արհամարանքն ու ատելութիւնն այժմ տեղի էին աւել աւելի մարդկային զգացմունքների դէպի այդ որբուհին։

Մենք գիտենք՝ որ Ստայկան ու Ռադան իրար հետ ծանօթ էին դեռ ևս Կլիսարից և երկուսն էլ կոտորածներին հաւասարապէս ենթակայ էին եղել։ Ստայկայի շնորհիւ՝ Իվանը կարողացաւ փրկել Ռադային։ Իր հասարակ, պարզ սրտով նա հասկացաւ Ռադայի ծանր դրութիւնը և օգնութեան ձեռք մեկնեց։ Հենց քիչ առաջ Օգնեանովի մասին խօսակցութիւն եղաւ և Հաջի-Ռոմսման հաւատացնում էր՝ որ նա կուզում սպանել է։ Ստայկան նկատեց՝ թէ Ռադայի դէմքն ինչպէս սարսափելի կերպով փոխուեց ու սրփրրթնեց։ Եւ նա ատեց կոյսին — որն այդպէս սառնասրտութեամբ էր խօսում Բոյչօի մահուան մասին։

— Է՛հ, կոյսը խօմ իր աչքերով չէ՞ տեսել վարժապետի մահը։ Այդ կկուն ի՞նչի է այդպէս ուրախանում — բարկացած փսփսում էր Ստայկան Ռադայի ականջին։

— Լռի՛ր, լռի՛ր, ցածր ձայնով պատասխանեց Ռադան։

Կարճ ժամանակից յետոյ Ստայկան նորից շշնջաց.

— Ռադա, այդ սև-սրթրրը բեղեր էլ ունի... Ի՞նչի չի ածելում։

Ռադան ակամայ ժպտաց։

Բարեբախտաբար՝ Ստայկայի վարմունքը ոչ ոք չնկատեց։ Ամենքը նայում էին Ստեֆչովի կողմը՝ որը նոր էր գալիս։

Երբ նա մօտեցաւ՝ ամենքը բերանները բացած՝ նրան էին նայում։ Նա ոգեւորութեամբ պատմեց թէ ի՛նչ հերոսութիւն է կատարել այն պատգամաւորութիւնը՝ որ իր և Իւրդան Դիմանդիևի առաջնորդութեամբ դիմաւորել է Սպիտակ-Եկեղեցու վրայ եկող Թոռան-բէյին։ Պատգամաւորութիւնը՝ երկար ջանքերից

յետոյ՝ կարողացել է քաղաքն ազատել Կլիսարի վիճակից հետեւեալ պայմաններով սակայն. —

Առաջին՝ քաղաքը պարտաւորուում է անմիջապէս Թոռան-բէյին հազար լիրայ տալ — որպէսզի սա բաւարարութիւն տայ իր զօրքին, որին խոստացել էր Սպիտակ-Եկեղեցին կողոպտելու իրաւունք տալ։

Երկրորդ՝ յանձնել բոլոր զէնքերը, նոյնիսկ դանակները։

Եւ երրորդ՝ կառավարութեանը յանձնել բոլոր կասկածաւոր մարդկանց։

Այդ կատարեալ հնազանդութիւնը փրկեց Սպիտակ-Եկեղեցին։ Թոռան-բէյը իր զօրքի միայն մի մասով քաղաք մտաւ՝ որ զէնքերն ընդունէ։ Այսպիսով չորբաջի Իւրդանն ու մտասմբ՝ Ստեֆչովը քաղաքի փրկիչները հանդիսացան։

Ինքնաբաւականութեամբ ու հպարտութեամբ այդ պատմութիւնն անելիս Ստեֆչովը ժամանակ-առ-ժամանակ չար հայեացքներ էր ձգում Ռադայի վրայ։ Ռադան ոչ մի անգամ երեսը նրա կողմը չդարձրեց, բայց զգում էր այդ ատելի մարդու ներկայութեան սարսափելի ծանրութիւնը։ Ստեֆչովի խօսակցութեան լրպիրշ ձևը նրա ջղերը գրգռում էր և ամեն մի խօսքը տանջալից կսկիծ պատճառում նրա սրտին։ Այդ մարդը նրա համար ճակատագրի անէծք էր՝ որ հալածում էր նրա բաղդը և անյաղթելի երկիւղ ու ատելութիւն զարթեցնում նրա մէջ։ Ցանկարծ՝ նա ակամայ Ստեֆչովին դարձաւ՝ աշխոյժ հայեացքով. Ստեֆչովը Բոյչօի մասին էր խօսում և խօսածը սաստիկ ուրախալի բան էր.

— Ուրեմն՝ կենդանի՞ է այդ անիծուածը, կատաղած ձայն տուեց Հաջի-Ռոմսման։

— Կենդանի է, սարերն է փախել, բացադրում էր Ստեֆչովը։ Բայց թէ այժմ կենդանի՞ է — չգիտեմ։ Կարելի է այժմ արդէն արծիւները կոցահարում են նրա դիակը։

Ցուզմունքից, ցաւից, Ռադայի սիրտը կծկուեց։

— Ես ձեզ ասում եմ՝ որ կոմսը կենդանի է, կոմսը չի մեռնում երբէք, խօսեց Հաջի Սիմոնը։ Նա շատ անգամ է մեռել ու այնուամենայնիւ կենդանի է մնացել։ Ես չեմ հաւատում։

— Միայն թէ այդ անիծուածն այստեղերքը չգայ, թէ չէ մեզ էլ կվառէ Կլիսարցիների պէս։

— Ապա թող համարձակուի։

— Գլխաւորին բռնել չյաջողուեց, թէ չէ՝ նա էլ նոյն վիճակին կարժանանար՝ ինչ որ Կանդովն ու միւսները, ասաց Ստեփչովը։

— Ափսոս են բոլորն էլ, բայց ի՞նչ արած, քչերին պէտք է զոհ տանք որ հազարներին փրկենք, ասաց մի ուրիշը։

— Էլ ինչո՞ւ են այդ թափառաշրջիկները մեզ մօտ գալիս։

— Ինչո՞ւ են գալիս։ Գալիս են՝ որ թաքնուեն, կենդանութեամբ խօսեց Գինկան։

Ստեփչովը զարմացած նրան նայեց։

— Դինո՛, ուրեմն քո կարծիքով Իւրդան պապը վա՞տ արեց։

— Հա՜, ինչո՞ւ չէ... շա՜տ լաւ արեց... կէս բարկացած, կէս արհամարհանքով պատասխանեց Գինկան. — կարծես նրանք բոլոր գարներ չեն... Ցիգան են, թուրք են... Իսկ մէկդ մտածե՞լ էք ո՞ւմ համար են գնում մեռնելու այդ մարդիկ... Գինկայի դէմքը կարմրել էր. աչքերը փայլում էին։

— Խելքդ թռցրել ես, խե՛լքդ, հեծեծաց նրա հիւանդ մայրը։

— Այդ «քո» մարդոց համար, չարացած խօսեց Ստեփչովը՝ այդ քո ազգասէրների համար, որոնք բարեհաճեցին մեզ այցելութեան գալ, քո կարծիքով պէտք է հանդիսաւոր ընդունելութիւն պատրաստէինք, պէտք է մեր երեխաներին երգերով ու աղաղակներով դիմաւորելու հանէինք, բաց անէինք մեր դռները, գաթայ թխէինք, ինչպէս շատերն արդէն պաքսիմատ էին պատրաստում։

— Դիտեմ, դիտեմ, կատաղած ընդհատեց նրան Գինկան, նրանց թուրքերի ձեռքը մատնեցէք, սրախողխող արէ՛ք, կտոր-կտոր արէք, խմեցէ՛ք նրանց արիւնը — ինչպէս արիք երեկուայ ե-բիտասարդներին։ Երէկ տեսաք Կանդովի մօրը, ի՛նչպէս էր նա փողոցում՝ իր գլխին վայ տալիս... Օ՜հ, քո՛յր իմ, քոյրի՜կս, Լալկա... Ո՜հ, Աստո՜ւած իմ, Աստո՜ւած իմ... Տէ՜ր Աստուած... Փրկի՜չ...

Գինկան ծառին յենուեց և թաշկինակով աչքերը ծածկեց որ արցունքով լիքն էին։ Նա բարձր հեկեկաց։ Ռադան, նոյնպէս արցունքն աչքերին՝ նստեց նրա կողքին և սկսեց մխիթարել։

Ստեփչովին այդ անկեղծ վիշտը բոլորովին կատաղեցրեց։ Ոստիկանը, որ հասկացաւ թէ խօսքն ինչի՞ մասին է՝ մօտեցաւ Ստեփչովին ու Սիմոնին և ցածր ձայնով ասաց.

— Լսե՞լ էք, վանքի դեռի մօտ Կլիսարցի մի նոր խռովարար է երևացել։

— Ի՞նչպէս, քեզ ո՞վ ասաց, շտապով հարցրեց Ստեփչովը։

— Ցիգան Արաբեան, բանջար հաւաքելիս տեսել է։

— Պէտք է շուտով յայտնել, խօսեց Ստեփչովը կանաչների վրայից ֆէսը վերցնելով։ Քիչ մնաց այսօր կորչէինք, այժմ մի ուրիշ սրիկայ է եկել։

— Այդ — նա ինքն է, անսպասելի կերպով ասաց հաչի Սիմոնը։

— Ո՞վ, հարցրեց Ստեփչովը։

— Կոմսը։ Ես չէ՞ի ասում որ նա կենդանի է։

— Աւելի լա՛ւ. նորից կոտորած կլինի...

Եւ առանց մնաս բարև ասելու՝ Ստեփչովը ոստիկանի հետ զրոյց անելով՝ դէպի քաղաք դիմեց։

IX.

ԴԱՇՆԱԿԻՑ.

Մեծամասնութիւնը նոյնիսկ չնկատեց Ստեփչովի բացակայութիւնը։ Ամենքը յուզուած Իւրդանեցայով էին զբաղուած՝ և ամէն կերպ աշխատում էին նրան մխիթարել։

Իւրդանեցային այդին տարան։ Ամենքից յետոյ Ռադան և Ստայկան էին գնում։ Ստայկան պինդ սեղմեց Ռադայի ձեռքը և հարցրեց։

— Ռա՛դա, լսեցի՞ր, վարժապետը կենդանի է։

Բայց Ռադան, նոր փոտնդների երկիւղից՝ ոչինչ չպատասխանեց։

Նախազգացումը նրան ասում էր՝ որ Կլիսարի անյաջողութեան այդ նոր զոհը, որ այսօր է Բալկաններից իջել և որին

թուրքերի ձեռքը մատնելու համար Ստեփչովն այդպես քաջութեամբ դէպի քաղաք դիմեց, հաւանականօրէն ոչ ալ ոք էր, եթէ ոչ՝ «նա ինքն». և Ռադայի սիրտը կծկուեց երկիւղից ու յուզմունքից։

— Այդ աղջիկն ուր է վազում, ասաց Ստայկան կանգ առնելով և ցոյց տալով դաշտում վազող աղջկանը։

Դա Մարիյկան էր։ Խեղճ աղջիկը մի քանի ժամ անհետևանք թափառելուց ու Սոկոլովին որոնելուց յետոյ այժմ յոգնած՝ յետ էր գնում։ Ռադային Բոյչօի այդ միակ մօտիկ մարդուն տեսնելով՝ նա ուրախացաւ։ Զնայելով Բոյչօի խիստ պատուէրներին՝ Մարիյկան զգում էր՝ որ Ռադան վտանգաւոր չէ, որ Բոյչօ քեռին մոռացաւ Ռադայի մասին ասել և որ սրան ինքը կարող է ամեն ինչ պատմել։

Ռադան նրան դիմեց։

— Այս կողմը, այս կողմն արի՛, Մարիյկա, ի՞նչպէս ես։

Աղջիկը կանգնեց, անվստահութեամբ շուրջը դիտեց և հարցրեց.

Ռադկէ, չգիտե՞ս բժիշկը որտեղ է։

— Սոկոլովը, չգիտեմ... Հիւանդ կայ, հարցրեց Ռադան։

— Ո՛չ, Ռադկա, ինձ ուղարկեց... Բոյչօ քեռին...

Մարիյկայի ձայնը կիսին կտրուեց։

Բայց Ռադան հասկացաւ։ Նա զգաց՝ որ ոյժերն իրան դաւաճանում են և վախեցած շուրջը նայեց։

Այդ րոպէին երևաց Ստեփչովը և իր բպէյի աչքերը Մարիյկային յառեց. նա նկատել էր վերջինս և յետ էր դարձել։

— Աղջի՛կ, ձեռքինդ ի՞նչ է, հարցրեց նա։

Մարիյկան սփրթնեց։ Նա վախեցած յետ գնաց և ձեռքերը յետևը պահեց։

— Տուր տեսնենք այդ թուղթը, ասաց նա և մօտեցաւ։

Աղջիկը խելագարի պէս ճչաց և վազեց դէպի վարդի թփերը։

Ստեփչովի դլխում մութ կասկած ծագեց։ Նա հասկացաւ՝ որ թուղթը մի կարևոր դաղտնիք է պարունակում։ Ստոյկեան պապի աղջիկն ինչու պէտք է Ռադային որոնէր և այսպիսի ժամանակ՝ նամակն ումից պէտք է լինէր։ Չլինի՞ Օգնեանովից է։ Դա չլինի՞ Բալկաններից իջած խռովարարը։ Այդ մտքից նրա դէմքը փայլեց չարագուշակ ուրախութեամբ։ Նա Մարիյկայի յետևն ընկաւ։

Ռադան երկիւղով Մարիյկային էր հետևում։ Սա թփերի մօտ մի հովիւ տեսնելով՝ ուղղութիւնը փոխեց։ Այդպիսով՝ խեղճ աղջիկն իր ոտքով էր գալիս դէպի Ստեփչովը։

Նոր վտանգը նկատելով՝ Մարիյկան սկսեց աղաղակել կարծես իր դաժան հալածիչի դէմ օգնութիւն էր խնդրում։

Մեծ վրդովմունքով Ստայկան կատաբուածին էր հետևում։ Նա չէր կարողանում հասկանալ՝ թէ Ստեփչովի ինչի՞ն է պէտք այդ թղթի կտորը, բայց Ռադայի դէմքին նայելով՝ գլխի ընկաւ՝ որ այդ թուղթը Ստեփչովի ձեռքը չպէտք է ընկնի։ Եւ այդ հասկացաւ թէ չէ՝ եղնիկի թեթևութեամբ վազեց այն կողմը, հասաւ Ստեփչովին, բռնեց նրա փեշից որ այդպիսով Մարիյկային ժամանակ տայ փախչելու։

Ստեփչովը յետ դարձաւ, գեղջկուհուն նայեց։ Նա իր աչքերին չէր հաւատում։

— Քեռի, ինչու՞ ես այդ աղջկայ յետևն ընկել, բարկացած հարցրեց նրան Ստայկան փեշը բաց չթողնելով։

— Թող, թող ինձ, խոզ, արհամարհանքով աղաղակեց Ստեփչովը և նրա ձեռքից դուրս պրծաւ։ Հա՜... քեզ նա՛ է ուղարկել։ Դիտե՛մ, գիտե՛մ... Կոստա՛, Կոստա՛, դրան բռնի՛ր, ձայն տուեց նա հովուին՝ որ Մարիյկայի աղաղակներից զարթնել էր։ Հովիւը կտրեց աղջկայ ճանապարհը։ Հալածուած եղնիկի պէս վերջինս կանգ առաւ, ապա յետ վազեց և գոմէշների արանքում պահուեց կարծես նրանցից էր պաշտպանութիւն խնդրում։

Ստայկան, որի մէջ զարթնել էր իր վայրի բնազդը, ուզում էր Ստեփչովի վրա յարձակուել, բայց տեսնելով որ Ռադան ձեռքով կանչում է՝ յետ դարձաւ։

Նա սրտի կսկիծով էր նայում՝ թէ ի՞նչպէս երկիւղից կիսակենդան աղջիկը գոմէշների կողքին խոտի մէջ պառկեց և տեղում անշարժ մնաց։ Մարիյկան՝ ջրաղացում տեղի ունեցած այն սարսափելի դիշերից յետոյ ընկաւոր էր դարձել և ընկնում էր՝ երբ

մի բանից սաստիկ վախենում էր։ Գոմէշներից մէկը գլուխը նրա կողմը դարձրեց, հեզութեամբ ու քնքշութեամբ հոտոտեց նրան և նորից բարձրացրեց իր թաց դունչն ու շարունակեց որոճալ։

Ստեֆչովն արագութեամբ սկսեց որոնել նամակը, որն ինչպէս տեսել էր՝ Մարիկան ծոցն էր դրել։ Բայց չգտաւ։ Որոնեց նրա տակը, շուրջը, բայց իզո՞ւր, թղթի կտորն անյետացել էր, կարծես գետինն էր անցել։

Ստեֆչովը կատաղած շուրջն էր նայում։

— Զլինի՞ սա կուլ տուեց, ասաց նա և խստութեամբ գոմէշին նայեց։

Նա չէր կարողանում հասկանալ՝ թէ թուղթն ո՞ւր կորաւ։

— Կարելի է այս անիծուածը դաշտում ցած գցեց, ասաց նա և Կոստայի հետ գնաց։

Մարիկան շուտով ուշքի եկաւ։ Նա իսկոյն ձեռքը ծոցը տարաւ և այնտեղ ոչինչ չգտնելով՝ վերկացաւ տեղից ու հեկեկալով դաշտավայրից հեռացաւ։ Ստեֆչովն ու Հովիւը երկար ժամանակ որոնում էին։ Վերջապէս՝ Ստեֆչովն շտապով քաղաք գնաց։ Երեւի նամակը գտել էր։ Ռադայի մօտից անցնելիս՝ նա մի դաղանային հայեացք ձգեց նրան, կարծես ուզում էր ասել.

— Այսօր իսկ նրա գլուխը ցցի վրա տեսնենք։

Ռադան տեղում քարացած մնաց։ Ստայկան գոմէշներին մօտեցաւ։ Նա չէր կարողանում հասկանալ՝ թէ Ռադան ինչո՞ւ թոյլ չտուեց՝ որ ինքն օգնէ Մարիկային։ Նա կատաղութեամբ նայում էր Ստեֆչովի հեռացած կողմը և անդիտակցաբար շոյում գոմէշի թաւամազ ճակատը։

Գոմէշը հոտոտեց անծանօթի ձեռքը, տեղից շարժուեց և առաջին ոտքը փոխեց։

— Ռադա՛, ահա՛ քո թուղթը, բացականչեց դեղչկուհին գետնից մի ճիպուտած թուղթ բարձրացնելով։

Երբ Մարիկան ուշաթափուած խոտերի վրա ընկաւ, թուղթը ձեռքից ընկել էր և գոմէշը նրան տակն էր գցել։

Ռադան խլեց թուղթը, դողդոջուն ձեռքերով բաց արեց և տառերին նայեց.

— Բոյչո՞ց է... բացականչեց նա։

Թղթի վրա գրած էր.

«Բալկաններից իջայ։ Բե՛ր կամ ուղարկիր հագուստ և տեղեկութիւններ։ Շուտով»։

Ստորագրութիւն չկար։

Ռադան կարդաց երկու, երեք անգամ և նկատեց, որ թուղթը իր այն նամակի կէսն է, որը Բորեմիչկայի հետ Բոյչոին էր ուղարկել։ Այդ կտորի վրա դեռ ևս երևում էր «Ռադա» ստորագրութիւնը։ Նրա աչքերին արցունքներ երևացին։

— Այդ թղթի վրա ի՞նչ է գրած, Ռադա, հարցրեց Ստայկան։

— Կենդանի է, կենդանի է, քոյրի՛կ, խեղդուած ձայնով պատասխանեց Ռադան։

Ստայկան երջանկութիւնից՝ ծիծաղեց.

— Վարժապետը կենդանի՞ է, Ռադա, ես քեզ ասում էի որ այն սև-սրթերը ոչինչ չգիտէ։

— Բոյչոն կենդանի է, կենդանի, քոյրիկ։ Գինկային ասա՝ որ ես տակաւ եմ և գնացի։ Նամակի մասին բան չասես։

Եւ Ռադան գնաց այգիների ուղղութեամբ։

X.

ՍԷՐԸ՝ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ.

Անհրաժեշտ էր՝ որ Ռադան պարզէր իր մտքերը և որևէ վերջնական վճռի դար։ Նա նստեց խոտերի վրա մի ծառի յետևը՝ որը նրան ծածկում էր կողմնակի աչքերից և սկսեց գործերի դրութեան մասին խորհել։ Հանգամանքները ծանր էին։ Բոյչոի կեանքը մաղից է կախուած, իսկ ինքը ոչինչ չգիտէ... Այն մարդը, որին տեսել է ցիգանը՝ անպատճառ Բոյչոն պէտք է լինի... Այո՛, այո՛, նա։ Հետևապէս հարկաւոր է որքան կարելի է շուտով նրան նախազգուշացնել և ազատելու միջոց տալ։ Ի՞նչ, մի աղջկայ համար՝ դա հեշտ խնդիր չէ։ Բաշիբուզուկները թափառում էին շրջակայքում որսի յուսով... Ռադան դողի մէջ ընկաւ, երբ մտածեց որ

նա կարող է բաշիբուզուկների այդ սարսափելի դազանների ձեռքն ընկնել... Բայց քանի որ խօսքը Բոյչօի փրկութեան մասին է՝ ոչ մի բանից սարսափել չի կարելի... Այո՛, այո՛, այս բոպէին ինքը կերթայ... Նա հագուստ է խնդրում, իհարկէ, հասարակ, խաղաղ մարդու որ կասկածից հեռու մնայ... Փոխած հագուստով նա կարող էր և Սպիտակ-Եկեղեցի գալ։ Բայց այժմ ո՞րտեղ ճարէ հագուստ և ո՞վ ինքն իրան այդպիսի ակնյայտնի վտանգի կենթարկէ և իր հագուստը նրան կտայ։ Եւ վերջապէս՝ ե՞րբ որոնէ — քանի որ ամեն բոպէն թանկ է այսպիսի հանգամանքներում։ Նրան սկսեց մի ուրիշ հարց էլ զբաղեցնել. — ո՞րտեղ է թաղուած Օգնեանովը։ Նամակում այդ չէ գրած. երևի նա զգուշութեան համար այդ գաղտնիքը Մարիյկային է հաւատացել որ սա բանաւոր կերպով յայտնէ Սոկոլովին... Իսկ Մարիյկան արդէն գնացել է... Ի՞նչպէս եղաւ՝ որ քիչ առաջ չմտածեց հարցնելու Բոյչօի տեղը։ Լաւ է՝ որ գոնէ գիտէ որ նա վանքի հովտումն է,

Բոլոր այդ դատողութիւնները կայծակի արագութեամբ անցան նրա մտքովը։ Նա վճռեց անմիջապէս վանքի հովիտը գնալ։ Բայց նախապէս ժառերի յեւևից ուշադրութեամբ նայեց դէպի այգին։ Դռան մօտ մի մարդ տեսաւ ֆէսը գլխին, Եւրոպական մոխրագոյն հագուստ հագած։ Առաջին պահ՝ Ռադան նրան Ստեֆչովի տեղն ընդունեց, բայց ո՛չ, սա աւելի կարճահասակ է և տեսքն էլ ինչ-որ ուրիշ տեսակ է...

Կոլչօն էր, Ռադան ճանաչեց, ուրախութիւնից սիրտը թրնդաց։ Թէև Կոլչօն կոյր է և դժուար թէ որևէ բանով կարողանայ իրան օգնել, բայց կարող էր գոնէ նրա հետ խորհրդակցել։ Աստուած ինքն էր ուղարկել նրան։

Բայց Ռադան խիստ վախեցաւ՝ երբ տեսաւ որ Կոլչօն այգին է մտնում։ Բարձր ձայն աւեց.

— Բա՛յ Կոլչօ, Բա՛յ Կոլչօ, սպասի՛ր և դէպի նա վազեց։

Կոլչօն ձայնը լսեց և կանգ առաւ։

Ռադան նրան մօտեցաւ։

— Բա՛յ Կոլչօ։

— Ռադկա, ես քեզ էի որոնում, ասաց կոյրը։

— Բոյչօն կենդանի՞ է։

— Կենդանի՞ է, կենդանի՞, բա՛յ Կոլչօ, յուզուած ասաց Ռադան։

— Լեռներո՞ւմն է, աւելացրեց Կոլչօն։

— Ո՛չ, Կոլչօ, վանքի հովիտն է իջել...

Կոլչօն յուզուեց.

Ի՞նչ ես ասում, Ռադկա։

— Այնտե՛ղ է, այնտեղ, բա՛յ Կոլչօ, նա այս բոպէիս այնտեղ է, նամակ ստացայ... Հագուստ է խնդրում, նրան հագուստ է հարկաւոր, բա՛յ Կոլչօ... Թուրքերը նրա տեղը գիտեն, ցիգաններն են իմացրել... Բայց կգնամ նրան զգուշացնելու... Նա կփախչի... Նրան չեն կարող բռնել, բայց հագուստ է պէտք... Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ... Ժամանակն էլ չի սպասում...

Մինչդեռ Ռադան կցկտուր, արտասուախառն ձայնով Կոլչօին պատմում էր բանի էութիւնը՝ վերջինս արդէն էլքը գտել էր։

— Հագուստ կա՛յ, Ռադկա, ասաց նա։

— Ա՜խ, բա՛յ Կոլչօ, ասա՛, ո՞րտեղ է...

— Այստեղ, մօտիկ, բարեկամիս տանը...

— Բա՛յ Կոլչօ, դէ շուտ արա...

— Մի բոպէ միայն սպասիր։

Եւ Կոլչօն շտապով հեռացաւ։

Շուտով մի ալչիկ երևաց՝ ձեռքին մի կապոց։ Կապոցի մէջ կոյրը մի ֆէս էր դրել, մի երկար սիւրտուկ և շալւար։ Այդ բոլորը մի քանի բոպէ առաջ նրա հագին էր։

Նրա բարի սիրտը դրդեց ուրիշ երկու բան էլ դնել կապոցը, որոնց մասին Ռադան ամենևին չէր մտածել. — մի հաց և հարիւր գռօշ փող։

Ռադան խլեց կապոցն ալչկանից և այգիների միջից դէպի հիւսիս վազեց։

— Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ասում էր նա դառնացած, նա իսկի ինձ տեսնել էլ չի՞ ուզում... Ի՞նչ մեղք եմ արել... Չէ՞ որ ես նրան սիրում եմ...

XI.

ԲԱՇԻԲՈՒԶՈՒԿԸ.

Ամայի ջրաղացում թաղնվելով՝ Օգնեանովն անհանգստութեամբ ու անհամբեր սպասում էր իր բարեկամներից որևէ մէկի գալուն կամ Մարիյկայի վերադառնալուն, բայց ժամեր սահեցին, կէսօրն արդէն անցաւ և հովտում դեռ ևս ոչ ոք չէր երևում։

Նա գլուխ էր տրաքացնում այդքան ուշանալու պատճառը գտնելու։ Նա ենթադրում էր որ ամենավատ դէպքում՝ Մարիյկան ոչ բժշկին, ոչ Բրզոբէգունեկին գտած չի լինիլ — որոնք գուցէ՝ հանգամանքներից ստիպուած թաղնվել են։ Նա երբէք չէր կասկածում որ իրան այնպիսի մի սարսափելի վտանգ է սպառնում։ Նա չգիտէր՝ որ իր գալը յայտնի է թէ՛ բարեկամներին թէ՛ թշնամիներին և որ իր վիճակը կախուած է այն հանգամանքից՝ թէ ո՞րն աւելի շուտ կհասնի թշնամիները՝ թէ բարեկամները։

Ցանկարծ ճանապարհի վրա մի մարդ երևաց որ Օգնեանովին մեծ շփոթմունքի մէջ գցեց։

Մի թուրք էր։

Բարձրահասակ ու ամրակազմ, կանաչ չալման գլխին փաթաթած, երկար եաթաղանն ու այլ զէնքեր գոտիկը խրած։ Ճակատին մի տոպրակ։

Երևի դա այն թուրքերից է՝ որի մասին պատմում էր Մարիյկան։

Մի բաշիբուզուկ։

Այստեղ ի՞նչ գործ ունէր։

Օգնեանովը դիտում էր՝ ատրճանակը ձեռքին պատրաստ պահած։

Մեծ քայլերով բաշիբուզուկը շաւղից վեր էր բարձրանում։

Նա անցաւ ջրաղացի մօտից առանց կանգ առնելու։

Օգնեանովը վրդովմունքի մէջ էր։ Նա կատարեալ անգործութեան ու անշարժութեան էր մատնուած։

Նրան միայն մի բան էր մնում. դիտել ու սպասել։

Թուրքն աւելի ու աւելի վեր էր բարձրանում։

Նա անցաւ դեռ քարերի վրայով, մտաւ վայրի բոլերի մէջ — և կանգ առաւ։

Օգնեանովը նկատեց՝ որ նա կանգ առաւ հէնց այն տեղը, որտեղից, սկսւում էր լեռները տանող շաւիղը։

Օգնեանովը սփրթնեց։

Այդ միակ շաւիղն էր՝ որով հարկաւոր դէպքում ինքը կարող էր լեռները փախչել։ Ահռելի, լերկ ժայռերն ուրիշ կողմից անմատչելի էին։ Այդ մարդն արդեօք դիտաւորութեամբ չկտրեց իր ճանապարհը։ Նրա յետևից արդեօք ուրիշ թուրքեր չե՞ն գալիս։

Ցանկարծ թուրքը չալման հանեց՝ որ քանդուած ծայրը պրնդացնէ։

Այդ պատճառով նրա երեսն ու գլուխը բացուեցին.

Օգնեանովը տեսաւ մի երիտասարդ, գեղեցիկ դէմք, լայն ճակատով, խիտ, շէկ մազերով — որ գանգուրներով ճակատին էին թափուել։

Օգնեանովը զարմանքից ակամայ աղաղակեց։ Նա դէպի պատուհանը վազեց, մատները շրթունքներին մօտեցրեց և շշուացրեց։

Բաշիբուզուկը դէպի ջրաղացը նայեց՝ որտեղից շշոց էր գալիս և Օգնեանովին տեսնելով՝ մօտ վազեց։

Դա Սոկոլովն էր։

Ընկերները սիրով համբուրուեցին։

— Բոյչօ, Բոյչօ, եղբայրս, կենդանի՞ ես։ Այստեղ ի՞նչ ես անում, բացականչեց Սոկոլովը յուզմունքից արտասուելով։

— Իսկ դո՞ւ ինչ ես անում, բժիշկ. և ի՞նչ հագուստով ես։

— Դու այստեղ ի՞նչ ես անում, եղբայրս, ե՞րբ ես եկել։

— Այս գիշեր։ Ինչո՞ւ այսքան ուշացար։

— Ե՞ս, զարմացած հարցրեց Սոկոլովը։

— Մարիյկան ո՞ւշ գտաւ քեզ։

— Ի՞նչ Մարիյկան։

— Ի՞նչպէս... Մի՞թէ նա քեզ չգտաւ, բացականչեց Օգնեանովը. նրա հետ այսօր քեզ մի նամակ եմ ուղարկել...

— Ինձ ոչ ոք չէ գտել և չէր էլ կարող գտնել, պատասխանեց Սոկոլովը։

Օգնեանովը զարմացած նրան նայեց։

— Բայց ո՞ր քամին քեզ բերեց այստեղ։ Ո՞ւր ես գնում։

— Ես։ Ես փախչում եմ։

— Փախչո՞ւմ ես։

— Այո՛, մի՞թէ հաղուստիցս չես հասկանում։

— Եւ դու Սպիտակ-Եկեղեցուց նո՞ր ես դուրս եկել։

— Դեռ ևս գիշերն եմ Սպիտակ-Եկեղեցուց դուրս եկել — Խամբարովի ջրաղացում թագ էի կացել...

— Ի՞նչպէս. մենք իրար մօտ ենք եղել և չե՞նք իմացել... Տարօրինակ է, տարօրինակ... Ո՞ւր կորաւ Մարիյկան... ասաց Օգնեանովը որ այժմ անհանգստանալու նոր պատճառ ունէր։ Իսկ այժմ ո՞ւր ես գնում։

— Լեռները։ Մինչև այժմ անցագրի ու փողի էի սպասում։ Բայց մենք այլևս չենք բաժանուիլ... Կեանքն էլ, մահն էլ — միասին... Ա՞խ, Բոյչո. Բոյչո, ի՞նչ սոսկալի դժբախտութեան հասաւ մեր հայրենիքը, ով կմտածէր...

— Նստի՛ր, նստի՛ր, խօսենք։

XII.

ՄԻ ԶԱՊՍՏԱՄԲԻԱԾ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Երկու բարեկամները անկիւնում, դեռնի վրա նստած՝ իրար պատմեցին բոլորը, ինչ որ տեղի էր ունեցել վերջին տասն օրը Կլիսարում և Սպիտակ-Եկեղեցում։

Օգնեանովի համար ամեն ինչ պարզուեց Սոկոլովի պատմութիւնից — աւելի ճիշտ՝ հաշուից յետոյ... Սպիտակ-Եկեղեցին, յիրաւի, Կլիսարի հետ չէր ապստամբուել։ Նա չէր ապստամբուել, քանի որ չէին ապստամբուել նաև միւս բոլոր քաղաքներն ու

գիւղերը՝ թէև աւելի լաւ էին պատրաստուած։ Վաղաժամ սկիզբը փչացրեց ամբողջ գործը...

Կլիսարի շարժման առաջին լուրն ստանալուց, կոմիտէն երկու կուսակցութեան էր բաժանուել. մի կուսակցութիւն այն կարծիքին էր, որ պէտք է միայն պաշտպանողական դիրք բռնել և երբ դրսից օգնութիւն կ'ստանան, ա՛յն ժամանակ միայն բացարձակ ապստամբութիւն յայտարարեն։ Միւս կուսակցութիւնն ասում էր, որ ինչ էլ լինի, պէտք է անմիջապէս սկսել ապստամբութիւնը։

Բայց կար և երրորդ կուսակցութիւնը — ամենաուժեղը — որը հպատակութեան կողմնակից էր։ Այս կուսակցութիւնը բռնեց կոմիտէի ամենաեռանդուն անդամներին — Սոկոլովին, Պապովին և խմբագրին և ձերբակալեց։ Ապա՝ Իւրդանի ղեկավարութեամբ մի պատգամաւորութիւն ուղարկեց Կարլովո, որը հնազանդութիւն և հպատակութիւն յայտնեց կառավարութեանը Սպիտակ-Եկեղեցու կողմից։

Կառավարութիւնը, որ խիստ շփոթմունքի մէջ էր, ուրախութեամբ ընդունեց այդ յայտարարութիւնը և անմիջապէս յիսուն բաշիբուզուկ ուղարկեց Սպիտակ-Եկեղեցի որպէսզի զէնքերն ընդունեն և քաղաքը պաշտպանեն։

Շուտով ոստիկանատան բակում հրացանների, ատրճանակների և եաթաղանների մի ամբողջ բլուր կազմուեց։ Մինչդեռ լեռներում ինչ-որ մի բան երևաց։ Կարլելկովն այնքան շատ էր խօսել, այն խոհրդաւոր զօրաբանակի մասին, որը պատրաստ էր որոշած ժամին-թռչել, օգնութեան գալ՝ որ ամենաթերահաւատներն էլ սկսեցին հաւատալ։

Բոլոր հայացքներն ուրախութեամբ յառած էին Բալկանի կատարներին, երևալիք դրօշակին... Միքանիսին նոյնիսկ թուաց՝ որ Բալկանի ստորոտում զօրքեր են տեսնում — թփերը մարդոց տեղ էին ընդունել։ Միւսները, որպէս աւելի սրատես, արդէն ճանաչում էին որ եկողները մոսկովցիներն են՝ մեծ մորթէ փափախներով։ Այդ ժամանակ տէր-Սաւրին բացեց իր խրճիթը (որ բանտի տեղ էր ծառայում) և բանտարկեալներին ասաց.

— Այսուհետև մեղք է, որդիքս ձեզ բանտարկված պահելը... Միջոն արդարացի էր. գնացէք տեսէք թէ՝ լեռներում ինչ է երևում...

Երեք բանտարկեալներն իսկոյն խրճթից դուրս թռան: Կէս ժամում՝ մի քսան-երեսուն կօշկակարի գլուխ անցած՝ նրանք վերցրին կօնակն էլ, զէնքերն էլ, բէյին էլ իւր ստորադրեալներով: Քաղաքն ընդհանուր հրճւանքի մէջ էր — Սպիտակ-Եկեղեցին ապստամբել էր:

Բայց շուտով սոսկալի իրականութիւնն ամենքին էլ ապշեցրեց. Բալկանից մի հովիւ իջաւ և յայտարարեց, որ լեռներում ոչ ոք չկայ: Իսկ Թոռան-Բէյն արդէն մօտենում էր Սպիտակ-Եկեղեցուն, որ հողին հաւասարեցնի: Նոյն ժամանակ մի այլ լուր էլ կրկնապատկեց ընդհանուր երկիւղը:

Կլիսարցի երեք ապստամբներ լեռներից իջել էին և ապստամբել քաղաքի ծայրին, դպրոցում: Ծառայի կինը ընդունել էր նրանց և կերակրել էր, որովհետև երկու օր է՝ ոչինչ չէին կերել: Ապա՝ նրանց յանձնարարութեամբ իմացրել էր Բրզոբէգունեվին որը նրանց հագուստ ու ծխախոտ էր բերել: Բայց դեռևս մի-մի պապիրոս էլ չէին ծխել, որ Թուրքերը չորս կողմից դրպրոցը շրջապատեցին: Այդ ժամանակ Բռզոբիգունեվն էլ նրանց հետ էր: Փախչելու ո՛չ մի կարելութիւն չկար: Թուրքերն սկսեցին պատուհաններից, բակից դնդակ սրծակել: Նուտով երկու կլիսարցիները վերք ստացան. — դրանք դուրս եկան և անձնատուր եղան: Տեղնուտեղը նրանց կտոր-կտոր արին: Բռզոբեգունեվը դուրս թռաւ և երկու անգամ ատրճանակը պարպեց: Նա մի Թուրքի վիրաւորեց, բայց ինքն էլ ընկաւ՝ միաժամանակ տասը դնդակ ընդունելով մարմնի մէջ: Նրան էլ կտրատեցին: Միայն Կանդովը դուրս չէր գալիս: Բոլորը հրացանի փողերը դռանն էին ուղղել, որտեղից պէտք է նա դուրս գար: Բայց նա չէր երևում: Ցանկարծ տունը ճռճռաց և առաստաղը տեղ-տեղ ցած իջաւ: Կանդովը դուրս թռաւ և հանպիստ կանգնած, ձեռքերը կրծքին խաչակնքած, կոչեց.

— Պատրա՛ստ եմ, խփեցէ՛ք:

Պատասխանի փոխարէն՝ միանգամից երեսուն հրացան տրաքուեց դէպի այդ հեշտ նպատակակէտը: Բայց ոչ մի գնդակը նրան չդիպաւ: Նա դուրս թռաւ սրահից, բակից և եկեղեցին մտաւ, որի դուռը բաց էր: Հրացանները պարպւում էին, բայց անօգուտ: Բայց ահա երկու գնդակ միանգամից նրան դիպան և ապստամբն արիւնաթաթախ՝ ընկաւ եկեղեցու շէմքին... Նրան էլ մորթեցին... Դրանից յետոյ, սկսեցին բժշկին որոնել: Քաղաքի բոլոր ճանապարհներին պահապաններ էին կանգնեցրած:

Փրկութեան միայն մի՛ ճանապարհ կար. — պահուել որևէ բարեկամի տանը: Բարեբաղդաբար տէր-Դիմչոյի տունը մօտիկ էր. Սոկոլովը վազեց այնտեղ — դուռը ծեծեց:

— Դիմչո, ինձ տեղ տուր, ասաց բժիշկը:

— Չեմ կարող, չեմ, բժիշկ, քեզ տեսան որ այս կողմն էիր վազում, ինձ էլ վտանգի մէջ կդցես, ասաց տէր-հայրը և քաղաքավարի կերպով բակից դուրս արեց նրան...

Սոկոլովը բոլորովին շփոթուած, յետևն արդէն քայլերի ծայն լսեց և բոլոր ոյժով վազեց մի խուլ փողոց որի ծայրին իր մի ազգականն էր ապրում: Նա դուռը ծեծեց և տեղ խնդրեց:

Բայց Նիչոն իսկոյն հասկացաւ բոպէի լրջութիւնը.

— Խելքդ թռցրե՞լ ես, ի՞նչ է... ուզում ես ինձ ոտով-գլխով կորցնե՞ս... Ես կնկայ, երեխի տէր եմ... այս խոսքերով նա բռնեց բժիշկի ձեռքը և դուրս արեց:

Սոկոլովը միւս փողոցը վազեց:

— Կանգնի՛ր թէ չէ կխփենք, գոռում էր նրա յետևից քաղաքի պահապաններից մէկը: Սոկոլովը կանգ առաւ, բայց ո՛չ այն տեղը ուր ասում էր բոլգար-պահապանը. այլ աւելի հեռուն, Սարաֆովի դարպասի առաջ: Որպէս տան բժիշկ, Սոկոլովը փորձ արեց հիւրընկալութիւն գտնելու, բայց մերժում ստացաւ: Նրա ձայնը լսելուն պէս՝ Սարաֆովը դուռը վրա զարկեց և կողպեց:

Այնուհետև ամեն ինչ լռութեան մէջ խորասուզուեց:

XIII.

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ։

— Սատանա՜ իմ, ինչ խայտառակութիւն է, հեժեժաց Օգնեանովը։

— Քաղաքն ահաբեկուած է, եղբայր, դաւաճանութիւնների և ստորութիւնների բուն է դարձել, մռայլուած խօսեց Սոկոլովը։

— Բարեկամներս ու գործակիցներս, ինչպէս քեզ ասացի, շարունակեց Սոկոլովը, առանց ամաչելու ինձ վռնդեցին, բոլորը առաջս փակեցին իրանց դուռը... Թշնամիքս մօտենում էին և ես արդէն քաղաքի ծայրին էի։ Այդ ժամանակ մտքումս մի յանդուգն վճիռ կայացրի. — փորձ անեմ պահապանների գնդակներից փախչելով ազատուեմ, դուրս գամ մեծ ճանապարհը։ Միայն այդ ելքն էր մնում ինձ... Երբ Վելչեվի պատին հասայ, Թուրքերն արդէն մի երեսուն-քառասուն քայլ հաղիւ էին հեռու՝ կողքիս մի դուռ բացուեց... Կանգ առայ... Տեսայ, որ Միլկա Տուղուրկինի տունն է. Դարպասի մօտ կանգնած էր ինքն, աղջիկը։ Մօտենում եմ և ասում,

— Միլկա, թուրքերը յետևս են ընկել, չե՞ս կարող ապաստան տալ ինձ։

— Մտէք, պարոն բժիշկ, պատասխանեց նա և ինքն էլ ներս գնաց։ Մի րոպէ չանցած, թուրքերը մօտիցս սլացան դէպի քաղաքից դուրս։

— Եւ նա քեզ ազատեց՞, պատասխանեց Օգնեանովը։

— Այո՛, Բոյչո, Միլկան ազատեց, խեղճը... Նա այլևս ոչնչից չէ վախենում, կորցնելու ոչինչ չունի, խղճալու ոչ ոք չունի...

— Այժմ ինչ՞ պէտք է անես, ո՞ր ես գնում։

— Ռումինեա, իհարկէ, էլ ո՞ր պէտք է գնամ։

— Ես էլ էի այնտեղ գնում, բայց դրօշակը տեսայ, այս կողմը եկայ։

Ես էլ դրօշակին եկայ... Սակայն, դու զէնքարկ չունես և այդ բարակ քաթանով...

— Հենց այդ պատճառով էլ Մարիյկային քեզ մօտ ուղարկեցի որպէսզի ամեն ինչ բերես... Տարօրինակ է, որ դեռևս չէ երևում...

— Այժմ կարիք չկայ այլևս, ասաց բժիշկը։ Մթնի թէ չէ, կըգնանք Խամբարովի ջրաղացը և բայ Էիլօն քեզ համար ամեն բան կը ճարէ։ Բարեբախտաբար, հագիս մի աւելորդ սիրտուկ էլ ունեմ... վրադ կըդայ... Տոպրակումս էլ հաց կայ...

— Շատ լաւ, բայց ես այստեղ այդ նպատակով չեմ եկել... Ես մտադիր էի ապաստանբեցնել...

— Բայց շիլա-փլաւ դուրս եկաւ... բարկացած բացականչեց բժիշկը. — Եւ միայն մենք էինք, որ դրան էինք ծառայում...

— Ուրիշ տեղերից որևէ տեղեկութիւն կա՞յ։

— Միայն անորոշ լուրեր... Ամեն տեղ անիծում են... Ապաստանբութիւնը չի կարող տարածուել... Եւ միայն անյաջողութիւններ են շուրջը... Դու պէտք է աւելի շատ բան իմանաս...

— Այո՛, ես տեսայ, թէ ինչպէս քսան տեղից հրդեհ էր սկսուել, ասաց Օգնեանովը։

— Եղբայր, ժողովուրդը դեռ ևս հասուն չէր, դէռ պատրաստ չէր դրան... Մենք սարսափելի սխալ գործեցինք... ասաց բժիշկը։ Բոլգարիան ներկայումս սոսկալի զոհեր է տալիս և բոլորն իզուր...

— Որ մենք խաբեցինք — այդ ճշմարիտ է, բայց յեղափոխութիւնը պէտք լինի և անպատճառ կըլինի... Իսկ զոհերն անխուսափելի են, այդ անհրաժեշտ է։ Ես նոյնիսկ կուզէի, որ մեր զոհերն աւելի մեծ, աւելի սարսափելի լինէին...

— Օգնեանով, ասաց բժիշկը կարճ լռութիւնից յետոյ, ինձ թւում է որ միայն մենք ենք այդպէս մտածում. ամբողջ Բոլգարիան այս րոպէիս մեզ անիծում է որ այսպիսի թշուառ դրութեան հասցրինք նրան... այս բոլորի պատճառը մենք ենք համարում... Գնա՛ տես ի՞նչ են խօսում. այժմ բոլորը Ստեֆչովին են արդարացի համարում։

Ստեֆչովի անունից Օգնեանովը մռայլուեց.

— Ի՞նչպէս... այդ դարշելի արարածը դեռևս կենդանի՞ է։

— Դարշելի՞... պատասխանեց բժիշկը։ Ստեֆչովը այժմ ամե-

նախելոք, ամենահեռատես, ամենաարդար մարդն է... Նա ու չորբաջի Իւրդանն այժմ հրճւանքի մէջ են... Նրան քաղաքի փրկիչն են համարում... Իսկ մեզ, կատաղած շան պէս, գնդակահար կանեն եթէ աչքերնին ընկնենք...

— Միևնոյն է, այնուամենայնիւ նա դարշելի արարած է... Խեղճ Լալկա, նա պէտք որ խիստ դժբախտ լինի...

— Ի՞նչ ես խօսում, մի՞թէ չգիտես որ Լալկան մեռել է:

— Մեռե՞լ է, մի՞թէ:

— Ապրելի 18-ին մեռաւ, շշնջաց բժիշկը:

— Այս կարճ ժամանակում, որքան դժբախտութիւն թափուեց մեր գլխին... Նա՛ սպանեց նրան, այդ կեղտոտը, բացականչեց Օգնեանովը:

— Այո՛, նա՛ սպանեց:

Եւ բժիշկը արցունքն աչքերին, պատմեց Լալկայի մահուան պատճառը:

Օգնեանովը յուզած բռնեց նրա ձեռքը.

— Եղբա՛յր, մենք այժմ հաւասարապէս թշուառ ենք:

Սոկոլովը հարցական ձեւով նրան նայեց:

— Լալկան, քո սիրած էակը, գերեզմանումն է. մի ա՛յլ կին, որին ես էի սիրում, նոյնպէս... ինձ համար կորած է...

— Ո՛չ քո Ռադան կենդանի է, Սպիտակ-Եկեղեցումն է, կենդանութեամբ պատասխանեց բժիշկը:

— Կենդանի՞ է... այո՛, կենդանի է, բայց ինձ համար մեռած է:

Բժիշկը զարմացած Օգնեանովին էր նայում:

— Այո՛, մեռած է ընդմիշտ, տխրութեամբ կրկնեց Բոյչօն. դժբախտ Կանդով... Թող Աստուած ներէ նրան. ինչու՞ ես էլ հեռը չմեռայ:

Բժշկի վրդովմունքը սաստկացաւ:

— Բո՛յչօ, խօսմ Կլիսարում Կանդովի հետ ընդհարում չե՞ս ունեցել:

— Ունեցել եմ, այո՛, խիստ ընդհարում:

— Ռադայի պատճառո՞վ.

Օգնիանովը մռայլուեց:

— Աւելի լաւ է, դրա մասին չխօսենք:

— Խելքդ թռցրո՞ւ ես, ի՞նչ է, Բոյչօ: Ռադայի վրա կասկածո՞ւմ ես: Այդ վրդովեցուցիչ է... Դու խաբուած ես. Ռադան քեզ սիրում էր, սիրում է և այժմ, միայն նա դժբախտ է և քո բամբասանքին է արժանացել, վրդովուած բացականչեց բժիշկը:

Օգնեանովը նեղացած նրան նայեց.

— Բժի՛շկ, Կանդովի յիշատակը յարգելու համար գոնէ խընդրում եմ այդ տխուր պատմութեան մասին այլևս չխօսենք:

— Հէնց Կանդովի յիշատակը յարգելու համար ուզում եմ ցրել քո կասկածները... Դու չպէտք կասկածես որ նա ստորութիւն է արել... Ցիրաւի՛, նա Ռադայի վրա սիրահարուած էր. գիտես, որ նա երազուն ու տարուող բնաւորութեան տէր էր... Այդ անբացադրելի կիրքը սպիպում էր նրան հեռու մնալ և՛ հասարակութիւնից և՛ կօմիտէից... բայց նա ոչ՝ մի ստոր առաջարկութեամբ Ռադային չէ վիրաւորել... Լա՛ւ, որ միտս ընկաւ, ահա՛ կարդա՛ այս նամակը, Նիկոլովիչը տուեց ինձ:

Եւ Սոկոլովը հանեց Կանդովի նամակը, տուեց Օգնեանովին:

Վերջինիս դէմքը երջանկութեամբ փայլեց:

— Շնորհակալ եմ, եղբա՛յր, հոգիս կենդանացրիր:

— Խեղճ Ռադա, իրան ո՞րքան բաղդաւոր կզգայ — եթէ իմանայ: Նա սարսափելի յուսահատ դրութեան մէջ է... երևի քո պատճառով... Ուրիշների պէս՝ նա էլ է քեզ սպանուած համարում...

Բժիշկն աչքը դռան ճեղքին մօտեցրեց:

— Մէկը գալիս է, Մարիյկան է, ասաց նա:

Օգնեանովը նոյնպէս այն կողմը նայեց:

— Ո՛չ, Մարիյկան չէ, Մարիյկան աւելի փոքր է և կապոյտ շորեր ունի հագին...

— Սա սև է հագած և ձեռքին կապոց կայ:

— Ռադա՞ն է, բացականչեց Օգնիանովը և ոտքի թռաւ:

Բժիշկը նոյնպէս ոտքի թռաւ:

Օգնեանովը մօտ վազեց ջրաղացի դռան և սկսեց ձեռքով նշան անել։

Ռադան, որ արէն քանի ժամանակ է թափառում էր հովտում, նրան նկատեց։

Նա վազեց դէպի ջրաղացը և մի ակնթարթում Բոյչօյի մօտ էր։

— Ռադկա՜ ...

— Բոյչո՜, Բոյչո՜... հեկեկալով ասում էր Ռադկան նրա գլուխն իր երեսին սեղմելով։

Բժիշկը խիստ յուզված, լուռ ականատես էր։

— Ինչպէ՞ս պատահեց, որ այստեղ եկար, շտապով հարցրեց Օգնեանովը, որ արդէն քիչ հանգստացել էր։

— Բժիշկին գրած նամակը Մարիյկան ինձ տուեց... Ա՜խ Բոյչո, ինչու՞ ինձ այսքան տանջեցիր, ասում էր Ռադան երջանկութեան արցունքն աչքերին. այլևս չե՞ս բարկանում։ Դու իրաւունք չունես բարկանալու. գիտես, որ պատճառ չկայ...

— Ներիր, ներիր աղաւնեակս, ասում էր Բոյչօն և համբուրում նրա ձեռքերը։ Իմ սխալն ինչ էլ է տանջել, շա՛տ է տանջել։ Եւ Օգնեանովը հիացմանքով նայում էր նրա թաց աչքերին, լի երջանկութեամբ և անսահման սիրով...

Բայց յանկարծ Ռադան սփրթնեց և աղաղակեց.

— Փախի՛ր, Բոյչո, փախիր, մոռացայ ասել... փախէք... Ձեզ այստեղ տեսել են... թուրքերը գալիս են։ Քեզ ցիգանկան տեսել էր և յայտնել — աւելի շուտ, քանթէ Մարիյկան ինձ գտաւ։ Երբ ես այգիներից դուրս ելայ, բաշիբուզուկների մի խումբ այս կողմն էր գալիս, Բոյչո։ Ա՜խ, Աստո՜ւած իմ, մոռացայ իսկյոն ասեմ... Մի ամբողջ ժամ կորցրի, մինչև քեզ գտայ... Ուրիշ անգամ կը տեսնուինք... Այժմ փախէք...

— Ո՛չ, վճռականութեամբ ասաց Օգնեանովը։ Քեզ չեմ կարող այսպիսի բոպէին մենակ թողնել... Եթէ այդ բարբարոսները դան այստեղ և քեզ մենակ գտնեն... — Այս ամայի տեղում քեզ մենակ տեսնեն... Այդ գազանները... Ո՛չ աւելի լաւ է քեզ պաշտպանեմ և այստեղ մեռնեմ..

Բայց Բոյչօն յանկարծ հասկացաւ այդ վճռի կատարեալ անմտութիւնը։ Նա դիմեց Ռադային.

— Ռա՛դա, կարո՞ղ ես մեզ հետ գալ։

Ռադան հիացմունքով պատասխանեց.

— Այո՛, այո՛, Բոյչո, ձեզ հետ կգամ, թէկուզ աշխարհի ծայրը... փախչենք, փախչենք, Բոյչո...

— Դէպի սարը, բացականչեց, համարեա հրամայեց Օգնեանովը։

Եւ ինքն առաջինը ոտքը շէմքին դրեց, հայացքը դէպի հովիտն ուղղած։

XIV

ՑԱՐԶԱԿՈՒՄՆ.

Բայց արդէն ուշ էր։

Դէմուդէմի բլրին, սուր ժայռերի մէջ թուրքեր էին երևում։

Օգնեանովը և բժիշկը տեսան որ իրանք շրջապատուած են և փախչելու միտքը թողին։ Այդ արդէն անկարելի էր։

Թուրքերը շարունակում էին զգուշութեամբ լեռնից ցած իջնել։ Նրանք մօտ հարիւր հոգի էին։

Օգնեանովը, Սոկոլովը հաշուեցին իրանց փամփուշտները։

— Տասնեւութը գնդակ ունենք, խօսեց բժիշկը։

— Այդքանն էլ բաւական է ազնւաբար մեռնելու համար, ցածր ձայնով ասաց Օգնեանովը։

Թոռան-Բէյն իր խուժանն այստեղ էր բերել և անձամբ էր առաջնորդում։

Նախքան հրացանաձգութիւն սկսելը, Թոռան-Բէյը հրամայեց թուրքերէն ձայն տալ.

— Անձնատո՛ւր եղիր խռովարար-կոմս։

Միայն արձագանգն եղաւ այդ պահանջին պատասխան տուողը։

Օգնեանովն ու Սոկոլովը պատի պաշտպանութեան տակ, ատրճանակները ձեռքին, պատրաստ կանգնած էին։

Անցաւ մի րոպէ։ Ըստ երևոյթին, այդ թռռան-Բէյի նշանակած ժամանակամիջոցն էր։

Իսկոյն գոռացին հրացանները։ Պաշարուածները լսում էին՝ թէ ինչպէս գնդակները կտուրի ու պատի ճեղքերից անցնում՝ տափակացած գետին էին ընկնում։

Ցանկարծ հրացանաձգութիւնը դադարեց։

Որքան էլ որ հին լինէր՝ ջրաղացն այնուամենայնիւ՝ պաշտպանում էր երեք պաշարուածներին։ Ոչ օրի գնդակ չէր դիպել։ Միայն Ռադան ուշաթափուած, գետնին էր փռուել։ Գլխի աղլուխը քանդուել էր և սև մազերը թափուել էին ուսերին ու գետնին։

Օգնեանովը կռացաւ, բարձրացրեց նրան, տարաւ մի աւելի անվտանգ տեղ և կապոցը դրեց գլխի տակը։

Թուրքերը մօտենում էին։ Գնդակների մի ամբողջ տարափ տեղաց ջրաղացի վրայ։

Թուրքերն արդէն բաւական մօտ էին։ Վճռական րոպէն հասնում էր։ Օգնեանովը տեղ բռնեց պատուհանի մօտ, բժիշկը՝ դռան։

Նրանք իրար նայեցին և ատրճանակներն արձակեցին ամբոխի մէջ։ Նրանց գնդակներից երեք թուրք ընկան։ Թշնամին իմացաւ պաշտպանողների թիւը։ Սկզբում շփոթեցին որ մէկը չէ, բայց իսկոյն նորից սիրտ առան։ Կլիսարի յաղթողները ոռնոցով վրա թափուեցին դէպի պատնէշը։ Միքանիսը ճեղքերից էին գրնդակով արձակում, միւսները պատուհանից, դռնից որ պաշտպանողներին հեռացնեն այդտեղերից։ Գրոհն սկսուեց։

— Բժիշկ, այս րոպէիս կմեռնենք, մնաս բարև յաւիտեանը, եղբա՛յր, ասաց Բոյչօն։

— Դու էլ մնաս բարև, եղբա՛յր։

— Բժիշկ, ո՛չ մէկս կենդանի չպէտք է ընկնենք դրանց ձեռքը։

— Ո՛չ մէկս, Բոյչօ, ես դեռևս չորս փամփուշտ էլ ունեմ, մէկն ինձ համար կթողնեմ...

— Ես երկուսը կթողնեմ, բժի՛շկ։ Եւ Օգնեանովն ակամայ դէպի Ռադան դարձաւ։

Վերջինս ընկած էր նոյն դիրքով, բայց դէմքը ծիւնի պէս սպիտակ էր։ Ձախ կրծքից հոսում էր կարմիր, տաք արիւնը...

Նրան գնդակ էր դիպել։

Նա մեռած էր։

XV.

ՄԱՀԸ.

Այդ լուռ հրաժեշտի ընթացքում, որ ընդամենը կէս րոպէ տևեց, Սոկոլովը մենակ դիմաղրում էր հարիւր հոգու գրոհին։ Ցանկարծ նա յետ դարձաւ և Ռադային նայեց...

Նրա աչքերը փայլատակեցին, վագրի պէս նա թռաւ դէպի դուռը, կարծես գնդակներին դէմ կենալու համար և մաքուր թուրքերէն լեզուով կոչեց.

— Անիծա՜ծ շներ՝։ Թանկ կվճարէք բոյդարական արիւնի ամեն մի կաթիլի փոխարէն — և ատրճանակն արձակեց։

Խուժանը նոր կատաղութեամբ գրոհ տուեց անառիկ բերդի վրայ։ Վայրենի ոռնոցը, հնացանների գոռոցին խառնուած, օդը լցրել էր։

— Օ՞ֆ, հեծեծաց բժիշկը և ատրճանակը բաց թողեց։ Գրնդակը նրա աչ ձեռքին էր դիպել։ Անասելի սարսափ ու յուսահատութիւնը նկարուեց նրա դէմքին։

Օգնեանովը նոյնպէս արիւնաթաթախ գնդակներ էր տեղում թշնամու գլխին։ Նա նկատեց տանջահար եղբօրը։

— Տանջո՞ւմ ես. եղբա՛յր։

— Ո՛չ, բայց արդէն բաց եմ թողել վերջին գնդակս... մոռացել էի...

— Ես դեռևս երկուսն ունեմ, ասաց Օգնեանովը և իր

ատրճանակը աւեց Սոկոլովին։ Այժմ թո՛ղ տեսնեն՝ թէ ի՞նչպէս է մեռնում բոլգար քարոզիչը։

Այս խօսքերով, նա խլեց բժշկի գօտկից մեծ եաթաղանը, դուրս թռաւ ջրաղացից և ընկաւ Թշնամի խուժանի մէջ՝ աջ ու ձախ սարսափելի հարուածներ տեղալով...

Կէս ժամ յետոյ՝ խուժանը, յաղթական ու կատաղի, դիւային ուրախութեամբ, Օգնեանովի գլուխը ծողն անցկացրած, վերադառնում էր հովտից։

Բժշկի դանդը՝ հարուածներից փշուր-փշուր եղած (առաջին հարուածը բժիշկը ի՛նքն էր իրան հասցրել) չէր կարող յաղթութեան տրոֆէյը կազմել։

Յետևից սայլով տանում էին սպանուածներին ու վիրաւորներին։

Վայրենի աղաղակներով խուժանը քաղաք թափուեց, որն այժմ աւելի էր ամայի ու լուռ քան հին գերեզմանատունը։

Օգնեանովի գլուխը տնկեցին հրապարակի վրա։

Միայն մի մարդ ուրուականի պէս թափառում էր հրապարակում։

Դա Մանչօն էր։

Սիրելի Ռուսիանի գլուխը ճանաչելով՝ կատաղած, անմիտ աչքերը սևեռեց նրա վրա և անէծքների սարսափելի տաքափը տեղաց Մահմեդի գլխին։

Մսագործի խանութում, օղակից նրան կախ տւին։

Այդ խելագարը միակ մարդն էր՝ որ համարձակուեց բողոք յայտնել։

ՎԵՐՋ·

20v.

4790

1018